ԼՈՒՍԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Զ. Գալեն ֆիզիկական գրադարանի
տնօրեն և գլխավոր բժիշկ

Հ. Երեմյան

27.9.93

АКАДЕМИЯ НАУК АРМЕНИИ
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМ. М. АБЕГЯНА

ЛУСИК КАРАПЕТЯН

ОБЩЕСТВЕННАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ОВАНЕСА ТУМАНЯНА

(ФРАГМЕНТЫ)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЕНИИ
ЕРЕВАН 1992

929:891.981

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱՐԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՍՏԵՂԵՏ

ԼՈՒՍԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

(ԴՐՎԱԳՆԵՐ)

Ա II 82955

ՀԱՅԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1992

ԴՄԴ 83. 3 Հ 1
Թ 941 կ

Տպագրվում է Հայաստանի ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ ՀԳԱ ակադեմիկոս Է. Մ. Ջրբաշյան

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝ բանասիրական գիտ. թեկնածուներ Ա. Մ. Վարդանյանը և Ս. Դ. Հովհաննիսյանը

Կարապետյան Լ. Մ.
Թ 941 կ *Հովհաննես Թումանյանի հասարակական գործունեությունը (Դրվագներ)/Պատ. խմբ. Է. Մ. Ջրբաշյան.—Եր.։ ՀԳԱ հրատ., 1992, — 256 էջ, 4 թ. նկ.*

Գիրքը նվիրված է Թումանյանի հասարակական գործունեության այն էջերին, որոնք մեծ մասամբ լուսաբանված չեն։ Դրանք կապվում են ազգային-հասարակական, մշակութային ընկերություններին գրողի մասնակցությանը, նաև էջմիածնի հոգևոր կյանքի առնչություններին։ Մեծ տեղ է տրված բանաստեղծի 1914—1919 թթ., ազգային-դիվանագիտական գործունեությանը և, հատկապես, Թումանյանի և զորավար Անդրանիկի համագործակցությանը։

Գիրքը նախատեսված է մասնագետների և ընթերցող լայն շրջանների համար։

ԴՄԴ 83. 3 Հ 1

4603020100
Կ ——— 58—91
703(02)—92
ISBN 5—8080—0264—8
© Հայաստանի ԳԱ հրատարակչություն, 1992



ՀԱՅԿ.ԵՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄՈՍԿՎԱՅԻ ԳՐՍՏԵՍԱՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Գրքում լուսաբանվում են հայ ազգային մեծ բանաստեղծի հասարակական գործունեության մի շարք կարևոր դրվագներ։ Բացահայտվում են երիտասարդ բանաստեղծի կապերը քաղաքական գաղտնի խմբակների հետ 1889, 1890 թթ., 900-ական թվականների սկզբից Թիֆլիսի պահնորդական բաժնի գործակալների հետապնդումների պարագաները, որոնք նրան դարձրին անբարեհույս քաղաքացի և հասցրին մինչև Պետերբուրգի նախնական կալանատուն։

Նշանակալի տեղ է հատկացվում Էջմիածնի հոգևոր կյանքի հետ բանաստեղծի կապերը վեր հանելուն։ Լուսաբանվում են Թումանյան-Խրիմյան փոխհարաբերությունները, նրա մասնակցությունը 1911 թ. նոր կաթողիկոս առաջադրելուն և ընտրական պայքարին, 1905—1906 և 1918 թթ. ազգամիջյան ընդհարումների ընթացքում նրա գործունեությունը։

Գրքի մեծ մասը վերաբերում է բանաստեղծի առաջին համաշխարհային պատերազմի տարիների գործունեությանը, որպես Հայոց ազգային բյուրոյի հիմնադրման մասնակից, կենտրոնական կոմիտեի անդամ, նրա՝ դեպի ռազմաճակատ (Բայազետ, Ալաշկերտ, Վան) կատարած երկու այցելություններին, ինչպես նաև աննախադեպ ծանր աշխատանքին Էջմիածնում՝ փախստականներին, որբերին տեղավորելու, խնամելու, սովից ու համաճարակից փրկելու համար, հայ կամավորական խմբերը պահպանելու նրա ջանքերին, հարուստ, բազմարովանդակ հրապարակախոսությանը։

Վերջին երեք գլուխներում տարբեր առիթներով հեղինակը անդրադառնում է Թումանյանի և Անդրանիկի համագործակցությանը՝ սկսած նրանց ծանոթությունից (1904 թ., դեկտեմբեր) մինչև զորավարի՝ Կովկասից վերջնականապես հեռանալը (1919, մայիս)։

Գրքում տեղ են գտել մեծ մասամբ անտիպ կամ քիչ հայտնի արխիվային նյութեր և մամուլից վերցրած այնպիսի փաստեր, որոնք օգ-

նում են լուսաբանելու բանաստեղծի ազգային-հասարակական գործունեության կարևոր էջերը, տալու մի քանի հայրենասիրական երկերի ստեղծագործական պատմությունը: Առանձին հատվածներ տպագրվել են գիտական ժողովածուներում և մամուլում. այդպիսիները ներկա հրատարակության համար ճշտված են, լրացված նոր նյութերով և վերամշակված: Գրքում օգտագործված են հետևյալ հապավումները:

ԳԱՌ—Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան

ԹՖ—Թումանյանի ֆոնդ

ԹԹ—Թումանյանի թանգարան

ՓԲ—Փաստաթղթերի բաժին

ՊԿՊԱ—Հայաստանի Պետական Կենտրոնական Պատմական արխիվ

Ա. Ինճիկյան—Սրամ Ինճիկյան, Հովհաննես Թումանյան, Եր., 1969

Ն. Թումանյան—Նվարդ Թումանյան, Հուշեր և զրույցներ, Եր., 1987

Բնագրի մեջ, փակագծերում, նշվում են հետևյալ հրատարակություններից կատարվող մեջբերումների տեղերը.

ԵԺ (հերթական հատորը և էջը)—Հովհաննես Թումանյան, Երկերի ժողովածու վեց հատորով (Եր., 1940—1959)

ՈՒՀ (հերթական գիրքը և էջը)—Թումանյան, Ուսումնասիրություններ և հրապարակումներ, գիրք 1—4 (Եր., 1964—1985)

ԹԺՀ—Թումանյանը ժամանակակիցների հուշերում (Եր., 1969)

I

ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԹԻՖԼԻՍԻ ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՏԵՍԱԴԱՇՏՈՒՄ

Թումանյանի մուտքը հասարակական կյանքի ասպարեզ սկսվել է անցյալ դարի 80-ական թվականների վերջերին։ Դա մի ժամանակաշրջան էր, երբ սկսվել էր հայ ժողովրդի ազատագրական շարժման վերելքը, և առավել կազմակերպված բնույթ էին կրում ժողովրդի ազգային ինքնագիտակցության դրսևորումները։

80-ական թվականների կեսերից Արևմտյան Հայաստանում հանդես են գալիս առաջին հայդուկները, որոնք իրենց գործունեությունը նվիրում են արևմտահայ ժողովրդի ազատագրության գործին։ Առաջանում են քաղաքական գաղտնի խմբակներ և ընկերություններ. 1888-ին ստեղծվում է Հնչակյան կուսակցությունը, քիչ անց՝ 1889-ին «Երիտասարդ Հայաստան» խմբակը[1]։

Ազատագրական շարժման գաղափարական դրսևորումները կենտրոնանալով հատկապես հայաշատ Թիֆլիսում, ընդգրկում են տեղի առաջադիմական երիտասարդությանը, որը տոգորված ազգային-հայրենասիրական գաղափարներով, հատկապես Ռաֆֆու և Ռ. Պատկանյանի երկերի ազդեցությամբ, սպասում էր սատարելու արևմտահայ եղբայրակիցների փրկության գործին։

Թումանյանի՝ տակավին առաջին ոտանավորներում աչքի է դարնում պատանի հեղինակի ազգային-հայրենասիրական ոգին, ինչպես և հայդուկային որոշ տրամադրություններ[2], որոնց շուտով բանաստեղծը աշխատում է տալ գործնական բնույթ։ Ընկերոջ՝ Անուշավան Աբովյանի, վկայությամբ, դեռևս 1886—1887 թթ. բանաստեղծը հաճախում էր գաղտնի ժողովների (ԹԺՀ, 229)։ Կնոջ՝ Օլգա Թումանյանի, հավաստ-

---

1 *Տե՛ս* Լեո, *Անցյալից, հուշեր, փաստեր, թղթեր, Եր., 1925, էջ 84։*

2 Ա. Ինճիկյան, *էջ 141—152, 175—177։*

մամբ, Թումանյանը կապված էր հայ ազատագրական շարժման առաջին գործիչներից մեկի՝ Ալ. Գոլոշյանի հետ. 1888 թ. նա ստրճանակ էր գնել վերջինիս հետ Արևմտյան Հայաստան մեկնելու համար, բայց հիվանդանալով՝ նա է մնացել (նույն տեղում, 329)։ Բանաստեղծի՝ Գոլոշյանին նվիրած ոտանավորը, գրված դեռևս 1885 թ. (VI, 11), և հետագայում արված ինքնակենսագրական շատ համառոտ նշումը՝ «Հեղափոխություն.—Գոլոշյան—հիվանդություն...» (ՈՒՀ 2, 418), վավերացումն են Օլգա Թումանյանի և Ան. Աբովյանի վկայությունների։

Սրանով չի վերջանում նոր հասարակական կյանք մտնող երիտասարդի դիպը ազատագրական շարժումների հետ։

1890 թ. ամռանը Թումանյանը բանակցություններ է վարել առաջին ժողովածուն Մոսկվայում տպագրելու համար։ Այդ մասին ճշգրիտ տեղեկություններ կան Մ. Բարխուդարյանի տպարանի աշխատակից Է. Ավետիսյանի՝ Թումանյանին ուղղած նամակներում, որոնք նոր տվյալներ են տալիս ժողովածուն տպագրության ներկայացնելու հանգամանքների մասին, միաժամանակ վկայում, որ բանաստեղծը այդ միջոցին գաղտնի խմբակի անդամ է եղել։

Ավետիսյանի նամակները գրված են 1890 թ. հուլիս-հոկտեմբեր ամիսներին, երբ սկսվել և ավարտվել էր ժողովածուի հրատարակության գործը։ Այդ ժամանակվա ընթացքում Թումանյանը Է. Ավետիսյանին գրել է չորս նամակ և մեկ բացիկ, որոնք թեպետ չեն պահպանվել, բայց հասցեատիրոջ պատասխաններից կարելի կռահել դրանց գրության ժամանակն ու բովանդակությունը։

Առաջին նամակը Թումանյանը գրել է հունիսի վերջերին կամ հուլիսի առաջին հնգօրյակում և բանաստեղծությունների տետրի հետ ուղարկել Է. Ավետիսյանին։ Վերջինս նրան պատասխանել է իր հուլիսի 10-ի նամակով, որտեղ գործնական բանակցություններից բացի, տեղյակ լինելով, որ Թումանյանը «Երիտասարդ Հայաստան» խմբակի անդամ է, հարցնում է. «...Արդյոք ինչպե՞ս է շարունակվում ձեր ընկերության գործը կամ թե գոյություն ունի՞, թե ոչ, խնդրեմ գրեք» (ՈՒՀ 4, 262)։

Ավետիսյանի երկրորդ նամակում՝ գրված օգոստոսի 6-ին, կարդում ենք. «Շնորհակալ եմ տեղեկություններ տալուդ համար ուխտ... գնալու մասին։ Կաղոթեմ, եղբայր... Արդյոք նոր ընկերության մեջ թաթիբը կա՞, թե ոչ. խնդրեմ գրեք» (ՈՒՀ 4, 266)։

Այդ տեղեկությունները Թումանյանը տվել էր հուլիսի երրորդ տասնօրյակում գրած իր նամակով։ Օգոստոսի 25-ի նամակում Ավետիսյանը հետաքրքրվել է «վերջին անցքերով», տեղեկություններ է խնդրել «մեր տղերանց մասին» (ՈՒՀ 4, 267)։ Այս նամակին Թումանյանը պատասխանել է հոկտեմբերի 4-ին՝ տպագրված գրքի փորձանմուշները ստանալուց հետո, երբ արդեն ժամանակն էր իր գոհունակությունը և շնորհակալությունը հայտնելու Ավետիսյանին՝ ժողովածուի հրատարակության ընթացքում նրա ցուցաբերած ջանքերի և հոգատարության համար։ Նույն տեղում նա, անշուշտ, տեղեկություններ պետք է հաղորդած լինի նոր ընկերության «վերջին» անցքերի, «տղերանց» մասին։ Հոկտեմբերի 22-ի նամակում Ավետիսյանը պատրաստակամություն է հայտնում՝ այսուհետև ևս ծառայելու մի մարդու, «...որը հոգով ու սրտով նվիրված է հայրենիքի շահերին... Հայրենիքի, որն այսօր երկունքի մեջ է և դառն արտասուք է թափում» (ՈՒՀ 4, 276)։

Այս տպավորությունն, անշուշտ, Ավետիսյանը ստացել էր ոչ միայն Թումանյանի հայրենասիրական ստեղծագործություններից, այլև այն լուրից, որ երիտասարդ հեղինակը հարում էր գաղտնի քաղաքական կազմակերպության և քաջատեղյակ էր հայրենիքում տեղի ունեցող դեպքերի ընթացքին։

Նորաստեղծ գաղտնի կազմակերպությանը հարելու մասին երկու վկայության հանդիպում ենք Թումանյանի՝ Ան. Աբովյանին գրած 1890 թ. սեպտեմբերի 28-ի և հոկտեմբերի 14-ի նամակներում.— «Մկրտիչն ասաց, որ քեզ գրել է, թե Հովսեփ Արղությանին սպանել են, սուտ է բոլորովին, ես ընկերության մեջ եմ»[3]։

Սեպտեմբերի 28-ի նամակից մեջբերված այս տողերը հասկանալի պատճառով ժամանակին դուրս են մնացել գիտական հրատարակությունից (V, 25)։ Հիշատակված ընկերությունը Դաշնակցություն կուսակցությունն է, իսկ Արղությանը «Երիտասարդ Հայաստան» կոչվող գաղտնի քաղաքական խմբակի անդամներից էր։ Երբ 1890 թ. ամռանը ստեղծվում է դաշնակցություն կուսակցությունը, ինչպես քաղաքական հիշյալ խմբակը, այնպես էլ Արղությանը մտնում են այդ կուսակցության մեջ[4]։ Վերջինիս անվան հիշատակությանը հանդիպում

---

3 ԳԱԲ, Թֆ, Ա։ 271։ Նամակում հիշատակված Մկրտիչը Ան. Աբովյանի ազգականն է։

4 Միհ. Վարանդյան, Հ. Հ. դաշնակցության պատմություն, հատ. I, Փարիզ, 1932, էջ 57։ Լեո, Անցյալից, էջ 84, 87։

ենք նաև Ան. Աբովյանի «Իմ հուշատետրը» ձեռագիր գրքույկում։ Հեղինակի վկայությամբ, Թումանյանի հետ փողոցում հանդիպել են գաղտնի ընկերության անդամներից երկուսին, որոնցից մեկը Օսեփ (Հովսեփ) Արղությանն էր[5]։ «Մի հեղափոխական ընկերության» գաղտնի ժողովներին հաճախելու մասին Աբովյանը հիշատակում է նաև հուշերում (ԹԺՀ, 229), չմոռանալով Թումանյանի խոստումը՝ «մի անգամ էլ ինձ տանել հետը»։

Աբովյանը Թիֆլիսից հեռացել է 1890 թ. գարնանը (Կամենեց-Պոդոլսկից առաջին նամակը գրել է 1890-ի ապրիլի 14-ին[6]), որից կարելի է ենթադրել, որ Թումանյանը այդ ժողովներին հաճախել է 1889—1890 թթ. ձմեռը (նախքան Աբովյանի՝ Թիֆլիսից մեկնելը), անդամագրվելով խմբակին թերևս նրա կազմակերպման առաջին օրերին։ Նույնն է հաստատում նաև Գոլոշյանների ընտանիքի հետ Թումանյանի մտերմությունը։ Այդ ընտանիքը Թիֆլիսում հայտնի էր իր առաջադիմական գաղափարներով։ Դեռ աշակերտուհի Դարիա Գոլոշյանը և նրա ապագա ամուսինը՝ Արշակ Թադեոսյանը եղել են «Երիտասարդ Հայաստան» խմբակի անդամ, և այդ էր պատճառը, որ Գոլոշյաններին հաճախ այցելել են Հ. Արղությանը, Թումանյանը և խմբակի այլ անդամներ[7]։

Քանի որ այս փաստերը որոշակի հաստատում են Թումանյանի՝ «Երիտասարդ Հայաստան» խմբակի անդամ լինելը, և հայտնի է նաև այդ խմբակի՝ դաշնակցությանը միանալը, ուստի, ինչպես Մոսկվայի տպարանի աշխատակից Ավետիսյանի վերոհիշյալ նամակներում, այնպես էլ սեպտեմբերի 28-ի Թումանյանի խոստովանության մեջ («ես ընկերության մեջ եմ») խոսքը վերաբերում է դաշնակցություն կուսակցությանը։

Սեպտեմբերի 28-ի նամակի պատասխանը Թումանյանի արխիվային նյութերում չկա։ Բայց ինչպես երևում է բանաստեղծի հաջորդ՝

---

5 Տե՛ս ԳԱԹ, «Հայ հեղինակներին վերաբերող հուշեր», Ան. Աբովյան, Իմ հուշատետրը, էջ 25։ Նույն հեղինակի «Երիտասարդ տարիներիս ուղեկիցը» հուշագրության № 9 ձեռագրության մեջ «Երիտասարդ Հայաստան» ընկերության ժողովները շփոթված են Ալ. Գոլոշյանի գաղտնի հավաքույթներին, որի մասին պատմում է Օլգա Թումանյանը (ԹԺՀ, 929)։

6 ԳԱԹ, Թֆ, № 418։

7 Սոնա Զեյրեկյան, Հայ կնոջ դերը հայ հեղափոխական շարժման մեջ, Անթիլիաս-Լիբանան, 1968, էջ 30։

հոկտեմբերի 14-ի նամակից, Աբովյանն իր նամակում ինչ-որ առակ պատմելով՝ զգուշացրել է երիտասարդ ընկերոջը «անհեռատես քայլերից»։ Թումանյանը գրում է. «Իսկ առակդ իմ մասին շատ մաղալու էր։ Ի դեպ, ասեմ, որ ընկերության ես այն անդամներից եմ, որոնց մասին չի կարելի կասկածել անհեռատեսության նկատմամբ. այս փորձից հետո եմ ասում» (V, 27)։

Արդ, ի՞նչ «անհեռատեսության» մասին է խոսքը, և որո՞նք էին Մոսկվայում ապրող է. Ավետիսյանին հետաքրքրող «վերջին անցքերը»։

1890 թ. մայիս-սեպտեմբեր ամիսներին Թիֆլիսի երիտասարդությունը խանդավառված էր Սարգիս Կուկունյանցով։ Վերջինս Պետերբուրգից Թիֆլիս գալով, իր առաջ նպատակ էր դրել ամբողջապես նվիրվել արևմտահայ ժողովրդի ազատագրության գործին, ուստի, բնականաբար, ջերմ ընդունելություն է գտնում և հովանավորվում Դր. Արծրունու, «մշակական երիտասարդության» և «Երիտասարդ Հայաստան» խմբակի կողմից։

Իր հայրենասիրական գաղափարը Ս. Կուկունյանցը փորձում է դնել ավելի գործնական հիմքերի վրա 1890-ի ամառվա՝ Էրզրումի հայտնի դեպքի, Կոստանդնուպոլսի Գում-Գափուի ցույցի և դրանց ողբերգական հետևանքներից հետո։ Մեկնելով Կարս, նա իր շուրջն է հավաքում ոչ այնքան մեծ թվով հայրենասեր երիտասարդների, փորձում է անցնել ռուսական սահմանը և օգնության հասնել արևմտահայ տառապող ժողովրդին։ Մարդկային զոհերի գնով արված այդ հանդուգն քայլը ունեցավ այն հետևանքը, որ Ս. Կուկունյանցը բանտարկվեց դեռ ոչինչ չարած ու դատապարտվեց 20-ամյա աքսորի և տաժանակիր աշխատանքի Սախալինում[8]։

Այս դեպքերին են առնչվում և է. Ավետիսյանի հարցասիրությունը և Ան. Աբովյանին հասած Հ. Արղությանի սպանության ոչ ճիշտ լուրը։

Թումանյանն այդ օրերին Թիֆլիսում էր, ինչպես տեսանք, զբաղված ժողովածուի հրատարակության գործով, և, բնականաբար, քաջատեղյակ իրադարձություններին, բայց, ինչպես երևում է նրա նամակից, հեռու «անհեռատես» քայլերից։ Կասկածից վեր է, որ «անհեռատես քայլեր» ասելով նա նկատի է ունեցել Կուկունյանցի հետ կապված դեպքը։ Որքան էլ վերջինիս հայրենասիրական գաղափարն ու նպատակը մոտ է եղել բանաստեղծի սրտին, այնուամենայնիվ, նա կարողա-

---

8 Ավելի մանրամասն տե՛ս Ան., Անցյալից, էջ 84—87։

ցել է ճիշտ ժամանակին գնահատել կատարվածը, մանավանդ որ երկու տարի էր անցել Գոլոշյանի չարաչար սպանությունից նույն հայրենասիրական գաղափարի իրականացման կիսաճանապարհին։ Թե որքան մոտ էր Թումանյանին Կուկունյանցի գաղափարը՝ երևում է նաև այն փաստից, որ 1893-ին նա մասնակցել է երիտասարդական մի երեկույթի, որի հասույթով դրամական օգնություն պետք է ուղարկվեր Սախալինի հայ աքսորյալին[9]։

Պահպանվում են Թումանյանի՝ Կուկունյանցից ստացած երկու նամակները՝ գրված 1910 թ., ստորագրված՝ «Քո բաղմաչարչար Կուկունյանց»։ Կարդալով այդ նամակները դժվար չէ կռահել, որ Թումանյանն ու Կուկունյանցը եղել են լավ ծանոթներ, թերևս, հենց 1890 թվականի ամառվանից։ Նամակներում զգացվում է Կուկունյանցի վստահությունը Թումանյանի նկատմամբ։ Նա գիտե, թե ինչ հեղինակություն է վայելում բանաստեղծը և խնդրում է նրա միջամտությունը աքսորից վերադառնալուց հետո նոր բանտարկությունից երաշխավորությամբ ազատվելու համար[10]։

Կուկունյանցի հետ կապված դեպքը տեղի է ունեցել 1890 թվականի սեպտեմբերի 22-ին, Թումանյանի՝ Աբովյանին ուղղած վերոհիշյալ նամակը գրված է 22 օր հետո, ուրեմն, հավանական է, որ հոկտեմբերի 14-ի նամակի «այս փորձից հետո եմ ասում» խոսքերը ունեն որոշակի ենթաբնագիր. ըստ երևույթին, բանաստեղծը նկատի ունի մի իրողություն, որը մեզ հայտնի չէ։

Թիֆլիսի հայ հասարակական մտքի վրա իշխողը «մշակական» երիտասարդությունն էր, որի մեջ մտնում էին մեծ մասամբ ժողովրդի ազատության գաղափարներով համակված մտավորականության տարբեր բնագավառների ներկայացուցիչներ։ Իրավիճակն այնպիսին էր, որ այդ կազմակերպության ազատագրական կոչերին հետևում էին բոլոր նրանք, ում համար թանկ էր արևմտահայ ժողովրդի ազատագրումը, Հայկական հարցի լուծումը։ Այս գաղափարով Ս. Կուկունյանցի նման շատերն էին մտնում պայքարի մեջ, կատարում սխրագործություններ և զոհվում անհետանկար, անմիտ գործերից հետո՝ ոչնչի չհասնելով։

Հայության ազատագրության գաղափարով, ինչպես տեսանք, տոգորված էր նաև Թումանյանը հասարակական կյանք մտնելու առաջին

---

9 Տե՛ս ԳԱԹ, Ա. Բարխուդարյանի՝ Թումանյանի մասին գրած հուշերի բնագիրը։

10 Նույն տեղում, ԹՖ, ց 2, № 359։

իսկ օրերից, ուստի և միանգամայն բնական է, որ նա նույնպես հարեր «մշակական» կազմակերպությանը։ 1890—1892 թթ. բանաստեղծի «մշակական» դիրքորոշումը երևում էր նաև այլ հարցերում։ Հիշենք թեկուզ նրա մասնակցությունը Արծրունու լրագրական-հասարակական գործունեության 25-ամյա հոբելյանի տոնակատարությանը (1890, մայիս), դիրքորոշումը Խրիմյան Հայրիկին կաթողիկոս առաջադրելու օրերին և Արծրունուն կաթողիկոսական ընտրություններին պատգամավոր առաջադրելու ժամանակ (1892, մարտ), որի պատճառով նա ընդհարվում է Կոնստանտինի «նոր-դարական» հոգևորականության հետ և թողնում աշխատանքը։ Ընդ որում, դա այն ժամանակ, երբ որոշակի էր «Մշակի» բացասական դիրքորոշումը Թումանյանի ստեղծագործության նկատմամբ։ Այստեղից հետևում է, որ նրա համար կարևորը եղել է հասարակական նպատակը և ոչ անձնական նկատառումները։

1892 թ. դեկտեմբերին Թումանյանն արդեն «մշակականների» հետ չէր։ Հայտնի է նրա մասնակցությունը այն ժողովին, որը նպատակ ուներ ամրապնդելով «Տարազ» շաբաթաթերթի դիրքերը, պայքարել «Մշակի» և Արծրունու հնացած գաղափարների դեմ (IV, 54)։ Արծրունու մահից հետո ևս անփոփոխ է մնում Թումանյանի «հակամշակական» դիրքը։

Թումանյանի հասարակական գործունեության մեջ աչքի ընկնողը ամենից առաջ ուղղությունն է, ինքնուրույնությունը, անկախ նրանից՝ գործը որևէ կուսակցությա՞ն հետ է, թե՞ այս կամ այն հոսանքին պատկանող պարբերականի։ Ինչպես տեսնում ենք, այդ յուրահատկության ակունքները թաքնված են դեռևս նրա վաղ շրջանի գործունեության մեջ։ Այս իմաստով շատ հետաքրքրական են Թումանյանի հետևյալ խոսքերը՝ գրված վերը հիշված դեպքերից մեկ տարի հետո. «...ուրիշին հարգելուց առաջ ես ինձ եմ հարգում— իմ կարծիքս և իմ հասկացողությունս, ինչ չափով էլ որ կան։ Ես իմ «ես»ը ոչ «Նոր-դարի», ոչ «Մշակի», ոչ «Մուրճի» և ուրիշի ազդեցությանը չեմ զոհելու երբեք, բայց կհարգեմ և կպաշտեմ մինչև անգամ, եթե կար մի հանրօգուտ միտք...»։ Ապա. «...ոչ մեկի զինվորը չեմ (աստված փրկի, ազատի)» (V, 58)։

Հայտնի է, որ 1893—1896 թթ. բանաստեղծը հարում է Հնչակյան կուսակցությանը[11]։ Ժամանակակիցների վկայությամբ, նա այդ կու-

---

11 Ա. Ինճիկյան, Հովհաննես Թումանյան, էջ 370։

սակցությանը անդամագրվել է Ղազարոս Աղայանի խորհրդով։ Կարևորն այն է, որ լցված գործելու անսպառ եռանդով, նա միշտ ուղիներ է որոնել ծառայելու իր ժողովրդի ազատագրության գործին։ Դրանով է բացատրվում 1895 թվականի նրա մասնակցությունը Արևմտյան Հայաստանից Կովկասում հանդրվանած հայ գաղթականությանն օգնող կոմիտեների աշխատանքին Թիֆլիսում, Ախալքալաքում, Ալեքսանդրապոլում, Երևանում, Էջմիածնում և այլն։

Թումանյանի հասարակական գործուն կյանքը դեռ 1890-ական թվականներից չէր կարող վրիպել Թիֆլիսի պահնորդական բաժնի գործակալների ուշադրությունից։ Բայց, չնայած դրան, մեզ հայտնի գրություններում բանաստեղծի ազգանվան հիշատակությանը հանդիպում ենք միայն 1900 թվականից։

Պահնորդական բաժնի վարչության դեպանը պահվում է Թբիլիսիում գտնվող Վրաստանի պետական կենտրոնական արխիվում, Թումանյանին վերաբերող գաղտնի գրագրության լուսապատճենները՝ Երևանի Թումանյանի թանգարանում[12]։

Ժանդարմական վարչության գաղտնի գրագրությունների մյուս մասը մենք հանել ենք Պետերբուրգի ոստիկանական դեպարտամենտի հատուկ բաժնի ֆոնդից, որն այժմ պահվում է Մոսկվայի պետական արխիվում (ЦГАОР ДП ОО)։ Ինչպես այնտեղ, այնպես էլ Թբիլիսիում, Թումանյանի վերաբերյալ հատուկ մեղադրական գործ չկա։ Նյութերը ցրված են այսպես կոչված՝ «Դաշնակցության գործի» տարբեր տարիների թղթապանակներում. տեղ-տեղ նույնիսկ մի գրության կեսը մի թղթապանակում է, կեսը՝ կարված բոլորովին այլ թղթերի հետ։

Պետերբուրգի ոստիկանական դեպարտամենտ հասել են Թիֆլիսից ուղարկված տարբեր տարիների գաղտնի ամփոփագրեր, ամսական տեղեկություններ, ժանդարմական պաշտոնյաների եզրահանգումներ՝ գրված գաղտնի գործակալների հավաքած տվյալների հիման վրա, գաղտնի հաշվետվություններ, պաշտոնական հարցումներին տրված պատասխաններ և այլն։

Ժամանակագրական կարգով մեզ ծանոթ առաջին փաստաթուղթը, որտեղ հիշվում է Թումանյանի ազգանունը, թվագրված է 1901, հունի-

---

12 Պետք է նշել թանգարանի գիտաշխատող Լուսիկ Թաշճյանի շնորհակալ աշխատանքը այդ նյութերի հավաքման ուղղությամբ։

ակի 7։ Այդ գրությամբ խնդրվում է ժանդարմական վարչություն ուղարկել Թիֆլիսի հայոց բարեգործական ընկերության անդամների և վարչության կազմի ցուցակը, նշելով հատկապես 1900 թ. անվստահելի քաղաքացիների անունները։ Գրությանը կցված ցուցակներում կա նաև Թումանյանի ընդգծված աղգանունը՝ կողքին դրված հարցական[13]։

Դժվար է հաստատ ասել, թե իր ո՞ր գործով է 1900 թ. Թումանյանը դարձել կասկածելի։ Մեզ չի հանդիպել այդ տարվա դեպքերին վերաբերող որևէ փաստաթուղթ։ Մնում է անել հավանական ենթադրություններ՝ հիմնված բանասիրական պրպտումների վրա։

1899 թ. կառավարչապետ Գոլիցինի հրամանով Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը լուծարքի է ենթարկվում, դառնալով միայն Թիֆլիսի բարեգործական կազմակերպություն, որոշակի սահմանափակումներով։ Ըստ նոր կանոնադրության, ընկերությունը զրկվում է դպրոցներ, գրադարաններ պահելու, սովորողներին օգնելու իրավունքից, դառնում է լոկ աղքատախնամ։

1899 թ. սեպտեմբերի 19-ին տեղի է ունենում վերակազմված ընկերության ընդհանուր ժողովը և վարչության ընտրություն, երբ ընկերությանը կրկին անդամագրվում է Թումանյանը, բայց այս անգամ ընտրվում է նաև վարչության փոխանդամ[14]։ Ընկերության վարչության մեջ եղել են Թումանյանի մտերիմները՝ Մ. Թումանյանը, Փիլ. Վարդազարյանը, Ար. Զարգարյանը (վարչության նախագահը Մ. Դոլուխանյանն էր՝ Մ. Թումանյանի հայրը), որոնց հետ ունեցած բանաստեղծի հաճախակի հանդիպումները, ինչպես և ժողովներին մասնակցելը անշուշտ հայտնի է եղել ժանդարմական վարչությանը։ Մեզ թվում է, սակայն, որ Թումանյանի անունը պահնորդական բաժնում կարող էր լինել նաև մի այլ պատճառով, քանի որ բարեգործական ընկերության գործունեությունը, որքան էլ սահմանափակված, այնուամենայնիվ, գաղտնի չէր։

---

13 ԹԹ, ՓԲ, № 42։

14 Երևանյակ հայոց բարեգործական ընկերության Կովկասում, 1881—1911, կազմեց Լեո, Թիֆլիս, 1911, էջ 220—222, «Նոր դար», 1899, № 161, «Մշակ», 1899, № 174։ Ըստ վերջինի տեղեկության, Թումանյանը վարչության ընտրության ժամանակ ընպետ ստացել է բավարար քանակությամբ ձայներ, չի անցել, որովհետև վարչության անդամ առաջադրված, բայց չանցած Մելիք-Այվազյանը փոխանդամ դառնալու համար արդեն ուներ բավարար քանակությամբ ձայներ։ Հավանական է, որ այս ոչ ճիշտ տեղեկությամբ «Մշակը» մի անգամ ևս կամեցել է ցույց տալ իր անբարյացակամությունը բանաստեղծի նկատմամբ։

Նույն ժամանակ՝ 1899—1900 թթ. ուսումնական տարում, աշակերտական «Միածան» գաղտնի ընկերության «մայր խմբի» հետ Թումանյանն իր բնակարանում պարապում էր հայոց գրականություն[15]։ Ընկերությունը ստեղծվել էր այն ժամանակ, երբ գոլիցինյան հայանի հրամանով դպրոցական ծրագրերից հանվել էին հայոց լեզուն, գրականությունը, և հայ առաջադեմ շատ գործիչներ, ինչպես Ստ. Շահումյանը, Սվ. Արասխանյանը, Դ. Դեմիրճյանը, Ն. Աղբալյանը և ուրիշներ, գաղտնի պարապմունքներով պատանեկությանը մերձեցնում էին մայրենի լեզվին և հայ մշակույթին, նրանց մեջ սերմանում ազգային արժանապատվության զգացում, նպաստում նրանց ազգային ինքնագիտակցության զարգացմանը (ԹԺՀ, 171—174)[16]։ Ամենայն հավանականությամբ, այս գաղտնի դասերը ևս ինչ-որ ձևով հայտնի ևս գարձել ոստիկանությանը, գումարվել Թումանյանի՝ բարեգործական ընկերության հետ ունեցած առնչության փաստին, որով և նրա անունը գրանցվել է 1900 թ. Թիֆլիսի քաղաքական անբարեհույսների ցուցակում։

1900 թ. Թումանյանը անդամագրվում է նաև Երվ. Լալայանի հիմնադրած Ազգագրական հրատարակչական ընկերակցությանը։ Դ. Ասատուրի վկայությամբ՝ «Ազգագրական հանդեսի» համար ընտրվել էր խմբագրական հանձնաժողով՝ Լալայանի, Թումանյանի, Պռոշյանի, Դ. Ղարաջյանի և իր մասնակցությամբ։ Նիստերը տեղի են ունեցել Լալայանի բնակարանում և վերջում վերածվել գրական երեկույթների, որոնց մասնակցել է նաև Հ. Հակոբյանը. նույնիսկ տրամադրություն է եղել գրական այդ խմբակը ընդարձակելով, ստեղծել գրական ընկերություն (ԹԺՀ, 353)։ 1912 թ. հրապարակած իր «Տխուր հիշողություն» հոդվածում Թումանյանը հիշատակում է, որ 1902 թ. եղել է նաև Թիֆլիսի հայոց ազգագրական ընկերության «խմբագրության մասնաժողովի» մեջ (IV, 200)։

Դ. Ասատուրը իր հուշերում պատմում է նաև, որ Երվ. Լալայանի բնակարանում պարբերաբար հավաքվելու պատճառով 1902 թ. փետրվարյան մի գիշեր խուզարկվել են Դ. Ղարաջյանի, Հ. Հակոբյանի և

---

15 Ժամանակը որոշվում է ըստ Աղայանի՝ Թումանյանին գրած 1899 թ. նոյեմբերի 6-ի նամակի, որտեղ հիշատակվում են Թումանյանի «հանձն առած դասերը». տե՛ս Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հատ. IV, Եր., 1963, էջ 569։

16 Ավելի մանրամասն տե՛ս Ա. Ինճիկյան, էջ 385—389։

իր բնակարանները, բռնադրավվել են գրքեր, ձեռագրեր, իրենք էլ բանտարկվել են։

Ինչ վերաբերում է Թումանյանին, նրա՝ իշխանուհի Մ. Թումանյանին ուղղած 1902 թ. փետրվարի 6-ի նամակից պարզվում է, որ այդ օրերին նա հիվանդ է եղել[17]։

Բայց ավելի մանրամասն տեղեկություններ տալիս են Թիֆլիսի պահնորդական բաժնի գաղտնի փաստաթղթերը։

Պարզվում է՝ 1. 1902 թ. փետրվարի սկզբներին ոստիկանները հետապնդել են բանաստեղծին, հսկել տունը և համոզվել, որ փետրվարի 7-ից նա տանից դուրս չի գալիս։ 2. Փետրվարի 15-ի լույս 16-ի գիշերը Թումանյանի բնակարանում ևս խուզարկություն է կատարվել և իրեն իրեղեն ապացույց վերցվել է մի գիրք։ Թումանյանը չի ձերբակալվել հիվանդության պատճառով։

Օլգա Թումանյանի վկայությամբ, 1888 թ. ամուսնանալիս, երիտասարդ բանաստեղծը ունեցել է երկու գիրք. մեկը «Վերք Հայաստանին» էր, մյուսը՝ «Հյուսիսափայլի» մի համար։ Ինչպես երևում է «խուզարկության արձանագրությունից», 10—12 տարվա ընթացքում Թումանյանն իր սուղ միջոցներով կարողացել է ստեղծել, այն օրերի համար, մի պատկառելի գրադարան «...բաղկացած ավելի քան 2000 գրքերից, մեծ մասամբ հայերեն...»։ Խուզարկուի այն հարցին՝ կա՞ն արդյոք անթույլատրելի գրքեր, Թումանյանը պատասխանել է, թե անտեղյակ է իր գրքերի լեգալ կամ անլեգալ լինելու մասին և ցույց է տվել, ինչպես գրված է փաստաթղթում, Ջուբալովի «Современный социализм и революционеры» գրքույկը, որը և ստուգելու է տարել պահնորդական վարչության պետի տեղակալ Կրավչենկոն[18]։

Գրքի և՛ հեղինակը, և՛ վերնագիրը Կրավչենկոյի զեկուցագրում աղավաղված են, պետք է լինի՝ П. Зарубин, Современные социалисты революционеры (1879, Петербург)։ Սա մի գիրք է՝ գրված անցյալ դարի ռուս հեղափոխականների դեմ, որ պրոպագանդում է անխնա ոչնչացնել մատերիալիզմը իր բոլոր տեսակներով։

---

17 Նամակն անթվակիր է. տպագրված է 1902 թ. նամակների շարքում հարցականով (V, 257)։ Գրության տարին, ամիսն ու օրը ճշտվում են իշխանուհու՝ բանաստեղծին գրած 1902 թ. փետրվարի 6-ի նամակով, որի պատասխանը Թումանյանի այդ նամակն է (երկուսն էլ Թիֆլիսում էին, ուստի չի բացառվում, որ գրել ու ստացել են նույն օրը)։

18 ԹԹ, ՓԲ, № 43։ Պահնորդական բաժնի զրույցները գրված են ռուսերեն, ուստի մեջբերումները տրվում են թարգմանաբար։

Ինչպես տեսնում ենք, Թումանյանը դիտավորյալ է խուզարկուի ուշադրությունը հրավիրել հատկապես այդ գրքի վրա, իրենից քաղաքական մեղադրանքը հեռացնելու համար և, ինչպես ցույց են տալիս այլ գրություններ, հասել է նպատակին. նույն թվականի ապրիլի 12-ին, համաձայն ստացած ծանուցագրի, նա ներկայանում է IV քաղաքամասի պրիստավին և ետ ստանում որպես իրեղեն ապացույց տարված գիրքը[19]։

Այլ փաստաթղթերից պարզվում է, որ Թումանյանը կասկածի տակ է եղել որպես ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեի անդամ[20]. պատճառը Լալայանի բնակարանի երեկույթներին սոցիալ-դեմոկրատ Գ. Ղարաջյանի (Արկոմեդ) մասնակցությունն էր, մի աղջանուն, որ լավ ծանոթ էր պահնորդական բաժնին։

Ըստ Կրավչենկոյի ապրիլի 3-ի ներկայացրած զեկուցագրի, ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեի հետ կապված մարդիկ բաժանվում են չորս խմբի։ Առաջինի մեջ մտնում են իսկական անդամները. այստեղ այլ անունների հետ հիշատակվում է Գ. Ղարաջյանը։ Չորրորդ խմբում այն կասկածելի անձնավորություններն են, որոնց ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեի անդամ լինելը որևէ ձևով ապացուցված չէ. այստեղ են Թումանյանը, Երվ. Լալայանը և ուրիշներ[21]։ Ուրեմն՝ չնայած խուզարկությունը որևէ արդյունք չի տվել, այնուամենայնիվ, այս անգամ ևս բանաստեղծի անունը մնացել է կասկածելիների ցուցակում։

Երկու անգամ անբարեհույսների ցուցակներում տեղ գտնելը չէր կարող ինչ-որ չափով չարգելակել նաև բանաստեղծի գրական գործունեությունը։ Ակամայից մտածում ես, թե դեպքերի թարմ տպավորությունը չէ՞ր արդյոք պատճառը, որ գրաքննչական կոմիտեն նույն տարին (մայիսի 22-ին և դեկտեմբերի 7-ին) արգելում է «Տարազում» տպագրելու Թումանյանի հոդվածը՝ գրված Աղայանի 40-ամյա հոբելյանի առիթով և «Տարազի» խմբագրության՝ Թումանյանին ուղղած բաց նամակը «...в виду отступления редакции от программы» մակագրությամբ[22]։

---

19 Գիրքը պահվում է Թումանյանի թանգարանի՝ բանաստեղծի անձնական գրադարանում, 6-րդ պահարան, № 123։

20 ԹԹ, ՓԲ, № 44։

21 Նույն տեղում։

22 Նույն տեղում, № 40, 41։

900-ական թվականների սկզբին օրավուր ուժեղանում էին գոլիցինյան հալածանքները հատկապես կովկասահայության նկատմամբ: Հայկական ծխական դպրոցների փակմանը, մտավորականության հալածանքներին, բարեգործական ընկերության իրավունքների սահմանափակմանը հետևում է եկեղեցական կալվածքների պետականացման մասին ցարական կառավարության օրենքը 1903 թ. հունիսի 12-ին: Նոր հրովարտակը առաջացնում է նոր հուզումներ և խռովություններ, ուժեղանում են ազատագրական տրամադրությունները, բարձրանում է ժողովրդի ինքնագիտակցությունը, սաստկանում ատելությունը ցարի և նրա գործակալների նկատմամբ: Այդ շարժումների գնահատականը տրվել է Ստ. Շահումյանը իր 1904 թ. գրած «Երևանից (Հայ իրականությունից)» հոդվածում[23]:

1903-ի աշնանը մահափորձ է կազմակերպվում փոխարքա Գոլիցինի դեմ, որը թեպետ անհաջող է անցնում, բայց, հասկանալի է, ուժեղանում են ոստիկանական հետապնդումները: 1904 թ. հունվարին Պետերբուրգի դեպարտամենտին ուղարկված՝ հայազգի մի քանի քաղաքական բանտարկյալներից բանագրավված իրեղեն ապացույցների ցուցակներում (արգելված գրականություն, նամակներ, քաղաքական կոչեր, գենք) հիշատակվում են Թումանյանի դաշույնը, որի մասին ակնարկներ են եղել նամակներում և Թումանյանի անունով անհայտ անձնավորությունից ստացված նամակներ՝ 62 թերթից բաղկացած[24]:

Հետաքրքրական է մի այլ փաստաթուղթ՝ գրված նույն թվականի ապրիլին, որով պահնորդական բաժնի պետը ժանդարմական վարչությունից թույլտվություն է խնդրել խուզարկելու և բանտարկելու կամ միայն խուզարկելու որոշ հայ մտավորականների, որպեսզի կարողանան կանխել «Դրոշակակիրների» և «Հնչակյանների» ազդեցությունը նույն օրերին սպասվող ցույցի մասնակիցների վրա: Թումանյանի անունը խուզարկության ենթակաների մեջ է[25]: Լրացուցիչ փաստեր չկան ճշտելու համար, թե 1904 թ. ապրիլին արդյոք խուզարկություն եղե՞լ է բանաստեղծի բնակարանում, թե ոչ: Մի բան պարզ է, որ այս ան-

---

23 Ստ. Շահումյան, Երկեր, հատ. I, 1975, եր., էջ 48—49:

24 ЦГАОР, ДП ОО ф. 102, 1904, л, 13, 14: Այստեղ նշված է, որ հայտնաբերված է 62 թերթից բաղկացած նամակ. հավանաբար վրիպում է. պարզապես, գրված է письмо, բայց պետք է կարդալ письма:

25 Տե՛ս ԹԹ, ՓԲ, № 47:

դամ նա կասկածի ենթակա էր վերը հիշված դաշույնի և նամակների պատճառով. ո՞րտեղից են դրանք, ի՞նչ ճանապարհով են ընկել այդ բաղաքական հանցագործների մոտ կամ նամակներն իսկապե՞ս ուղղված են եղել բանաստեղծին, դժվար է ասել։ 1909 թ. գրություններից իմանում ենք, որ Թումանյանին շփոթել են Վոլոդգա աքսորված քաղաքական բանտարկյալ ինչ-որ մի ուրիշ Հ. Թումանյանի կամ Իվան Թումանովի հետ, թերևս, վերջինիս են առնչվում և՛ դաշույնը, և՛ կասկածելի նամակները։ Սակայն անկախ ամեն ինչից, 1904 թ. այդ խառն օրերին Թումանյանը չէր կարող դուրս մնալ պահնորդական բաժնի գործակալների տեսադաշտից։ Եթե հավատանք պահնորդական բաժնի գաղտնի գրություններին, 1903 թ. դեկտեմբերից Թումանյանն իբր եղել է կուսակցական ակտիվ գործիչ և նույնիսկ տնօրեն գաղտնի տպարանի[26]։ Իրականությունն այն է, որ 1903—1904 թթ. արդեն հիշված գրող լինելով, նա ընկերներ ու բարեկամներ ուներ գրեթե բոլոր կուսակցություններում։ «Թումանյանը ամենքինն էր,— գրում է Խանոյանը,— նրան բոլորն էլ սիրում էին։ Ինքն էլ խտրություն չէր դնում սրա ու նրա մեջ. նրա համար բոլորն էր «մեր տղաներն էին» (ԹԺՀ, 391)։

Չի բացառվում, անշուշտ, որ նա կարող էր կասկածանքի ենթարկվել հենց իր այդ կարգի կապերի համար։

1905 թ. փետրվարին, երբ սկսվեցին հայ-թուրքական ընդհարումները, Թումանյանն իր ամբողջ էությամբ նվիրվեց հարազատ ժողովրդի ինքնապաշտպանությանը և երկու հարևան ժողովուրդների հաշտեցման գործին։ Բաքվի կոտորածից (1905, փետրվարի 6—9) անմիջապես հետո հայ և թուրք մտավորականների որոշմամբ Թիֆլիսում կազմակերպվում է ցույց, որի նախապատրաստման առաջին շարքերում էր բանաստեղծ Թումանյանը (V, 295, ավելի մանրամասն տե՛ս III գլխում)։ Ցույցերը արվում էին ոչ միայն հանուն անդրկովկասյան ժողովուրդների հաշտության. դա եղել է նաև որոշակի վերաբերմունքի դրսևորում ցարական կառավարության՝ կոտորածների կազմակերպիչների դեմ[27]։

1905 թ. նոյեմբերի 22-ից ազգամիջյան սուր ընդհարումներ են սկսվում Թիֆլիսում, որից հետո Թումանյանը ընտանիքով տեղափոխվում է Հայրենի Դսեղ և ամբողջովին նվիրվում Լոռու ինքնապաշտպա-

---

26 Նույն տեղում, № 46։

27 Տե՛ս «Մշակ», 1905, № 20, 23, Լեո, Անցյալից, էջ 150։

նությանը։ Նոյեմբերի վերջերին տեղի է ունենում Բորչալուի թուրքերի հարձակումը Թիֆլիսի վրա, միաժամանակ ուժեղանում են բանվորական գործադուլները։ Լոռում սկսվում են ագրարային շարժումներ, Հաղպատի գյուղացիները ապստամբում են տեղի կալվածատերերի դեմ։

Ոստիկանությունը միմյանցից չէր տարբերում հեղափոխության տարբեր արտահայտությունները։ Նրա համար միևնույն էին քաղաքի գործադուլավորը և իր կյանքը փրկելու համար զենք վերցնող հայ գյուղացին կամ նրան առաջնորդող սպիտակ դրոշակակիր բանաստեղծը։ Ժողովրդի ինքնապաշտպանությունը համարվում էր տեռոր թուրքերի դեմ։ Եվ քանի որ Թումանյանն արդեն վաղուց «կասկածելի քաղաքացի» էր, պահնորդական բաժնում նրա անունը մտնում է «տեռորիստ հեղափոխականների» ցուցակի մեջ։

1905 թ. գրություններից մեկում հանդիպում ենք այսպիսի մի փաստաթղթի. ««Краткий список лиц, вошедших в сферу наблюдения в г. Тифлисе с 1-го февраля по 2-ое марта 1905 года». Ցուցակի մեջ մտնում են թիֆլիսաբնակ հայ, վրացի, ռուս, հրեա հեղափոխականներ՝ տարբեր կուսակցությունների պատկանող (սոցիալ-դեմոկրատներ, սոցիալ-հեղափոխականներ, դաշնակցականներ և այլն), այդ թվում՝ Ս. Խանոյան, Ա. Ջափարիձե, Միխա Ցխակայա, Ավ. Ահարոնյան, Հովսեփ Արղության և այլն։ Յուրաքանչյուրի անվան դիմաց գրված է կուսակցական պատկանելությունը և ոստիկանության հսկողության մեջ նրան տրված կեղծանունը։ Թումանյանը հետապնդվում էր Жокей կեղծանունով[28]։

Հայտնի է, որ բանաստեղծը ինքնապաշտպանության գործին մասնակից էր Բաքվի կոտորածից (1905, փետրվարի 6—9-ը) անմիջապես հետո, տակավին դավառներում ընդհարումները չսկսված։ Ինչպես երևում է վերջին փաստաթղթից, 1905 թ. նա հսկողության տակ էր փետրվարի 1-ից, դեռ Բաքվի դեպքերից էլ առաջ։ Այստեղից և պահնորդական բաժնի վերոհիշյալ փաստաթղթերից հետևում է, որ բանաստեղծի՝ 1908 թ. բանտարկության պատճառը չպետք է փնտրել միայն 1905—1906 թթ. նրա գործունեության մեջ, դա միայն պատրվակ էր[29]։

1905 թ. սեպտեմբերից գաղտնի գրություններում հաճախ է կրկնվում «Շմակով» կեղծանունը. սա այն գործակալն է, որ հետևել է

---

28 ԹԹ, ՓԲ, № 55։

29 Նույն տեղում, № 45—47։

Թումանյանին՝ հատկապես Լոռու, Բորչալուի շրջաններում ու վայրի-վերը, իրարամերժ տեղեկություններ ուղարկել բանաստեղծի մասին Թիֆլիսի ժանդարմական վարչություն։ Մի տեղ Թումանյանն իբր միջնորդ է դաշնակցության և գյուղական կոմիտեների, մի այլ տեղ՝ դատի է տրված դաշնակցությունից ինչ-որ գումար վատնելու համար կամ Խահակյանի հետ մասնակից է տեռորիստական խմբակի, Քոլազերան կայարանում նրա հրամանով սպանվել են երեք թուրք և այլն։ Նման մի անհեթեթ մեղադրանք հիշատակվում է Թումանյանի՝ զինվորական նահանգապետ Զոլոտարյովին ուղղած պաշտոնական նամակում, որ իբրև թե բանաստեղծը «սպանել է խեղճ անտառապահին՝ կողոպտելու նպատակով»։ Նամակն անթվակիր է, բայց բոլոր տվյալներից երևում է, որ գրված է 1906-ի մայիսին, ճիշտ այն օրերին, երբ «Շամակովը» հետևում էր Թումանյանին Լոռու շրջանում (V, 294)։

1906 թ. մայիսի 18-ի գրության մեջ ներկայացվում է մի այլ «մեղադրանք». «Լոռու շրջանում նա, կարծես, գեներալ-գուբերնատոր է, նրան է ենթարկվում ամբողջ տեղական ղեկավարությունը և ոստիկանությունը։ Նա շրջում է գյուղերում, գատ ու գատաստան տեսնում, տուգանում է գյուղերը... մինչև 500 ռ...»[30]։ Հշմարտությունն այն է, որ Թումանյանն անխնա էր գողերի, ավազակների, խաղ գրությունից օգտվող ու ամեն տեսակ օրենքներ ոտնահարող կալվածատերերի նկատմամբ։ Այդ մասին կան տպագրված նյութեր, Թումանյանի գրավոր, պաշտոնական բողոքները, ուստի ավելորդ է դրան անդրադառնալը (V, 286—302)։

Բայց մատնիչը նաև խորամանկ է. որպեսզի կարողանա պատճառաբանել Թումանյանի ազատ գործունեությունը, նրան համախոհ է հռչակում գավառի պաշտոնյաներին, հատկապես գավառապետին ու նրա օգնականին, պնդելով, թե վերջինները կաշառված են, Թումանյանի միջոցով դաշնակցությունից ստացել են 10 000 ռուբլի։

1906 թ. մայիսի վերջերին Թումանյանն արդեն տեղյակ էր, որ իր գործունեությունից գժգոհ է Թիֆլիսի պաշտոնեությունը, և կարգադրություն է արված իր ձերբակալության մասին, բայց այդ լուրերին նշանակություն չտալով, բանաստեղծը շարունակում էր գործել Լոռում, անձամբ շրջելով, աջ ու ձախ գրություններ ուղարկելով՝ պայքարում էր նույն սկզբունքայնությամբ։

---

30 ԹԹ, ՓԲ, № 51։

1908 թ. դեկտեմբերին՝ ստոլիպինյան ռեակցիայի ամենադաժան օրերին, Թիֆլիսում և հայաշատ այլ վայրերում սկսվում են ձերբակալությունները։ Զոհերը մեծ մասամբ հայ մտավորականներն էին, կուսակցական, թե անկուսակցական, մոտ 160 հոգի՝ գրողներ, ուսուցիչներ, հասարակական գործիչներ, բժիշկներ, իրավաբաններ և այլն, այդ թվում՝ Ավ. Իսահակյանը, Ավ. Ահարոնյանը, Ստ. Մալխասյանցը և ուրիշներ. բոլորի մեղադրանքը մտնում էր նույն «Դաշնակցության գործի» մեջ։

Թումանյանը որդու՝ Մուշեղի հետ բանտարկվում է 1908 թ. դեկտեմբերի 23-ի լույս 24-ի գիշերը։

Ի՞նչ են պատմում գաղտնի գրությունները. բերում ենք համառոտ քաղվածք բանտարկության վճռից։

«Ունենալով կասկած հարուցող տեղեկություններ հակաօրինական ընկերակցության պատկանելու մասին և ըստ զինվորական դրություն հայտարարված վայրերին վերաբերող կանոնների 23-րդ հոդվածի, ես՝ Թիֆլիսի նահանգական ժանդարմական վարչության պետի օգնականս, վճռեցի նախնական կալանքի վերցնել Հովհ. և Մուշեղ Թումանյաններին... (տրվում են նաև այլ ազգանուններ—Լ. Կ.) մինչև գործի պարզաբանումը»։ Ստորագրել է ռոտմիստր Պրիգարան[31]։

Ամենայն հավանականությամբ, «կասկած հարուցող հիմնավոր տեղեկություններ» ասելով, ռոտմիստրը նկատի ունի պահնորդական բաժնի՝ Օդեսայից ստացած դեկտեմբերի 23-ի զրույցը՝ Թիֆլիսում հեղափոխական նպատակներով դրամ կուտակելու, Թուրքիայից Բաթումի և Փոթիի վրայով դեպի Կովկաս զենք տեղափոխելու, Կովկասում ապստամբություն նախապատրաստելու մասին[32]։

Պետերբուրգ ուղարկված փաստաթղթերում Թումանյանի բանտարկության առիթը համարվում է նաև դաշնակցության «Արևելյան բյուրոյի» անդամներին հետապնդող գաղտնի գործակալների սպանությունը դեկտեմբերի 11-ին, ինչպես նաև մասնակցությունը Օդեսա, Փոթի, Բաթում զենքերի տեղափոխման, այն էլ՝ Թուրքիայից, կառավարության դեմ ապստամբություն նախապատրաստելուն, ոստիկանների սպանության և այլն[33]։ Ինչպես տեսնում ենք՝ բավական անհեթեթ մեղադրանքներ են, որոնք որևէ կապ չունեին Թումանյանի հետ։ Նրան իս-

---

31 ԹԹ, ՓԲ, № 60։

32 Նույն տեղում, № 57։

33 ЦГАОР ДП ОО ф. 102, 1909, оп. 239. ед. хр. 14.

կապես առնչվողը 1905—1906 թթ. խաղաղասիրական գործունեությունն էր և այն լուրը, որը տպագրեց «Մշակը» բանաստեղծի բանտարկությունն ազդարարելուց մի քանի օր հետո՝ «Մանկական գրադարան» մատենաշարով հրատարակված «Աղվեսը», «Ուլիկը», «Անհաղթ արտը», «Ծիտիկը», «Անբախտ վաճառականները» լույս տեսնելու մասին։ Նոր տարվա նախօրյակին էր, խորհուրդ էր տրվում «...այլևայլ անմիտ խաղալիքների և ընծաների տեղ՝ պարգևատրել մանուկներին այդպիսի շքեղ ու ընտիր մանկական գրքույկներով»[34]։

Հետաքրքրական է փաստաթղթերում պահվող դեկտեմբերի 24-ի խուզարկության ժամանակ վերցված իրեղեն ապացույցների ցանկը.

1. *Тук.* История революционного движения в России, Ростов н/Д

2. Գ. Խաժակ, *Դեսի ֆեդերացիա, Թիֆլիս, 1907։*

3. Խաչ-Ազատ, *Ի՞նչ է սահմանադրությունը, Թիֆլիս, 1907։*

4. Գ. Ղազարյան, *Հողը և նրա մշակությունը, Թիֆլիս, 1907։*

5. Կարլ Կաուտսկի, *Ներկայացուցչական կառավարչություն, Թիֆլիս 1906։*

Ապա նշվում է նաև «Переписка на армянском языке», *որի մեջ, ինչպես երևում է բանաստեղծի առաջին գրավոր ցուցմունքից, եղել են նյութեր՝ հավաքված «Վերք Հայաստանի» վեպի ուսումնասիրության համար։*

Գրքերի վերնագրերից պարզ է նրանց «տենդենցիոզ» քաղաքական բովանդակությունը և հասկանալի, թե ինչու դրանք կարող էին լուրջ հանցանշան հանդիսանալ որևէ քաղաքական մեղադրյալի համար, ուստի իրեղեն ապացույցները այլ նյութերի հետ ուղարկվել են Պետերբուրգի ոստիկանական դեպարտամենտ։ Մեր պրպտումների արդյունքը միայն ցուցակն է, իսկ գրքերի ու ձեռագրերի ճակատագիրն առայժմ անհայտ է.

Բանտարկյալ Թումանյանի առաջին հարցաքննությունը տեղի է ունեցել հունվարի 3-ին. պահպանվում են արձանագրությունը և բանաստեղծի՝ տարբեր օրեր քննիչ ռոտմիստր Պրիգարային ներկայացրած բանավոր ցուցմունքի գրավոր չորս լրացումները։

Թվարկելով իր անմեղությունն ապացուցող փաստեր, որոնք բոլորը կարելի է հաստատել պաշտոնական թղթերով, նամակներով, հեռագրերով ու կենդանի վկաներով, Թումանյանը գրում է, թե գործել է հեղափոխության եռուն շրջանում, և, չնայած դրան, առաջնորդվել է

34 *«Մշակ», 1908, № 290։*

ո՛չ կուսակցական մղումով կամ «...ո՛չ ինչ-որ մեկին դուր գալու համար, այլ խորը դիտակցությամբ և մաքուր խղճով, դատելով իբրև գրող-բանաստեղծ, որը ծառայում է հանուն լավ և ազնիվ գործի։ Այդպես եմ ես հասկացել ժողովրդի շահերը»։

Այս ցուցմունքները, ինչպես և փոխարքա Վորոնցով-Դաշկովին և Թիֆլիսի ժանդարմական վարչության պետին ուղղված խնդրագրերը (առաջին անգամ տպագրված ՈՒՀ 3, 335—350), արժեքավոր վկայություններ են սկզբունքային մարդու և մեծ քաղաքացու մասին։ Սեփական և ազգային արժանապատվության բարձր զգացողությամբ էր նա գրիչ վերցնում, առանց որևէ զիջում անելու դիմացինի պաշտոնին, չվախենալով իրեն շրջապատող բանտի պարիսպներից և սպառնացող ցրտաշունչ հյուսիսից։ Հավատ սեփական անձի ու գործի նկատմամբ և լավատեսություն—սրանք էին առաջնորդում բանաստեղծին։

Նա վրդովված էր, մանավանդ, իրեն տրված «տեռորիստ» մեղադրանքից. «...Դուք կարծում եք, որ ես ընդունակ եմ ատրճանա՞կ օգտագործելու,— գրում է նա։— Բայց ինչպե՞ս կարող էի ես չօգտվել մի այլ զենքից՝ իմ բանաստեղծական տաղանդից և իմ գրչից, որոնք, հավատացեք ինձ, ավելի զորավոր են, քան բոլոր տեսակի ատրճանակները» (ՈՒՀ 3, 340)։

Խնդրագրերի մեջ էլ Թումանյանը խնդրողի դերում չէ, այլ բողոքողի։ Նա պահանջում էր հայտնել իր մեղադրանքն ապացուցող բոլոր փաստերը, որպեսզի կարողանա մեկ-մեկ հերքել, հակառակ դեպքում՝ ինքն էլ կարող է նմանվել այն մարդկանց, որոնք ամիսներով մնում են բանտերում և ապա անմեղ ճանաչվելով՝ ազատվում։

Թումանյանի գրավոր լրացուցիչ ցուցմունքները ազդեցություն չեն գործում, ավելին՝ դրանք հասցեատիրոջը հասնում են միայն հունվարի վերջին։ Հետաքննությունը հետևում էր իր օրենքներին, և հունվարի 16-ին, համաձայն Պետերբուրգից ստացված հեռագրի՝ որոշվում է Հովհաննես և Մուշեղ Թումանյանների ձերբակալության ժամկետը երկարացնել մինչև գործի քննության ավարտը[35], իսկ փետրվարի 19-ին ստացվում է նաև փոխարքայի պատասխանն այն մասին, թե ինքն իրավասու չէ միջամտելու խնդրատուի գործին, քանի որ վերջինս իր մեղադրանքով գտնվում է Ռուսաստանի ներքին գործերի մինիստրության տրամադրության տակ[36]։

---

35 ԹԹ, ՓԲ, № 72։

36 Նույն տեղում, № 85, 86, 92։

Ինչպես երևում է պահպանվող փաստաթղթերից, հանցանքների որոնումն ու «ստեղծումը» շարունակվել է նաև բանտարկությունից հետո։ Հունվարի 8-ին հարցաքննվում է Երևանի մարզային դատարանի երդվյալ հավատարմատար Լևոն Մուշեղյանը, որը Թումանյանի հետ մասնակցել էր 1905 թ. ապրիլի 3—5-ը Թիֆլիսում տեղի ունեցած համազգային համագումարին։ Համագումարը գաղտնի չէր, այն նպատակ ուներ հայ ժողովրդի կարիքների մասին խնդրագրեր կազմել և ներկայացնել Կովկասի նոր նշանակված փոխարքա Վորոնցով-Դաշկովին և Ռուսաստանի մինիստրների խորհրդին։ Չհայտնելով որևէ փաստ Թումանյանին վերագրվող հանցանքների մասին, Երևանից հրավիրված վկան ընդհանուր տեղեկություններ է տվել հիշյալ համագումարի, նրան հաջորդող բանկետի, Թումանյանի կատակ-էքսպրոմտի վերաբերյալ[37]։ Վկան հայտնում է նաև, որ 1908 թ. դեկտ. 1-ին եղել է բանաստեղծի տանը (որը հավանաբար հայտնի էր հետաքննությանը և, թերևս, այդ էր պատճառը վկային Երևանից Թիֆլիս բերելու), խոստովանում է, որ տիրում է նրան որպես բանաստեղծի։

1909 թ. փետրվարի 14-ին է հայտնի դարձել, որ իբրև թե Մուշեղ Թումանյանը մասնակցել է Թիֆլիսի III իգական գիմնազիայի ուսուցիչ Կոգանի դեմ 1908 թ. կատարված մահափորձին։

1909 թ. մարտ-ապրիլ ամիսներին Թումանյանին վերաբերող գաղտնի գրությունների վրա նոր ազդանուն է երևում. դա սահմանադրական քննիչ Լիժինն է, հայտնի իր դաժանությամբ։ Տեսնելով, որ ժամանակ է պետք քիչ թե շատ համոզիչ մեղադրական գործ ստեղծելու համար, նա համաձայնություն է տալիս երաշխավորությամբ ազատելու մի քանի բանտարկյալների, այդ թվում և Թումանյանին ու Իսահակյանին։ Մուշեղ Թումանյանը հինգ ու կես ամիս Մետեխի բանտում մնալով՝ անպարտ է ճանաչվում։

Բանտից ազատվելուց հետո (1909 թ. հունիսի 13-ից) Թումանյանի վրա ավելի խիստ հսկողություն է սահմանվում։ Գրություններից մեկում երևում է 1908 թ. բանաստեղծին հետապնդող մի նոր գաղտնի գործակալ՝ ծպտված «Մանասյանց Ստալնոյ» անվան տակ։ Պահնորդական բաժինը հաճախակի իր գրություններում հավաստիացնում է Պետերբուրգի ոստիկանական դեպարտամենտին, որ Жокей—Թումանյանը Թիֆլիսում է և «շարունակում է հանցագործությունները». Օրի-

37 Նույն տեղում, № 68։ Այդ մասին տե՛ս նաև ԹԺՀ, 293, 935։ Կատակ-էքսպրոմտը տե՛ս I, 510—511։

նակ՝ հրաման է տվել տեռորիստներին «սպանելու մատնիչ Շահաբաս Շահվերդովին», այսինչ օրը թաղման և ապա եկեղեցում հավաքույթի է գնացել Աղայանի, Փափազյանի հետ, կամ՝ իր տանը հյուրընկալելով Խաչատրյանին, Սիմոն Հակոբյանին, բժ. Արշակ Թադեոսյանին, զրուցել է աշակերտական կազմակերպություն ստեղծելու, բանտարկություններ պատճառով Գեորգյան ճեմարանում և Ներսիսյան դպրոցում լավորակ ուսուցիչների պակասի մասին և այլն: Սրանք տարբեր գրություններից բաղված «փաստեր» են, և դժվար չէ կռահել, որ հաղորդված են նրա ամեն քայլի մեջ մատնված հանցանշաններ որոնող և «ստեղծող» հատուկ մարդու միջոցով[38]:

Իսկ ինչո՞վ էր զբաղված Թումանյանը: 1909 թ. օգոստոսի 16-ին, երբ դեռևս երկու ամիս էր՝ ինչ երաշխավորությամբ ազատվել էր կալանքից, նա մեկն էր այն ինը մտավորականներից, որոնց հրավիրել էր Ավ. Արասխանյանը՝ «Գրականներին, գիտնականներին, մանկավարժներին օգնող հայոց ընկերություն» ստեղծող հիմնադիր ժողովին մասնակցելու: 1910 թ. ապրիլի 24-ին Թումանյանը նույնպես ստորագրում է այդ ժողովի որոշած կանոնադրության նախագծի տակ: Քիչ անց՝ 1910-ի ամռանը, բանաստեղծը ստանձնում է նոր ծանր գործ՝ «Հորիզոն» օրաթերթի խմբագրությունը, և մի նոր թափով մտնում հրապարակախոսական գործունեության մեջ, բայց և շարունակում պատրաստել «Լուսաբեր» դասագրքի տարբեր տարիները, «Հայ գրողներ» քրեստոմատիայի II հատորը և այլն:

1911 թ. հունվարին լուրեր են հասնում պահնորդական բաժին, թե «Հորիզոնի» խմբագրատունը դաշնակցության ղեկավար անդամների ժամադրավայրն է, և հունվարի 12—19-ը գաղտնի հսկողություն է սահմանվում խմբագրատան շուրջը: 19-ին ցերեկը խմբագրատուն են ներխուժում պահնորդական բաժնի գործակալները, խուզարկում, կալանավորում են Թումանյանին, թերթի այլ աշխատակիցների ու պատահական այցելուների՝ այդ թվում՝ Ալ. Շիրվանզադեին, Երվ. Լալայանին և ուրիշների:

Պահպանվել է այդ խուզարկության վճիռը, որտեղ կրկնվում են Թումանյանին տրված նախկին բոլոր մեղադրանքները՝ նոր խմբագրումներով և «հարստացած» քննիչ Լիժինի երևակայության նոր պը-

---

38 ՀՊԳԱՕՐ ԴՊ ՕՕ, ֆ. 102, 1909, օп. 147, ед. хр. 1660, л. 190, նույն տեղում, оп. 147, ед. хр. 1660, л. 196, նաև՝ оп. 239, 1909, ед. хр. 14, л. 14:

տուղներով[39]։ Վճիռը և բանաստեղծի բնակարանում չորս ժամ տևած խուզարկության եզրակացությունը ցույց են տալիս, որ ոստիկանությունը զենք է փնտրել և գաղտնի նամակագրություն, որովհետև, ըստ լրտեսական տվյալների, իբրև թե Թումանյանն էր տնօրինում զենքի պահպանության գործը Թիֆլիսում և նրա տանն էր պահպանվում դաշնակցության գաղտնի գրագրությունը[40]։ Այդպիսիք չհայտնաբերելով, պահնորդական բաժին են տարվում մի փոքր դանակ, երկու բանալի, բանաստեղծի ձեռագրերը, ստացած նամակները և այլ նյութեր 12 պարկով, որոնք հետո պաշտոնապես վերադարձվում են։ Բանտարկությունը տևում է մեկ օր։

Ավելորդ է ասել, թե ինչ ծիծաղելի վիճակի մեջ պետք է ընկած լիներ իրենց սպասածին չհասած Լիժինի գործակալները, բայց Թումանյանի համար ստեղծվում են նոր մտահոգություններ, որոնցից ամենանշանակալիցը երկու պարկ ձեռագրերի կորուստն էր։ Այնուհետև, մեկ օրվա՝ հունվարի 19-ի, բանտարկության պատճառով լույս չի տեսնում «Հորիզոնի» հունվարի 20-ի համարը և ապա՝ (որը շատ ավելի զգալի եղավ) տարվա սկիզբն էր, անհրաժեշտ էր հնարավորին չափ շատ բաժանորդներ ունենալ օրաթերթի համար, այնինչ, ինչպես վկայում է ինքը՝ բանաստեղծը, այդ դեպքի պատճառով, նախորդ տարվա համեմատ, բավականաչափ պակասում է բաժանորդների թիվը[41]։

Հրապարակվել է բանաստեղծի դիմումը՝ գրված 1911 թ. հունվարի 28-ին, որով նա Թիֆլիսի ժանդարմական վարչությունից ետ է պահանջում կորած ձեռագրերը (ՈՒՀ 3, 350)։ Հայտնի է, որ դրանց մեջ են եղել «Հին կռիվը» և «Հաղարան բլբուլ» պոեմների որոշ հատվածներ, մի այլ պոեմ, որը սկսվում է «Ես վայր եմ իջնում հայոց լեռներից...» տողով, «Քաջ Նազարի» 1908 թ. մշակումը և այլ նյութեր, այն օրերին բոլորն անտիպ։ Մի քանի տարի հետո Թումանյանը երկու անգամ օրաթերթերում ափսոսանքով հիշեցրել է իր կորուստը[42], բայց անօգուտ. ձեռագրերի ճակատագիրն այդպես էլ մնացել է անհայտ։

Չնայած հետապնդումներին և հսկողությանը, պահնորդական բաժինը չէր կարողանում մեղադրական գործի մեջ ավելացնել նոր հան-

---

39 ԹԹ, ՓՌ, № 123։

40 ԹԹ, ՓՌ, № 125, 127։

41 «Հորիզոն», 1911, № 13, ՈՒՀ. 1, 380, 381։

42 «Հորիզոն», 1915, № 243, «Հառաջ», 1919, № 11։

ցանշաններ։ 1911 թ. սեպտեմբերի 6-ի մի փաստաթղթով պահնորդական բաժինը տեղեկություն է ստանում քաղաքային հասցեների վարչությունից, որ բանաստեղծը Մանգլիսից Թիֆլիս վերադարձել է օգոստոսի 29-ին[43]։ Սեպտեմբերի 8-ին Թիֆլիսի ժանդարմական վարչությունը դիմում է պահնորդական բաժնի պետին իմանալու՝ «Հորիզոնի» խմբագրության, «Հերմես» տպարանի և Նիկոլաևյան նրբանցքի կաթնեղենի խանութի հսկողության արդյունքը։ Այնուհետև հարցնում են՝ հաստատվե՞լ է, արդյոք, այն տեղեկությունը, թե Թումանյանը և ուրիշներ հավաքվում են տպարանի տնօրեն Բագրատ Հարությունյանի մոտ։ Երեք օր հետո ստացված պատասխանը հերքում է եղած կասկածը գաղտնի հանդիպումների մասին, չհաշված այն, որ Թումանյանը իսկապես այցելում էր «Հորիզոնի» խմբագրատուն, ուր աշխատում էր նա[44]։

Լուրերի մի մասը ունեն ինչ-ինչ հիմնավորումներ։

Այսպես, պահնորդական բաժնում գրանցված են Թումանյանի բնակարանում տեղի ունեցած 1911 թ. մայիսի 15-ի, Ավ. Ահարոնյանի տան՝ մայիսի 22-ի, «Мон плезир» այգու՝ մայիսի 26-ի «գաղտնի ժողովները», որոնց մասնակիցների ցուցակներում նշված են մասամբ «Դաշնակցության գործով» մեղադրվածներ՝ ժամանակավորապես ազատ կալանքից, ինչպես և Թումանյանի մտերիմները, այդ թվում՝ Ավ. Իսահակյանը, Ղ. Աղայանը. Դ. Դեմիրճյանը, բժ. Ար. Զարդարյանը, Դ. Խատիսյանը և ուրիշներ, բոլորը՝ հսկողության իրենց կեղծանուններով[45]։ Այդ տվյալները հիշեցնում են Աշխեն Թումանյանի վկայությունը, թե ինչպես Դ. Խատիսյանը՝ նրա ամուսինը, ձեռք էր բերել դատական գործի տպագրված համառոտագրությունը և մանրամասնորեն ուսումնասիրում էր որպես Թումանյանի ապագա պաշտպան, այդ գործում ներգրավելով նաև մտերիմ մարդկանց, ինչպես և իրեն՝ Աշխեն Թումանյանին. «Կազմում էինք բոլոր մեղադրյալների քարտերը» (ԹԺՀ, 634)։ Շատ հավանական է, որ հետապնդված այդ «ժողովները» եղել են Խատիսյանի նախաձեռնությունը. անմիջականորեն շահագրգռված մարդիկ հավաքվել են գործին ծանոթանալու համար, իսկ «զգոն» լրտեսները նոր թղթերի ու եզրակացությունների հող են նախապատրաստել։

---

43 ԹԹ, ՓՐ, № 146։

44 Նույն տեղում, № 143, 144։

45 Նույն տեղում, № 158։

Այնուամենայնիվ, Թումանյանին մեղադրելու համար հանցանշանների բացակայությունը չի արգելում, որ, Պետերբուրգի կառավարական սենատի կարգադրությամբ, երաշխավորությամբ ազատված բանաստեղծը 1911 թ. հոկտեմբերի 31-ին նորից ձերբակալվի և տեղափոխվի Պետերբուրգ։

Այսպիսով՝ առանձին կարևորություն է ներկայացնում Հովհ. Թումանյանի և պահնորդական բաժնի փոխհարաբերության, ինչպես և բանտարկության ու դատավարության պատմությունը։ Ներկայացվող նյութերը, 1912 թ. Պետերբուրգից Թիֆլիս ուղարկած նամակների հետ, ուշագրավ վկայություններ են այն մասին, որ բանաստեղծը հուսահատության, հոռետեսության կամ արածի նկատմամբ ափսոսանքի որևէ զգացում չի ունեցել։ Նույնիսկ դատավարության օրերին, երբ տակավին պարզ չէր, թե ինչ վախճան էր ունենալու գործը, նա ունկընդիր էր միայն իր ներքին ձայնին. «Լինել մաքուր և արդար՝ էդ մեծ բան է։ Դա տալիս է կայտառություն և ամեն, ամեն ինչ, և առողջություն» (V, 364)։

Իհարկե Թումանյանի ցուցմունքների ու դատի ժամանակ իր՝ ՀՀ. դաշնակցության անդամ լինելը ժխտող փաստարկներով չի կարելի որոշել նրա՝ այդ կուսակցության մեջ լինել-չլինելու հարցը։ Բացի ժանդարմական վարչության նյութերից, առայժմ միակ վկայությունը Արշակ Ջամալյանի հուշն է այն մասին, որ Թումանյանը 1905 թ. ապրիլին Դաշնակցության կովկասյան առաջին շրջանային ժողովին մասնակցել է որպես Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի անդամ[46]։ Սակայն նրան հետաքրքրողը միայն ինքնապաշտպանությունն էր, խաղաղությունը, որի սպիտակ դրոշը հակասում էր ցարական բյուրոկրատիայի՝ ժողովուրդների համար հնարած չար խաղին (IV, 421)։

Բանաստեղծը կարողացավ ապացուցել, որ ինքը միայն խաղաղության համար է գործել և Պետերբուրգի կառավարական սենատի հատուկ ատյանում 1912 թ. մարտի 20-ին անպարտ ճանաչվելով, ապրիլին վերադարձավ տուն։

---

46 «Վեմ», հանդես, Փարիզ, 1932, № 2։

II

ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ԷՋՄԻԱԾՆԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում Թումանյանի կյանքի այն շրջանները, որոնք առնչվելով էջմիածնի հոգևոր գործիչների հետ՝ նոր ուղղություն էջեր են բաց անում նրա կենսագրության մեջ, որոշ դեպքերում մատնանշելով Թումանյանի ստեղծագործության, հրապարակախոսության ու հասարակական գործունեության միջև գոյություն ունեցող սերտ կապը՝ սկսած 90-ական թթ. մինչև 1905—1906 թթ. և հետագա տարիները։

Անշուշտ, այստեղ հարկ չկա գնահատելու այն դերը, ինչ ունեցել է էջմիածինը դարեր շարունակ պետականություն չունեցող մեր ժողովրդի պատմական ճակատագրի համար ու հոգևոր մշակույթի զարգացման բնագավառում։ Այդ դերը յուրովի գնահատում էին անցյալի բոլոր հայ առաջադեմ գործիչներն ու գրողները։ Էջմիածնի հոգևոր իշխանության դերը այդպես էր գնահատում նաև Թումանյանը, ուստի հասկանալի է այն բուռն հետաքրքրությունը, որ ցուցաբերել է նա իր ժամանակի կաթողիկոսական ընտրությունների նկատմամբ, կաթողիկոսների գործունեության և դեպի էջմիածնի միաբանությունն ընդհանրապես։

Հետևելով էջմիածնի միաբանների գիտաբանասիրական ու պատմագիտական աշխատանքներին՝ բանաստեղծը ծանրակշիռ խոսք է ասել մի շարք միաբանների մնայուն գործերի մասին։ Նա լավ ծանոթ էր Գալուստ Տեր-Մկրտչյանի գիտական գործունեությանը և ըստ ամենայնի գնահատում էր այն, ուստի պատահական չէ, որ իր խմբագրությամբ հրատարակվող օրաթերթը՝ «Հորիզոնը», լուրջ և արժեքավոր հոդվածներով հարստացնելու համար նրան է դիմում. «Եվ ո՞րքան ցանկալի էր, որ մեր կյանքի, մեր աշխարհի, լեզվի, մեր գրականության վրա լիներ խոսքդ, մենք մեզանից միանգամայն անտեղյակ մի ժողովուրդ ենք» (V, 347)։

Թումանյանը բարձր էր գնահատում Մխիթարյան միաբանության բազմաբեղուն գործունեությունը հայ մշակույթի հարստացման, եվրոպական դասականների հետ ծանոթացնելու բնագավառում։ 1901 թ. այն օրերին, երբ նա կատարում էր իր հայանի ճամփորդությունը Ավ. Իսահակյանի և Հովհ. Կոստանյանի հետ (ԹԺՀ, 13—15, 461—463), մասնակցել է Ալեքսանդրապոլի երիտասարդության կազմակերպած հանդիսավոր տոնակատարությանը՝ նվիրված Մխիթարյան միաբանության 200-ամյա հոբելյանին[1] և իր դրչակից ճամփորդ ընկերների հետ հետևյալ ջերմ ու բովանդակալից հեռագիրն ուղարկել Ս. Ղազար.

1901, սեպտեմբերի 3,
Ալեքսանդրապոլ

Վերապատվելի հայրեր.

Հանապարհորդելով Շիրակի գավառում ու ման գալով նրա ավերակները, մենք անդադար հիշում էինք ձեր բազմավաստակ միաբանությունը, որ պանդիտության մեջ երկու հարյուր տարի շարունակ երգեց ու պատմեց մեր տխուր հայրենիքն ու նրա ավերակները, և առաջինը մայրենի լեզվով մեզ ծանոթացրեց եվրոպական հանճարների հետ։ Երախտագետ սրտով ողջունում ենք ձեր պանծալի հոբելյանը, համբուրում անմահ Մխիթարա և նրա մեծանուն հետնորդների շիրիմները։

Հովհ. Թումանյան
Հովհ. Կոստանյան
Ավետիք Իսահակյան[2]

---

1 Այդ տոնակատարությանը մասնակցելու մասին հիշատակվում է բանաստեղծի կնոջը ուղղված սեպտեմբերի 4-ի նամակում (անտիպ է, ինքնագիրը տե՛ս ԴԱԲ, Թ3, ց 3 № 47)։ Ինքնագրում սխալմամբ գրված է օգոստոսի 4. ճշտվում է ճամփորդության տվյալներով. Թումանյանը Անիից Ալեքսանդրապոլ վերադարձել է սեպտեմբերի 1-ի լույս 2-ի գիշերը և նույն օրը՝ սեպտեմբերի 2-ի երեկոյան մասնակցել հոբելյանական հանդեսին, որտեղ զեկուցել է Պ. Մոճոռյանը, ներկայացվել է երկու վոդևիլ։ Երեկույթին մասնակցել են նաև դերասան Խաչակը, կոմպոզիտոր Նիկողայոս Տիգրանյանը (դաշնամուր) և ուրիշներ («Մշակ», 1901, № 198)։

2 Տե՛ս «Հիշատակարան երկհարյուրամյա հոբելյանի Մխիթարյան միաբանության ի Վենետիկ», Վենետիկ, Ս. Ղազար, 1901, էջ 144—145։

Գարեգին Հովսեփյանի «Մանրանկարչությունը հայոց մեջ» աշխատության մասին 1911 թ. գրած իր հոդվածում («Արևելքից արևմուտք»), անդրադառնալով ընդունված այն ճշմարտությանը, թե գրական-գիտական-բանասիրական գործունեությամբ էջմիածինը երբեք չի հասնում Մխիթարյան միաբանների մակարդակին, Թումանյանը միաժամանակ հույս էր հայտնում, որ առաջիկայում այդ իմաստով, «էջմիածինը փորձելու են նոր միաբանները՝ իրենց գրական-գիտական գործերով և ժամանակի ընթացքում, ամենայն հավանականությամբ, խլելու են մխիթարյաններից առաջնության պատիվը այդ ասպարեզում» (VI, 193)։ Իր այդ կարծիքը հայտնելիս, հեղինակը, բացի նախորդ տարիներից հայտնի ուսումնասիրությունները, հենվում էր Գ. Հովսեփյանի վերը հիշված աշխատության, Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանի՝ էջմիածնի, Երուսաղեմի և այլ տեղերի ձեռագրաց ցուցակի, Տիրայր վարդապետի՝ Օքսֆորդի ու Մանչեստրի հայ ձեռագրերի ցուցակի և միջնադարյան տաղարանների ուսումնասիրության, Սահակ վարդապետ Ամատունու «Բառ ու բանի» և Կոմիտասի բազմարեղուն գործունեության վրա։

Թեպետ ժամանակի ու հանգամանքների բերումով Թումանյանի այդ հույսերը իր կենդանության օրոք չարդարացան, բազմաթիվ ծրագրեր մնացին թերի ու անկատար, բայց այս դեպքում այդ չէ կարևորը, այլ նրա վերաբերմունքը, տված գնահատականները և իրական հիմքեր ունեցող սպասելիքները։ Գ. Հովսեփյանի գրական գործունեությունը արժեքավորող մի այլ վկայություն է հետևյալ փաստը։

Հայտնի է, թե ինչպիսի հարուստ ու բովանդակալից գործունեություն է ծավալում Հայ գրողների կովկասյան ընկերությունը Թումանյանի գլխավորությամբ՝ պարբերաբար կազմակերպված գրական երեկույթներով։ Մեծ է այդ երեկույթների, զեկուցումների, ասուլիսների դերը հայ և օտար ժողովուրդների գրականության պրոպագանդման, ունկնդիրներին հայ անցյալ ու ներկա գրականության և պատմահասարակական արդիական նշանակություն ունեցող խնդիրների հետ ծանոթացնելու առումով։ Այդ տեսակետից ուշագրավ է Գ. Հովսեփյանի գիտական գործունեությունը արժեքավորող մի այլ անտիպ փաստ, որից երևում է, թե ինչքան բազմակողմանի բնույթ էր ուզում տալ Թումանյանն իր կազմակերպած գրական երեկույթներին։ Պահպանվում են բանասաղեծի 1913 թվականի հուլիսի 14-ի նամակը Գ. Հովսեփյանին և վերջինիս օգոստոսի 4-ի պատասխանը, որոնցից պարզվում է, որ Թումանյանը դիմել էր հոգևորական բանասերին, խնդ-

բելով նրան՝ գրողների ընկերության երեկույթներից մեկում զեկուցել հայ եկեղեցական նկարչության մասին։ Գիտնականի բարեխղճությամբ և մեծ պատասխանատվությամբ մոտենալով գործին, Գ. Հովսեփյանը իր հիշյալ նամակում հանդամանորեն ներկայացնում է պահանջվող թեմայի պատրաստման դժվարությունները՝ կապված Անի մեկնելու, նկարահանումներ անելու համար նյութական հարցերի հետ, միաժամանակ խոստանալով՝ հնարավորության սահմաններում կատարել բանաստեղծի խնդրանքը[3], թեև, որքան մեզ հայտնի է, այն հնարավոր չի լինում ի կատար ածել (անտարակույս, խանդարիչը դրամական դժվարությունն էր)։

1912 թ. Սահակ Ամատունու «Հին ու նոր պարականոն շարականներ» գիրքը ստանալու կապակցությամբ Թումանյանը ջերմորեն է ողջունում աշխատության տպագրությունը և առանց թաքցնելու իր վերաբերմունքը, հեղինակին գրում է. «Էջմիածինը որքան կարևոր լինի իր վարչական նշանակությամբ, ավելի սիրելի է դառնալու, երբ գրական ու գիտական գործերը ճոխանան ու հաճախանան նրա պարիսպների մեջ։ Եվ ինձ համար էդ տեսակի գործերն ու գործիչները միշտ մնալու են ավելի թանկ ու սիրելի, քան ամեն տեսակի պաշտոնյաներ» (V, 377)։

1913 թ. լույս է տեսնում նույն գիտնականի «Հայոց բառ ու բան» աշխատությունը, որի գնահատականը բանաստեղծը, ինչպես տեսանք, տվել էր տակավին գիրքը լույս չտեսած։ «Առանց էդ տեսակ աշխատանքների անկարելի է ստեղծել մեր գրական լեզուն,— գրում է նա գրքի հետ ծանոթանալուց հետո։— Նոր կյանքի ու նոր ազդեցությունների պատճառով շատ արագ կերպով կորչում են էդ ամեն բառ ու բաները և ով նրանց փրկի կորուստից ու մահից, նրանց հետ միասին կանմահացնի իրեն» (V, 383)։

Օգտվելով բանաստեղծի՝ իր նկատմամբ ունեցած վերաբերմունքից և առաջին գրքին տված գնահատականից, Սահակ Ամատունին խնդրել է նրան հիշյալ գրքի երկրորդ հրատարակության համար ուղարկել լոռու այն բառ ու բանից, որ չկան իր հրատարակության մեջ[4]։ Բանաստեղծը, ծանոթացնելով Ամատունուն իր ծրագրերի հետ, խոստանում է գրողների ընկերության «Հայոց լեզվի խնդրին» նվիր-

---

3 Տե՛ս «Թումանյանը արվեստի մասին», Եր., 1969, էջ 185, ԳԱԹ, Թֆ, ց 2, № 291։
4 ԳԱԹ, Թֆ, № 496։

ված երեկույթներից մեկում անդրադառնալ նաև «Բառ ու բանին», սակայն, ինչպես շատ այլ ցանկություններ, այդ ևս բաղմաբեղ բանաստեղծը իրականացնել չի կարողացել, թեպետ Ամատունու աշխատության մասին արտահայտվել է Հ. Աճառյանի «Հայերեն գավառական բառարանի» մասին հրապարակած դրախոսականում (IV, 402) և այնուհետև՝ հայոց լեզվի զարգացման տարբեր փուլերի, լեզվաոճական զանազան հարցերի մասին թողած սեպագիր ծրագրային նշումներում (VI, 168)։

Ինչպես տեսանք, իր կյանքի հասուն տարիներին Թումանյանը միանգամայն դրական վերաբերմունք ուներ էջմիածնի մնայուն արժեքներ ստեղծող գիտնական հոգևոր գործիչների նկատմամբ։

Տակավին երիտասարդ, գրագրի պաշտոն ունենալով Թիֆլիսի առաջնորդարանի հոգևոր կոնսիստորիայում (1887—1892), Թումանյանը շփվել էր նախ անաշխատ՝ ու ազնիվ կղերականների հետ։ Մեծ հեղինակություն ու համբավ ունեցող Թիֆլիսի հայոց թեմի առաջնորդ Արիստակես եպիսկոպոս Սեդրակյանի հեռանալուց հետո առաջնորդարանի միջավայրի արագ փոփոխությունը աղդում է նոր կյանք մտնող երիտասարդ բանաստեղծի աշխարհայացքի վրա։ Սեդրակյանին փոխարինող Մամբրե եպիսկոպոսը իրեն անմիջապես շրջապատում է այնպիսի կրոնավորներով, որոնք շուտով հոգևոր հիմնարկությունը վեր են ածում անառականոցի, զզվանք ու ատելություն հարուցելով բանաստեղծի մեջ։ Հայտնի են կոնսիստորիայի՝ իր հակառակորդների դեմ դրած «Միամիտներին», «Չարամիտներին», «Դարձյալ նրանց» և այլ բանաստեղծություններ, որոնք սկիզբ են դնում հոգևորականության հետ սուր հակադրության և լարված փոխհարաբերությունների ու պատճառ դառնում բանաստեղծի՝ աշխատանքից վտարելուն[5]։

Քաջատեղյակ հայ ժողովրդի պատմության՝ բանաստեղծն ուներ նաև կատարյալ հոգևորականի իր պատկերացումը։ Ընկերոջ՝ Արսեն Ղլտճյանի, արեղա ձեռնադրվելու կապակցությամբ նրան շնորհավորելիս, Թումանյանը մաղթում էր առաջնորդվել պատանեկության տարիներին իրենց փայփայած «փայլուն իդեալներով» և դժվարությունների միջոցին հիշել այնպիսի հոգևոր գործիչների, ինչպիսիք են Ներսես Մեծը, Սահակ Պարթևը, Ղևոնդ Երեցը, Եղիշեն, Ներսես Աշտարակեցին (V, 75)։ Բանաստեղծի իդեալը, տվյալ դեպքում, այն հոգևոր գործիչներն են, որոնք հավատը ծառայեցնելով ազատագրական պայքարին,

5 Մանրամասնությունները տե՛ս Ա. Ինճիկյան, էջ 203—221։

առաջնորդել էին ժողովրդին՝ զոյատևման համար նրա մղած սրբազան մարտերում։

* * *

Թումանյանի մուտքը գրական-հասարակական ասպարեզ զուգադիպեց Արևմտյան Հայաստանում սկսված ազատագրական շարժումների նոր զարթոնքին, որը խոր ազդեցություն էր թողել Թիֆլիսի հայ առաջադեմ երիտասարդության վրա։ Հայկական հարցի դրական լուծման հեռանկարով էր ապրում ժողովրդի փրկության հույսերով խանդավառված երիտասարդությունը։

1891 թ. մեռնում է Մակար կաթողիկոսը, և հրապարակ է գալիս նոր հայրապետի ընտրության անհետաձգելի գործը՝ արևմտահայ ժողովրդի համար կարևոր իրադարձությունների միջոցին։

Ընտրական պայքարի ամենաթեժ պահին՝ 1892-ի հունվարին, տպագրվում է Թումանյանի՝ պահպանողականների դեմ գրված «Ազդ» վերնագրով բանաստեղծությունը, որոշակիորեն երևան բերելով երիտասարդ գրողի վերաբերմունքը և հստակ պատկերացումը այդ ճակատագրական պահին ընտրվող նոր կաթողիկոսի դերի և նշանակության մասին։

Բանաստեղծը կոչ էր անում քարկոծել նրանց, ովքեր անտեղյակ լինելով «մարդկային կյանքի վսեմ խորհրդին», համարձակվում են «քարոզել, հովվել այս ժողովրդին» (ՈՒՀ 2, 235)։ «Վսեմ խորհուրդը» այդ օրերին զգալի չափով կապվում էր ժողովրդի արդար ձգտումների, ազատության պայքարին նվիրված հոգևոր նոր առաջնորդի ընտրության հարցի հետ։

Նույն թվականի փետրվարին Տիգրան Փիրումյանին ուղղած Թումանյանի երկտողից որոշակի է, որ հասցեատիրոջ անվանակոչության օրը շնորհավորելուց բացի, նա բարեկամին նվեր է ուղարկել պատկերը «ազգի երջանկության առհավատչյայի». այստեղ գրված չէ, թե ում լուսանկարն է, բայց կասկածից վեր է, որ խոսքը վերաբերում է Երիմյան Հայրիկին՝ ժամանակի ամենաժողովրդական մարդուն։ Այդ անունն էր հոլովվում բոլորի բերանում, նա էր պատճառը «մշակականների» ու «նոր-դարական» պահպանողականների անդիջում, հետևողական պայքարի, որին մասնակից էր նաև Թումանյանը։

Երկու կողմերի սուր տարաձայնությունները վերջանում են առաջադիմականների հաղթանակով։ 1892-ի մայիսին Մկրտիչ Խրիմյանը հավասար ձայն է ստանում Մատթեոս Իզմիրլյանի հետ, բայց Այնք-

սանդր III թագավորը, առաջնությունը տալով Խրիմյան Հայրիկին, 1893-ի հունիսին նրան հաստատում է ամենայն հայոց կաթողիկոս։

Հայոց հայրապետական գահին արժանացել էր ժողովրդի հույսն ու հավատը, Հայկական հարցի դրոշակակիրը մայր հայրենիքում և միջազգային դիվանագիտության առջև։ Հաղթողները առաջնորդվում էին նոր «հովվապետի» կենսագրության փայլուն այլ դրվագներով ևս, հատկապես Վարագա վանքի նրա բեղմնավոր գործերով։ Այդ գործն արժեքավորել է նաև Թումանյանը 1910 թվականին գրած «Վարագա հոբելյանը» հոդվածում՝ ընդգծելով հատկապես ուսումնարանի, տպարանի և ամսագրի («Արծվի Վասպուրական») դերը, համարելով այն «փրկարար գործի և գործունեության հիմքը», որի նպատակն էր Վասպուրականի բարձրությունների վրա ջահ վառելով, լուսավորել չորս կողմը, անել ամեն բան, ինչ որ «ազգին միության, հայրենյաց շինության, եկեղեցյաց բարեզարդության և հայ մանկավույն լուսավորության կվերաբերեին» (VI, 182—183)։

Խրիմյան Հայրիկի մուտքը Թիֆլիս տեղի է ունենում 1893-ի օգոստոսի 29-ին, որից երկու օր հետո «Մուրճ» ամսագրի աշխատակիցները, ինչպես և բանաստեղծը, պատիվ են ունենում այցելելու կաթողիկոսին։ Ընդունելությունը տևում է կես ժամ, որի ընթացքում նոր հայրապետին ծանոթացնում են ամսագրի բոլոր աշխատակիցներին[6]։

Այդ հանդիպման մասին բանաստեղծի որևէ հիշատակություն մեզ հայտնի չէ. Արասխանյանի և Թումանյանի նամակագրությունից տեղեկանում ենք միայն, որ կաթողիկոսի ընդունելության մասին «Մուրճում» տպագրելիք հաղորդումը նախապատրաստելիս բանաստեղծը ինչ-որ դիտողություն է արել, որը խմբագիր Արասխանյանը, ճիշտ է, դժկամությամբ ընդունել է, սակայն երիտասարդ բանաստեղծի հանդգնությունը դարձել է նրանց ապագա դժտության պատճառներից մեկը (V, 100)[7]։

«Մշակականների» հաղթանակի ոգևորությունը սկսում է աստիճանաբար պաղել Խրիմյան Հայրիկի՝ էջմիածին ժամանելուց 2—3 ամիս հետո։ Իրար հետևից լուրեր են հասնում Թիֆլիս կաթողիկոսի արած փոփոխությունների մասին, այն, որ պաշտոնանկ է արված ճեմարանի տեսուչ Արիստակես Սեդրակյանը՝ երիտասարդության սիրելին, ժամանակի ամենաառաջադեմ հոգևորականներից մեկը, աղատված է

6 «Մուրճ», 1893, № 7—8, էջ 1291։

7 Տե՛ս նաև ԳԱԹ, Թֆ, ց 2, № 262։

«Արարատի» խմբագիր Գալուստ Տեր-Մկրտչյանը, երգի ուսուցիչ և խմբավար Կարա-Մուրզան։

Թումանյանը անմիջապես չի ենթարկվում ընդհանուր հիասթափությանը, ընդհակառակը, 1893 թ. վերջերին բանաստեղծությունների առաջին երկու ժողովածուներն ուղարկում է կաթողիկոսին, Ղ. Աղայանին գրելով հետևյալը. «Բանաստեղծություններս» շուտով կուղարկեմ Հայրիկին ընծա, որ կարդա սիրտը ցնծա, որ կներկայացնեք՝ ասացեք՝ էս հալա ոչինչ, կեսը դգալամանումն ա դեռ...» (V, 79)։ Վերջին խոսքերով բանաստեղծը նկատի ուներ այդ օրերին տպագրության ընթացքի մեջ գտնվող «Դաշնակներ» խորագրով բանաստեղծությունների գրքույկը։

1893 թ. նոյեմբերին «Մշակը» կաթողիկոսի պաշտոնական փոփոխությունների, հատկապես «նոր-դարական» Գեորգ եպիսկոպոս Սուրենյանին թեմի առաջնորդ նշանակելու առիթով զուսպ դժկամությամբ գրում է. «Մնում է ի սրտե ցանկանալ, որ վեհափառի վստահության արժանացած անձինք կարողանան իրագործել իրանց վրա դրված հույսերը»[8]։

Տեղին է հիշել, որ հիշատակված վստահվածներից մեկը Սողոմոն սարկավագն էր՝ ապագա Կռմիտաս վարդապետը, որ նշանակվել էր բավական մեծ հեղինակության ու համբավի տեր Կարա-Մուրզային փոխարինող երգեցողության ուսուցիչ։ Ի՞նչ իմանային այդ փոփոխումից դժգոհողները, որ դրանով ամենայն հայոց Հայրիկը ի վնաս մի արժանավորի՝ ճանապարհ էր հարթում ամենայն հայոց ապագա երգահանի համար։

Թումանյանի՝ Ղլտճյանից ստացած 1894 թ. նամակներից մեկում շարադրված են կաթողիկոսից ունեցած դժգոհության առասել լուրջ պատճառներ ևս, որոնցից ամենահիմնավորը Պոլսի տիրահռչակ Աշրգյան պատրիարքի ազգադավ գործունեության դեմ Խրիմյան Հայրիկի՝ արմատական միջոցների դիմելու ձգձգումն էր, իսկ այնուհետև՝ արևմտահայերի արտագաղթը կանխելու, գաղթականներին կազմակերպված օգնություն ցույց տալու, սովի, աղքատության դեմ պայքարելու նրա անկարողությունը, դպրոցների վատ վիճակը և էջմիածնում տիրող շատ անկարգություններ (գողություն, կաշառակերություն և այլն)[9]։

---

8 «Մշակ», 1893, № 10։

9 ԳԱԹ, Թֆ, № 816։

Թե ինչ ազդեցություն են թողնում այս տեղեկությունները բանաստեղծի վրա, երևում են 1894 թ. ապրիլին գրած հետևյալ խոսքերից. «Էջմիածնից եկած լուրերը մեկը մյուսին գերազանցում են» (V, 92)։

Մինչ այդ, բանաստեղծի հիասթափությանը նպաստել էր նաև Արսեն Ղլտճյանին՝ Էջմիածնի միաբանությունից հանիրավի Երնջակի վանքը տեղափոխելը՝ դարձյալ պահպանողական հոսանքի դրդմամբ։ Անարդար այդ որոշումը բավական արձագանք է գտել մամուլում, ուստի, տեղյակ ամեն մանրամասնության, Թումանյանը վրդովված գրում է. «...Բոլորը մարդու հուսահատեցնում զայրացնում են։ Շուտով կուեննանք մեծ ժողով այդ մասին մտածելու» (V, 86)։

Ի՞նչ ժողովի մասին է խոսքը կամ թե՝ կայացե՞լ է արդյոք այն, հայտնի չէ, բայց դա տվյալ դեպքում երկրորդական է։ Ավելի ուշագրավ են բանաստեղծի հետևյալ տողերը, որ նա գրում է Ղլտճյանին նույն նամակում. «Գրում ես, թե ոտանավորը կորցնեմ, ինչո՞ւ կորցնեմ. այն կմնա իբրև հիշատակ մեր առաջին զգացումների, իսկ նորը յուր կարգին, նորը քեզ կուղարկեմ. այսպես է սկսվում.

Երբ այդպես է, մենք կխորտակենք.
Այն պատվանդանը, որ մենք կառուցինք ... և այլն։

Այս երկու տողի շարունակությունը չկա, հնարավոր է, որ չի էլ գրվել։ Անհայտ է նաև նույն նամակում հիշատակված «Էջմիածնի ամբարի մկներին» ոտանավորի ճակատագիրը, որ նա խոստանում է տպագրել «Տարազում»։ Վերնագիրը արդեն հուշում է անտիպ մնալու պատճառը։

Բայց ի՞նչ ոտանավոր էր բանաստեղծը հրաժարվում ոչնչացնել, կամենալով թողնել այն որպես «հիշատակ իրենց ունեցած առաջին ըզգացումների»։

Անվանի թումանյանագետ Արամ Ինճիկյանը, հենվելով նամակի բովանդակության վրա, հավանական է համարել, որ այստեղ խոսքը վերաբերում է «Հայ ուխտավորին» բանաստեղծությանը, և հղել է առաջին գիտական հրատարակության I հատորը (էջ 108—109)[10], թեպետ այդտեղ, ինչպես և ծանոթագրությունների մեջ նշված չէ, թե բանաստեղծությունը, որ տպագրվել է կրճատ, նվիրված է Խրիմյան Հայրիկին (I, 633)։

---

10 Ա. Ինճիկյան, էջ 499։

«Հայ ուխտավորին» բանաստեղծության ամբողջական բնագիրը տպագրվել է միայն Խրիմյան Հայրիկի մահվան կապակցությամբ՝ 1907 թ. նոյեմբերի 2-ին Թիֆլիսում հրատարակվող «Նոր Ալիք» օրաթերթում, հեղինակի հետևյալ ծանոթագրությամբ. «Գրված է 1893 թվականին Հայրիկի ընտրության առիթով՝ Թիֆլիսի երիտասարդության խնջույքին։ Ժամանակի ցենզուրական պայմանների պատճառով առաջին անգամ է տպվում ամբողջ»[11]։

Հայ արձակն ու պոեզիան հարուստ են Արաբոի, Հրազդանի, Սիբրատի, Մասսի ու Արագածի, Սիփան սարի ու Գեղամա լեռների, Վանա լճակի ու Սևանի սքանչելի նկարագրություններով։ Բայց այդ բոլորի թվում Թումանյանի «Հայ ուխտավորին» բանաստեղծության լրիվ տարբերակն աչքի է ընկնում ոչ միայն ինքնատիպ ոճով, գունագեղ, անպաճույճ պատկերներով ու բնության թումանյանական զգացողությամբ, այլև հայրենասիրական բարձր շնչով, ազգային ոգով և գաղափարական խոր հագեցվածությամբ։ Հեղինակի մտահղացման աղբյուրը և գաղափարական ելակետը հայրենի բազմաչարչար ժողովրդի դարավոր իղձն է՝ ազատագրությունը բռնակալությունից ու երջանիկ ապագայի նկատմամբ նրա ունեցած անխորտակելի հույսը։

Բանաստեղծությունը և՛ առաջին (1898, «Տարազ»), և՛ երկրորդ (1907, «Նոր Ալիք»), հրատարակության մեջ բաղկացած է չորս հատվածից. միայն չորրորդն է որոշակիորեն վերաբերում հայոց կաթողիկոսին՝ Խրիմյան Հայրիկին, որն ամբողջ բանաստեղծության մեջ դառնում է հայ ժողովրդի ազատության իրականացման գեղարվեստական խորհրդանիշ։ Այդպես էր մտածում 90-ական թթ. սկզբի «մշակական» երիտասարդությունը։ Շուտով, ինչպես կտեսնենք, Թումանյանը նույնպես ունեցավ հիասթափության պահեր, իսկ հետագայում, հարցին մոտենալով փորձված, շրջահայաց ու բանիմաց, իր ժողովրդի կյանքով ապրող ազգային գրող-գործչի հայացքով, Խրիմյան Հայրիկի գնահատությանը նա վերաբերվել է այլ տեսանկյունից։

Այժմ քննենք «Հայ ուխտավորին» բանաստեղծության այն տողերը, որոնք հանվել են «Տարազում» տպագրելիս, 1898 թվականին, երբ Կովկասի և, հատկապես, հայ մտավորականության ուսերին ապառաժի ծանրությամբ նստած էր գոլիցինյան ռեակցիան։

---

11 «Նոր ալիք» 1907, № 2։ Բանաստեղծության մասին այլ տեղեկություններ տե՛ս ՈՒՀ 4, 77 և Հովհաննես Թումանյան, Երկերի ժողովածու տասհատորյակ հատ. I, էջ 452—455, 583—585։

Դիմելով հայ ուխտավորին, որ «կարոտով ու սիրառատ» ուխտ է գալիս «դեպ Այրարատ», հեղինակը թվարկում է հայրենիքի հրաշալիքները, որոնք պետք է տեսնի ու վայելի նա. առաջինը Սևանն է՝ ներկայացված վշտոտ ու տխուր.

Որ լեռների շուքերի հետ
Խաղ է անում, խայտում վետ-վետ.
Փայլփլում է ծրփանքներով,
Հորինում է լույսերի ծով ...

Այսպես է վերջանում մեջբերումը «Տարազի» տարբերակում, այնինչ ամբողջական բնագրում կա ևս մի քառատող, որով Սևանը ներկայանում է հուզված՝ հայրենիքի դարավոր ողբերգական անցյալի տրխուր հուշերով, մտահոգ՝ ժամանակի իր ցանկությունների ու պահանջների կատարման հնարավորությամբ, ժողովրդի ապագա ճակատագրով։ Ահա այդ քառատողը.

Եվ մերթ վշտով ու տխրությամբ
Սևանում է, ինչպես մութ ամպ...
Ո՞վ իմանա՝ ի՞նչն է հուզում,
Ի՞նչ է հիշում, ի՞նչ է ուզում...[12]

Բանաստեղծության երկրորդ հատվածում հեղինակը նկարագրել է հայոց «սարերի արքային»՝ Մասիսը, որ դարեր շարունակ՝

Պերճ դաղաթովն իր ձյունափառ
Շողշողում է, փայլատակում
Եվ ուխտավոր հայի հոգում
Հպարտության ծնում թունդեր
Եվ սիրելի երազ՝ թե դեռ
Էն երկնահաս Մասյաց կատար,
Ուր հին տապանն առավ դադար ...

Եվ այս տողերին «Տարազի» բնագրում հաջորդում է մի քառատող, որը միանգամից կոտրելով հեղինակի խոսքի թափը, փոխում է բանաստեղծության տրամաբանական ընթացքը, ավարտում մտահղացումը Թումանյանին ոչ բնորոշ բռնազբոսիկ տողերով.

---

12 Նույն տեղում։ Ուշադրություն դարձնել վերջին երկու տողի երկարացման նշանների վրա, որոնք նույնպես ընդգծում են ենթարնագիրը։ Այս քառատողի վերջին երկու տողը չկա նաև 1908 թ. Բաքվի հրատարակության մեջ (էջ 31). հավանաբար, այդ կրճատումը արված է հրատարակիչների ձեռքով։

Այս էլ հիշիր աղոթքիդ մեջ
Կարոտ հոգով հայրենատենչ
Եվ լավ դիտե դու սրտագող
Հայոց անվան այն վեհ կոթող[13]։

Այնինչ, այս չորս տողի փոխարեն, երկրորդ հրատարակության մեջ երկու տողով արտացոլված է հայ ժողովրդի դարավոր երազանքը։ Հեղինակը լիահույս է, պայծառատես. այնտեղ, ուր մի ժամանակ ավանդական Նոյան տապանն էր՝

Դաղար կառնեն փառքերն մեր հին,
Որ նորափայլ իջնեն կրկին...[14]

Կարծում ենք՝ պարզ է. նախորդը որքան ավելորդ է, ճապաղ, այնքան վերջինը արամաբանական է, նպատակային, իր մեջ բովանդակում է ժամանակի երիտասարդության ներշնչանքի աղբյուրը՝ սատար լինել հայրենի ժողովրդի ազգային ինքնագիտակցության բարձրացմանը և ցույց տալ այն ճանապարհը, որով «հին փառքերը» պետք է «նորափայլ իջնեն» Մասսի գագաթին, բերելով իրենց հետ դարեր առաջ կորցրած ազատությունը։

Անտարակույս, բանաստեղծության այդ տողերի փոփոխությունը հեղինակը կատարել է «Տարազի» խմբագրի կամ հետադիմական ուժերի, գրաքննչության ստիպմամբ, հնարավոր է՝ փութկոտ և շտապ, թերևս՝ տպարանում, պարզապես հանված տողերը լրացնելու և բանաստեղծությունը անպայման տպագրելու համար։

«Հայ ուխտավորին» բանաստեղծության՝ «Տարազի» և «Նոր ալիքի» բնագրերի հաջորդ տարբերությունը երրորդ հատվածում է, ուր պատկերված է Էջմիածինը իր վանքով, որ դարեր շարունակ Սահակ Պարթևի, Ներսես Մեծի ու շատ ուրիշների «հուժկու ձայներով» խոսել է հայ մարդու հոգու հետ, մաղթելով նրան խաղաղ կյանք, ծավալել լուսավորություն։

Էնտեղ լցված անեղ հոգով
Աստվածային իր տեսիլքով
«Էջ Միածինը ի Հորն»,
Որ Հայաստան լուսավորեն։
Ու լույսն առան ծավալեցին
Լուսավորիչն ու սեգ Տրդատ ...

---

13 «Տարազ», 1898, № 4, էջ 58։

14 «Նոր ալիք», 1907, № 2։

«Տարագում» այս վերնյակից հետո պակասում է հետևյալ երկու տողը, կրկին աղճատելով այդ հատվածի ամբողջական էությունը։ Հեղինակի նպատակն էր ցույց տալ, որ այդ օրերին էլ էջմիածնում թևածում էին Գրիգոր Լուսավորչի ու Տրդատ թագավորի սկզբնավորած լուսավորական դաղափարների ավանդները.

Որ տակավին էնտեղ կեցած,
Կը սավառնին հոգիացած։

1898-ին հրատարակված բնագրում աղավաղված են նաև չորրորդ հատվածի՝ Խրիմյան Հայրիկին վերաբերող տողերը, որոնք անմիջականորեն կապվում են կաթողիկոսի կյանքի և՛ անցած ուղու հետ, և՛ նրանից ունեցած սպասելիքներին։ Պատկերելով էջմիածնում Լուսավորչի շիրմին Լիբանանի կաղնու նման ամուր կանգնած «հսկայատիպ» արծվահայաց վեհապետին, հեղինակը հատկապես շեշտել է դեպի «Հայոց կողմերը ու շա՜տ հեռուն» սևեռած նրա հայացքը և կրկնել.

Կողմերն Հայոց ու շա՜տ հեռուն
Դիտն ցրված իր ձագերուն ...

Այստեղ գրաքննիչը, անշուշտ, ուշադրություն է դարձրել տողերի տակ թաքնված՝ հայ ժողովրդին միավորելու ցանկության վրա, որից շատ էին խորշում ցարական պաշտոնյաները՝ սկսած Լոբանով-Ռոստովսկուց մինչև Գոլիցին, Ստոլիպին, Պուրիշկևիչ և ուրիշներ, ուստի և հանվել են նաև այդ տողերը։

Ահա այն հիմնական տարբերությունները, որոնք առկա են «Հայ ուխտավորին» բանաստեղծության առաջին երկու հրատարակություններում։ Ինչ վերաբերում է 1908 թ. հրատարակված բանաստեղծությունների ժողովածուին և «Հայ գրողներ» քրեստոմատիայի առաջին հատորին (1909), որոնց մեջ նույնպես տեղ է գտել քննության առարկա բանաստեղծությունը, երկու գրքից էլ դուրս է մնացել Խրիմյան Հայրիկին վերաբերող ամբողջ հատվածը՝ հեղինակի ցանկությամբ. այն մի ձոն էր կենդանի կաթողիկոսին, իսկ նրա մահից հետո արդեն պատմության սեփականությունն էր[15]։

* * *

Խրիմյան Հայրիկի կաթողիկոս դառնալուց մի քանի ամիս անց «մշակականների» համար ստեղծվում է դժգոհության նոր առիթ։

15· Նույն տեղում։

Հայ մտավորականության մեջ մեծ աղմուկ առաջացրեց էջմիածնի «Արարատ» ամսագրում հրապարակված Արշեն երեց կեղծ ստորագրությամբ «Գյուղական քահանայի բողոքը» հոդվածը։ Ծպտյալ հեղինակը, քննադատելով տգետ քահանաներին և նրանց ձեռնադրող բարձրաստիճան հոգևորականությանը, մեղադրում էր հետամնաց ժողովրդին, որը, չկարողանալով զատել գիտունին անգետից, մեծ մասամբ ինքն է խնդրում անուս, աղքատիմաց մի տիրացուի դարձնել քահանա[16]։

Պահպանողական մամուլը նախ շտապեց Արշեն երեցի խոսքը համարել «պատվական», «խորիմաստ» քարոզ, ժողովրդի կարիքների «նրբամիտ ըմբռնողություն», այնինչ «Մշակում» Արիստակես եպիսկոպոս Սեդրակյանը «Ո՞վ հավատաց» հոդվածով սուր քննադատության ենթարկեց «Արարատի» հոդվածագրին և քահանա ձեռնադրող բարձրաստիճան հոգևորականությանը, միաժամանակ իր պաշտպանության տակ առնելով գյուղական ժողովրդին[17]։ Այդ առթիվ «նոր-դարական» մտավորականները նախ քողարկված, ապա բացարձակ հայտարարեցին, թե Արշեն երեցը Խրիմյան Հայրիկն է, կարծես հաղթանակած, որ «մշակական» հոգևորականը հակառակվում է իր ընտրած կաթողիկոսին[18]։

Այս վեճի կողքով Թումանյանն անտարբեր անցնել չէր կարող։ Նամակներից մեկում, դիմելով Ղլտճյանին, նա գրում է. «Արիստակեսի հոդվածի զալմազալը կարդում ես երևի» (V, 93)։ Այս հակիրճ խոսքերով բանաստեղծը ցույց էր տալիս ժողովրդի դասը պաշտպանող հոգևորականի հետ իր համաձայնությունը։

---

16 «Արարատ», 1894, № 3։

17 «Արձագանք», 1894, № 41, 42, «Մշակ», 1894, № 41, «Մուրճ», 1894, № 3. այստեղ Ա. Արասխանյանը, ավելի ընդարձակելով քննարկվող հարցը, գնում էր «կուսակրոն հոգևորականության խնդիր ընդհանուր առմամբ» (էջ 449)։

18 «Արձագանք», 1894, № 41—44, «Նոր դար» № 62—64։ «Մշակը» ապրիլի 21-ի «Տգեղ վարմունք» վերնագրով առաջնորդողում քննադատում է կեղծանունը հրապարակելու պահպանողական մամուլի արարքը. «...քանի որ ինքը՝ հեղինակը (եթե ընդունենք, որ Արշեն երեցը կաթողիկոսն է) թաքնվում է կեղծ անվան տակ, քանի որ նա իր հոդվածի մեջ ոչ թե հրամաններ է տալիս, այլ երևույթներ է ուզում պարզել, անկասկած նա հենց ինքը դրանով ուզում է, որ իր հոդվածը և իր մտքերը անարգել կերպով ենթարկվեն քննության, պարզաբանության, և, եթե հարկ լինի՝ նույնիսկ խիստ հարձակումների» (№ 44)։

1894 թ. Թումանյանը վրդովվեց Խրիմյան Հայրիկի վրա պահպանողականների ունեցած մի այլ ազդեցությունից ևս, որը ճակատագրական եղավ նրա մտերիմ բարեկամի՝ Ղ. Աղայանի համար։ 1893-ի աշնանը, նոր կաթողիկոսի օծվելուց հետո, Աղայանը, որ վարում էր Էջմիածնի տպարանի և ձուլարանի կառավարչի պաշտոնը, նշանակվում է Էջմիածնի դպրոցական խորհրդի անդամ և ճեմարանի ավագ դաստիարակ։ Երբ լույս է տեսնում վերջինիս հուշագրությունը՝ «Իմ կյանքի գլխավոր դեպքերը», որտեղ սուր քննադատության էր ենթարկված Գեորգ IV կաթողիկոսը, պահպանողական հոսանքը «Նոր դարի» և «Արձագանքի» միջոցով սկսում են հալածել Աղայանին, ընդգծելով հատկապես այն հանգամանքը, թե Էջմիածնի ճեմարանում իրավունք չունի աշխատելու մի մանկավարժ, որը անվանարկում է այդ հաստատության հիմնադրին՝ Գեորգ IV-ին[19]։

Ղ. Աղայանը «Մշակի» էջերում տպագրված իր թղթակցություններում պաշտպանվում էր պահպանողականներից։ Բայց կաթողիկոսը, որքան էլ մտերիմ Աղայանին, այս անգամ էլ տեղի է տալիս պահպանողական հոսանքի ազդեցությանը, նրան ի վերջո աղատում է պաշտոնից, առաջացնելով «մշակականների» և, հատկապես, Թումանյանի դժգոհությունն ու հիասթափությունը։

Աղայանը գործուն այն «մշակականներից» էր, որ ջանք չխնայեց Խրիմյան Հայրիկին կաթողիկոսական դահին բարձրացնելու համար, ընդհուպ մինչև Երուսաղեմ մեկնելը՝ աքսորական Խրիմյանին առաջարկելու, որ ընդունի հայրապետական աթոռը[20]։ Ուստի կաթողիկոսի վերաբերմունքը Աղայանի նկատմամբ ընկալվեց որպես «դավաճանություն»։

Մնալով անգործ, Աղայանն ընկնում է ծանր կացության մեջ, իսկ նրա կրտսեր բարեկամի համար ստեղծվում է սրտացավ մտահոգություն։ 1895 թ. գարնանը, ի պաշտպանություն Աղայանի, Թումանյանը հանձնում է մի հոդված «Մշակում» տպագրելու համար, սակայն մերժում է ստանում. «...Հոդվածս հավանեցին, իսկ միտքը՝ ոչ—ժամանակին առարկելով»,— գրել է նա (V, 103)։ Ըստ երևույթին, թերթի խմբագրությունը վաղաժամ է համարել հոդվածով հանդես գալ ի պաշտպանություն Աղայանի, որը նշանակում էր սուր հակադրության

---

19 «Նոր դար», 1893, № 203, «Արձագանք», 1893, № 150. տե՛ս նաև «Մշակ», 1893, № 23։

20 Տե՛ս Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հատ. IV, 1963, եր., էջ 311—315, 615։

մեջ մտնել էջմիածնի հոգևոր իշխանության հետ (հոդվածը չի պատ-պանվել)։ Դրա փոխարեն մարտի 30-ին օրաթերթը հրապարակում է մի լուր Աղայանի անգործ ու անօգնական լինելու մասին, մի կողմից՝ նկարագրելով «շնորհալի գրողի» և «բեղմնավոր դպրոցական գործչի» վիճակը, հասարակության ուշադրությունն է հրավիրում նրա վրա, մյուս կողմից՝ այնուամենայնիվ ակնարկում է, որ ի վերջո, դժբախտության պատճառը էջմիածնի պահպանողականության հալածանքն է։ «Քաղաքակրթվող աղգի անուն ենք վայելում, բայց մեր գրողները ծանրաբեռնված ընտանիքով, առանց միջոցների, առանց ապահովության ողբում են իրանց դառն օրերը...»,— հայտարարում է թերթը[21]։ Այս տողերը գրված են, ամենայն հավանականությամբ, Թումանյանի հիշյալ կորած հոդվածի ազդեցությամբ և տպավորությամբ։

Բանաստեղծի սկսած գործը շարունակում է Շիրվանզադեն, տպագրելով «Ամոթ է վերջապես» հոդվածը, որով նա պարտադրում է հայ հասարակությանը՝ մտահոգվելու Աղայանի ճակատագրով[22]։ Լինում են նաև այլ արձագանքներ, բայց անհետևանք. իսկ մինչ այս, մինչ այն՝ վրա է հասնում Աղայանի բանտարկությունը (1895-ի սեպտեմբերին), որը և գործին տալիս է բոլորովին այլ ընթացք...

* * *

1895 թ. հայկական կոտորածներից հետո, որպես «Հանգանակող և գործադրող կոմիտեի» անդամ, Թումանյանը հանձնարարություն է ստանում ստեղծելու գաղթականության օգնող գավառական տեղական կոմիտեներ։ Այդ նպատակով նա կատարում է մի ճամփորդություն, որը տևում է ավելի քան մեկ ամիս։

Ճամփորդության վերջին կայանը էջմիածինն էր[23]։ Այս բանաստեղծի առաջին այցելությունն էր հայոց հոգևոր և մշակութային կենտրոն, ուստի ամեն ինչ նրա համար նորություն էր ու հետաքրքիր։

«Միաբանությունը վատ տպավորություն թողեց, բացի մի քանի ընտրյալներից,— գրում է բանաստեղծը տեսածի թարմ ազդեցության

---

21 «Մշակ», 1895, № 37։

22 «Տարազ», 1895, № 12, էջ 178, նաև՝ Ալ. Շիրվանզադե, Երկերի ժողովածու։ հատ. X, Եր., 1962, էջ 157։

23 Մանրամասնությունները տե՛ս Ա. Ինճիկյան, էջ 370—373։

տակ։ Բարոյական և մտավոր կողմը ողորմելի է, իսկ տնտեսականը՝ տանող-տանողի» (V, 113)։

Մեծ բավականություն է ստանում նա Հռիփսիմեի վանքից ու թանգարանից, բայց ամենուրեք, և՛ թանգարանում, և՛ ճեմարանում ու վեհարանում, նրա ուշադրությունը գրավում է անճաշակությունն ու խեղճությունը։

Էջմիածնում բանաստեղծը երկու անգամ այցելում է Խրիմյան Հայրիկին՝ 1895-ի նոյեմբերի 30-ին և դեկտեմբերի 1-ին, և երկար զրուցում նրա հետ։ Ըստ երևույթին, տեսակցությունները գործնական բնույթ կրելով, օգտակար են եղել Թումանյանի ճամփորդության նպատակն իրագործելու առումով, որովհետև, հիշատակելով կաթողիկոսի հետ ունեցած երկար զրույցը, բանաստեղծը Ս. Հովվյանին գրում է. «Բայց դու հասկացող մարդ ես, բանը խոր երկարությունը չի...» (V, 114)։

1895 թ. այս հանդիպումները հիմք են դնում բանաստեղծի և կաթողիկոսի սերտ բարեկամության, որը տևում է մինչև վերջինիս մահը։

Գրեթե ամեն անգամ, երբ կաթողիկոսը ժամանում էր Թիֆլիս, առաջնորդարանում մեծ սիրով հյուրընկալում էր Թումանյանին, հետաքրքրվում նրա բանաստեղծություններով, միաժամանակ կարդում էր իր գրած երկարաշունչ կրոնաբարոյախոսական ոտանավորները, որոնց մասին բանաստեղծը հետագայում ներողամտորեն պատմել է սրամիտ, ծիծաղաշարժ պատմություններ (ԹԺՀ, 177—179)։

Գրելով ոտանավորներ, ամենայն հայոց կաթողիկոսը սիրում էր բանաստեղծությունը և բանաստեղծներին։ Տեղին է հիշատակել Ավ. Իսահակյանի հանդիպումը Խրիմյան Հայրիկի հետ Էջմիածնում, 1901 թ. սեպտեմբերին, որից մնացել են բանաստեղծ-կաթողիկոսի հետևյալ ուշագրավ խոսքերը. «Է՛հ դուն ալ բարով ես եկել. ես քեզ կճանչնամ, կարդայեր եմ քու գրվածքներեն քանի մը բան։— Ասել է հայրապետը Իսահակյանին։— Ես Կովկասին մեջ երեք բանաստեղծ գիտեմ. մեկը մեր ուսուցիչ Հովհ. Հովհաննիսյանն է, մեկն ալ Թիֆլիս Հովհ. Թումանյանն է. անոնց անձամբ կճանչնամ ու շա՜տ կսիրեմ։ Ըշտե մեկն ալ դուն ես—քեզ ալ հիմա տեսա. դուն անոնցմե երիտասարդ ես, այդ է պատճառը, որ միշտ ամպ ու աղբյուր, վարդ ու աղջիկ կերգես...»[24]։

---

24 Խրիմյան Հայրիկի մասին հուշը գրված է վերջինիս մահվան առիթով և առաջին անգամ տպագրվել է՝ «Նոր ալիք», 1907, № 3։ Նույնը որոշ փոփոխություններով տե՛ս Ավ. Իսահակյան, Երկեր, հ. IV, Եր., 1959, էջ 19։

Իր նկատմամբ կաթողիկոսի բարեհաճությունը Թումանյանն օգտագործել է դարձյալ Աղայանին ծանր վիճակից հանելու համար, երբ վերջինս էջմիածնից վտարվելուց, 1895 թ. բանտարկվելուց հետո, անելանելի կացությունից հասել էր ծայրաստիճան հուսահատության։

1898 թ. կաթողիկոսին Թումանյանը հանդիպում է երկու անգամ՝ փետրվարին ու դեկտեմբերին։ Առաջին այցելության միջոցին նրանք մեկ և կես ժամ զրուցում են գրականության ու գրողների մասին։

Ինչպես վկայում է բանաստեղծը, Խրիմյանը մտահոգված էր գրողների նյութական վիճակով. «...Գրականություն գագարել է, խեղճ գրողներ ինչպես գրեն, չգիտեն՝ ապրուստի մասին մտածեն, թե գրվածքին մասին»,— ասել է կաթողիկոսը ու խոստացել «այդ մասին հոգալ» (V, 135)։ Օգտվելով առիթից, Թումանյանը, նկարագրել է Աղայանի ծանր կացությունը, բայց կաթողիկոսը, ցավակցելով հանդերձ, որևէ գործնական խոստում չի արել, թեպետ տակավին 1894 թ. երբ նոր էր Աղայանը թողել էջմիածինը, խոստացել էր տարեկան հարյուր ռուբլի թոշակ։

Թումանյանը իր միջնորդությունը կրկնում է նաև նույն տարվա երկրորդ այցելության ժամանակ, այս անգամ արդեն՝ ստանալով Խրիմյանի խոստումը, որը և առիթ է ստեղծում գրելու 1898 թ. դեկտեմբերի 27-ի (ժամանակը որոշվում է ըստ բացիկի փոստային կնիքի) հայտնի կատակ-նամակը չափածո՝ Ասլան բալայից-Ասլան Ապորը[25]։

---

25 Թումանյանն ու Աղայանը կատակով իրար այդպես էին կոչում ըստ վերջինիս պատմած մի հին զրույցի (տե՛ս Մուշեղ Աղայան, Ղազարոս Աղայանը և Հովհաննես Թումանյանը, ԹԺ2, էջ 541—542)։ Ինչ վերաբերում է չափածո նամակ-կատակին, ինքնագրից ակնհայտ է, որ նամակը վեց տող է, վերջին տողը՝ «Քո կարոտյալ Ասլան-Բալա» փոխարինում է նամակագրի ստորագրությանը, իսկ յոթերորդ, ութերորդ տողերը, գրված մանրատառ՝

Մինչև գրեն հրամանը,
Ինչպես ասաց Խրիմյանը,—

ծանոթագրությունն են հինգերորդ տողի երեք or էլ բառերի, որոնք ընդգծված են և ունեն ծանոթագրության նշան՝ գրված տողի սկզբում (ԳԱԹ, Աղայանի ֆոնդ, № 333ա)։

Երեք or բառերն ընդգծելով և ապա ծանոթագրելով, Թումանյանը հուսադրել է Աղայանին, որ տարին վերջանում է և, ըստ կաթողիկոսի խոստման, պետք է լուծվի թոշակավորման հարցը։

Անհրաժեշտ է ավելացնել նաև, որ կաթողիկոսի հրամանը, Աղայանին թոշակ նշանակելու մասին, բավական ձգձգվում է (տե՛ս Աղայանի՝ 1900 թ. դեկտ. 7-ի նամակը. ԳԱԹ, Թֆ, № 478), բայց, այնուամենայնիվ, նշանակվում է ամսական 25 ռուբլի ցմահ։

Թումանյանի և Խրիմյան Հայրիկի մի այլ հանդիպում տեղի է ունեցել 1900 թ. հուլիսին, վերջինիս ճամփորդության միջոցին, Դսեղում։ Բանաստեղծը լուսանկարել է կաթողիկոսին, ապա, վերջինիս խնդրանքով, ուղարկել նրան[26]։

Այդ օրերին բանաստեղծի աչքից չի վրիպել տեղական ժողովրդի անտարբերությունը կաթողիկոսի նկատմամբ։ «Պետք է ասեմ, որ սաստիկ անշուք անցավ Հայրիկը,— գրել է Թումանյանը,— և ժողովուրդը՝ գյուղացին, դրեթե տեղից չշարժվեց։ Որքան ցավալի էր այս երևույթը, սրանից ավելի ոխուր տպավորություն էր անում վեհի՝ իրան սվիտան ըստ ամենայնի» (V, 169)։

Այս խոսքերով Թումանյանը ընդգծել է երկու հանգամանք. մեկը Լոռու գյուղացիության անտարբերությունն էր իր հողում ճամփորդող հայրապետի նկատմամբ, մյուսը՝ ժողովրդի այդ պաղ ընդունելության և կաթողիկոսի շքախմբի հակադրությունը։

Տարիների մտերմությունը Խրիմյան Հայրիկի հետ չփոխեց բանաստեղծի քննադատական վերաբերմունքը Էջմիածնի, նրա միաբանության մեծ մասի նկատմամբ։

1904 թ. մայիսին Էջմիածին կատարած երկրորդ այցելությունն ավելի վատ տպավորություն թողեց բանաստեղծի վրա, քան առաջինը՝ 1895-ին, ուստի պատահական չէ, որ Վ. Խանդամիրյանին գրած նամակի թվագրության կողքին գրելով Ս. Էջմիածին, հասցեատիրոջը առաջարկում է Ս. Էջմիածինը կարդալ ոչ թե Սուրբ, այլ սոսկալի Էջմիածին (V, 267)։

Անշուշտ և՛ այս խոսքերը, և՛ քննադատական տողերը միաբանների տգիտության, գողության, անճաշակության (V, 113), ինչպես և գյուղացիության՝ կաթողիկոսի նկատմամբ ցուցաբերած անտարբերության մասին, ինչ-որ չափով վերաբերում էին նաև Խրիմյան Հայրիկի՝

Ուրիշի հոգսերի նկատմամբ միշտ ուշադիր կաթողիկոսը չէր կարող աչքաթող անել Աղայանի անելանելի վիճակը։ Այս հարցում, հավանաբար, վատ դեր է խաղացել Էջմիածնի սինոդը։ Աղայանի մահից մի քանի ամիս անց թոշակը ստանում էին ժառանգները, իսկ այնուհետև դադարեցվում է Սինոդի որոշմամբ, առաջացնելով մտավորականության զայրույթը («Հորիզոն», 1912, № 55)։

[26] Կաթողիկոսը Դսեղում եղել է 1900 թ. հուլիսի 13-ին։ Ճամփորդության նպատակն էր ծանոթանալ Մարցի վանքապատկան հողերի տնօրինությանը («Մշակ», 1900, № 134)։

Կաթողիկոսի նկարը (բանաստեղծի եղբոր՝ Ռոստոմի ձիու վրա նստած) պահպանվում է Թումանյանի թանգարանում (№ 385/65)։

որպես հոգևոր գահակալի թուլությանն ու անկարողությանը։ Դրանք շարունակությունն էին այն հիասթափության, որ ունեցավ հայ առաջադեմ մտավորականությունն ընդհանրապես՝ Խրիմյան Հայրիկին կաթողիկոս դարձնելուց երկու-երեք ամիս հետո։

Եվ, չնայած այդ հանգամանքին, Թումանյանը հմայված էր Խրիմյանի անձնավորությամբ, նրա հերոսական անցյալով և ժողովրդականությամբ. վկա՝ «Կաղնի» բանաստեղծությունը՝ գրված 1896-ի սեպտեմբերին՝ էջմիածնում կաթողիկոսի հետ ունեցած առաջին հանդիպումից ամիսներ անց.

Նորա շուրջ տակ, նրանից շատ ցած
Խրոնվել էին իրար փաթաթված
Աննշան խոտեր, թփեր ու ծառեր։
Նրանք նայելով մեծ կաղնին ի վեր,
Ցրտից խշշալով, հողմից դողալով,
Կամ թե ամպրոպին արձագանք տալով
Թերվում էին՝ իրար ականջում դժգոհ շշնջում,—
«Սա որ վերև է բարձրացել այսքան,
Ոչ որոտ դիտի, ոչ քամի, ոչ բան...» (ՈւՀ 1, 305)։

Ինչպես բանաստեղծության վերնագրից էլ ակնհայտ է, հեղինակը դնահատում էր Խրիմյան Հայրիկի հատկապես տոկունությունը, նրա կամքի ուժը (ի դեպ՝ այդ պատկերը, որպես ուժի, ամրության, անխորտակելի կամքի արտահայտություն, բանաստեղծը օգտագործել էր նաև «Հայ ուխտավորին» բանաստեղծության IV հատվածում. «Հրսկայատիպ կանգնած ամուր, ինչպես կաղնին Լիբանանի»)։

1907 թ. կաթողիկոսի մահվան առիթով բանաստեղծը գրեց պատմվածքներ, մի անգամ ևս հանդես բերելով իր՝ դեպի կաթողիկոսն ունեցած վերաբերմունքի երկվությունը։ Դրանցից մեկը 1895 թ. հանդիպման հուշերի անմոռաց տպավորությամբ գրված «Երկու հայր» ստեղծագործությունն է (տպագրվեց «Նոր Ալիք» օրաթերթում, կաթողիկոսի թաղման օրը՝ 1907-ի նոյեմբերի 6-ին, № 5), որը արվեստի ուժով և խորությամբ վավերացրեց Մկրտիչ Խրիմյանի «ամենայն հայոց Հայրիկ» կոչումը (VI, 51)[27]։

---

[27] Հեղինակն իր պատմվածքը սկսում է «1896-ի կոտորածի ձմեռն էր» խոսքերով, որպես ակնատես. այստեղ չփոթված են ամիսները։ Նրանց հանդիպումը, ինչպես ասվեց վերևում, տեղի է ունեցել 1895-ի նոյեմբերի 30-ին և դեկտեմբերի 1-ին (V, 113)։

Մի քիչ այլ է «Խրիմյան Հայրիկի օրերից մինը» պատմվածքը՝ գրված Թիֆլիսի առաջնորդարանում՝ գրողի և կաթողիկոսի բազմաթիվ հանդիպումների հուշերի ազդեցությամբ։ Պատկերելով կաթողիկոսի անսահման մարդկայնությունն ու ժողովրդականությունը, հեղինակը միաժամանակ հաստատում է Խրիմյան Հայրիկի մասին տարածված այն կարծիքը, թե նա իր բարությամբ, դիմացինին օգնելու պատրաստակամությամբ, վատնում էր Էջմիածնի ունեցվածքը անհաշիվ ու անկազմակերպ։ Այդ գրքի նույնն էր, ինչ Թումանյանը գրել էր 1895 թ. Էջմիածնի տնտեսական վիճակի մասին՝ թե «տանող տանողի է» (V, 113)։ Թերևս, այդ է պատճառը, որ պատմվածքը գրելով կաթողիկոսի մահվան օրերին, հեղինակը չտպագրեց, համարելով այն ոչ պատշաճ, միաժամանակ համոզված, որ, ի վերջո, ժողովուրդը սիրում էր Խրիմյան Հայրիկին, և այդ սերը պայմանավորված չէր նրա հոգևոր բարձրագույն կոչումով, այլ կապվում էր հայության ազատագրական պայքարի պատմության մեջ նրա ունեցած դերի հետ[28]։

1910 թ. Մատթեոս Իզմիրլյան կաթողիկոսի մահվան առիթով հրապարակած հոդվածներում փիլիսոփայական ու գործնական մոտեցում ցուցաբերելով երկու հայրապետների մարդկային հատկանիշների, հասարակական գործունեության և պաշտոնավարության գնահատությանը, Թումանյանն ընդգծում էր լայն ժողովրդականություն վայելող այդ երկու անձնավորությունների մեծությունը, թեև կաթողիկոս եղած ժամանակ նրանք անկարող էին մեր ժողովրդի կյանքում մեծ գործեր կատարել։ «Մարդիկ կան,— գրում է նա,— որոնց միմիայն սոսկ գոյությունը, ներկայությունն ավելի շատ գործ է տեսնում, քան թե հազարավորների գործը։ Այդպիսի գեմքեր էին վերջերս հայոց ժողովրդի մեջ Խրիմյանն ու Իզմիրլյանը։ Խրիմյանը իր անձի հոյակապ մեծությամբ, Իզմիրլյանն իր արտասովոր աղնվությամբ» (VI, 192)։

Սրանք ականավոր մարդկանց մասին արված լրագրային սովորական հայտարարություններ չեն։ Եթե Իզմիրլյանին տված գնահա-

---

28 «Խրիմյան Հայրիկի օրերից մինը» պատմվածքը առաջին անգամ տպագրվել է Թումանյանի երկերի գիտական հրատարակության III հատորում (1949, էջ 394)։ Ըստ երևույթին, գիրքը լույս ընծայելուց հետո ինչ-ինչ պատճառներով պատմվածքը հանվել է, բայց, չնայած դրան, գրքերի որոշ օրինակներում այն պահպանվել է առանց ծանոթագրության (որը պետք է լիներ էջ 526-ում) և ցանկում նշվելու (տե՛ս Թումանյանի թանգարանում պահպանվող օրինակը)։ Այնուհետև պատմվածքը տպագրվել է՝ ՈՒՀ 2, 322։

գրում, «սոցիալ-դեմոկրատիայի կարմիր դրոշի տակ»։ Կոչն ավարտվում է հետևյալ տողերով.

«Կեցցե՞ աղդերի եղբայրությունը,
Կեցցե՞ հալալ աշխատանքը,
Կեցցե՞ հերոս բանվոր մարդը» (VI, 410)։

Ճշգրիտ թվագրություն ունեցող Թումանյանի՝ «Արշալույսում» տպագրված «Նամակ խմբագրությանը» նախ ճշտում է «Ղարիբ եղբայրներ» կոչի մեջ հիշատակված դեպքերի հաստատ օրը՝ նոյեմբերի 27, որոշում կոչի թվագրությունը՝ Դսեղի միտինգից հետո՝ նոյեմբերի 28—29-ը։ Այնուհետև, որ շատ կարևոր է, հաստատ տեղեկություն է տալիս, թե ո՞ւմ է ուղղված կոչը, ովքեր են այդ «Ղարիբ եղբայրները», «մեր թանկագին զոնախները», ինչպես գրում է Թումանյանը։

1906 թ. հունվարի 9-ի բաց նամակի մեջ ընթերցողին ներկայանում է ալևիվ ու հպարտ մեծ մարդը, օբյեկտիվորեն դատող ազգային գործիչը։ Մի կողմից՝ Թումանյանը սրտի ցավով, եթե կարելի է ասել, ամոթի խոր զգացումով է նկարագրում տեղի ունեցածը (այդ հատկապես շեշտված է կոչի մեջ), ափսոսում, որ հայերը ավելորդ արյուն են թափել, բայց, միաժամանակ, բացատրելով հանգամանքները, ցույց է տալիս, թե լցվել է համբերության բաժակը, և դա առանձին դեպքերում նրանց կարող է մղել նման քայլերի։

* * *

1906 թվականի հունվարի վերջերին, շնորհիվ Թումանյանի ջանքերի, հատկապես Լոռու շրջանում ապահովվում է անվտանգությունը։ Գործին մեծապես նպաստում է Բորչալուի այդ օրերի գավառապետ, բանաստեղծի նամակներից մեզ հայտնի Ռեզանովը։ Վերջինս նույնիսկ հաջողեցնում է ձերբակալել մի քանի կողոպտիչ-ջարդարարների և ուղարկել նրանց Թիֆլիս՝ Մետեխի բանտ։

«Արշալույսի» թղթակից, շուլավերցի Գր. Բալասանյանը հետաքրքրասիրան հաղորդումներով Թիֆլիսի ընթերցողներին տեղյակ էր պահում գավառում կատարվող դեպքերին։

Տեսնելով, որ մոտենում է դարունը, և կոտորածների պատճառով ահաբեկված ու ցրված ազգաբնակչությունը հնարավորություն չի ունենալու հողի մշակումը սկսելու, Կովկասի կառավարչությունը թեպետ ուշացած, բայց ստիպում է բնակչությանը վերադառնալ և տեր կանգ-

նել հողերին, սպառնալով, որ եթե դանդաղեն, կարող են զրկվել հողերից։

Ինչպես պարզվում է մամուլի տվյալներից, գնդապետ Լևիցկու կարգադրությամբ արգելվում է զենք կրելը, սկսվում է վնասների, կորած գույքերի և անասունների ձևական գրանցում ու գնահատում[14]։ Նույն Գր. Բալասանյանի՝ Շուլավերից փետրվարի 2-ին գրած թղթակցությունից իմանում ենք, որ թուրքերը այժմ արդեն իրենք են ձգտում հաշտության, որովհետև մոտենում էր գարունը, պետք է սկսվեր ավանդական քոչը, հայերը կարող էին յայլաների ճանապարհները փակել, իսկ այդ ճակատագրական կլիներ թուրքերի համար նույնպես։

Բոլորի համար պարզ էր, որ եթե նույն թափով կոտորածները շարունակվեին, սովը անխուսափելի էր։

Գր. Բալասանյանի փետրվարի 4-ին գրած թղթակցության մեջ հաղորդվում է, թե լուրեր են պտտվում հայերի՝ Քորփլու գյուղի վրա կատարած հարձակման մասին. տեղ հասած կաղակները և Լամբալուին ու Սադախլուին օգնության գնացած թուրքերը հայտնում են, որ լուրերը սուտ են։ Նույն թղթակցությունից իմանում ենք, որ այդ օրերին «Հովհաննես Թումանյանին տեսել են այն կողմերով Ղազախ գնալիս լոռեցի հայերի հետ սպիտակ դրոշակներով՝ հաշտություն քարոզելու համար»[15]։

Պետք է ասել՝ մամուլը խիստ ժլատ է Թումանյանի այդ օրերի գործունեության վերաբերյալ։ Միայն «Արշալույսն» է հայտնում բանաստեղծի, լոռեցի հայերի ու նրանց պարզած սպիտակ դրոշի մասին, որի վերաբերյալ, ինչպես բանաստեղծի նամակներում, այնպես էլ ժամանակակիցների հուշերում կան վկայություններ, առանց, սակայն, ճշգրիտ օրերի հիշատակության։ Այսպիսով, Գր. Բալասանյանի փետրվարի 4-ի թղթակցությունը պարզում է մի որոշակի թվագրություն ևս՝ բանաստեղծի՝ Ղազախում կատարած խաղաղության բանակցության մասին։

Հայ-թուրքական հարաբերություններին վերաբերող «Արշալույսի» նյութերում ուշադրություն է գրավում փետրվարի 18-ին տպագրված «Լոռեցիների կոչը». այն կրում է համախոսականի բնույթ, ուստի և անստորագիր է։ Բերում ենք կոչը ամբողջությամբ, ապացուցելու համար, որ այն գրված է Թումանյանի ձեռքով, և նա է անձամբ ուղար-

---

14 «Արշալույս», 1906, № 25, 26։

15 Նույն տեղում, № 28, 30։

յանալու համար։ Հայտնվում է նաև, որ փետրվարի 9-ին, երեկոյան, ընտրված երկու հոգին արդեն մեկնել են[1]։

Արդ, ովքե՞ր են էջմիածին մեկնող այդ երկու հոգին, որոնք կաթողիկոսին պետք է ուղեկցեին Բաքու։

Պահպանվում է Թումանյանի՝ մարտի 9 թվագրությամբ մի նամակ՝ ուղղված արտասահմանում գտնվող ընկերոջը՝ բժիշկ Ա. Զարգարյանին. այն տպագրված է 1906 թ. նամակների շարքում, մինչդեռ շատ որոշակի է, որ նամակը գրված է կոտորածներից քիչ անց՝ 1905-ի մարտի 9-ին։ Այստեղ բանաստեղծը գրում է. «Բաքվի կոտորածի օրերը, հենց այն սարսափի թարմ ժամանակ Թիֆլիսում՝ ժողովարանում, մի ժողով արին, ինձ ու բժ. Մուրադյանին պատգամավոր ղրկեցին էջմիածին կաթողիկոսին խնդրելու, որ գա։ Խեղճ ծերունուն գտանք անկողնում պառկած»։ Բաքվի դեպքերը կաթողիկոսին ներկայացրել է բանաստեղծը։ Լսելով ցնցող լուրերը, հիվանդը աղաղակում է. «—Բավակա՞ն էր... բավակա՞ն էր... բավակա՞ն էր... Այդ աղաղակը ես չեմ մոռանում,— գրում է բանաստեղծը։— Այդ կարծես մեր ամբողջ ազգի, տանջված, ջարդված, հոգնած, ուժասպառ եղած ազգի աղաղակը լինի...» (V, 295)։ Ինչպես տեսնում ենք, «Մշակի» հաղորդման և Թումանյանի նամակի մեջ խոսքը նույն դեպքերին է վերաբերում։ «Մշակը» շատ լավ տեղյակ էր, որ էջմիածին մեկնող երկու հոգուց մեկը Թումանյանն է, բայց դիտավորությամբ նրա անունը չէր հայտնել 1905-ի փետրվարի 11-ի լուրերի մեջ, մի անգամ ևս ցուցարերելով իր չկամությունը բանաստեղծի նկատմամբ։

Այստեղ միայն մի հանգամանք կարող է շփոթության մեջ դցել. «Մշակը» հայտնում էր, որ պատգամավորները կաթողիկոսին պետք է ուղեկցեն Բաքու, իսկ Թումանյանը իր նամակում գրում է, որ գնացել են «խնդրելու, որ գա <Թիֆլիս>»։ Տարակուսանքը փարատում են «Մշակի» հաջորդ օրերի հաղորդումները, որոնցից հայտնի է դառնում, թե պատգամավորները էջմիածին հասնում են փետրվարի 10-ին և ստանում կաթողիկոսի՝ Բաքու մեկնելու համաձայնությունը[2]։ Բայց փետրվարի 11-ին Թիֆլիսի առաջնորդարանում Գարեգին եպիսկոպոս Սաթունյանցի նախագահությամբ տեղի ունեցած մի այլ ժողովում որոշվում է նոր հեռագրով խնդրել կաթողիկոսին՝ Թիֆլիսի կայարանը

---

1 «Մշակ», 1905, № 20։

2 Նույն տեղում, № 22։

հասնելով՝ չշարունակել ճանապարհը դեպի Բաքու, այլ մնալ մասնակցելու նախօրոր կազմակերպված փետրվարի 13-ի հաշտության ու խաղաղության ժողովրդական ցույցին[3]։ Կաթողիկոսը կրկին համաձայնում է։ Ցույցը տեղի է ունենում առաջնորդարանի բակում, տևում է երկու օր. 13-ին մասնակցում են հայերն ու թուրքերը, 14-ին՝ հայերն ու վրացիները։

Ե՛վ առաջին, և՛ երկրորդ ցույցին կաթողիկոսն իր ելույթն սկսում ու ավարտում է աղոթք-մրմունջով, այդ լռությամբ անմոռանալի տրպավորություն թողնելով ներկաների վրա[4]։

Այնուհետև Խրիմյան Հայրիկի ծերունական հիվանդությունը սրվում է՝ արգելելով նրան ճանապարհը շարունակել դեպի Բաքու. բնականաբար չի իրականանում նաև բանաստեղծի՝ Բաքու մեկնելու մտադրությունը։ Լավ ճանաչելով բանաստեղծին, դժվար չէ կռահել, որ նրա ճամփորդությունը չէր սահմանափակվի լոկ ուղեկցի իրավունքներով, այլ կնշանավորվեր հանուն խաղաղության արված մի կարևոր գործով։

Հայտնի է Թումանյանի՝ 1908 թ. բանտարկության փաստը և մեղադրանքը։

1909 թ. հունվարի 4-ին Մետեխի բանտում տված գրավոր ցուցմունքի մեջ բանաստեղծը մանրամասնորեն ներկայացրել է 1905—1906 թթ. իր գործունեության խաղաղասիրական նպատակը հաստատող մի քանի փաստեր, որոնց մեջ ուշադրություն է գրավում հատկապես Խրիմյան Հայրիկին ուղղած նրա մի հեռագիրը։ Նույնը արվում է մարտի 20-ին՝ Թիֆլիսի նահանգապետին ներկայացրած խնդրագրում (ՈՒՀ 3, 336, 348)։ Հեռագիրը երրորդ անգամ հիշատակվում է 1912 թ. Թումանյանի՝ Պետերբուրգից դստերը՝ Նվարդին ուղղած նամակի մեջ. բանաստեղծը պահանջել է «Թիֆլիսի լրագրերից մեկի այն համարը», որտեղ տպագրված է 1905 թ. վերջերին Ղարախաչի թուրքերի հարձակման առթիվ կաթողիկոսին տրված հեռագիրը և իր արդարությունը հաստատող այլ նյութեր։ Հայտնի է, որ շատ փաստաթղթեր, այլևայլ ձեռագիր վավերագրերի հետ բնակարանի խուզարկության ժամանակ բռնագրավվելով, տարվել են ժանդարմական վարչություն և հետագայում օգտագործվել որպես մեղադրանքի իրեղեն ապացույցներ (V, 360)։

---

3 Նույն տեղում, «Մուրճ», 1905, № 2—3, էջ 182։

4 Վ. Անառոնյան. Հովհաննես Թումանյան. Մարդը և բանաստեղծը, Բոստոն, 1936, էջ 92—93։

Ուստի բնական է, որ պահանջվող իրեղեն ապացույցի գտնելը ուներ իր դժվարությունները։

Հայտնի է, որ (ՈՒՀ 3, 352), կաթողիկոսին ուղղած հիշյալ հեռագիրը լույս է տեսել Թիֆլիսի «Արշալույս» օրաթերթում։

Համլիկ Թումանյանը, ի պատասխան Պետերբուրգից արված հոր պահանջի, 1912 թ. փետրվարի 13-ի նամակում որոշակի գրել է, թե հեռագիրը փնտրել է «Մշակ», «Тифлисский листок» թերթերում և չի գտել. «Եթե շատ է կարևոր,— գրում է նա,— կպրպտենք և ուրիշ տեղեր»[5]։

Ինչպես պատմում է իր հուշերում Վահան Թումանյանը՝ բանաստեղծի եղբայրը, կաթողիկոսին ուղարկած մի հեռագիր և եղբոր մասին այլ վկայություններ նա շատ մեծ դժվարությամբ ստացել է Ալեքսանդրապոլի Северский կոչվող գնդի հրամանատար Գոնչարովից, որը թեպետ հայտնի էր իր հայատյացությամբ, բայց Թումանյանի նկատմամբ ցուցաբերելով մեծ հարգանք, օգնել է նրան, ինչով կարողացել է (ԹԺՀ, 244—245)։ Բայց հուշը միշտ ենթակա է գրավոր փաստերով ճշտելու անհրաժեշտության։ Այդ մասին Թումանյանի նամակներում և արխիվային նյութերում այլ փաստացի տեղեկություններ չկան, ուստի հեռագիրը պետք էր փնտրել 1905-ի վերջերին և 1906 թ. սկզբներին Թիֆլիսում հրատարակվող հայտնի պարբերականներում («Մշակ», «Նոր դար», Տարազ», «Մուրճ», «Արարատ», «Լումա», «Тифлисский листок», «Новое обозрение», «Кавказ», «Возрождение» և այլն), բայց որոնումներն անցան անօգուտ։

Պահպանվում է Թումանյանի մի անտիպ նամակը՝ գրված Նիկոլ Աղբալյանին 1905 թ. ամռանը, որտեղ հայտնելով, թե Գ. Մելիք-Ղարագյոզյանը պատրաստվում է հրատարակելու «Բանբեր Կովկասի» անունով թերթ, հրատարակչի խնդրանքով առաջարկում է ընկերոջը՝ ստանձնել նոր թերթի խմբագրի տեղակալի կամ պատասխանատու քարտուղարի պաշտոնը։

Ըստ մամուլի տվյալների և Թումանյանի մասին գրած անտիպ հուշերի, Գ. Մելիք-Ղարագյոզյանին սկզբում պաշտոնապես թույլատրվել է «Բանբեր Կովկասի» անունով օրաթերթի հրատարակությունը[6],

---

5 Տե՛ս ԹԹ, ՓԲ, № 2822։

6 «Մշակ», 1905, № 46։

իսկ հետո խնդրատուին ստիպել են պարբերականի անունը փոխել «Արշալույս», որը և սկսում է լույս տեսնել 1905 թ. օգոստոսի 28-ից, որպես «գրական-հասարակական քաղաքական-տնտեսական օրաթերթ», ունենալով այնպիսի աշխատակիցներ, ինչպիսիք են Թումանյանը, Իսահակյանը, Շանթը, Փափազյանը, Շիրվանզադեն, Համազասպ Համբարձումյանը, Հակոբ Մանանդյանը և ուրիշներ։ Մի կարճ միջոց Մանանդյանը եղել է նաև հիշատակված օրաթերթի ժամանակավոր խմբագիրը։ 1906 թ. ապրիլից թերթը պաշտոնապես արգելվել է Թիֆլիսի նահանգապետի կարգադրությամբ՝ պատերազմական դրության ընթացքում «սոցիալիստների թռուցիկ հրատարակելու» մեղադրանքով[7]։

Ահա այս օրաթերթում է լույս տեսել Թումանյանի՝ մեզ հետաքրքրող հեռագիրը Խրիմյան Հայրիկ կաթողիկոսին։ Ընդամենը վեց ամիս հրատարակված թերթի անունը մոռացել էին և՛ բանաստեղծը, և՛ որդին։ Բնականաբար, Թումանյանը նշել էր հեռագրի մոտավոր ժամանակը. այն տրվել է ոչ թե 1905 թ. վերջերին, այլ նոյեմբերի 29-ին և տպագրվել է «Արշալույսի» դեկտեմբերի 1-ի համարում (№ 66)։

Ինչպիսի՞ պայմաններում է հաղորդվել հեռագիրը։

Հայտնի է, որ մատավորականության և հոգևորականության ջանքերը 1905 թ. փետրվարին՝ շուտափույթ վերջ տալու կոտորածը, ի դերև եղան. ընդհարումներ սկսվեցին նաև գավառներում և հասան մինչև Թիֆլիս ու շրջակայքը։ Մեծ վտանգ էին սպառնում Բորչալուի թուրքերը։ Թիֆլիսում նոյեմբերի 22-ին խուճապ է սկսվում. փակվում են խանութները, դպրոցները, լույս չեն տեսնում թերթերը (24-ից 27-ը)։

Այդ օրերի մասին է բանաստեղծը գրել. «Երեխեքս հավաքեցի, գնացի Լոռի։ Շատ լավ գիտեի, որ խառնակություններ են պատահելու, գիտեի, որ մեր գավառում անիշխանություն և ամեն անկարգություն կարող է լինել և ես շատ պետք կգամ, բայց պատահածն իմ սպասածից էլ ավելի եղավ» (V, 298)։

Եվ բանաստեղծը ի մի է բերում ձեռքի տակ եղած ուժը և հանուն խաղաղության առաջնորդում հայրենակիցներին դեպի ինքնապաշտպանություն։

Փաստեր կան, որ տեղական պահնորդները, որոնք իբրև թե պետք է օգնեին անզեն հայերին վայրենի հարձակումներից, փոխարեն ջարդարարների վրա կրակելու, կրակում էին օգում[8]։ Նոյեմբերի 27-ին,

---

7 «Նոր դար», 1906, № 62։

8 «Մշակ», 1905, № 241։

երբ տեղի է ունենում Ղազախի վրա կատարված հարձակումը, զավառապետ Առնոլդը մեծ դժվարություններով կարողանում է օգնել հայ խաղաղ ու անօգնական բնակչությանը։ Բայց, ինչպես հաղորդում են Թիֆլիսի ռուսերեն և հայերեն օրաթերթերը, կոտորածների ամենաթեժ միջոցին խաղաղության համար ջանքեր չխնայող զավառապետը շուտով կանչվում է Թիֆլիս և վտարվում պաշտոնից[9]։

Այսպիսի դեպքեր էին կատարվում Լոռու և Բորչալուի շրջակայքում, երբ Քոլագերան կայարանից նոյեմբերի 29-ին տրվում է մեզ հետաքրքրող հետևյալ հեռագիրը կաթողիկոսին, որն այդ օրերին գտնըվում էր Թիֆլիսում.

«Խնդրում եմ հաղորդել վեհափառ կաթողիկոսին, թե Լոռվա շրջանում հայտնվել է թուրքերի մի ահագին խումբ, որ կողոպտում է, սպանում։ Ժողովուրդը աղաչում է անմիջական օգնություն խնդրել։

Հովհաննես Թումանյան»[10]։

Ինչպես վկայում է բանաստեղծը Մետեխի բանտի գրավոր ցուցմունքներում, հեռագիրը տեղ հասնելով, ծառայել է նպատակին (ՈՒՀ 3, 336, 348)։ Շուտով ստացվում է սպասված օգնությունը և Քոլագերանում բանաստեղծն ինքն անձամբ է դիմավորում Ալեքսանդրապոլից ուղարկված զորքը։

Վահան Թումանյանը իր հուշերում նշում է նաև մոտավոր օրը՝ 1905 թ. դեկտեմբերի 5-ին կամ 6-ին (ԹԺՀ, 244)։

Այս է Խրիմյան Հայրիկին ուղարկված հեռագրի պատմությունը։

Անցնենք մի այլ հետաքրքրական նոր տվյալի, որը դարձյալ առնչվում է նույն դեպքերին։

1905 թ. դեկտեմբերի 9-ին «Արշալույսը» Թիֆլիսում հրատարակվող «Возрождение» օրաթերթից արտատպում է տեղի ֆրանսիական հյուպատոսի քարտուղար Էբերի հայտնած լուրն այն մասին, թե ինչպես, այցելելով Ալավերդու պղնձահանքը, նա վերադարձել է հայերի համար աննպաստ լուրերով։ Նոյեմբերի 27-ին, պատմել է Էբերը, հայերը իբրև թե հարձակվել են Ալավերդու գործարանում աշխատող 16 պարսկահպատակ անմեղ թուրքերի վրա, տեղնուտեղը սպանել են դրանցից երկուսին, մյուսներին էլ տանելով անտառ, ոչնչացրել, որից հետո գործարանը դադարել է աշխատելուց։ Այնուհետև,— հաղորդում

---

9 Նույն տեղում, «Новое обозрение», 1905, № 248։

10 «Արշալույս», 1905, № 66։

է թերթը,—«Շահալի, Կամիլկուտ, Խաչիգյուղ, Դսեղ և այլ գյուղերի հայ բնակիչները, լսելով այդ դեպքը, սաստիկ հուզվեցին իրենց հավատակիցների արածների դեմ, հավաքվեցին միտինգի Դսեղում և վճռեցին որոնել հանցավորներին ու վերադարձնել խլած զենքերը»։ Հայտնվում է նաև, որ Դսեղի միտինգի ժամանակ առաջացած սուր տարաձայնությունների պատճառով սպանվել է ստարշինայի օգնականը։ Ապա վճռվել է անել ամեն ինչ՝ կանխելու նման դեպքերը, կազմվել է ինքնապաշտպանության մի խումբ «Շահալի կայարանի շուրջն ապրող Բուրքերի կյանքն ու գույքը» հարձակումներից պահպանելու համար[11]։

Դեպքը, ինչպես տեսանք, տեղի է ունեցել նոյեմբերի 27-ին, Դսեղի խաղաղության ցույցը՝ 28-ին, և, քանի որ հաստատ է Թումանյանի՝ այդ միջոցին Դսեղում գտնվելու հանգամանքը, անտարակուսելի է, որ այդ ցույցի նախաձեռնողը դարձյալ նա է։ Ընթերցողի ուշադրությունը հրավիրում ենք հիշատակված թվական տվյալների վրա՝ նոյեմբերի 27, 28, ուրեմն Խրիմյան Հայրիկին ուղված հեռագրի նախօրյակին։

Ժամանակի հետաքրքրասեր ընթերցողը, անտարակույս, սպասում էր հավաստի նոր տեղեկությունների՝ հանիրավի սպանությունների, Դսեղում տեղի ունեցած ցույցի և Թումանյանի մասնակցության մասին։ Բայց Ֆրանսիայի էբերի հաղորդած լուրերի շուտափույթ ճշտելուն խանգարում է 1905 թ. համառուսաստանյան գործադուլը. դեկտեմբերի 11-ից Թիֆլիսում դադարում է ամեն մի աշխատանք, տպարանների փակվելու պատճառով օրաթերթեր լույս չէին տեսնում։

Հայ-Թուրքական ընդհարումները շատ տեղերում հասնում են ծայրահեղ ողբերգություններ, այնպիսի խառնաշփոթ է առաջանում, որ այլևս չէր ջոկվում մեղավորն ու արդարը, ինչպես դավառներում, այնպես էլ Թիֆլիսում։ Համառուսաստանյան գործադուլի ավարտից հետո, դեկտեմբերի 31-ից թերթերը շարունակվում են լույս տեսնել, տալով մանրամասն տեղեկություններ անցած օրերից։ Դեկտեմբերի 22-ին, օրը ցերեկով Ներսիսյան դպրոցին պատկանող շինությունից անհայտ շարագործները երկու ռումբ են նետում Լաբինսկի գնդի կազակների վրա, որից հետո շենքը շրջապատվում է, գնդակոծվում և ապա՝ հրդեհվում։ Անտարակույս, դա կատարվել էր պաշտոնական հրահանգով,

---

11 «Արշալույս», 1905, № 73։

պարզապես շանտաժ էր՝ հայ հոգևոր մշակույթի այդ հանրահայտ կենտրոնը հիմնահատակ կործանելու համար։

Նույն օրերին Ղազախի Բարանա գյուղից հայտնվում է, թե թուրքերը սկսել են առևանգել հայերի. նրանց թաքցնում են ու պահանջում իրենց, իբրև թե, կորած անասունները։ Շանտաժը, կոտորածն ու թալանը կազմակերպում էին թուրք «աղալարները», որոնց դեմ հետևողական պայքար մղողը Ղազախի և Բորչալուի շրջաններում այդ օրերին Թումանյանն էր։ Հայտնի է բանաստեղծի պաշտոնական գրագրությունը 1905 թ. վերջերին և 1906-ի սկզբներին և, հատկապես, հունվարի 1-ին և 2-ին տեղի ունեցած բանակցությունները թուրք «առաջավոր մարդկանց» հետ (V, 285)։

Բայց մեզ ավելի հետաքրքրողն այստեղ 1905-ի նոյեմբերի 27-ի, 28-ի դեպքերն են, Դսեղի միտինգը, Թումանյանի մասնակցությունը, «Возрождение» և «Արշալույս» օրաթերթերի ելույթները։

Ինչպես երևաց վերը բերված թվական տվյալներից, անտարակույս է Թումանյանի մասնակցությունը հիշատակված դեպքերին։ Արդ, ինչո՞վ է նա արձագանքել այդ թերթերի՝ հայերի մասին հայտնված աննպաստ լուրերին։

Իր հունվարի 14-ի համարում «Արշալույսը» տպագրում է հունվարի 9-ին Լոռուց ուղարկած՝ բանաստեղծի ստորագրությունը կրող թղթակցությունը, ի պատասխան ֆրանսիացի էբերի հաղորդած լուրերի։ Այն չի զետեղվել ո՛չ Թումանյանի ժողովածուներում, ո՛չ հրապարակումների հատորներում, ուստի և անծանոթ է։

«Արշալույսի» դեկտեմբերի 9-ի համարում,— գրում է Թումանյանը, դիմելով օրաթերթի խմբագրությանը,—«Վոզրոժդենիե»-ից արտատպել եք մի լուր, որ հայտնել է ֆրանսիական հյուպատոսարանի քարտուղար պ. էբերը։ Այդ լուրի մեջ մի երկու սխալ կա, որ հարկավոր եմ համարում ուղղել և լրացնել տեղեկությունը։

Ֆրանսիական Շահալի-էլիար գործարանում սպանված են ոչ թե 16, այլ 7 հոգի։ Այդ դեպքի առիթով միտինգ է կայացած Դսեղ գյուղում. միտինգին եկել են Դսեղա շրջանից 13 գյուղերը և ո՛չ մի տարաձայնություն տեղի չի ունեցել, ո՛չ էլ դրա համար ստարշինայի օգնականն է սպանված, ընդհակառակը, միաձայն վճռով որոշված է ետ դարձնել ամբողջ կողոպուտը և պատժել հանցավորներին։ Այդպես էլ ետ են դարձնում պարսկահպատակներից կողոպտված փողը, իրերն ու անասունները։ Ետ են դարձրած ֆրանսիական ընկերության գործա-

բանի գենքերը։ Դսեղ է կանչված գործարանում ծառայող հույնը, որը մասնակցել է կողոպուտին և պատվիրված է նրան էլ, որ նա էլ ետ դարձնի իր տարածը։ Հանցավորներին պատժելու համար որոշված է հրավիրել ժողովրդական դատաստան։ Մահմեդականների կյանքն ու գույքը պաշտպանելու համար ոչ մի առանձին, նոր ինքնապաշտպանության խումբ չի կազմվել մասնավոր մարդկանց ձեռքով։

Շարունակելով իր փաստացի տեղեկությունները, Թումանյանը հայտնում է, թե և՛ միտինգ գումարելը, և՛ կողոպուտը վերադարձնելն ու մահմեդականներին պաշտպանելը կամ դատաստան հրավիրելը,— ամեն բան կատարված է հայերի ձեռքով, և «այս բոլորի մասին հեռագրված է վեհափառ կաթողիկոսին և Թիֆլիսի պարսիկ գլխավոր հյուպատոսին...»։

Նամակի շարունակության մեջ, անդրադառնալով Ղազախի սահմանի մոտ տեղի ունեցած մի թյուրիմացության, հեղինակը պատմում է, թե ինչ ջանքերով է կարողացել «խաղաղությունը պահել գոնե այս կողմը», ապա հատկապես շեշտել, թե երկու ժողովրդի մեջ «...սաստիկ մեծ է խաղաղության ցանկությունը։ Երկու կողմից էլ խուլիգան մարդիկ են խառնում։ Եվ այնպե՞ս հեշտ են խառնում,— սրտի ցավով գրում է բանաստեղծը,— որ զարմանում է մարդ։ Եթե դժվար մի բան կա՝ դրա առաջն առնելն է»[12]։

Թումանյանի ժառանգությանը ծանոթ մարդը չի կարող նմանություն չտեսնել բանաստեղծի այս բաց նամակի և հայտնի «Ղարիբ եղբայրներ» վերնագիրը կրող կոչի միջև (VI, 409)[13]։

Տարակուսանք չի կարող լինել, որ այս կոչն էլ գրված է Ալավերդու պղնձահանքերում կատարված հանիրավի սպանությունների առիթով. առաջինը նամակ-բացատրություն է Թիֆլիսի ռուսերեն և հայերեն թերթերի ընթերցողների համար, մյուսը՝ խաղաղության կոչ և բարեկամության հավաստիացում՝ ուղղված պարսկահպատակ այն թուրք պանդուխտներին, որոնք ապաստան էին գտել Ալավերդում՝ մի կտոր հաց վաստակելու, իսկ այդ օրերին կանգնած էին, ինչպես Թումանյանն է

---

12 «Արշալույս», 1906, № 8։

13 Այստեղ ծանոթագրությունը տեղեկացնում է միայն, թե «Գրել է, հավանորեն, 1905 թ. նոյեմբերի վերջերին, հայ-թուրքական ընդհարումների ժամանակ։ Առաջին անգամ տպագրվել է՝ «Գրական թերթ», 1949, փետրվարի 19, № 6ա, առանց հայտնելու, թե ովքեր են «Ղարիբ եղբայրները» (VI, 488)։

գրում, «սոցիալ-դեմոկրատիայի կարմիր դրոշի տակ»։ Կոչն ավարտվում է հետևյալ տողերով.

«Կեցցե՞ ազգերի եղբայրությունը,
Կեցցե՞ հալալ աշխատանքը,
Կեցցե՞ հերոս բանվոր մարդը» (VI, 410)։

Ճշգրիտ թվագրություն ունեցող Թումանյանի՝ «Արշալույսում» տպագրված «Նամակ խմբագրությանը» նախ ճշտում է «Ղարիբ եղբայրներ» կոչի մեջ հիշատակված դեպքերի հաստատ օրը՝ նոյեմբերի 27, որոշում կոչի թվագրությունը՝ Դսեղի միտինգից հետո՝ նոյեմբերի 28—29-ը։ Այնուհետև, որ շատ կարևոր է, հաստատ տեղեկություն է տալիս, թե ո՞ւմ է ուղղված կոչը, ովքեր են այդ «Ղարիբ եղբայրները», «մեր թանկագին զոնախները», ինչպես գրում է Թումանյանը։

1906 թ. հունվարի 9-ի բաց նամակի մեջ ընթերցողին ներկայանում է ազնիվ ու հպարտ մեծ մարդը, օբյեկտիվորեն դատող ազգային գործիչը։ Մի կողմից՝ Թումանյանը սրտի ցավով, եթե կարելի է ասել, ամոթի խոր զգացումով է նկարագրում տեղի ունեցածը (այդ հատկապես շեշտված է կոչի մեջ), ափսոսում, որ հայերը ավելորդ արյուն են թափել, բայց, միաժամանակ, բացատրելով հանգամանքները, ցույց է տալիս, թե լցվել է համբերության բաժակը, և դա առանձին դեպքերում նրանց կարող է մղել նման քայլերի։

* * *

1906 թվականի հունվարի վերջերին, շնորհիվ Թումանյանի ջանքերի, հատկապես Լոռու շրջանում ապահովվում է անվտանգությունը։ Գործին մեծապես նպաստում է Բորչալուի այդ օրերի գավառապետ, բանաստեղծի նամակներից մեզ հայտնի Ռեզանովը։ Վերջինս նույնիսկ հաջողացնում է ձերբակալել մի քանի կողոպտիչ-ջարդարարների և ուղարկել նրանց Թիֆլիս՝ Մետեխի բանտ։

«Արշալույսի» թղթակից, շուլավերցի Գր. Բալասանյանը հետաքրքրություններով Թիֆլիսի ընթերցողներին տեղյակ էր պահում գավառում կատարվող դեպքերին։

Տեսնելով, որ մոտենում է գարունը, և կոտորածների պատճառով ահաբեկված ու ցրված ազգաբնակչությունը հնարավորություն չի ունենալու հողի մշակումը սկսելու, Կովկասի կառավարությունը թեպետ ուշացած, բայց ստիպում է բնակչությանը վերադառնալ և տեր կանգ-

նել հողերին, սպառնալով, որ եթե դանդաղեն, կարող են զրկվել հողերից։

Ինչպես պարզվում է մամուլի տվյալներից, գնդապետ Լևիցկու կարգադրությամբ արգելվում է զենք կրելը, սկսվում է վնասների, կոտրած գույքերի և անասունների ձևական գրանցում ու գնահատում[14]։ Նույն Գր. Բալասանյանի՝ Շուլավերից փետրվարի 2-ին գրած թղթակցությունից իմանում ենք, որ թուրքերը այժմ արդեն իրենք են ձգտում հաշտության, որովհետև մոտենում էր գարունը, պետք է սկսվեր ավանդական քոչը, հայերը կարող էին յայլաների ճանապարհները փակել, իսկ այդ ճակատագրական կլիներ թուրքերի համար նույնպես։

Բոլորի համար պարզ էր, որ եթե նույն թափով կոտորածները շարունակվեին, սովը անխուսափելի էր։

Գր. Բալասանյանի փետրվարի 4-ին գրած թղթակցության մեջ հաղորդվում է, թե լուրեր են պատվում հայերի՝ Քորվլու գյուղի վրա կատարած հարձակման մասին. տեղ հասած կազակները և Լամբալուին ու Սադախլուին օգնության գնացած թուրքերը հայտնում են, որ լուրերը սուտ են։ Նույն թղթակցությունից իմանում ենք, որ այդ օրերին «Հովհաննես Թումանյանին տեսել են այն կողմերով Ղազախ գնալիս լոռեցի հայերի հետ սպիտակ դրոշակներով՝ հաշտություն քարոզելու համար»[15]։

Պետք է ասել՝ մամուլը խիստ ժլատ է Թումանյանի այդ օրերի գործունեության վերաբերյալ։ Միայն «Արշալույսն» է հայտնում բանաստեղծի, լոռեցի հայերի ու նրանց պարզած սպիտակ դրոշի մասին, որի վերաբերյալ, ինչպես բանաստեղծի նամակներում, այնպես էլ ժամանակակիցների հուշերում կան վկայություններ, առանց, սակայն, ճշգրիտ օրերի հիշատակության։ Այսպիսով, Գր. Բալասանյանի փետրվարի 4-ի թղթակցությունը պարզում է մի որոշակի թվագրություն ևս՝ բանաստեղծի՝ Ղազախում կատարած խաղաղության բանակցության մասին։

Հայ-թուրքական հարաբերություններին վերաբերող «Արշալույսի» նյութերում ուշադրություն է դրավում փետրվարի 18-ին տպագրված «Լոռեցիների կոչը». այն կրում է համախոսականի բնույթ, ուստի և անստորագիր է։ Բերում ենք կոչը ամբողջությամբ, ապացուցելու համար, որ այն գրված է Թումանյանի ձեռքով, և նա է անձամբ ուղար-

---

14 «Արշալույս», 1906, № 25, 26։

15 Նույն տեղում, № 28, 30։

կել «Արշալույսում» տպագրելու՝ որպես նույն թերթի աշխատակից։ Անհրաժեշտ է այստեղ էլ ուշադրություն դարձնել լույս տեսնելու թվագրությանը՝ փետրվարի 18, և վերևում հիշատակված՝ Գր. Բալասանյանի փետրվարի 4-ի թղթակցության մեջ բերվող Թումանյանի սպիտակ դրոշով դեպի Ղազախ կատարած բանագնացության վրա. ուրեմն կոչը գրված է փետրվարի մոտ 1—2-ին, բայց այդ խոսքն օրերին մինչև ուղարկվել է Թիֆլիս, անցել է շուրջ 15—16 օր։

Ահա այդ անստորագիր կոչը.

«Մեր հայրական-պապական բարեկամ, մեր դարավոր հարևան Ղազախի մուսուլմաններին։

Լոռու ժողովուրդը լսեց, որ Ղազախի մեր հայ ու թուրք եղբայրների մեջ գժտություն է ծագել. լսեց, որ ամոթալի ու անմիտ կռվով խախտվում է երկու կողմի հարևանությունն ու բարեկամությունը. լսեց, որ հրացան են արձակում գյուղերի վրա, երեխաների ու կանանց վրա, իրար որդի են սպանում, իրար տուն են քանդում, իրար խոտ կրակում, իրար ապրանք քշում։ Ինչո՞ւ համար—ոչ ոք չի հասկանում։ Ինչպես խոտն են կրակում, այնպես էլ կրակ են դցել, ժողովուրդը միջին այրվում է, և հանգցնող չկա։ Անխելքները վեր են կացել, գազան կտրել, խելոքներն էլ խելքները կորցրել, շվարել, մնացել են։ Երկիրն իրար է խառնվել։

Եթե այդ երկու կողմերը երկու զորք լիներին, կասեինք՝ մի օր մեկը մյուսին կհաղթի, կջարդի, կանցնի-կգնա։ Բայց սրանք որդու հարազատ ժողովուրդ են, որ միշտ ապրելու են իրար կողքի, որ երբեք չեն մոռանալու մեկը մյուսի արածը՝ որդին են սպանել, տունն են կրակել, կինն են անպատվել. և որդեցորդի մնալու է ոխն ու թշնամությունը, որդեցորդի պղտորվելու է երկուսի էլ կյանքը այս մեր գեղեցիկ սարերում ու ձորերում։

Սրա համար մենք՝ լոռեցիքս, հավաքվեցինք, հաշտության նշան սպիտակ դրոշակը պարզեցինք, անցկացանք մեր սարերը, եկանք կանգնելու մեր կռվող եղբայրների մեջտեղը։ Այս ի՞նչ եք անում, անմիտներ. ի՞նչ եք արել մեկ-մեկու, ի՞նչ եք ուզում մեկդ մյուսից։ Մի՞թե մեղք չեն ձեր կանայք ու երեխաները, մի՞թե ափսոս չի ձեր արդար աշխատանքը, որ փչացնում եք։ Մի՞թե ամոթ չի ձեր տղամարդությանը, մի՞թե հարամ չի այն աղ ու հացը, որ կերել եք միասին։

Մենք եկել ենք հարյուր ձիավորով, և շատ հարյուրներ էլ պատրաստ են մեր սարերում, բայց նրանք ձեզ համար չեն, այլ նրանց

համար, ով կհարձակվի իր հարևանի վրա, հայ լինի, թե թուրք, մեկ է։ Լավ է մեր միջից մի քանի լիրբ մարդիկ վերանան, քան թե երկու կողմի անմեղ ժողովուրդը նրանց պատճառով կրակի մեջ ընկնի։ Միայն թե դուք էլ այդպես վարվեցեք։

Ղազախի մուսուլման եղբայրներ, դուք Լոռու սահմաններում ինչ որ թողել եք ու փախել, իմացած եղեք, որ մենք պահում-պահպանում ենք ինչպես «ամանաթ»։ Եթե մի բան կորչի կամ պակասի, հայ գյուղերն են պատասխանատու։ Գարնանն էլ գալու եք մեր սարերը, այդ սարերում միշտ ապրել ենք միասին, մի հողի, մի ջրի վրա։ Միամիտ սրտով, եղբոր նման էլի եկեք, և եթե մեզանից մեկը ձեզ նեղություն տա՝ մենք կտեսնենք նրանց դատաստանը, ինչպես որ տեսել ենք շատ անգամ։

Մուսուլման եղբայրներ, դուք պիտի հավատաք մեր խոսքին նախ այն պատճառով, որ ձեզ հետ լոռեցիք են խոսում, իսկ լոռեցիք քաջ կռվից չեն վախենում, երկրորդ. ինքներդ լավ գիտեք, որ մենք ձեզ համար այնպիսի հարևան ու բարեկամ ենք եղել, որ ձեզ մեր հայերից չենք ջոկել»[16]։

Ինչպես տեսնում ենք, կասկածից վեր է «քաջ կռվից» չվախեցող լոռեցիների այս խաղաղության կոչի՝ Մեծ քաղաքացու և Մեծ բանաստեղծի իմաստուն գրչին պատկանելը. սա, կարծես, մի արձակ բանաստեղծություն է մարդասիրության ու բարեկամության մասին՝ գրված Թումանյանին հատուկ պարզ ու անպաճույճ ոճով։ Կոչի նպատակն էր՝ փրկել ժողովրդին վերահաս սովից, բարձրացնել այդ օրերին սարսափից տուն ու տեղը թողած ու տառապած հողի աշխատավորի ինքնագիտակցությունն ու ազգային արժանապատվությունը ու նրան առաջնորդել դեպի տուն, դեպի խաղաղ ու ազնիվ աշխատանք, դեպի հաշտություն։

Ինչպես ասվեց, Թումանյանի այս կոչը տպագրվել է փետրվարի 18-ին։ Այդ օրերին Լոռու, Բորչալուի, Ղազախի շրջաններում կյանքը ավելի խաղաղ և ապահով է դառնում։ Կառավարությունը շարունակում էր իր դիվանագիտական նոր խաղերը։ Փետրվարի 25—27-ին Թիֆլիսի նահանգական ատյանը Շուլավերում քննում է ձերբակալված մի քահանայի և հաղպատցի 18 հայ գյուղացիների գործը։ Նրանք մեղադրվում էին իշխանությանը դիմադրելու, սպանությունների և այլ

16 Նույն տեղում, № 36։

կեղծ, մտացածին հանցանքների մեջ։ Դատարանը արդար ճանաչելով հայերին, բրևական դատ է բաց անում ոստիկանական պրիստավի և ուրիշ իսկական հանցավորների դեմ[17]։

Մարտի 1-ին Թիֆլիսի նահանգապետին ներկայանում է Բորչալուի մահմեդականների քանյոթ հոգուց բաղկացած մի պատգամավորություն, որը հայ-թուրքական ընդհարումների միջոցին թուրքերին մեղավոր ճանաչելով, խնդրում է նախ ազդել հայ ազգաբնակչության վրա՝ մոտակա քոչը չիանգարելու համար և ապա՝ աշխատում է ամեն կերպ հավատացնել, որ Բորչալուի ազգաբնակչությունը այն համոզմունքը չի ունեցել, թե իշխանությունը կարող է համակրել իրենց թշնամական գործողությունները հայերի վերաբերմամբ։ Երկուստեք դիվանագիտությունը հետագա դժվարությունները կանխելու՝ ճանապարհ է հարթում, նահանգապետը՝ փոխարքայի անունից խոստանում է երկու ազգություններից և իշխանավորներից հաշտարար հանձնաժողով հրավիրել, որպեսզի վաղեմի բարեկամական դրացիությունը վերականգնվի հայերի և թուրքերի միջև[18]։ Հավանաբար մարտի 6-ին տեղի ունեցած հայ-թուրք պատգամավորական խորհրդակցությունը (այսպես կոչված՝ խաղաղության համագումար) որոշել է ընտրել տասը հոգի, որոնք կազմելու էին Հայ-բուրական խորհուրդ՝ փոխարքայի դիվանին կից. հայերից ընտրվում են հասարակական գործիչ Սամսոն Հարությունյանը, «Մշակի» խմբագիր Ալ. Քալանթարը, բժիշկ և հասարակական գործիչ Ալ. Խատիսյանը և ուրիշներ[19]։

Դր. Բալասանյանի՝ մարտի 15-ին ուղարկած թղթակցությունից իմանում ենք, որ «մոտ օրերս» սեծովյան զորագնդի հրամանատար Զոլոտարյովի գլխավորությամբ մի մասնախումբ է գալու՝ Բորչալուի գավառում հայերի կրած վնասները որոշելու և մեղավորներից գանձելու համար[20]։

Թումանյանը ընդհանրապես հավատ չուներ պաշտոնական միջոցառումների, մասնաժողովների արդարադատության նկատմամբ, բայց մեծապես վստահում էր ինչպես գավառապետ Ռեզանովին, այնպես էլ Վ. Ա. Զոլոտարյովին. վերջինս շատով նշանակվում է նաև զինվորական

---

17 Նույն տեղում, № 44։

18 Նույն տեղում, № 50։

19 «Հառաջ», 1906, № 42։

20 «Արշալույս», 1906, № 59։

նահանգապետ, իսկ պաշտոնատեղին Ջալալօղլին էր[21], որը նրան հնարավորություն էր տալիս մոտիկից ծանոթանալու իրադրությանը և արդարորեն դրսևորելու «հայրական վերաբերմունքը» գյուղացիների և ղեկավարությունը «մութ և արատավոր անձնավորությունների նկատմամբ» (V, 293), որոնք շարունակում էին իրենց սև գործը, առանց ուշադրություն դարձնելու մասնաժողովների վրա, ահռելի դժվարություններ ստեղծում վերջնական խաղաղություն հաստատելու համար։ Դրանց դեմ պայքարելը անընդհատ նոր փակուղիներ ու խոչընդոտներ էր ստեղծում։ Թումանյանի հիշատակած «մութ և արատավոր» մարդիկ, այնուամենայնիվ, հովանավորվում էին վերուստ՝ պաշտոնապես, ուստի բոլորովին պատահական չեն բանաստեղծի նույնիսկ մայիսի 30-ի (խորհրդակցություններից, մասնաժողովների միջամտություններից հետո) հետևյալ հուսահատ խոսքերը. «Նորից մթնոլորտը խառնվում է. և ով գիտի էս կարկուտի տակից էլ կաղատվե՞մ, թե չէ», մանավանդ, արդեն լուրեր էին հասել, որ ստիկանության գլխավոր գեներալ-լեյտենանտ Շիրինկինը կարգադրել է բանտարկել իրեն (V, 299)։

Իրենց գաղանություններով հայտնի Եդիգարով եղբայրներին 1906 թ. ամռանը հաջողվում է վտարել Բորչալուի արդարադատ գավառապետ Ն. Կ. Ռեզանովին, որի միակ մեղքը հայերին հովանավորելն էր։ Թումանյանի ջանքերը՝ խանգարել այդ անարդար որոշումը ի կատար ածելու՝ հաջողություն չունեցան։

Հուլիսի 7-ին Օձոմնում կայանում է Լոռվա քառասուն գյուղերի ներկայացուցիչների խորհուրդ, ուր որոշվում է փոխարքային հեռագիր ուղարկել և բողոքել Հասան բեկ Եդիգարովին Բորչալուի գավառի ազնվականների պարագլուխ ընտրելու դեմ, համարելով նրան հայ-թուրքական կոտորածների, ամեն տեսակ վայրագությունների հեղինակ, խնդրել՝ ղրկելու նրան պարագլուխ դառնալու պատվից և դատի տալ որպես հանցագործի։ Հեռագրի տակ ստորագրել են 15 լիազոր[22]։

Հեռագրի բնագիրը անհայտ է, բայց անտարակուսելի է, որ և՛ խորհուրդ հրավիրելու նախաձեռնությունը, և՛ հեռագիր ուղարկելու որոշումը կատարվել է Թումանյանի գլխավորությամբ։ Կասկածից վեր է նաև, որ հեռագրի մասին հայտնող թղթակցությունը (լույս է տեսել

---

21 Այդ շրջաններում դեռևս շարունակվում էր զինվորական դրությունը (նույն տեղում, № 48)։

22 «Ալիք», 1906, № 60։

1906 թվականի հուլիսի 7-ին) գրված է Թիֆլիս ուղարկած Թումանյանի նյութերի հիման վրա. ասացույց՝ երկու օր հետո Ջալալօղլում գրած նրա պաշտոնական նամակները Ս. Հարությունյանին, Ալ. Քալանթարին և Ալ. Խատիսյանին (վերջինը՝ անհայտ, V, 300), որոնք ընտրված էին, ինչպես ասացինք վերևում, փոխարքայի դիվանին կից հայ-թուրքական խորհրդի մեջ։ Խստագույնս դատապարտելով Եղիգարով եղբայրներին և պաշտպանության տակ առնելով հանիրավի պաշտոնազրկված գավառապետին, բանաստեղծը միաժամանակ ափսոսում է իր ջանքերով ստեղծված դարնան համեմատաբար կայուն խաղաղ վիճակը. «Հայ-թուրքական հարցը մեզանում առել էր մի շատ ցանկալի ընթացք, և հասել էինք լավ հետևանքների.... և ահա վրա հասավ այս նոր պրովոկացիան։ Հանցավոր տարրը բարձրացավ գավառում, պատժող ու զսպող ձեռքը հեռացվում է մեջտեղից» (V, 300)։

Նամակի շարունակության մեջ, երբ Թումանյանը գրում է, թե «Այժմ գավառի գյուղերից պատգամավորությունն է գալիս ներկայանալու փոխարքային և... խնդրելու Ռեզանովին թողնեն իր տեղը...», նկատի ունի այն 15 լիազորներին, որոնք ստորագրել էին վերևում հիշատակված հեռագրի տակ[23]։

Ինչպես տեսնում ենք, գործելով կրակի առաջին գծում, բանաստեղծը անմիջական կապ ուներ նաև Թիֆլիսի մամուլի, ինչպես և հասարակական ու պաշտոնական անձանց հետ։

Ս. Հարությունյանին և Ալ. Քալանթարին ուղղած նամակն է հիշեցնում նաև մի այլ թղթակցություն, որ գրված է բանաստեղծի ուղարկած նյութերի հիման վրա (թերևս որոշ խմբագրումներով օգտագործել են հաշտության գործերով զբաղված գրողի՝ շտապ ոտքի վրա գրված թղթակցությունները)։ Դրանցից մեկը նույն «Ալիք» օրաթերթի «Նոր պրովոկացիա» հոդվածն է (անստորագիր)՝ տպագրված օգոստոսի 6-ին[24], երբ Օձունի խորհրդակցությունից և հուլիսի 9-ին գրած պաշտոնական նամակներից (մեկը, ինչպես ասացինք, ուղղված Ալ. Խատիսյանին՝ անհայտ է) անցել էր մեկ ամիս, բայց դրությունը քանի գնում, վտանգավոր էր դառնում, հատկապես Բորչալուի գավառում։

Հոդվածն սկսվում է խմբագրության կողմից տրված հաղորդմամբ. «Բորչալու գավառից ստացված տեղեկությունները ցույց են տալիս, որ

---

23 Նույն տեղում։

24 «Ալիք», 1906, № 82։ Հմմտ. հիշատակված հոդվածը Թումանյանի գրած նույն թվականի հուլիսի 9-ի նամակի հետ (V, 300)։

այնտեղ վերջին ժամանակներս մի առանձին հուզում, խլրտում է սկըսվել թուրք ազգաբնակության մեջ»։ Շարունակությունը՝ արդեն բուն տեղեկություններն են ժամանակից շուտ յայլաղներից թուրք ազգաբնակչության վերադառնալու, «ինչ-որ խորհրդավոր պատրաստություններ տեսնելու» և «ապագայի «դեպքերին» սպասելու» մասին։ Հոդվածագիրը որոշակի հայտնում է. «Եվ այդ բոլորի դրդողն ու կազմակերպողը դարձյալ տխրահռչակ Հյուսեին բեկ Եդիգարովն է», որ Ղըզըլ-հաջլու գյուղից թուրքիկներ ուղարկելով սարերը, պատվիրել է՝ քոչվորները «վերադառնան և պատրաստվեն»։ Հոդվածի շարունակության մեջ թըղթակցի մտահոգությունը վերաբերում է նախ թուրք «խեղճ ու կրակ գյուղացիության» ճակատագրին, քանի որ ստոր դավերը մոլորեցնում են նրանց, «միշտ վառ պահում կասկածանքի խարույկը և թշնամանքի որոմ ցանում ընդդեմ աշխատավոր հայ գյուղացիության»։ Ինչպես տեսնում ենք, թղթակցի տրամադրությունը միանգամայն հաշտարար է ու խաղաղասիրական, նրան պետք է բարիդրացիական փոխհարաբերություն աշխատավոր մարդու համար և «ազնվականների պարագլուխի» մեկուսացում, «...որպեսզի ամրապնդվի հայ և թուրք գյուղացիության փոխադարձ վստահությունը...», ավելի լայն չափերով տարածվի եղբայրության, ազգերի համերաշխության վեհ գաղափարը, և բարձրանա նրա դասակարգային գիտակցությունը[25]։

Հոդվածում ուշադրություն է գրավում բողոքը տիրող կարգերի դեմ։ «Փոխարքայի կողմից իբրև թե քննության ուղարկված «առանձին հանձնարարությունների պաշտոնյա» Մասալովը գնում է Բորչալու, բայց փոխանակ ժողովրդին հարց ու փորձ անելու, փոխանակ անաչառ քննիչի դեր կատարելու, իջևանում է հենց Եդիգարովի և նրա բարեկամների մոտ և, իհարկե, նրանց ցանկացածի նման էլ «քննության զեկուցում պատրաստում»[26]։ Քննիչին գործուղողի, այնպես էլ նրան հյուրընկալողի տրամադրությունը հայ աշխատավոր մարդու նկատմամբ բարբարոսական է։ Այդ է պատճառը, որ հետագա տողերում ընթերցողի աչքի առջև հառնում է թղթակցության հեղինակի միտումը՝ բարձրացնել վախեցած ու տառապած հայ մարդու ինքնագիտակցությունը և հատկապես ընդգծել, որ ամբողջ դժբախտությունը գալիս է «ոճրա-

---

25 Նույն տեղում։

26 Նույն տեղում։ Թումանյանի՝ հուլիսի 6-ի վերևում հիշատակված նամակում նույնպես գրվում է, «...որ փոխարքայից քննիչ է եկած, ու ոչ մի գյուղում չեն տեսած նրան» (V, 300)։

գործ բեկի» և իշխանության համագործակցությունից։ «Հուսալ, թե բարձր իշխանությունը, որ մինչև այժմ մեղսակից ու քաջալերիչ է եղել Թուրք բեգական քաջագործություններին, այժմ արդարության քայլեր կանի և կպատժի Եղիգարովների նման սճրագործներին—դա ավելի քան միամտություն է։

Այս դեպքում էլ ժողովուրդը ինքը պետք է աշխատի շարիքը խեղդել, ամեն տեղ և ամեն քայլափոխում արծարծելով համերաշխության գաղափարներ։ ...Թո՛ղ նորից ու նորից հնչի հայ և Թուրք գյուղացիության փոխադարձ կոչը.

— Միանա՛նք, որովհետև մեկ է մեր թշնամին—հանձին շահագործող բեկերի, խանների ու կապիտալիստների և նրանց հովանավորող բռնակալ բյուրոկրատիայի։

— Միանա՛նք, որովհետև մեր միությամբ ու եղբայրությամբ միայն կարող ենք տապալել բռնության ու հարստահարության լուծը և պրոլետարական բոլոր դավերը»[27]։

Այստեղ ավելորդ է խոսել լեզվաճակատային ընդհանրությունների, առանձին նախադասությունների նմանության մասին, քանի որ, ինչպես ասվեց, եղել են խմբագրական միջամտություններ։ Կարևոր գաղափարական միասումն է, դավադիր ուղարկված թղթակցության ոգին, որ հար և նման է Թումանյանի վաղուց հայտնի հոդվածների, նամակների ու նյութերի, ինչպես և «Արշալույսում» տպագրված թղթակցության և անստորագիր կոչի ինտերնացիոնալիստական մղումներին, ժողովրդասիրական ու մարդասիրական ձգտումներին։

Գրեթե նույն սկզբունքներն ունի Թիֆլիսի «Զանգ» օրաթերթի օգոստոսի 11-ի թվագրությամբ «Բոսկի լրջությունը» անստորագիր առաջնորդողը՝ գրված նույն ամսի 15-ին, էջմիածնում բացվող «Կենտրոնական համաժողովի» առիթով, որը զգուշացնում էր չշլանալ «համազգային ռեֆերենդումի» հրապույրներով, այլ նախապատրաստվել պատասխանելու սպասվող աղետներից[28]։ Ընդգծելով հատկապես Զանգեզուրի, Սիսիանի, Ղափանի, Շուշիի «լքված, անզեն հայ ժողովրդի օգնության աղաղակները», առաջնորդողը անդրադառնում է նաև ըստասվելիք այն նոր անկուահելի դավերին, որոնք նյութում են վրեժխնդիր մարտագներ Ղարաբաղի հայության դեմ և ապա անցնում գտոնյալ Բորչալուի դեպքերին, լոյալ գործունեությամբ հայտնի դա-

27 Նույն տեղում։

28 «Զանգ», 1906, № 2։

վառապետի հանիրավի պաշտոնազրկմանը և կրկին հայտարարում. «Կառավարությունը և բեկերը այսպիսով մի անգամ ևս հայտնվում են սրտաշարժ համերաշխության մեջ»։

Այստեղ, սակայն, առաջնորդող հոդվածը միաժամանակ առանձնացնում է մի ուրիշ հանգամանք, որ ընդհանուր ողբերգության մեջ մխիթարություն է երևան բերում. «...Կան խաղաղության ու համերաշխության հանդիսավոր թափորներ Ղազախի կողմերում, ուր մեր ինտելիգենտ ընկերները մի աղնիվ, սքանչելի եռանդ են թափում, ամրապնդում են երկու աշխատավոր հարևան ժողովուրդների խզված կապերը»[29]։

Կասկածի տեղիք տալի՞ս է, արդյոք, որ այդ շրջանում «սքանչելի եռանդ» թափողներից մեկը կամ, թերևս, միակը՝ Թումանյանն էր։ Թերթի խմբագրությունը, տեղյակ լինելով բանաստեղծի՝ ոստիկանության կողմից հսկողության տակ լինելու մասին, գերադասել էր անունը չհիշատակել[30]։ Այս առաջնորդող հոդվածում Բորչալուի դեպքերին և Թումանյանի գործունեությանը անդրադառնալուն հիմք է տրվել հիշյալ օրաթերթի նույն համարի երրորդ էջում տպագրված օգոստոսի 10-ի թղթակցությունը Շուլավերից՝ «Վերջին տեղեկություններ» վերնագրով։ Դրա ապացույցը բովանդակությունն է, Ռեզանովին պաշտպանության տակ առնելը, «տխրահռչակ Եդիգարովների» հասցեին տրված որակումները։ Թղթակցության մեջ հայտնվում է նաև, թե «Բորչալուի գավառի կողմից գալիս է արդեն պատգամավորություն՝ բաղկացած մոտ 50 մարդուց՝ հայ, ռուս և վրացի, որ վաղը՝ օգոստոսի 12-ին, կներկայանա խնդրագրով փոխարքային»։ Անտարակույս, ինչպես հանուն խաղաղության Բորչալվում արված ամեն գործ, այս պատ-

---

29 Նույն տեղում։

30 Այս առիթով ընթերցողի ուշադրությունը հրավիրում ենք մի այլ հանգամանքի վրա ևս. «Արշալույսում» տպագրված «Նամակից» (1906, № 8) հետո Թումանյանի որևէ հոդված չի հրապարակվել (չհաշված լոռեցիների անստորագիր կոչը)։ Բացի այդ, Բորչալուի ու Ղազախի շրջաններում բանաստեղծի վարած գործունեության մասին մամուլում միայն մի դեպքի առիթով է տրվում ազդանունը. դա Դր. Բալասանյանի՝ փետրվարի 4-ի թվագրությամբ թղթակցությունն է, որի մասին արդեն վերևում հիշատակել ենք («Արշալույս», 1906, № 30)։ Իսկ այնուհետև՝ Թումանյանի ազգանունը մամուլում հայտնվում է միայն կոտորածներից հետո՝ 1906-ի հոկտեմբերից, երբ արդեն վերադարձել էր Թիֆլիս. այդ ժամանակ է տպագրվում «Գաղթականի երգը» բանաստեղծությունը և Մ. Գորկու «Վալախական լեգենդի» թարգմանությունը («Երկիր», 1906, № 13, 25)։

գամավորության՝ փոխարքային ներկայանալը նույնպես կազմակերպել էր Թումանյանը։

Ռեզանովին հանելու և նրա փոխարեն Գորու գավառապետ կապիտան Լեոնտևին նշանակելու լուրը Թումանյանին հասել էր դեռևս մեկ ամիս առաջ (V, 300), բայց քանի որ նոր գավառապետը դեռևս չէր հասել իր պաշտոնատեղին՝ Շուլավեր, ուստի Թումանյանը հույս ուներ փոխարքայի միջոցով վերականգնել խաղաղության համար ոչինչ չխնայող ռուս արդարադատ նախկին պաշտոնյային իր պաշտոնում[31]։

Հայտնի է, որ Թումանյանի ջանքերը իզուր են անցնում, Ռեզանովը չի վերականգնվում, Լեոնտևը շուտով տեղափոխվում է Շուլավեր, իսկ բանաստեղծն իր բանակցություններն արդեն շարունակում է նրա հետ, մի կողմից՝ նոր գավառապետի ուշադրությունը հրավիրելով այն հանգամանքի վրա, որ Բորչալու գավառին «...հարկավոր է իշխանություն. ուժեղ և արդարադատ իշխանություն», խորհուրդ էր տալիս լինել «...միաժամանակ անաչառ՝ երկու ժողովուրդների նկատմամբ», բայց և տեղյակ էր պահում իր և հայրենակիցների պահանջի, անկոտրում կամքի մասին. «Մենք թույլ չենք տա որևէ գյուղում դող և ավազակ թաքցնել»։ Տնտեսապես քայքայված, հոգեպես ընկճված ժողովրդին դատավորներ էին պետք՝ մեղավորին և արդարին ջոկելու, վնասները հատուցելու, մաքառողներ էին անհրաժեշտ՝ կայուն խաղաղություն հաստատելու համար, այնինչ՝ Աքորի գյուղի թուրք բնակիչները, շեշտում էր Թումանյանը, շարունակում են թալանն ու կողոպուտը. «օգնեցեք, ի սեր աստծու, խեղճ գյուղացիներին, նրանք կորչում են։

Բառիս բուն նշանակությամբ կորչում են» (V, 302)[32]։

---

31 Ըստ «Զանգի» օգոստոսի 13-ի լուրերի, օգոստոսի 11-ին Գորիի գավառապետ կապիտան Լեոնտևը մահափորձի է ենթարկվել, որից վնասվել է կապիտանի ուղեկիցը և ձին («Զանգ», 1906, № 3), ուրեմն՝ 13-ին Լեոնտևը դեռևս Գորիում էր։

32 Առայժմ փաստեր չունենք հաստատ որևէ բան ասելու, թե ինչ արեց նոր գավառապետը գավառում դրությունը բարվոքելու համար։ Տեղյակ ենք միայն, որ Լեոնտևը անսպասելի հանվել է իր պաշտոնից նույն տարվա նոյեմբերին։ Նոր պաշտոնում նա շուտով կույր գործիք է դառնում հետադիմ ուժերի համար, նրա օրոք գավառում ստեղծվում է նույնիսկ «գաղտնի ոստիկանական բաժանմունք»։ «Շատերի կարծիքով,— գրում է «Մշակը»,— պարոնը շատ պետքական էր հայ-թուրքական ընդհարումների ու գողությունների համար որպես խիստ մարդ», բայց, ինչպես երևում է թղթակցության շարունակությունից, Լեոնտևը Ռեզանովի արժանավոր հետնորդը չդարձավ։ Նա այնպիսի պաշտոնյաներից էր, որոնք աշխատում են «...տեր լինել գավառին, բայց, ինչպես ասում են,

Նոր գավառապետին ուղղված այս պաշտոնական փաստաթուղթը վերևում հիշատակված հուլիսի 9-ի նամակի հետ միասին, օգնում են եզրակացնելու, որ «Ալիք» և «Զանգ» օրաթերթերի քննարկվող նորահայտ նյութերը իսկապես կապվում են Թումանյանի անվան հետ։

Բանաստեղծը ոչինչ չէր խնայում գավառում երկու հարևան ժողովուրդների միջև հաշտություն և բարեկամություն հաստատելու համար՝ համոզված, որ «բարձր իշխանությունը» չի ընդառաջում իր գործունեությանը։ Օգոստոսի 10-ին Շուլավերից գրած թղթակցության մեջ կարդում ենք. «Եթե բարձր իշխանությունը արձագանք չտա պատգամավորության դիմումներին՝ այն ժամանակ ամբողջ Բորչալուի խաղաղ ժողովուրդը պիտի իսպառ կորցնե իր հավատը դեպի իշխանությունները և պիտի համոզվի, որ կառավարության ջերմ ցանկությունն է՝ ջարդ ու ավերած տեսնել գավառում...»[33]։

Մինչև այժմ անհայտ մնացած այս և վերը քննարկված նյութերը մի կողմից նոր էջեր են բացում բանաստեղծի հրապարակախոսության մեջ, հարստացնում նրա կյանքի տարեգրությունն ու գիտական կենսագրությունը, մյուս կողմից՝ առանձնացնում Թումանյանի ազգային հասարակական գործունեության նոր կողմը՝ բացարձակ բողոքը տիրող կարգերի դեմ՝ 1905—1906 թթ. հայ-թուրքական կոտորածների միջոցին։

Բանաստեղծը չէր թաքցնում, որ թալանն ու սպանությունները «կառավարության ջերմ ցանկությունն է»։

Հայոց բանաստեղծի այս համարձակ խոսքերը և նրա խաղաղասիրական անձնվեր գործունեությունը ունեցավ երկու իրարամերժ հետևանք. նա կարողացավ «իրար դեմ կանգնած ժողովուրդների սրերը պատյան դնել տալ և շատ ու շատ անմեղների ազատել այս գազանական կոտորածից» (V, 298), որին հետևեց «բարձր իշխանության» իսկական «արձագանքը» 1908 թ. դեկտեմբերին, երբ բարձրագույն հրամանով Թումանյանը հայտնվեց Մետեխի բանտում։

ոչ այն մտքով, որ օգուտ բերեն հասարակությանը, այլ միմիայն անիրավ ու դայթակղեցուցիչ ոսկիներ դիզելու նպատակով» («Մշակ», 1906, № 258)։

33 «Զանգ», 1906, № 2։

IV

1911 Թ. ՀԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

Ստորև հրապարակվող նամակը Ստամբուլի պատրիարքարանի դիվանատանը հայտնաբերել և նույն քաղաքում տպագրվող 1970 թ. «Շողակաթ» տարեգրքում հրապարակել է Գ. Բամպուքչյանը։

Ահա այդ նամակը.

«Գերապատիվ սրբազան հայր,

Մամուլից իմանում եմ, որ Ձեր սրբազնությանը Կովկասից ուղարկված է կաթողիկոսական առաջիկա ընտրության համար թուրքահայերի կողմից ընտրվելիք պատգամավորների մի ցուցակ, որի մեջ նշանակված է և իմ անունը։

Խոնարհաբար խնդրում եմ՝ իմ անունս հանեք այդ ցուցակից, քանզի ոչ ոք այդ մասին չէ հարցրած իմ կամքը, և չեմ տված իմ համաձայնությունը ունկիցս։ Չգիտեմ՝ ո՞վ է կազմել ու ղրկել այդ ցուցակը, և ընտրվելու դեպքում էլ հրաժարվելու եմ արդեն։

Խորին հարգանքով՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Իմ հասցեն՝ «Հորիզոն» թերթի խմբագրատուն»։

Նամակը, թվագրված՝ 1911 թ. հոկտեմբերի 22, ուղղված է Կ. Պոլսի պատրիարքի տեղապահ Վահրամ արքեպիսկոպոս Մանկունուն։

Ինչպես տեսնում ենք, նամակի գրության շարժառիթը 1911 թ. կաթողիկոսական ընտրություններն էին, ու թեպետ Թումանյանը գրում է «պատգամավորների ցուցակ», բայց այստեղ խոսքը վերաբերում է ոչ թե պատգամավորների, այլ այն պատվիրակների ցուցակին, որոնք պետք է կաթողիկոս ընտրող պատգամավորներ առաջադրեին։

Նամակի գրության շարժառիթը և բովանդակությունը հասկանալու, բանաստեղծի հրաժարականի պատճառը իմանալու համար անհրաժեշտ է ետ գնալ շուրջ մեկ տարի և մամուլի տվյալներով ծանոթա-

նալ այն մթնոլորտի հետ, որը ստիպել է հասարակական-քաղաքական-հոգևոր նման կարևոր իրադարձությունների միջոցին այնքան շահագրգռվածություն հանդես բերող ազգային գրողին՝ զսպված զայրույթով այսպիսի մի հրաժարական-նամակ ուղարկել Կոստանդնուպոլսի պատրիարքարանին։

1910 թ. դեկտեմբերի 11-ին մեռնում է Մատթեոս կաթողիկոս Իզմիրլյանը։ Հաջորդ օրվանից Թումանյանն ամբողջապես նվիրվում է կաթողիկոսի թաղմանը Թիֆլիսի մտավորականության մասնակցությունն ապահովելու գործին, ոչինչ չխնայելով արժանին մատուցելու հերոսական անցյալ ունեցող այդ մեծ ու ազնիվ մարդու հիշատակին։ Բացի հայտնի երկու հոդվածներից («Խրիմյան և Իզմիրլյան», «Ազնիվ մարդը», VI, 190, 191) իրար հետևից «Հորիզոնում» տպագրվում են Թումանյանի այլ հոդվածներ ևս («Էջմիածնի ցավը», «Ջպաշտպանեցեք», «Մեսերից հետո»)[1], որոնց մեջ ընթերցողի առջև կրկին հառնում են հայ ժողովրդի ազատագրության այդ երախտավոր երկու հոգևոր գործիչների հասարակական դեմքը և մարդկային բարձր հատկանիշները։

Հայոց կաթողիկոսին արժանավորապես մեծարելու, Էջմիածնի թաղման արարողություններին հավուր պատշաճի մասնակցելու համար, 1910 թ. դեկտեմբերի 14-ին Թիֆլիսի առաջնորդարանում տեղի է ունենում կազմակերպչական ժողով, որտեղ ելույթ է ունենում նաև Թումանյանը։ Որոշվում է Էջմիածին ուղարկել վեց հոգուց բաղկացած ներկայացուցչություն բանաստեղծի մասնակցությամբ։ Դեկտեմբերի 17-ին նա մեկնում է Էջմիածին՝ որպես ներկայացուցիչ «Հորիզոն» օրաթերթի և «Հասկեր» ամսագրի՝ հանձնարարություն ունենալով նաև արծաթյա պսակ դնել Հաշտարխանի հայ հասարակության կողմից։ 18-ին Սանահին կայարանից Թիֆլիս է հասնում Թումանյանի ստորագրությամբ առաջին հեռագիրը՝ ինչպես Մայր աթոռ մեկնող հայ պատգամավորների, այնպես էլ Վրաստանի Էկզարխ Գրիգորի եպիսկոպոսի և այլ պատվավոր հյուրերի, պատվիրակների՝ Էջմիածին մեկնելու մասին[2]։ Այնուհետև, Թումանյանի ստորագրությամբ հեռագրերը «Հորիզոնի» ընթերցողներին ծանոթացնում էին կաթողիկոսի հոգեհանգստի և թաղման արարողությունների մանրամասներին[3]։

---

[1] «Հորիզոն», 1910, № 277, 279, 284։

[2] Նույն տեղում, № 283։

[3] Նույն տեղում, № 284։

Դեկտեմբերի 20-ին ուղարկած բանաստեղծի հեռագիրը հայտնում էր, որ նույն օրը առավոտյան տեղի է ունեցել 80 պատգամավորների ժողով, որտեղ առաջարկվել և որոշվել է Իզմիրլյանի անունով ստեղծել դպրոցական ֆոնդ։ Ինչպես պարզվում է «Հորիզոնի» հետագա նյութերից, այդ ժողովի շարունակությունը տեղի է ունեցել նույն օրը երեկոյան և, լինելով շատ աղմկոտ ու վիճաբանություններով, պատճառ է դարձել սուր բանակռվի, իրար ընդհանրապես չհանդուրժող «Հորիզոն» և «Մշակ» օրաթերթերի աշխատակիցների և կողմնակիցների միջև։

Էջմիածնում եղած օրերին բանաստեղծի սուր տեսողությունից դուրս չէր մնացել Մայր աթոռի ծանր մթնոլորտը, լճացած այն միջավայրը, որում տառապել էր Մատթեոս Իզմիրլյանը՝ կաթողիկոսական գահը կրելու երկու տարվա ընթացքում, լինելով գրեթե մենակ ու անպաշտպան։ Թումանյանը համոզվել էր, որ բանսարկու մի քանի հոգևոր գործիչներ պարզապես արագացրել են առանց այն էլ ֆիզիկապես տկար կաթողիկոսի մահը, և դեկտեմբերի 20-ի հիշյալ պատգամավորական ժողովում ելույթ ունենալով, խիստ դատապարտել էր այդպիսիներին։

Թումանյանի՝ դեռևս Էջմիածին մեկնելուց առաջ կաթողիկոսի մահվան առիթով գրած հոդվածներում արդեն ակնարկներ կային Իզմիրլյանի հալածվելու և անպաշտպան լինելու մասին[4]։

«Մշակը», որ շարունակում էր երկու տասնամյակ տևող իր անբարեհաճ վերաբերմունքը Թումանյանի նկատմամբ, այժմ օգտագործում է պատգամավորական ժողովի նրա ելույթը Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի և նրա համախոհների դեմ, և Հ. Առաքելյանի հոդվածներով միանգամայն այլ կերպ ներկայացնում և՛ Էջմիածնի անց ու դարձը, և՛ բանաստեղծի ելույթի մեկնաբանությունները[5]։

Ահա նոր առիթ հրապարակային բանակռվի, որ Թումանյանի ստեղծագործ մտքի հետ որևէ առնչություն չունենալով, խլում էր նրա թանկագին ժամանակը, դցում հասարակական գործերի ու դեպքերի ոլորապտույտի մեջ, անշուշտ, ո՛չ հակառակ նրա ցանկության։ Այդպես էր բանաստեղծը. հայկական կյանքում կատարվող որևէ դեպք առանց նրա գործուն մասնակցության լինել չէր կարող, իսկ «Հորիզոնի» խմբ-

---

4 Նույն տեղում, № 277, 279։

5 «Մշակ», 1910, № 285։

բագիր լինելը նաև պարտավորեցնում էր։

«Համբ. Առաքելյանը և Էջմիածնի վերջին դեպքերը» հոդվածաշարում և «Բաց նամակ պ. Հ. Առաքելյանին» թղթակցության մեջ Թումանյանը փաստացի տվյալներով ապացուցում էր «Մշակի» գլխավոր աշխատակցի սուտ ու սխալ տեղեկությունների էությունը, լրագրողի անպատասխանատվությունն ու անազնվությունը[6]։ Խնդիրն այն է, որ Առաքելյանին դուր չէր եկել բանաստեղծի հախուռն ելույթը Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի դեմ։ Այստեղ կար մերկապարանոց միտում՝ պաշտպանելով հիշյալ եպիսկոպոսին, «Մշակը» նախապատրաստվում էր կաթողիկոսական ապագա ընտրական պայքարին, քանի որ Կարապետ եպիսկոպոսը, ինչպես պարզվեց մի քանի ամիս անց, նրա թեկնածուներից մեկն էր։

Թումանյանի մերկացումներից վիրավորված Առաքելյանը, չկարողանալով դիմանալ բանաստեղծի սուր գրչին, շուտով նրան սպառնում է միջնորդ դատարանով, իսկ բանաստեղծը պատասխանում է ինքնավստահ և անզիջող մի «Բաց նամակով»։—«Թող դատաստան լինի,— գրում է նա։— Դուք ինքներդ գնացեք անձամբ, իսկ ես, եթե կուզեք, կուղարկեմ միայն իմ գլխարկը, դա էլ բավական կլինի ցույց տալու, որ դուք ստախոս եք ու կեղծող։

Բայց դուք մի կեղտոտ ձի ունեք, որ շատ եք սիրում հեծնել ու քշել այս ու այն կողմը։ Այդ «Դաշնակցության գործն է»։ Այդ գործը, պարոն, արդեն դատարանումն է։ Ո՞վ կմեղադրվի, ո՞վ կարդարանա՝ այդ ապագան ցույց կտա։ Բայց դա ի՞նչ կապ ունի Կարապետ եպիսկոպոսի գործի և Ձեր ստախոսության հետ»[7]։

Ավելորդ է այս բանավեճի մանրամասներին անդրադառնալը. ասենք միայն, որ Թումանյանը 1911 թ. հունվարի 12-ին հարցի պարզաբանության համար, ոչնոտամենայնիվ, ընդունում է դատը, առաջարկում միջնորդ դատարան հրավիրել հենց Էջմիածնի վերոհիշյալ պատգամավորական ժողովի նախագահ Հ. Խունունցին, նույն ժողովի մասնակից, Թիֆլիսի քաղաքագլուխ Ալ. Խատիսյանին, «Մշակի» աշխատակից բժ. Վ. Արծրունուն։ «Թող Թիֆլիսում գտնվող պատգամավորները հավաքվեն ու տեսնեն այս ամոթալի դատը,— հայտարարում է վեր-

---

6 «Հորիզոն», 1910, № 290, 291, 293։

7 Նույն տեղում, № 292։

դռվված բանաստեղծը։— Բավական է մամուլը դարձնել ստախոսության ասպարեզ»[8]։

Բայց Հ. Առաքելյանը միջնորդ դատարանի իր ամպագորգոռ պահանջը չի հետապնդում, և դատն էլ տեղի չի ունենում։

Հոդվածներից մեկում նրա արած այն հայտարարությանը, թե Հովհաննես Թումանյանը «երբեմն էր բանաստեղծ», վերջինս տվել է հետևյալ սուր պատասխանը. «Դուցե Հ. Առաքելյանը ճշմարիտ է ասում, որ ես «երբեմն» էի բանաստեղծ ... այն ծանր օրում, որ շնչում են Հ. Առաքելյաններ—բանաստեղծությունը չի կարող շնչել ու ապրել և պետք է լռի վերջապես, բայց գոնե բողոքի և զայրույթի ձայնը ընդդեմ սուտության, վատության ու կեղծիքի՝ չպետք է լռի»[9]։

Եվ բանաստեղծը չի լռում։

Դեռևս Իզմիրլյանի մահից քիչ անց հրապարակված «Մեծերից հետո» հոդվածում, բանաստեղծը ի լուր ամենքի հայտարարում էր, որ Խրիմյան Հայրիկ և Մատթեոս կաթողիկոսներից հետո հայ ժողովուրդը չունի այնպիսի հոգևոր գործիչ, որ դառնա ֆեր իսկական ընտրյալը[10]։ Ավելի ուշ նա բացահայտորեն և սրտացավությամբ նշում էր, որ եղած թեկնածուները (Կարապետ Տեր-Մկրտչյան, Մաղաքիա Օրմանյան, Եղիշե Դուրյան, Մեսրոպ Տեր-Մովսիսյան, Գևորգ Սուրենյան և ուրիշներ) շատ սովորական մահկանացուներ են[11]։

1911 թ. ապրիլին, երբ դեռ չէր սկսվել թեկնածուների պրոպագանդումը, Թումանյանը Մեսրոպ եպիսկոպոսին գրած նամակում կես կատակ կես-լուրջ գրում է. «Կարծեմ կաթողիկոսական խնդիրն էլ լավ ենք տանում։ Սրանից լավ իսկի երևակայել անգամ չի կարելի», որով, հավանաբար, կամենում էր ընդգծել, թե չեն կարողանում կողմնորոշվել, որովհետև մի քանի տողից հետո գրում է. «Մոտիկ առաջիկայում ուզում եմ մի խորհուրդ հրավիրել մեր գրողներից ու գործիչներից՝ տեսնենք որն է լավ» (V, 342)։ Եթե նույնիսկ այդ խորհուրդը հրավիրվել է, մասնակիցները, ըստ երևույթին, ընդհանուր եզրակացության չեն եկել։ Ամիսներ անց, սեպտեմբերի 11-ին տպագրված «Կաթողիկոսական ընտրելիներ» հոդվածում, նա առաջարկում էր ընդարձակ հոդ-

---

8 «Հորիզոն», 1911, № 6։

9 Նույն տեղում, 1911, № 11։

10 Նույն տեղում, 1910, № 284։

11 Նույն տեղում, 1911, № 218։

վածներով ժողովրդին ծանոթացնել Մեսրոպ Տեր-Մովսիսյան, Եղիշե Դուրյան, Կարապետ Տեր-Մկրտչյան եպիսկոպոսների հետ, քանի որ, ի վերջո, նրանք կարող են դառնալ հիմնական թեկնածուներ։ Բայց օրաթերթի խմբագրության մյուս անդամները հոդվածի տակ դնում են ծանոթագրություն այն մասին, թե հայտնված միտքը թեկնածուների մասին «անհատական կարծիքի արտահայտություն է»։ Այստեղից կարելի է դալ այն եզրակացության, որ «Հորիզոնի» խմբագրության մյուս գլխավոր աշխատակիցները ունեին մի այլ թեկնածու՝ Գևորգ Սուրենյանը, որի անունը Թումանյանը չէր տվել[12]։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, այս ընտրությունների միջոցին Թումանյանը չուներ որոշակի թեկնածու։ Նույնիսկ սեպտեմբերին նա չէր կարողանում կողմնորոշվել, թե, ի վերջո, ում կարելի է առաջադրել կաթողիկոս, և ընտրությունը թողել էր քվեարկող ժողովրդին։

Բայց այդ կարծիքին չէր «Մշակը» իր առաջնորդներով։

1911 թ. սեպտեմբերի 20-ին «Մշակում» լույս տեսած իր «Ուղևորական ակնարկների» VII հոդվածում Համբ. Առաքելյանը Կ. Պոլսի պատրիարքի տեղապահ Վահրամ Մանկունու անունից հայտարարում է. էջմիածնից իրեն ուղարկված է 50—60 հոգուց բաղկացած «չեզոք», «անկուսակցական» նշանավոր մարդկանց մի ցուցակ, որից նա պետք է ընտրի պատվիրակներ՝ քվեարկող պատգամավորներ առաջադրելու համար, քանի որ դժվար է ձմեռվա ցրտերին Թուրքիայից էջմիածին պատվիրակներ ուղարկել կաթողիկոսական ընտրությունների ժամանակ։ Ծանոթանալով այդ բավական բազմամարդ ցուցակին, Առաքելյանը, ի թիվս այլոց, տեսել է նաև Թումանյանի (ցուցակում առաջինը), Աղայանի (որն արդեն վախճանվել էր) և Լեոյի անունները, դրանից եզրակացնելով, որ ցուցակը կազմել են իրենք՝ «Հորիզոնականները»։ Հայտարարելով, որ Մանկունին արդեն հակված է դեպի կաթողիկոսի տեղապահ Գևորգ եպիսկոպոս Սուրենյանի թեկնածությունը, Համբ. Առաքելյանը ենթադրում է, թե «Հորիզոնի» թեկնածուն ևս Սուրենյանն է, թեպետ արևմտահայ գավառներում պրոպագանդ է տարվում նաև Եղիշե Դուրյանի և Խորեն Մուրադբեկյանի համար։ Այսպիսով, ստացվում է այնպես, որ «Հորիզոնականները», չնայած իրենց հայտարարում են «չեզոք» կաթողիկոսական թեկնածուների առաջադրման գործում, բայց մի կողմից Մանկունուն տրամադրում են դե-

---

12 Նույն տեղում, № 199։

պի Սուրենյանը, մյուս կողմից՝ պրոպագանդում Եղ. Դուրյան և Խորեն Մուրադբեկյան սրբազանների թեկնածությունները[13]։

«Մշակի» եզրակացությունը արտառոց էր և վիրավորական, հատկապես Թումանյանի համար, որի վերաբերմունքը կաթողիկոսական թեկնածուների նկատմամբ հայտնի էր բոլորին՝ նրա վերը հիշված հոդվածներից։ Իսկ ինչ վերաբերում է Գ. Սուրենյանին, վերջինիս բանաստեղծը չէր համակրում դեռևս նրա՝ Վրաստանի և Իմերեթի հայոց թեմի առաջնորդ եղած ժամանակից (1894) և բազմիցս ծաղրով ու արհամարհանքով է արտահայտվել պահպանողական «նոր-դարական» առաջնորդի մասին, որակելով նրան «փթած» առաջնորդ, ազգանունը փոխելով «Պարապյանց» (V, 80, 85, 91, 92, 122 և այլն), իսկ առաջնորդության տարիներին երբեք որևէ առնչություն նրա հետ չէր ունեցել[14]։

Ցուցակի այդ տգեղ պատմությունը անմիջապես տարածվում է և ստանում լայն արձագանք։ «Խաթաբալա» երգիծական շաբաթաթերթը նույնիսկ ֆելիետոն է տպագրում երկու կողմերի պայքարի մասին, հիշելով նաև բանաստեղծի անունը[15]։ «Մշակին» կողմնակից էին նաև «Հովիտն» ու «Սուրհանդակը»[16]։

«Հորիզոնի» «Մի նոր խարդախություն» անստորագիր հոդվածում դատապարտվում էր «Մշակի» կեղծիքը և պահանջվում, որ Կ. Պոլսի պատրիարքի տեղապահը՝ ինքը հրապարակավ հայտարարի, թե ումից է ստացել հիշյալ ցուցակը։ Համբ. Առաքելյանի «Ուղևորական ակնարկների» VII հոդվածը և հրապարակված ցուցակն է պատճառ դառնում, որ Թումանյանը, անձամբ դիմելով Մանկունուն, խնդրում է հանել իր անունը այդ շարաբաստիկ ցուցակից, քանի որ ինքը տեղյակ չէ, թե ով է կազմել և ուղարկել այն և ինչու են դրել նաև իր անունը առանց իր համաձայնության։

Բանասիրական մի ճշտում։

Ինչպես ասվեց, Համբ. Առաքելյանի հիշյալ հոդվածը հրապարակվել է սեպտեմբերի 20-ին, «Հորիզոնի» «Մի նոր խարդախություն» հոդվածը՝ նույն ամսի 22-ին։ Վրաստանի առաջնորդական տեղապահ Եփրեմ եպիսկոպոսի կարգադրությամբ՝ պատգամավոր առաջադրող պատ-

---

13 «Մշակ», 1911, № 204։

14 «Հորիզոն», 1911, № 234։

15 «Խաթաբալա», 1911, № 42։

16 «Հովիտ», 1911, № 38, «Սուրհանդակ», 1911, № 401։

վիրակների ընտրությունը կատարվում է հոկտեմբերի 9-ին[17]։ Արդ, այդ ինչպե՞ս է, որ նամակը՝ պատվիրակների թեկնածուների ցուցակից իր անունը հանելու մասին՝ գրված է հոկտեմբերի 22-ին, այսինքն՝ ընտրություններից հետո։ Թվական այս տվյալները ապացույց են, որ Մանկունուն ուղարկված նամակի ամիսը «Շողակաթ» տարեգրքում սխալ է։ Թումանյանն այդ նամակը գրել է սեպտեմբերի 22-ին՝ նույն օրը, երբ տպագրվել է «Հորիզոնի» անստորագիր հոդվածը՝ «Մի նոր խարդախություն» վերնագրով։ Հնարավոր է, որ սխալվել է Թումանյանը. զայրացած վիճակում նամակը գրելիս, մտքում եղել է պատվիրակների ընտրության հոկտեմբեր ամիսը։ Ցավոք, նամակի սեպագիր ինքնագիրը, որ միայն վերջերս է հայտնաբերվել Թումանյանի թանգարանում, թվագրություն չունի, հակառակ դեպքում նամակի՝ սեպտեմբերի 22-ին գրած լինելը տարակույս չէր առաջացնի (Նոր նյութեր, թղթպ. № 21), կարելի է բերել այլ օրինակներ ևս, երբ Թումանյանը նամակները գրելիս շփոթել է ամիսները։

Փաստական այս ճշտումը հանգեցնում է այն եզրակացության, որ վերոհիշյալ անստորագիր հոդվածը՝ «Մի նոր խարդախություն» վերնագրով, պատկանում է Թումանյանի գրչին։ Այդ անառարկելի է դառնում հատկապես այն դեպքում, երբ համեմատում ենք նամակի և հոդվածի բովանդակությունը, ոճը, գրության շարժառիթը։

* * *

1911 թ. հուլիսի 20-ին հանկարծամահ է լինում Ղ. Աղայանը՝ «Հորիզոնի» խմբագրություն գնալու ճանապարհին։ Դրպանում հայտնաբերել էին նրա վերջին հոդվածը, «Մի անհրաժեշտ ծանոթություն Մաղաքիա եպիսկոպոսի նոր գրքի առթիվ» վերնագրով՝ գրված վերջինիս «Հայոց եկեղեցին» գրքի մասին։

Թումանյանը ծանր է տանում ավագ ընկերոջ և բարեկամի կորուստը. «Ես վերջին ժամանակներս մի տեսակ թմրության մեջ էի ընկել։ Ղազարոսի մահը շատ խոր ազդեց և եղավ իմ մշտական թանկ վշտերից մինը» (V, 343)։

Ինչպես պարզվում է Լեոյի՝ Թումանյանին գրած 1911 թ. հուլիսի 24-ի նամակից, դրանից անմիջապես առաջ բանաստեղծը Լեոյին գրած նամակով (անհայտ) խորհուրդ էր տվել ընկերոջը՝ ուշադրու-

---

17 «Հորիզոն», 1911, № 218։

գրում, «սոցիալ-դեմոկրատիայի կարմիր դրոշի տակ»։ Կոչն ավարտվում է հետևյալ տողերով.

«Կեցցե՞ ազգերի եղբայրությունը,
Կեցցե՞ հալալ աշխատանքը,
Կեցցե՞ հերոս բանվոր մարդը» (VI, 410)։

Ճշգրիտ թվագրություն ունեցող Թումանյանի՝ «Արշալույսում» տպագրված «Նամակ խմբագրությանը» նախ ճշտում է «Ղարիբ եղբայրներ» կոչի մեջ հիշատակված դեպքերի հաստատ օրը՝ նոյեմբերի 27, որոշում կոչի թվագրությունը՝ Դսեղի միտինգից հետո՝ նոյեմբերի 28—29-ը։ Այնուհետև, որ շատ կարևոր է, հաստատ տեղեկություն է տալիս, թե ո՞ւմ է ուղղված կոչը, ովքեր են այդ «Ղարիբ եղբայրները», «մեր թանկագին զոնախները», ինչպես գրում է Թումանյանը։

1906 թ. հունվարի 9-ի բաց նամակի մեջ ընթերցողին ներկայանում է ազնիվ ու հպարտ մեծ մարդը, օբյեկտիվորեն դատող ազգային գործիչը։ Մի կողմից՝ Թումանյանը սրտի ցավով, եթե կարելի է ասել, ամոթի խոր զգացումով է նկարագրում տեղի ունեցածը (այդ հատկապես շեշտված է կոչի մեջ), ափսոսում, որ հայերը ավելորդ արյուն են թափել, բայց, միաժամանակ, բացատրելով հանգամանքները, ցույց է տալիս, թե լցվել է համբերության բաժակը, և դա առանձին դեպքերում նրանց կարող է մղել նման քայլերի։

* * *

1906 թվականի հունվարի վերջերին, շնորհիվ Թումանյանի ջանքերի, հատկապես Լոռու շրջանում ապահովվում է անվտանգությունը։ Գործին մեծապես նպաստում է Բորչալուի այդ օրերի գավառապետ, բանաստեղծի նամակներից մեզ հայտնի Ռեզանովը։ Վերջինս նույնիսկ հաջողացնում է ձերբակալել մի քանի կողոպտիչ-ջարդարարների և ուղարկել նրանց Թիֆլիս՝ Մետեխի բանտ։

«Արշալույսի» թղթակից, շուլավերցի Գր. Բալասանյանը հետաքրքրական հաղորդումներով Թիֆլիսի ընթերցողներին տեղյակ էր պահում գավառում կատարվող դեպքերին։

Տեսնելով, որ մոտենում է գարունը, և կոտորածների պատճառով ահարեկված ու ցրված ազգաբնակչությունը հնարավորություն չի ունենալու հողի մշակումը սկսելու, Կովկասի կառավարչությունը թեպետ ուշացած, բայց ստիպում է բնակչությանը վերադառնալ և տեր կանգ-

նել հողերին, սպառնալով, որ եթե դանդաղեն, կարող են զրկվել հողերից։

Ինչպես պարզվում է մամուլի տվյալներից, գնդապետ Լևիցկու կարգադրությամբ արգելվում է զենք կրելը, սկսվում է վնասների, կորած գույքերի և անասունների ձևական գրանցում ու գնահատում[14]։ Նույն Գր. Բալասանյանի՝ Շուլավերից փետրվարի 2-ին գրած թղթակցությունից իմանում ենք, որ թուրքերը այժմ արդեն իրենք են ձգտում հաշտության, որովհետև մոտենում էր գարունը, պետք է սկսվեր ավանդական քոչը, հայերը կարող էին յայլաների ճանապարհները փակել, իսկ այդ ճակատագրական կլիներ թուրքերի համար նույնպես։

Բոլորի համար պարզ էր, որ եթե նույն թափով կոտորածները շարունակվեին, սովը անխուսափելի էր։

Գր. Բալասանյանի փետրվարի 4-ին գրած թղթակցության մեջ հաղորդվում է, թե լուրեր են պատվում հայերի՝ Քորփլու գյուղի վրա կատարած հարձակման մասին. տեղ հասած կազակները և Լամբալուին ու Սադախլուին օգնության գնացած թուրքերը հայտնում են, որ լուրերը սուտ են։ Նույն թղթակցությունից իմանում ենք, որ այդ օրերին «Հովհաննես Թումանյանին տեսել են այն կողմերով Ղազախ գնալիս լոռեցի հայերի հետ սպիտակ դրոշակներով՝ հաշտություն քարոզելու համար»[15]։

Պետք է ասել՝ մամուլը խիստ ժլատ է Թումանյանի այդ օրերի գործունեության վերաբերյալ։ Միայն «Արշալույսն» է հայտնում բանաստեղծի, լոռեցի հայերի ու նրանց պարզած սպիտակ դրոշի մասին, որի վերաբերյալ, ինչպես բանաստեղծի նամակներում, այնպես էլ ժամանակակիցների հուշերում կան վկայություններ, առանց, սակայն, ճշգրիտ օրերի հիշատակության։ Այսպիսով, Գր. Բալասանյանի փետրվարի 4-ի թղթակցությունը պարզում է մի որոշակի թվագրություն ևս՝ բանաստեղծի՝ Ղազախում կատարած խաղաղության բանակցության մասին։

Հայ-թուրքական հարաբերություններին վերաբերող «Արշալույսի» նյութերում ուշադրություն է գրավում փետրվարի 18-ին տպագրված «Լոռեցիների կոչը». այն կրում է համախոսականի բնույթ, ուստի և անստորագիր է։ Բերում ենք կոչը ամբողջությամբ, ապացուցելու համար, որ այն գրված է Թումանյանի ձեռքով, և նա է անձամբ ուղար-

---

14 «Արշալույս», 1906, № 25, 26։

15 Նույն տեղում, № 28, 30։

Ինչպես տեսնում ենք, բանաստեղծի հարցադրումը ավելի լայն ընդգրկում ունի, քան ժամանակին այդքան մեծ հետաքրքրություն առաջացրած ու կրքոտ վիճաբանությունների տեղիք տված կաթողիկոսական ընտրությունը։ Թումանյանը, ինչպես բազմաթիվ այլ հարցեր քննարկելիս, այժմ էլ շեշտը դնում էր մարդկայնության, ազնվության վրա, անկախ նրանից՝ խոսքը վերաբերում է գործչին, թե գործին, գրողին, թե ստեղծագործությանը։

Քննարկված հոդվածը առաջացնում է նոր արձագանքներ։ «Սուրհանդակ» օրաթերթում հանդես է գալիս Կատոնը[24], որը բացատրություն է պահանջում Թումանյանի այն հայտարարության համար, թե Կատոնի նպատակն է, Թումանյանի և նրա կողմնակիցների «քաղաքական անբարեհուսությունը» հիշեցնելով, լռեցնել նրա ձայնը և կասկածելի դարձնել հակառակ կողմնակցության կաթողիկոսական թեկնածուներին։

Կատոնի թղթակցությունը («Նամակ խմբագրության») ինքնին լուրջ բան չէր ներկայացնում. այն կրկնում էր «Մշակի» միտումնավորությունը։ Բայց Կատոնը ստիպեց Թումանյանին 1911 թ. հոկտեմբերի 6-ին գրելով «Նամակ խմբագրության» (տպագրվել է հաջորդ օրը՝ 7-ին), բողոքել հեղինակի քննադատության անազնիվ մղումների դեմ[25] և ապա՝ հոկտեմբերի 9-ին «Պատասխան պ. Կատոնին» վերնագրով հոդվածը[26], որտեղ բանաստեղծը շրջանցելով իր և հակառակորդների բանակովի սկզբնապատճառը՝ կաթողիկոսական ընտրությունները, տալիս է գրողի դերի մի անկրկնելի ընդհանրացնող գնահատական։

«Նամակ խմբագրության» հոդվածում Թումանյանը հետաքրքրվել էր, թե արդյոք «Կատոն», «Կ», «Իրազեկ» ստորագրությունները Ս. Չերքեզյանինը չե՞ն (պահպանողական լրագրող-հրապարակախոս)։ Այդ հարցը առիթ դարձնելով, Կատոնը Թումանյանին ուղղված երկրորդ հոդվածում նրան անվանել էր ոստիկանական գաղտնի խուզարկու[27], որը և բանաստեղծին դրդում է գրելու հետևյալ թևավոր խոսքերը.

«Գրողները, բանաստեղծները միաժամանակ ոչ այլ ինչ են, եթե ոչ՝ գաղտնի խուզարկուներ, որ ոչ միայն ձեր կեղծ անունները հրա-

---

24 «Սուրհանդակ», 1911, № 406։

25 «Հորիզոն», 1911, № 220։

26 Նույն տեղում, № 222։

27 «Սուրհանդակ», 1911, № 408։

պարակ կրերին, այլև ձեր կեղծ հոգին ու կեղծ մտքերը, որ ավելի խորն են ծածկված։

Այդ աստվածային գաղտնի խուզարկություն է, որ հայտնագործում է մութը արարածների գաղտնի գործերը, աղաղակում է, հրապարակում և այդպիսով հսկում է բարոյական օրենքներին ու շատ նվիրական բաներին՝ գաղտնի սրիկայությունների դեմ։

Գաղտնի խուզարկո՞ւ...

Գիտե՞ք, գաղտնի պ. Կատոն, եվրոպական մեծ բանաստեղծներից մինը, կարծեմ Հեյնեն, իր հայրենիքին դիմելով՝ ասում է. «Ես քո պահապան շունն եմ»։ Ի՞նչ կա որ. թող ես էլ իմ համեստ ուժերով իմ հայրենիքի պահապան խուզարկուն լինեմ։ Եվ ահա բռնել եմ ձեզ. պատասխան տվեք իմ հարցին, դուրս եկեք հրապարակ։ Ոչ մի բարոյական օրենք չկա, որ մի մարդ խոսի, գործ տեսնի միաժամանակ մի քանի կեղծ անուններով, մի անունը մի բան գրի, մյուսը նրան վկա գա, երրորդն էլ հաստատի, իբրև թե երեք մարդ են մեջտեղը» (IV, 195)։

Պատասխան հոդվածում Կատոնը, խուսափելով որոշակի խոստովանությունից իր ով լինելու մասին, դարձյալ անդրադառնում է Վ. Մանկունուն ուղարկած ցուցակում բանաստեղծի անվան հիշատակությանը, դրանով ստիպում վերջինիս գրելու «Հովիտի» Կատոնին» նոր հոդվածը։ «Ես սպասում եմ տակավին,— պնդում է բանաստեղծը։— Այս խնդիրը (կեղծ ստորագրությունների—Լ. Կ.) ինձ համար չափազանց կարևոր ու ցավալի մի խնդիր է, գերազանցապես հասարակական, եթե կուզեք՝ ազգային, միանգամայն ժամանակակից, և իսկի չի վերջանում ձեզանով»[28]։

Բայց Կատոնը որոշակի պատասխանից խուսափում է նաև հետագայում[29]։

1911 թ. ամբողջ հոկտեմբեր ամիսը բանաստեղծը, այսպես անընդմեջ, զբաղված էր հակառակորդների դեմ այնպիսի հոդվածներ տպագրելով, որոնց մեջ հառնում էր հետևողական ու անզիջում հրապարակախոսը իր սուր գրչով, սկզբունքայնությամբ, ժամանակի միջավայրի հակասությունների խոր ըմբռնությամբ ու հարցերի լայն ընդգրկումով։ Հոդվածների բովանդակությունն է պատճառը (շարժառիթը կաթողիկոսական ընտրություններն էին), որ դրանք, միայն մի բա-

28 «Հորիզոն», 1911, № 227։

29 «Սուրհանդակ», 1911, № 415։

ցառությամբ («Պատասխան պ. Կատոնին», IV, 194), մնալով «Հորիզոնի» համարներում, այսօրվա ընթերցողին մեծ մասամբ անծանոթ են։

Վերևում անդրադարձանք սեպտեմբերի 22-ին հրապարակած «Մի նոր խարդախություն» վերնագրով անստորագիր հոդվածին, ապացուցելով, որ հեղինակը Հովհ. Թումանյանն է։ Երկու օր հետո սեպտեմբերի 24-ին տպագրվում է «Հորիզոնի» Մամուլ բաժնի տեսությունը՝ «Մշակի» և Հ. Առաքելյանի դեմ՝ դարձյալ Կ. Պոլիս ուղարկված ցուցակի կապակցությամբ։ Առաջին իսկ տողում հիշատակված է «նախանցյալ» «Հորիզոնի» «Մի նոր խարդախություն» հոդվածը, որը ոչ միայն ոճական առանձնահատկություններով նման է այդ իսկ Մամուլի տեսությանը, այլև, կարծես, սկիզբը լինի այդ թղթակցության։ Ուստի անհավանական չէ, որ այն ևս պատկանում է Թումանյանի գրչին։

Եվ այնուհետև նույն օրաթերթի համարներում՝ Հ. Առաքելյանի, «Մշակի» և նրա համախոհների դեմ գրված անստորագիր առաջնորդողների, հոդվածների մեջ (որոնք հատկապես ակնարկում են, հիշեցնում Թումանյանի գրած նախկին հոդվածների՝ մաքերը կամ արտահայտում օրաթերթի խմբագրության սկզբունքային դիրքը կաթողիկոսական ընտրությունների ողջ ընթացքում) միշտ պետք է փնտրել բանաստեղծի գրիչը։

Լեոյի հուշերից հայտնի է, որ Թումանյանը գրել է նաև անստորագիր առաջնորդողներ (ԹԺՀ, 68)։

Լինելով «Հորիզոնի» գլխավոր աշխատակիցներ, 1910—1911 թթ. առաջնորդողներ գրում էին Լեոն և Թումանյանը։ Եթե առաջնորդողի բովանդակությունը կապված է առօրյա, հաճախ արծարծվող որևէ հարցի հետ, բացարձակապես հրապարակախոսական է և որոշակի փաստեր չունենք, թե տվյալ միջոցին որտեղ էին Թումանյանը կամ Լեոն, ապա դժվար է միայն արտաքին-ոճական տվյալներով որոշել, թե այս կամ այն անստորագիր առաջնորդողի, կամ հոդվածի հեղինակը ով է։ Երկու հեղինակների ստորագրություն ունեցող հոդվածներից ակնառու է, որ Թումանյանի խոսքը կարճ էր, դիպուկ, հարձակողական, հաճախ օգտագործվում էին ժողովրդական արտահայտություններ, ոճեր։ Լեոյի հոդվածները մեծ մասամբ երկարաշունչ էին, որոշ դեպքերում ունեին պատմական բնույթ, թեպետ նա էլ գրել է կարճ, արդիական հարցեր շոշափող, ինչպես և հարձակողական առաջնորդողներ։

Կասկածի տեղիք տալ չի կարող, օրինակ, որ Լեոյի գրչին է պատկանում «Կաթողիկոսական հարց» անստորագիր հոդվածաշարը, որտեղ հարցը քննության է ենթարկվում պատմականորեն, անցյալ ժամանակների հայ հոգևոր կյանքի տված դասերի տեսանկյունից՝ սկսած 1836 թ. «Պոլսժննիկ»-ի կատարած փոփոխություններից, Ներսես Աշտարակեցու և հաջորդ կաթողիկոսների ընտրություններից, մինչև 1911-ի դեպքերը, երբ առավել սրված էր կաթողիկոսական ընտրությունների պայքարը ժամանակի բերումով[30]։

Դժվար է, օրինակ, որոշել, թե ով է Հեղինակը հոկտեմբերի 11-ին, 12-ին, 14-ին («Հորիզոն», № 223, 224, 226) լույս տեսած «Առաջ և այժմ (կաթողիկոսական հարցի առթիվ)» անստորագիր հոդվածաշարի՝ Թումանյանը, թե՞ Լեոն, բայց անտարակուսելի է, որ նույն ամսի 13-ի Մամուլի տեսությունը բանաստեղծինն է. ապացույց՝ Թումանյանի անձնական վերաբերմունքի արտահայտությունը Գեորգ արքեպիսկոպոս Սուրենյանի նկատմամբ՝ ինչպես միշտ բացասական («...մենք նրա անունով չենք երդվում»,— գրում է հեղինակը), մինչդեռ Լեոն կաթողիկոսական տեղապահի նկատմամբ ավելի ներողամիտ էր. մի բան, որ հատկապես երևում է վերջինիս՝ Թումանյանին գրած հոկտեմբերի 24-ի նամակից[31]։

1911 թ. հոկտեմբերի 6-ին տպագրվում է «Ո՞մ պիտի ընտրել» անստորագիր առաջնորդողը՝ ուղղված դարձյալ Կատոնին՝ «Հովիտի» նույն թվականի № 38-ի այն թղթակցության կապակցությամբ, ուր Մանկոնուն ուղարկված ցուցակի առիթով հեղինակը գրում էր, թե «...ցուցակի մեջ հիշվածները, չնչին բացառությամբ պատկանում են այն կուսակցությանը, որի օրգանն է «Հորիզոնը»։ Եթե ոչ Թումանյանը, ապա ո՞վ պիտք է պատասխաներ Կատոն—Չերքեզյանին՝ բանաստեղծի երդվյալ հակառակորդին, երբ, մանավանդ, հարցը դրվում էր ոչ թե սեղրունքային հողի վրա, այլ՝ կուսակցական։ Այդ հանգամանքը պարտավորեցնում էր բանաստեղծին ապացուցելու, թե իր խմբագրած թերթը չի պաշտպանում դաշնակցության դիրքորոշումը (այս դեպքում այդ անհրաժեշտ էր անել, հատկապես, իր՝ դատի տակ լինելու պատճառով, թերթը փակման վտանգից փրկելու համար։ Ի վերջո, ինչպես

30 Տե՛ս «Հորիզոն», 1911, № 205—211 և հմմտ. Լեոյի ստորագրությամբ տպագրված «Իզմիրլյան և Վարժապետյան (Մի էջ հայոց հարցի պատմությունից)» հոդվածի հետ. նույն տեղում, № 223, 240, 245, 249։

31 ԳԱԹ, Թ՚, № 705։

վերևում ասվեց, Կատոնի նպատակն էլ հայտնի էր՝ ակնարկել բանաստեղծի անբարեհույս քաղաքացի լինելը)։ Իր սկզբունքների անկուսակցական էությունը Թումանյանը նույն ձևով պաշտպանել էր մեկ օր առաջ հրապարակած իր «Մեծ մոլորեցնողը և ծանր հանցավորը» հոդվածում։ Ավելորդ չէ որպես ոճական առանձնահատկություն օրինակ բերել «Ու՞մ պիտի ընտրել» առաջնորդողի մի արտահայտությունը, որին հանդիպում ենք նաև դարձյալ ստորագրված «Կաթողիկոսական ընտրելիները» հոդվածում՝ «հնչտ կարող է պատահել» (այսինքն հնարավոր է)[32]։

Թումանյանի հրապարակախոսության առանձնահատկությունը, գաղափարների հետևողական սկզբունքայնությունը աչքի է ընկնում հոկտեմբերի 7-ի «Միծաղելի վայնասուն», 9-ի՝ «Ընտրելիները» անստորագիր առաջնորդողներում[33]։ Հատկապես վերջին հոդվածում հեղինակը, անդրադառնալով Իզմիրլյանի մահվան առիթով և ավելի ուշ հրապարակած իր հոդվածների մտքերին, գրում է. «Մեր նախընթաց մի շարք հոդվածներում մենք արդեն շատ պարզ և մանրամասն բացատրել ենք, որ անձնավորությունները չին կարող հրաշքներ գործել...։ Մեզ համար առաջին բանն այն է, որ ամեն մի ընդունակություն հպատակվի ժողովրդական վարչության մեծ գաղափարին։ Եկեղեցին կառավարողը պիտի ժողովուրդը լինի։ Մեր բոլոր լավագույն գործիչների, նույնիսկ հոգևորական, դավանանքն է եղել, թե կաթողիկոսը, ինչպես և եկեղեցու ամեն մի պաշտոնյա, ժողովրդի սպասավորն է։

32 Տե՛ս «Հորիզոն», 1911, № 199, 219։ Կատոնին ուղղված վերջին առաջնորդողի առիթով անհրաժեշտ է ավելացնել, որ տխրահռչակ այդ ցուցակի պատճառով առաջացած վիճաբանություններն ու երկու կողմնակցությունների՝ մեկը մյուսի դեմ կատարած հրապարակային հարձակումները ի վերջո ինքնարերարար ի հայտ բերեցին իսկական մեղավորին, որը ոչ այլ ոք էր՝ եթե ոչ ինքը՝ տեղապահը՝ Գեորգ արքեպիսկոպոս Սուրենյանը։ Ցուցակը կազմել և Կ. Պոլիս էր ուղարկել նա ոչ միայն ի պաշտոնե, այլև որպես շահագրգռված անձ՝ կաթողիկոսական թեկնածու։ Նույն կարծիքին էր և «Մշակը» 1911 թ. հոկտեմբերի 22-ի «Մի նոր փաստ» հոդվածում, թեպետ «Սուրհանդակ» օրաթերթում Գ. Սուրենյանը հերքել էր իրեն հարուցված մեղադրանքը, հայտարարելով, թե տեղյակ չէ Մանկունուն ուղարկված ցուցակից (№ 301)։

Օգտագործելով «Մշակի» այդ «նոր փաստը», Թումանյանը «Հորիզոնի» հոկտ. 23-ի Մամուլ բաժնի անստորագիր թղթակցությամբ մի անգամ ևս ընդգծում է իր և կողմնակիցների ճշմարտացի լինելը և հակառակորդների անաղնվությունը նույնիսկ այն դեպքում, երբ հրապարակի վրա էին աղաղակող փաստերը ցուցակի՝ էջմիածնից ուղարկված լինելու մասին (տե՛ս «Հորիզոն», 1911, № 234)։

33 «Հորիզոն», 1911, № 220, 222։

Ահա ինչ ենք մենք ցանկանում»[34]։

Այդ միջոցի՝ հայ ժողովրդի սոցիալ-քաղաքական կյանքի պայմաններում (խոսքը, անշուշտ, վերաբերում է և՛ արևմտահայ, և՛ արևելահայ հատվածներին) անհատներից «հրաշքներ» սպասելու անհնարինության, այնպես էլ ժողովրդի ձայնի իրավունքը պաշտպանելու մասին գրված տողերի մեջ հառնում են Թումանյանի ժողովրդասիրական դաղափարները։

«Հորիզոնի» 1911 թ. հոկտեմբերի 18-ի լուրերից պարզվում է, որ Լեոն «մի երկու շաբաթով մեկնել է Երևան»[35]։ Այս հաստատ վկայությունը և այլ լրացուցիչ փաստեր օգնում են ավելի վստահորեն ասելու, որ այնուհետև հրապարակված անստորագիր հոդվածները մեծ մասամբ պատկանում են Թումանյանի գրչին։

Ուշագրավ է Լեոյի՝ Թումանյանին ուղարկած հետևյալ անթվակիր երկտողը Երևանից. «Երեքշաբթի օրվա հոդվածդ հոյակապ էր, համբուրում եմ դրա համար,— գրում է նա։— Չորեքշաբթի օրվանը ինձ չգոհացրեց։ Շարունակիր երեքշաբթի օրվա տոնով՝ հարձակողական, խիստ»[36]։

Երկտողի անթվակիր լինելը, ինչ խոսք, դժվարացնում է միանգամից և ստույգ որոշել, թե բանաստեղծի ո՞ր հոդվածներին է վերաբերում գնահատականը, բայց շաբաթվա օրերի հիշատակությունը, «Հորիզոնում» լույս տեսած հոդվածների բովանդակության համեմատությունը, և Լեոյի Թիֆլիսից բացակայելը օգնում են ճշտելու, որ երկտողի հեղինակը նկատի ունի 1911 թ. հոկտեմբերի 18-ի (երեքշաբթի օրվա) «Վերջնական անկումը» անստորագիր առաջնորդողը՝ գրված դարձյալ «Մշակի» և Մ. Օրմանյանի դեմ։ Հոդվածը իսկապես հարձակողական է, խիստ, ոչնչացնող, և բոլորովին պատահական չէ, որ դժվարահաճ Լեոն այդպիսի բարձր գնահատականի էր արժանացրել այն։

Այսպիսով, ըստ վերջինիս նույն երկտողի տված փաստի, Թումանյանն է գրել նաև հաջորդ՝ հոկտեմբերի 19-ի (չորեքշաբթի օրվա) առաջնորդողը «Սուտ են ասում» վերնագրով՝ ուղղված պահպանողական մամուլին («Մշակ», «Սուրհանդակ», «Հովիտ»), թեպետ դժվար է երկու հոդվածների մեջ, հրապարակախոսական հնչեղության առու-

---

34 Նույն տեղում, № 222, հմմտ. նույն տեղում, 1910 № 281 կամ՝ VI 191—192, 284։

35 Նույն տեղում, № 229։

36 ԳԱԹ, ԹՖ, № 713։

մով, մեծ տարբերություն նկատել, ինչպես այդ արել է Լեոն, առավելությունը տալով հոկտեմբերի 18-ի առաջնորդողին[37]։

Քանի որ հաստատ է Լեոյի բացակայությունը Թիֆլիսից, ապա, որոշ իմաստով, ավելի դյուրին է դառնում օրաթերթի՝ հոկտեմբերի երկրորդ կեսի հոդվածների տողերի արանքում տեսնելու Թումանյան լրագրողին և հրապարակախոսին։ Այդ օրերին «Հորիզոնի» մշտական աշխատակիցների մեջ չկային Թումանյանին և Լեոյին արժանի փոխարինողներ։ Դեռևս նույն տարվա հուլիսի 13-ին Թիֆլիսից Մանգլիս բանաստեղծին ուղղած նամակում Լեոն, գանգատվելով օրաթերթի խմբագրատան վիճակից, նյութական ծանր դրության, աշխատակիցների պակասի մասին, գրում էր. «Ինչևիցե, Հովհաննես, այս լրագրական գործը մեծ և մեծ դարդեր ունի, պիտի կարողանա՞ս ճար անել»[38]։ Այնուհետև, հուլիսի 24-ի նամակում Լեոն որոշակի բողոքում էր թերթի մշտական աշխատակիցների՝ Մարգար Ավետիսյանի և Միքայել Վարանդյանի անփորձությունից, որի պատճառով աշխատանքի ամբողջ ծանրությունը մնում էր իր վրա[39]։

Բնականաբար նույն դժվարությունները կրկնվում էին Լեոյի բացակայության միջոցին Թումանյանի համար, մանավանդ, երբ անհրաժեշտ էր շուտափույթ, առաջատար հոդվածների հրապարակումը, Մամուլի տեսություն բաժնում պահպանողական թերթերի հարձակումներին պատասխանները՝ սուր, դիպուկ հոդվածներով։

Հետաքրքրական արձագանք ունեցավ «Դեռ համարձակվում է խոսել և շարունակում է խաբել» վերնագրով անստորագիր առաջնորդողը՝ տպագրված հոկտեմբերի 21-ին և 23-ին։ Այն դարձյալ ուղղված է «Մշակի», Հ. Առաքելյանի և Մ. Օրմանյանի դեմ։ Եթե չլինեին Թումանյանի հետագայում տված փաստերը, թե հիշատակված առաջնորդողի հեղինակը ինքն է (այդ մասին՝ ներքևում), ապա հոդվածը նույնպես հուշում է հեղինակի ով լինելը։ Ընթերցողի ուշադրությունը հրավիրվում է թեկուզ հետևյալ նախադասության վրա. «Իրենց («մշակականների»—Լ. Կ.) միջի ամենախաբեբան էլ դժար թե այնպիսի հանդգնությամբ խաբի տգետ բորչալվեցի թարսամային, ինչպես այս մարդը (Հ. Առաքելյանը—Լ. Կ.) խաբում է գրել-կարդալ գիտցող հա-

---

37 «Հորիզոն», 1911, № 229, 230։

38 ԳԱԹ, Թֆ, № 703։

39 ԳԱԹ, Թֆ, № 704։

սարակութիւնը»[40]։ Հարկ կա՞ ապացուցելու, որ ընդգծված բառերը բնորոշ են հատկապես Թումանյանի դրչին։

Անդրադառնալով «մշակականների» հետևողական պայքարին՝ կաթողիկոսական ընտրությունների ժամանակ Մ. Օրմանյանի հաղթանակը ապահովելու համար, Թումանյանն այս հոդվածում հատկապես կանգ է առնում «Մշակի» այն կարծիքի վրա, թե կաթողիկոսական ընտրությունների ժամանակ Լեոն և Թումանյանը ունեին իրենց նեղանձնական նկատառումները, և հակառակորդի նպատակն է՝ խլել «Լեոյի ու Հովհ. Թումանյանի շաղ-շաղ պաշտոնները, որ նրանք չքանդեն հայոց ուսումնարանները, հայոց ազգային հաստատությունները»[41]։ Առնվազն ծիծաղելի են Թումանյանի և Լեոյի հասցեին նման անպատասխանատու հայտարարությունները, ուստի հեղինակն էլ՝ ավելորդ։

Հոդվածի շարունակության մեջ (տպագրվել է հոկտեմբերի 23-ին) հեղինակը կանգ է առնում Հ. Առաքելյանի՝ Լեոյին ուղղված այն լուրջ մեղադրանքի վրա, թե նա ուրացել է ու դավաճանել Գր. Արծրունուն։ Միանգամայն հակառակը պնդելով, Թումանյանը գրում է. «Եթե մի մարդ կա, որ հավատարիմ է մնացել Գր. Արծրունու լավագույն գաղափարներին ու հիշատակին—դա Լեոն է։ Եվ եթե նա ղղված երես է դարձրել ու հեռացել,— շարունակում է նա,— միմիայն իրենցից, այդ ստախոսներից ու խարիերաներից, որոնք միշտ մի հոգս են ունեցել՝ ինչքան կարելի է իրենց շփոթել Արծրունու հետ և շահագործել նրա անունն ու հիշատակը»[42]։

Այս տողերով հեղինակը ամենից առաջ ընդգծում էր, որ «Մշակի» գլխավոր աշխատակիցները չեն հետևում իրենց նախկին առաջնորդի «լավագույն գաղափարներին», իսկ այնուհետև այլ փաստերով ապացուցում, որ կաթողիկոսական ընտրությունների նրանց պայքարում, և ժամանակի «մշակականների» ողջ գործունեության մեջ ընդհանրապես, իշխողը սուտն ու կեղծիքն է։

Մի կողմ թողնելով այս բավական լուրջ մեղադրանքները իր հասցեին, «Մշակը» կեղծ սարսափով և հատուկ միտումնավորությամբ հայտարարում է. «Ահա, ընթերցող, ուր են հասցրել հայ մամուլը Հ. Թումանյանները իրենց արրանյակներով, օր ցերեկով մարդկանց աչքի առաջ քարոզում են մարդասպանություն»[43]։ Նման եղրակացու-

40 «Հորիզոն», 1911, № 232։

41 Նույն տեղում։

42 Նույն տեղում, № 234։

43 «Մշակ», 1911, № 238։

թյան հանգելու համար հիշված տողերի հեղինակը կառչել էր առաջնորդողի հետևյալ խոսքերից. «Մարդ կանգնում ու ակամայից հարց է տալիս իրեն. ինչու՞ և ինչպես է ապրում մեր մեջ այս զզվելի տիպը (Հ. Առաքելյանը—Լ. Կ.)։ Արդյոք մեր կյանքում գոյության իրավունք ունի՞ սա» (այդ մասին տե՛ս նաև Լեոյի վկայությունը, ԹԺՀ, 69)։

«Մշակը» դիտավորությամբ շուռ էր տվել Թումանյանի խոսքերի հիմնական միտումը, որը, հեռու լինելով սոսկ մի մարդու քննադատելու նեղ սահմաններից (առավել ևս՝ սպանելու նպատակից), ուներ ավելի ընդհանրացնող իմաստ։ Հաջորդ տողերում բանաստեղծը դալիս է այն եզրակացության, որ «...այո՛, իրավունք ունի. սա մեր կյանքի ապականությունից ծնված հարազատ որդն է և հասարակությունը տարիների ընթացքում հասու լինելով նրա բոլոր ստերին, կեղծիքներին, հայհոյանքներին ու զրպարտություններին ոչ միայն տակավին տանում է նրան, այլ դեռ արտադրում է նրա նման նորերը։

Եվ այս երևույթը զարհուրելի է»[44]։

«Մշակի»՝ վերևում հիշատակված «կեղծ սարսափից» հետո, հոկտեմբերի 30-ի Մամուլ բաժնում «Հորիզոնը» չի հրաժարվում, որ «Դեռ համարձակվում է խոսել և շարունակում է խարել» առաջնորդողի հեղինակը Թումանյանն է։ Չի թաքցրել նաև ինքը՝ հեղինակը, քննության առարկա առաջնորդողում հիշեցնելով «անցյալ հոդվածում» բերած այն միտքը, «թե այս երևույթը մեզ ավելի մեծ մտահոգություն է պատճառում և ավելի լուրջ խնդիր է, քան կաթողիկոսական ընտրությունները»։ «Անցյալ հոդված» ասելով՝ հեղինակը դարձյալ նկատի ուներ իր «Մեծ մոլորեցնողը և ծանր հանցավորը» հոդվածը, որտեղ, ինչպես ասացինք, նրան հուզողը ընտրական պայքարի տգեղ ձևն էր, անսկզբունքայնությունը, սուտն ու կեղծիքը[45]։

Տարիներ անց՝ 1914 թվականին, Համբ. Առաքելյանի հետ ունեցած մի նոր բանակռվի առթով, Թումանյանը, կրկին անդրադառնալով 1911 թ. դեպքերին, հաստատում է, որ «Դեռ համարձակվում է խոսել և շարունակում է խարել» առաջնորդողի հեղինակը ինքն է[46]։

Ինչպես ասվեց, հոկտեմբերի 21-ի հոդվածի շարունակությունը լույս է տեսել ոչ թե հաջորդ օրը, այլ՝ 23-ին. պատճառը, ըստ երևույթի

---

44 «Հորիզոն» 1911, № 234։

45 Նույն տեղում, № 218, 240։

46 Նույն տեղում, 1914, № 31, 32։

վությունին, հոկտեմբերի 22-ի անվերնագիր առաջնորդողն էր՝ արձագանքը Հ. Առաքելյանի մի նոր խարդախության՝ կապված Կ. Պոլսի ազգային ժողովում քննության առարկա դարձած նրա այն հայտարարության հետ, թե պատրիարքարանը Մատթեոս Իզմիրլյանի ընտրության ժամանակ պատվիրակներին էջմիածին ուղարկելու համար ծախսել է 24 հազար ռուբլի։

Ազգային ժողովը ապացուցել էր, որ Առաքելյանը ծախսված գումարը ավելացրել է տասն անգամ։ Թումանյանը չէր կարող Առաքելյանին մերկացնելու նոր առիթը բաց թողնել, ուստի հոկտեմբերի 21-ի առաջնորդողը ընդհատելով, գրել է անվերնագիր հիշված նոր առաջնորդողը[47]։

Հետաքրքրական մի փաստ է պարունակում Երևանից հոկտեմբերի 24-ին Լեոյի գրած նամակը, որտեղ նա Թումանյանին խնդրում է «Հորիզոնի» միջոցով հերքել այն լուրը, թե իբր Սուրենյանը դիմել է փոխարքային՝ կաթողիկոսական ընտրությունը բաց քվեարկությամբ կատարելու համար[48]։ Կատարելով իր աշխատանքային ընկերոջ և բարեկամի առաջարկությունը, Թումանյանը տարածված այդ լուրը հերքել է յուրովի. նա գրել է Թիֆլիսի հոկտեմբերի 27-ի առաջնորդող հոդվածը (անստորագիր) «Բա՞ց, թե՞ գաղտնի» վերնագրով, հրապարակորեն դեմ դուրս գալով կաթողիկոսական ընտրությունը գաղտնի քվեարկությամբ անցկացնելուն։ Այստեղ էլ հեղինակը հարցը քննում է ժողովրդի շահերի տեսանկյունով, պաշտպանում ժողովրդի ձայնի իրավունքը։ Նա պնդում էր, թե ի վերջո՝ ընտրությունների եռաստիճան կամ քառաստիճան քվեարկությունը (ընտրող ժողովուրդ, պատվիրակ, պատգամավոր, կաթողիկոս) հեռացնում է նախապես ձայն տվող ժողովրդին իր ցանկության վերջնական կատարումից, քանի որ նա որևէ երաշխիք չունի, թե պատգամավորը գաղտնի քվեարկությամբ կատարելո՞ւ է իր ցանկությունը, թե ոչ։

Լեոյի նույն նամակը (հոկտեմբերի 24-ի) նոր հնարավորություն է ստեղծում որոշելու մի այլ անստորագիր հոդվածի՝ Թումանյանի գրչին պատկանելը։

Լեոն Թումանյանին հայտնում է Ռուսաստանի ներքին գործերի մինիստրի՝ էջմիածնի դատախազին ուղարկած այն գրության մասին, ըստ որի «...պատգամավորներ կարող են ընտրել միայն նրանց, որոնք

---

47 Նույն տեղում, 1911, № 233։

48 ԳԱԹ, Թֆ, № 705։

թեմին են պատկանում, այսինքն՝ դրսի թեմերից չէ կարելի պատգամավոր ընտրել»[49]։ Լեոյի այս տեղեկությունը պաշտոնական արգելքի մասին Թումանյանին նյութ է տալիս գրելու երկու հոդված՝ հոկտեմբերի 29-ի անստորագիր և անվերնագիր առաջնորդողը և հաջորդ օրվա «Հին խնդիր» իր ստորագրությամբ հոդվածը։ Երկուսի մեջ էլ, շոշափելով նույն հարցը, հեղինակը պաշտպանում էր կաթողիկոսական ընտրությունների ավանդական օրենքը, ըստ որի՝ հեռավոր երկրներում ապրող, էջմիածին մեկնելու և ընտրություններին մասնակցելու կարողություն չունեցող հայերին հնարավորություն էր տրվում՝ ձայնի իրավունքը վստահել իրենց թեմերից դուրս այն պատվիրակներին, որոնք ի վիճակի էին մասնակցելու ընտրություններին։

Հոկտեմբերի 30-ի անստորագիր առաջնորդողը՝ «Նորից ու նորից» վերնագրով, իր բովանդակությամբ նույնպես խիստ մոտ է հրապարակախոս Թումանյանի հետաքրքրություններին (ավելորդ է կոչնել ոճական նմանություն օրինակներ և այլ ընդհանրություններ)։ Հոդվածը շոշափում է հայկական կյանքում տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ հարևան թուրք, վրաց մամուլի անտարբերությունն ու անտեղյակությունը[50]։

Այսպիսով, թվում է անտարակուսելի, որ «Հորիզոնի»՝ 1911 թ. սեպտեմբերի 22-ի համարում տպագրված «Մի նոր խարդախություն» անստորագիր հոդվածը, 24-ի՝ Մամուլ բաժնի տեսությունը, հոկտեմբերի 7-ի՝ «Ծիծաղելի վայնասուն», 9-ի «Ընտրելիները» առաջնորդողները, 13-ի՝ Մամուլ տեսությունը, 16-ի՝ «Ձեր անունն են շահագործում» առաջնորդողը, 18-ի՝ «Վերջնական անկումը», 19-ի՝ «Սուտ են ասում», 21-ի և 23-ի՝ «Դեռ համարձակվում է խոսել և շարունակում է խաբել» առաջնորդողները, նույն 23-ի՝ Մամուլ բաժնի և 22-ի՝ «Մի նոր փաստ» հոդվածները, ինչպես և 27-ի՝ անստորագիր «Բա՞ց, թե՞ գաղտնի», 29-ի՝ անվերնագիր և 30-ի՝ «Նորից ու նորից» առաջնորդողների հեղինակը Թումանյանն է։

Այդ հոդվածներում ամենուրեք հրապարակախոսական նույն ոճն է, Թումանյանական պարզության, հստակության նույն առանձնահատկությունը, հակառակորդին մերկացնելու նույն սուր լեզուն, կարճ, դիպուկ խոսքը և, որ ամենից կարևորն է, գաղափարների հետևողական սկզբունքայնությունը։

---

49 ԳԱԹ, Թֆ, № 705։

50 «Հորիզոն», 1911, № 240։

Հոկտեմբերի 30-ի առաջնորդողը և «Հին խնդիր» հոդվածը դարձան բանաստեղծի այդ տարվա լրագրական գործունեության վերջնակետը, իսկ այնուհետև այսքան եռանդ ու ժամանակ վատնելուց հետո Թումանյանը ասպարեզից հեռանում է նոյեմբերի 2-ին՝ իր երկրորդ բանտարկության պատճառով[51]։

Ինչպես տեսնում ենք, Թումանյանի հասարակական գործունեության քննությունն անսպառ է, մանավանդ, նոր նյութեր հայտնաբերելու ուղղությամբ։ Նրա գործունեության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում նաև 1910 թ. հունիս—1911 թ. հոկտեմբեր ժամանակամիջոցը, երբ բանաստեղծը, գրեթե ամբողջապես, նվիրվել էր լրագրության և հրապարակախոսության։ Ուստի անհրաժեշտ է մանրակրկիտ բանասիրական աշխատանք՝ գրողի հոդվածների մատենագրական ցանկը լրացնելու, հասարակական գործունեության տարեգրությունը հարստացնելու համար։

---

51 Նույն ամսի 6-ին Թիֆլիսի հայոց հոգևոր թեմը կաթողիկոսական ընտրությունների պատգամավոր է ընտրում Հովհ. Սպենդիարյանին, որը դեռ կաթողիկոսական նախորդ ընտրությունների ժամանակ (1908) օրմանյանական էր («Հորիզոն», 1911, № 247), այնուամենայնիվ, ամենայն հայոց կաթողիկոս է դառնում Գեորգ Սուրենյանը։ Դա «հորիզոնականների» հաղթանակն էր, բայց ո՞չ Թումանյանի ցանկությունը։

V

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿԶԲԻՆ: ԱՌԱՋԻՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՌԱԶՄԱՃԱԿԱՏ (1914 Թ.)

1912 թ. հոկտեմբերի բալկանյան ազատագրական պատերազմը Թուրքիայի դեմ (որին մասնակցում էին դաշնակցած Բուլղարիան, Հունաստանը, Սերբիան, Չեռնոգորիան) և երիտթուրքերի նոր սանձարձակությունները արևմտահայության նկատմամբ՝ Կովկասում ազատագրական պայքարի նոր ալիք առաջացրին, մեծ հույսեր ներշնչելով հայ ժողովրդին, հատկապես մտավորականությանը։ Շարժումը սկսեցին Բաքվի գործիչները, նպատակ ունենալով Հայկական հարցը հանել միջազգային ասպարեզ, ցույց տալ, թե XX լուսավորված դարում ինչպիսի բարբարոսությունների է ենթակա հայ ժողովուրդը իր բնաշխարհում, ապացուցել, որ սուլթան Համիդի միապետության տապալումով «առաջադեմ» երիտթուրքերը՝ ստեղծեցին հայ ժողովրդի ոչնչացման նոր՝ վայրենի ծրագրեր։

Պահպանվում է ինժեներ Կոստանդին Խատիսյանի՝ 1912 թ. հոկտեմբերի 19-ին Թումանյանին ուղղած նամակը, որով նամակագիրը հայտնում է նույն ամսի 30-ին Թիֆլիսում կայանալիք ժողովի, այդ ժողովին մասնակցող Կովկասի հայաշատ բնակավայրերի պատգամավորների մասին, և Բաքվում ընտրված հանձնաժողովի անունից խընդրում է բանաստեղծին՝ իրենցից ևս պատգամավորներ առաջադրել հիշյալ ժողովին մասնակցելու համար։ Նամակում նշված էին Թիֆլիսաբնակ այն գործիչների անունները, որոնք նույնպես հրավեր էին ստացել՝ Բագրատ Նավասարդյան, Ալեքսանդր Խատիսյան, Սամսոն Հարությունյան, Ալեքսանդր Քալանթար, Ս. Չերքեզյան[1]։

Նշանակված օրը հիմնադիր ժողովը կայանում է. մասնակցում էին հասարակական գործիչներ, բժիշկներ, լրագրողներ, դրամատերեր,

1 ԳԱԹ, Թֆ, ց 2, № 349։

որոշվում է ստեղծել Հայոց ազգային բյուրո, մշակվում է բանաձև և հանձնարարվում «Մշակի» աշխատակից Համբարձում Առաքելյանին և Սամսոն Հարությունյանին՝ բանաձևը ներկայացնելով Գևորգ V կաթողիկոսին, խնդրել նրան դիմել Նիկոլայ կայսերը՝ ապահովելու արևմտահայ ժողովրդի գոյատևումը, փրկելու նրան Թուրքիայի բարբարոսական լծից։

Ժողովի սկզբում որոշվել է առաջ քաշել ինքնապաշտպանության հարցը, բայց նպատակահարմար են դտել առայժմ սահմանափակվել դիվանագիտական ջանումներով։

Նույն օրը ընտրվել է Ազգային բյուրոյի կենտրոնական կոմիտե հետևյալ կազմով՝ Հովհ. Թումանյան, Թիֆլիսի քաղաքագլուխ Ալեքսանդր Խատիսյան, «Մշակի» աշխատակից Համբ. Առաքելյան, «Մշակի» խմբագիր Ալեքսանդր Քալանթար, դրականագետ Նիկոլ Աղբալյան, Ավետիք Պողոսյան։ Նախագահ է ընտրվել Սամսոն Հարությունյանը, գործը վարելով մինչև 1914 թ. վերջերը։

Նոյեմբերի 25-ին գումարվել է բյուրոյի երկրորդ նիստը, որի կազմում ընտրվել են ևս երկու հոգի՝ բժ. Ստեփանյան, Արշակ Ջամալյան։ Հարկ եղած դեպքում բյուրոյի կենտրոնական կոմիտեն իրավունք է ունեցել գործին մասնակից դարձնել նաև հայոց պատմությանը, հայ հասարակական կյանքին տեղյակ այլ գործիչների. հրավիրվել են Լեոն, Նիրսես Աբելյանը, Հովհ. Սաենդիարյանը, Տիգրան Հովհաննիսյանը։

Բերված փաստերը քաղված են Ազգային բյուրոյի «Համառոտ զեկուցումից», որի տակ ստորագրել են կոմիտեի բոլոր անդամները, այդ թվում և Թումանյանը[2]։

Մեն ուշադրություն դարձնենք Կ. Խատիսյանի նամակի և բյուրոյի հիմնագիր ժողովի թվագրության վրա (1912, հոկտեմբերի 19, 30), ապա կտեսնենք, որ այն համընկնում է Հայ գրողների Կովկասյան ընկերության ստեղծմանը, որի վարչության նախագահ էր ընտրվել Թումանյանը։ Ուրեմն, նույն ամսում նա հանձն է առել երկու կարևոր ազգային գործ, մեկին կապվում էր իր ժողովրդի ճակատագիրը, մյուսին՝ հայ մշակույթի՝ մայրենի գրականության։

Բանաստեղծն ամբողջովին նվիրվեց երկուսին էլ՝ մինչև վերջ բյուրոյի կենտրոնական կոմիտեի կազմում լինելով միակ գրողը։

Ազգային բյուրոյի ներսում տարբեր կուսակցությունների, հատ-

2 ՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ 24, թ 25։

կապես, դաշնակցության ներկայությունը բանաստեղծ Թումանյանի համար որևէ նշանակություն չուներ։ Տակավին 90-ական թվականների նրա հասարակական գործունեությունից հայտնի է, որ նա երբեք որևէ կողմնակցության կամ ընկերության հետ կամակատար չի եղել, միշտ ունեցել է իր ես-ը, սեփական ողջամտությունը, առաջնորդվել է միայն ժողովրդին, հայրենիքին ծառայելու սկզբունքով, որին նա հետևեց մինչև կյանքի վերջը (V, 58, VI, 139—141)։

Այդպես էլ եղել է բյուրոյի կենտրոնական կոմիտեի նրա մասնակցությունը։

Այն հանգամանքը, որ Բաքվի մտավորականները բյուրոն ստեղծելու նախօրյակին դիմել էին նաև Թումանյանին, նշանակում էր բանաստեղծի՝ որպես հասարակական գործչի դերի հատուկ գնահատություն։

Մենք նպատակ չունենք կանգ առնելու Աղգային բյուրոյի ստեղծման առաջին տարիների դիվանագիտական գործունեության, նրա անհաջողության, ցարական կառավարության այդ ժամանակի հակահայկական քաղաքականության վրա։ Աղգային բյուրոն տվյալ դեպքում մեզ հետաքրքրում է այնքանով, որքանով նրա հետ են կապվում հատկապես համաշխարհային պատերազմի տարիների՝ Թումանյանի հասարակական կյանքի փայլուն էջերը, երբ բյուրոյի գործունեության մեջ նոր բովանդակություն է մտնում ռուս-թուրքական պատերազմի կապակցությամբ։ Մնացածը պատմաբանների գործն է։

* * *

1914 թ. ամռան Թումանյանի ծրագրերից մեկը նորից Անի մեկնելն էր։ «...Այս տարի այցելությունները, թվում է թե կկրկնապատկվեն, տեսնեմ՝ ե՞րբ եմ բախտ ունենում տեսնելու Անիում էն ցանկալի խումբը, որ հայրիկիդ գլխավորությամբ է գալու»,— գրում է Աշխարհբեկ Քալանթարյանը՝ նույն թվականի հունիսի 20-ին Անիից՝ Եղարդ Թումանյանին ուղղած անտիպ նամակում։ Բանաստեղծի և նրա գրլխավորած խմբի Անի մեկնելը այնքան հաստատ մտադրություն էր, որ Քալանթարյանը խնդրում է հասցեատիրոջը՝ հաղորդել խմբի անդամներին՝ մի-մի հատ գիրք վերցնեն Անիի մատենադարանի համար, որը «...չի սահմանափակվում միայն Անիով ու հնագիտությամբ, այլ ընդգրկում է հայագիտությունը»[3]։

---

[3] ԵՐԿ. Ն Թումանյանի ֆ։

Թե ովքեր են եղել խմբի մյուս անդամները, մեզ համար առայժմ անհայտ է. մի բան հաստատ է, որ ստեղծագործողներ էին՝ գրողներ, գիտությունի մարդիկ, քանի որ Անի պիտք է տանեին «իրենց երկրից»։

Բայց բռնկվեց համաշխարհային պատերազմը, և շատ ծրագրերի հետ խափանվեց նաև Անի մեկնելու Թումանյանի մտադրությունը, որ եթե իրականանար, կդառնար նորորդ այցելությունը։ Նրան սպասում էին ուրիշ ճամփաներ. նա տեսնելու էր համազգային ողբերգությունը մոտիկից, տեսնելու էր քաղաքներ ու գյուղեր, որոնց մի մասին սպասվում էր Անիի ճակատագիրը, բայց այնտեղ էլ ոչ դիրք պահանջող կար, ոչ հայագիտություն ...

Պատերազմի գույժը Թումանյանին հասավ Վրաստանի Զաղվեր ամառանոցում, ուր եկել էր մի քանի օր առաջ՝ հուլիսի 14-ին։ Լուրը թունավորեց նրան ու ղրկեց ամառանոցային անդորրի վայելքից։ Նրա միակ «մխիթարանքը» այն էր, որ «...Գերմանիան և նրա միլիտարիզմը պիտի խորտակվի կամ թուլանա, ավելի ճիշտը՝ Ավստրո-Հունգարիան էլ իր պատիժն առնի— և ամբողջ Գերմանիան՝ էգոիստ ցեղը, և իմ ռուսասիրությունը հաղթանակի» (V, 400)։

Պատերազմի լուրը Զաղվեր ամառանոցում խուճապ է առաջացնում, ծայր են առնում սրտամաշ տառապանքներ. թեպետ Թումանյանն աշխատում էր գլուխ բերել «Լուսաբեր» դասագրքի հերթական տարին, բայց հոգին տագնապով լի էր հայ ժողովրդի ճակատագրի համար։ Տեղեկություն ուներ, որ Մոսկվայում Արտավազդ որդին կարող է զորակոչվել, իսկ Մուշեղից լուր չուներ (նա ճանապարհորդում էր Եվրոպայում, Լայպցիգում էր դեռ պատերազմը չսկսած), եղբայրներին արդեն բանակ էին տարել, ավագ դուստրը պատրաստվում էր երեխա ունենալ։ Խռովված հոգով Թումանյանը թողնում է ամառանոցը և վերադառնում Թիֆլիս։

«Ամենքս կլանված ենք պատերազմով։ Ամենքս դարձել ենք ռազմագետ»,—գրում է Թումանյանն այդ օրերին (V, 403)։ Որքան էլ նա համոզված էր, որ հաղթանակը կշահվի, թեպետ մեծ զոհերի գնով, բայց նրան անհանգստացնողը Արևելքի պատերազմն էր։ Թումանյանը լավատեսորեն կարծում էր, որ այդ լինելու էր «վերջին տագնապն ու դժբախտությունը համազգային», որովհետև Գերմանիայի պարտությամբ, ըստ նրա լուծվելու էր Հայկական հարցը, որով Արևելքի պա-

տերազմը «ավելորդ աղետ» էր լինելու (V, 403)։ Բանաստեղծին մտահոգողը Թուրքիայի պատերազմի մեջ մանելն էր։

Եվ Թումանյանն ամբողջապես կլանվեց հայ ժողովրդի գալիք ողբերգությունը հնարավորին չափ կանխելու գործով, առանց սպասելու որևէ հաստատության, ընկերության կամ կուսակցության միջնորդելուն։ Թումանյանը Բիսմարկի, Մետերնիխի ժառանգների կողքին, ստվերի մեջ, արդեն տեսնում էր Աբդուլ Համիդի դաժան դեմքը, ու շատ ժամանակ պետք չէր, որ այն կերպարանափոխվելով՝ դառնար բազմագլուխ ու դարեր շարունակ հոշոտված մեր ժողովրդին ներկայանար որպես Էնվերի, Թալեաթի, Ջամալի ու երիտթուրքերի այլ գիշատիչների մի ստվար ոհմակ (IV, 306)։

1914 թ. օգոստոսի 3-ին, դեռևս Զաղվեր ամառանոցում, Թումանյանն արդեն գործնական պաշտոնական նամակ է գրում Լոռու գավառապետ Դավրիլովին՝ առաջարկելով իր ծառայությունը։ Այստեղ նա արտահայտում է իր վերաբերմունքը պատերազմի և նրա մեջ Ռուսաստանի դերի մասին։ Նամակն անտիպ է, ռուսերեն, հայտաբերվել է վերջերս Թումանյանի ընտանեկան արխիվում։

Ստորև տրվում է հայերեն թարգմանությունը։

«Մեծարգո Վասիլի Պավլովիչ,

Թիֆլիսի մեր հանդիպումից հետո ես հեռագրով կանչվեցի Զաղվեր՝ ընտանիքիս մոտ, որտեղ և գտնվում եմ այժմ և ուր ուշադրությամբ հետևում եմ, թեպետ վաղուց նախապատրաստված, բայց անսպասելի բռնկված մեծ պատերազմին, որի մեջ Ռուսաստանի համար սահմանված է ամենակարևոր և ազնիվ դերը։

Այսօր Թիֆլիսից ինձ գրում են, որ կարող է այս օրերս Թուրքիան նույնպես պատերազմ հայտարարի Ռուսաստանին։ Եթե իրականանա այդ լուրը՝ մեզ մոտ, Կովկասում, անպայման կսկսվեն սովորական անկարգություններ և հույժ ցանկալի կլինի, որ մեր գավառի մըտավորականությունը իր ժամանակին հավաքվի և համախմբվի Ձեր շուրջը ու ներդնի իր բոլոր ուժերը գավառում խաղաղություն և հանգստություն պահպանելու համար։ Եթե անհրաժեշտություն լինի, ու Դուք նպատակահարմար գտնեք, խնդրում եմ նկատի ունեցեք, որ ես պատրաստ եմ գալ Ձեզ մոտ՝ իմ հայրենիքը, և օգտակար լինել, ինչով կարող եմ»[4]։

---

4 ԹԹ, Նոր նյութեր, թղթ. № 38։

Նույն պատրաստակամությունը նա հայտնում է Թիֆլիսի և Իմերեթիայի հայկական թեմի առաջնորդ և Հայոց ազգային բյուրոյի պատվավոր նախագահ Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանին, միաժամանակ զգուշացնում՝ «պետք է աշխուրջ լինենք և պատրաստ» (ՈՒՀ 1, 383)։

Թումանյանն այդ օրերին դեռևս չգիտեր, թե ինչ անակնկալներ էին սպասում հայ ժողովրդին. իսկ ինչ վերաբերում է հայրենիքում տեղի ունենալիք «անկարգություններին»՝ դրանք եղան այդ օրերից ավելի քան երեք ու կես տարի հետո, երբ նա եռանդուն գործունեություն ծավալեց ազգամիջյան ընդհարումները խաղաղությամբ ավարտելու համար։

* * *

Պատերազմը սկսվելուց հետո, ինչպես ասացինք, նոր բովանդակություն է ստանում Հայոց ազգային բյուրոյի կենտրոնական կոմիտեի գործունեությունը։ Քանի որ անխուսափելի էր ռուս-թուրքական պատերազմը, բյուրոն դիմում է գործնական քայլերի։ Բանակցությունների մեջ մտնելով Կովկասի փոխարքա Վորոնցով—Դաշկովի և զինվորական բարձր հրամանատարության հետ, նրանց ակնառու շահագրգռությամբ և համաձայնությամբ, որոշվում է ստեղծել հայ կամավորական խմբերը, ու գործի նախապատրաստությունը սկսվում է ծածկագիր հեռագրով Վառնայից համբավավոր ժողովրդական հերոս Անդրանիկին Թիֆլիս հրավիրելով։

1914 թ. օգոստոսի 12-ին Թիֆլիս է ժամանում Անդրանիկը, որը մասնակցելով բալկանյան պատերազմին՝ բուլղարական կառավարությունից ստացել էր սպայի աստիճան, կուրծքը զարդարել քաջության արծաթյա և ոսկի խաչերով[5]։

Անդրանիկը պատրաստ էր շարունակելու Արևմտյան Հայաստանում ընդհատված հայդուկային ազատագրական պայքարը արդեն նոր պայմաններում՝ ռուսական բանակի հետ դաշնակցած, ինքնավար Հայաստան տեսնելու վառ հույսերով։

Թիֆլիս հասնելուց մի քանի օր հետո Ազգային բյուրոյի անունից Մեսրոպ եպիսկոպոս Տեր Մովսիսյանը, Թիֆլիսի քաղաքագլուխ Ալ. Խատիսյանը և բժիշկ, հասարակական գործիչ Հակոբ Զավրիևը Անդ-

5 «Զորավար Անդրանիկի կովկասյան ճակատի պատմական օրագրություն, 1914—1917, օրագրված զորավարին թիկնապահ զինվորենն», Պոսթոն, 1924, էջ 4—5։

բանիկին ներկայացնում են կովկասյան ճակատի ընդհանուր հրամանատար գեներալ Միշլյանսկուն, նրա օգնական գեներալ Յուդենիչին[6]։ Անդրանիկը նրանց խոստանում է չորս դրուժինա (4000 զինվոր) կամավորական խմբերով առաջնորդել ռուսական բանակը, Թուրքիայի աշխարհագրական դիրքի, լեռների իր իմացությունները ամեն կերպ օգնել նրանց։ Իրենց հերթին, գեներալները խոստանում են 800 հազարանոց բանակ, ռազմամթերք[7]։

Հայ ժողովուրդը ապրում էր ճակատագրական օրեր...

Անդրանիկի Թիֆլիսում գտնվելը նշանավորվում է նաև հայոց Մեծ բանաստեղծի և ժողովրդական հերոսի ջերմ բարեկամությամբ։

Թումանյանը և Անդրանիկը առաջին անգամ իրար հանդիպել էին 1904 թ. դեկտեմբերի սկզբներին Թիֆլիսում[8], միջնորդը Սեբաստացի Սաքոն էր՝ Սաքո Ծովանյանը, հայ ազատագրական պայքարի մարտերում կոփված մի հայտնի հայդուկ, որ թուրքական օրենքով դատապարտվել էր մահվան, բայց ռուսական կառավարության միջամտությամբ ազատվելով Ռուսաստան, շարունակում էր իր գործուն մասնակցությունը արևմտահայության ազատագրական պայքարին։ Վերջինս մեծ ժողովրդականություն ստացավ հատկապես 1905—1906 թթ. Կովկասի ազգամիջյան կռիվների ժամանակ. նույնիսկ թուրքերը նրան Ղազախ Սաքո էին կոչում, շնորհելով նրան նաև փաշիշահի տիտղոս։

Իրենց ծանոթության միջոցին Թումանյանն ու Անդրանիկը արդեն հայտնի դեմքեր էին։ Բանաստեղծը հրատարակել էր 1903 թ. ժողովածուն և հայ գրականության բարձունքներում ստեղծել իր հաստատուն տեղը, իսկ Անդրանիկը քաջ և իմաստուն զինվորի համբավ ուներ դեռ 90-ական թվականներից՝ որպես հայդուկային ազատագրական պայքարի ղեկավար և առավել ևս 1902—1904 թթ. Տարոնի, Սասունի,

---

6 Նույն տեղում, էջ 6։

7 Նույն տեղում։

8 Հանդիպման ամիսը՝ դեկտեմբեր, որոշվում է մոտավորապես. հիմք են ընդունվում այն թվական տվյալները, որոնք Անդրանիկը բերում է իր՝ 1905 թ. ժնևում թեյարբած հուշերում (դրի է առել նույն ժամանակ գյուղատնտեսության ուսանող Գրձելյանը)։ Այդ թվագրությունները վերաբերում են ինչպես Աղթամարի, Վանի դեպքերին, այնպես էլ Պարսկաստան անցնելուն, այնուհետև՝ Կովկաս ժամանելուն։ Ըստ երևույթին, հեղինակը դիտավորությամբ այս հուշերում չի անդրադարձել իր բոլոր հանդիպումներին. նշում է միայն, որ «...բանի մը տուներ մեր ընկերները հացկերույթի հրավիրեցին» (մանրամասնությունները տե՛ս «Անդրանիկի հուշերը», «Հայրենիք», Բոստոն, 1931, № 11, էջ 133)։

Վասպուրականի կռիվներից հետո, երբ մկրտվել էր «Հայ Գարիբալդի» անունով։

1904 թ. օգոստոսին, հերոսաբար ազատվելով շրջապատումից և թողնելով Վանը, Անդրանիկը անցնում է Պարսկաստան և ապա ոչ մեծ խմբով հանդրվանում Կովկասում։ Մեկնում է նախ Բաքու, պարսկահպատակի անձնագրով, ապա տեղափոխվելով Թիֆլիս, ծպտված Պարույր կեղծ անվան տակ, իջևանում «Լոնդոն» հյուրանոցում։

Թիֆլիսում Անդրանիկը մնում է 17 օր[9]։ Բայց որքան էլ ուզենար դաղտնի պահել իր իսկական անունը, այնուամենայնիվ, նա սովորական ճանապարհորդ չէր. ուներ իր ապագա գործունեության ծրագրերը, ուստի անհրաժեշտ էր հանդիպել հասարակական նշանավոր գործիչների. դրանցից մեկը Թումանյանն էր։

Բանաստեղծի ջերմ ու հյուրընկալ հարկի տակ սև ակնոցներով ծպտյալ հայդուկը ընդունվում է որպես «դսեղցի հեռավոր ազգական»։ Տանտերը սիրով ու գուրգուրանքով երեխաներին ներկայացնում է իր մեծանուն հյուրին, կանգնեցնում նրա դիմաց ու երգել տալիս ժողովրդի մեջ լայն տարածում գտած, հայոց լեռների հերոսին նվիրված երգերը...

Հուզիչ էին այդ պահերը. լսում էր մեծ հայդուկը ու մտածում, որ անտեղի չի վատնել կյանքը՝ հանուն ազատության մղած իր պայքարի արձագանքները հասել են Թիֆլիս և ավելի հեռու[10]։

Բանաստեղծն ու Անդրանիկը, բնական է, շուտ մտերմացան ու սիրեցին միմյանց մեծ ու խոր սիրով։ «Մեկ նայվածք մը բավ էր հասկընալու և ճանչընալու անոր սրտի անբիծ ու նկարագրին անաղարտ վիճակը»,— գրել է հետագայում Անդրանիկը (ԹԺՀ, 550)։

Անդրանիկից ստացած բանաստեղծի՝ այդ օրերի տպավորության մասին առայժմ տեղեկություն չունենք։ Նրանց անմիջապես մտերմանալու մի ապացույց է նաև հետևյալ փաստը, որ տան ավագներից լսելով՝ վերջերս պատմել է բանաստեղծի դուստրը՝ Թամար Թումանյանը։ Իմանալով, որ տիկին Թումանյանը սպասում է իր իններորդ զավակին՝ Անդրանիկը խնդրում է՝ աղջիկ ունենալու դեպքում անունը դնել Հայկանուշ՝ ի հիշատակ իր քրոջ վաղամեռիկ դստեր, տղա ունե-

---

9 Նույն տեղում։

10 Արսեն Մարմարյան (Վ. Թորոսվենց), Զորավար Անդրանիկ և իր պատերազմները, Կ. Պոլիս, 1920, էջ 173։

նալու դեպքում՝ Հայկ՝ ի հիշատակ կռիվներում հերոսաբար զոհված քեռորդու և ի նշան իրենց նոր հաստատված բարեկամության։ Թումանյանների ընտանեկան արխիվում պահվում է մի ծոցատետր, որտեղ գրի են առնված երեխաների ծննդյան թվականները. Սեղա Թումանյանի անվան դիմաց (ծնվել է 1905 թ. հունվ. 5-ին) գրված է նաև Հայկանուշ անունը (այդպես է նաև նրա ծննդյան վկայականում)։

Այդ հանդիպումներից հետո Անդրանիկը կրկին մեկնում է Բաքու և ապա անցնում Շվեյցարիա՝ ժնև, այնուհետև հաստատվում Բուլղարիայում։

Անդրանիկը տակավին ժնևում էր, երբ 1905 թ. ծայր առած ազգամիջյան կռիվները, զրկելով բանաստեղծին խաղաղ ստեղծագործական աշխատանքից, ստիպում են նրան գրիչը սպիտակ դյուշով փոխարինել։ Այդ նույն ժամանակամիջոցում անմեղ ժողովրդի թափվող արյան կանչով Կովկաս պետք է գար նաև Անդրանիկը, ուղեկից և թարգմանիչ ունենալով Դերենիկ Դեմիրճյանին, որն այդ օրերին ուսանող էր ժնևում, սակայն, անհայտ պատճառներով, նրանք հանապարհից ետ են կանչվում, ուստի և Անդրանիկի առաջին օգնությունը կովկասահայությանը տեղի չի ունենում։

Այդ տարիներին ժնևում Անդրանիկը մտերմացել է նաև Սիամանթոյին, դարձել նրա բանաստեղծական ներշնչանքի աղբյուր, բարեկամացել է Դ. Դեմիրճյանի, Ռուբեն Զարդարյանի հետ[11], բայց մտերմությունը և համագործակցությունը Թումանյանի հետ, որը վերաբերում է 1914—1919 թթ., առանձնակի տեղ է գրավում երկուսի էլ կյանքի տարեգրության մեջ։

1914 թ. հոկտեմբերին, նախքան ռուս-թուրքական պատերազմի սկսվելը, Թիֆլիսում ստեղծվում է «Պատերազմից վնասվածներին օգնող կենտրոնական կոմիտե», որը մշակութային և հոգևոր գործիչների մասնակցությամբ ծավալում է լայն գործունեություն։ Կոմիտեի առաջին նիստը տեղի է ունենում հոկտեմբերի 5-ին Մեսրոպ եպիսկոպոս Տեր Մովսիսյանի նախագահությամբ և որոշվում է.

1. Կաթողիկոսին խնդրել մի հատուկ կոնդակով կոչ անելու հայ ազգաբնակչությանը՝ նպաստելու կոմիտեին իր նպատակն իրագործելու համար։

---

11 Նույն տեղում, էջ 240։

Հովհ. Թումանյանը Մեսրոպ եպիսկոպոս տեր-Մովսիսյանի հետ

ԼՈՍԱՆԻՄ ԳՐՍՏՈՓՈՐՈՍՅԱՆԻ
ՖՈՒՆԴԱՅԻՆ ՀԱՍԴԱՆ

2. Դիմել բոլոր ընկերություններին և անհատների, խնդրելով օգնել կոմիտեին։

3. Խնդրել դավառական մտավորականությանը՝ օգնել քաղաքային ինքնավարություններին։

Նույն օրը ընտրվում է կենտրոնական կոմիտե Սամսոն Հարությունյանի նախագահությամբ (փոխնախագահ էր մեծահարուստ Կոստանդին Ալիխանյանը)[12]։

1914—1915 թթ. Թումանյանի հասարակական ողջ գործունեությունը կապվում է հիշյալ ընկերության կենտրոնական կոմիտեի հետ։ Այդ կոմիտեն իր հերթին ենթարկվում էր Հայոց ազգային բյուրոյին, որին Թումանյանը, ինչպես տեսանք, անդամագրված էր նրա գոյության առաջին օրից՝ 1912 թ. հոկտեմբերի 30-ի հիմնադիր ժողովից։

* * *

Ռուս-Թուրքական պատերազմը սկսվելուց հետո Թումանյանը մտադրություն է ունեցել մեկնել Պետերբուրգ «կայսերը ներկայանալու»։ Ի՞նչ նպատակ էր հետապնդում բանաստեղծի այդ մտադրությունը։ Այս փաստի աղբյուրը Վ. Տերյանի՝ Ն. Թումանյանին ուղղած նամակն է (1914, հոկտեմբեր)։ Նամակից պարզվում է, որ այդ մասին Տերյանը լսել է Մոսկվայում եղած միջոցին Արտավազդ Թումանյանից և Պետերբուրգից վերադառնալով՝ նույն տեղեկությունը կարդացել Պողոս Մակինցյանի՝ իրեն ուղղած նամակում[13]։

1915 թվականին գրած նամակներից մեկում բանաստեղծը հայտնում է, թե պաշտոնական վայրերում (Հայոց ազգային բյուրոյում) ցանկություն է եղել իրեն գործուղելու «Ռուսաստան՝ շրջագայելու, խոսելու, նաև հանգանականության մասին հոգալու, կազմակերպելու...»։ Նույն նպատակը նրան պետք է ուղեկցեր մինչև Մոսկվա, բայց բազմանդամ ընտանիքի հոգսերը նրան հնարավորություն չեն տալիս երկար ժամանակով Թիֆլիսից հեռանալու (V, 402)։

Պետերբուրգ մեկնելու մտադրությունը, ամենայն հավանականությամբ, կապված է «պաշտոնական վայրերից» նրան Ռուսաստան գործուղելու հետ. քանի որ Թումանյանը հեռավոր ճամփորդությունից

---

12 «Հորիզոն», 1914, № 222։

13 Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հատ. 3, Եր., 1963, էջ 352։ Պողոս Մակինցյանի նամակն անհայտ է, թանգարանային ֆոնդերում չի պահպանվել։

Շիրվանզադեն, Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանը, Թումանյանը, Նիկողայոս քհն. Տեր-Բավոյանը, Հովսեփ Խունունցը արևմտյան ռազմաբեմ մեկնելուց առաջ (1914, նոյեմբեր)։

հրաժարվել է, բնականաբար Նիկոլայ 2-ին հանդիպելու մտադրությունը չի իրականացել։ Այդ մասին առայժմ այլ տեղեկություններ չկան, մնում է ենթադրություններ անել, թե ի՞նչ նպատակ էր նրան մղում հանդիպելու կայսեր հետ։ Տեսակցությունը, անշուշտ, պետք է ունենար քաղաքական նպատակ. հայ ժողովրդի՝ պատերազմին մասնակցելու, կամավորական խմբերի կազմակերպման հետ կապված խնդիրներ պարզաբանելու, պատերազմի բարեհաջող ելքից հետո Արևմտյան Հայաստանի ճակատագրի և նման հարցեր։

Սակայն այդ ուղևորությունն ու հանդիպումը, ինչպես ասվեց, չկայացան։ Դրա փոխարեն պատերազմի սկզբում Թումանյանը հանդես եկավ մի շարք հրապարակախոսական հոդվածներով («Ապաշավանք», «Սրանով կհաղթենք», «Վերջին տագնապը»), որոնց մեջ խստորեն քննադատում էր արյունալի պատերազմը հրահրողներին, մյուս կողմից՝ մեծ հավատով և լավատեսությամբ ընդգծում «ժողովուրդների ձայների», «ժողովուրդների ողևորության» նշանակությունը։ Հոդվածները տպագրվել են այն օրերին, երբ արագորեն համալրվում էին կամավորական խմբերը, և աշխարհի բոլոր ծայրերից Կովկաս էին գալիս թուրքական բարբարոսական հետապնդումների պատճառով հայրենիքը թողած հայորդիները՝ հանելու իրենց հնօրյա վրեժը։ Թումանյանի յուրաքանչյուր հոդված հայ զինվորին և ամբողջ ժողովրդին մղում էր ազատագրական պայքարի, ողնվորում նրանց հաղթանակի հավատով։

Թուրքիայի՝ Ռուսաստանին պատերազմ հայտարարելուց հետո, հոկտեմբերի 31-ին, լույս տեսավ Թումանյանի «Երրորդ զարկը» հոդվածը, որով նա վերստին դրսևորեց իր քաղաքական հավատամքը՝ կողմնորոշումը Ռուսաստանի նկատմամբ, և առաջին հրապարակային ելույթն ունեցավ արդեն եվրոպական համբավ ձեռք բերած Անդրանիկի մասին։ Անդրադառնալով ռուս-թուրքական երեք պատերազմներին (1827—28, 1877—78 և 1914 թթ.), Թումանյանը գրում է այդ պատերազմների երեք հերոսների մասին. «Վերք Հայաստանի» Աղասու, «Խենթի» Վարդանի և Անդրանիկի։

Առանձնացնելով Անդրանիկին իբրև ոչ վիպական, այլ իրական, բայց լեգենդար մի հերոսի, փառաբանելով նրան որպես ազատագրական պայքարի ժողովրդական առաջնորդի, Թումանյանը հայտարարում է, որ նա այս անգամ կռվի է ելնում հանուն ճակատագրական մի գոյամարտի։ «Եվ էսպես, էս երրորդ պատերազմը ավանդական խորհրդավոր երրորդ զարկն է,— գրում է Թումանյանը։— Երրորդ

զարկն է վճռում խնդիրը։ Երրորդ զարկով Հյուսիսի հսկան, Մեծ Ռուսաստանը վճռում է հայ ազգի հին, արյունոտ խնդիրը, ապահովում է նրա ապագան ու առաջնորդում դեպի ազատ ազգերի եղբայրությունը» (ՈՒՀ 2, 354)։

Ճիշտ է, ժամանակը ցույց տվեց, որ բանաստեղծի լավատեսությունը վաղաժամ էր։ Շուտով պարզվեց, թե որքան «փշոտ է ճանապարհը» դեպի «ազատ ազգերի եղբայրությունը»։ Պատերազմում ցարական Ռուսաստանը ուներ իր նվաճողական ծրագրերը, որոնք ոչ մի կապ չունեին հայերի ազատագրության հետ։ Բայց այդ միջոցին կարևորը Թումանյանի վերաբերմունքն էր դեպի այդ ավանդական «երրորդ զարկը», հավատը այդ զարկի զորության նկատմամբ և Անդրանիկի հերոսական դերի կանխատեսումը։

Անդրանիկը Թիֆլիս եկավ Ռուսաստանի նկատմամբ ունեցած հավատով։ Տակավին 1905-ի Եվրոպա կատարած առաջին այցելության ժամանակ ծնված գրած հուշերում նա շատ որոշակի դրսևորել էր իր հիասթափությունը Եվրոպայից հետևյալ խոսքերով. «Բախտ ունեցանք Եվրոպան տեսնելու, բայց ավելի լավ կհամարեի չտեսնել։ Հայկական հարցի վերաբերմամբ ոչ մի ապավորություն չթողեց ինձ վրա։ Միայն տեսանք ժողովրդի ազատությունը իր երկրի մեջ։

Ինքնասեր, իրենց հանգստությունը սիրող մարդիկ են, որոնք չեն օգներ իրենց եղբորը, ո՞ւր մնաց, թե մեզ օգնեին հեռվեն»[14]։

Շուտով Անդրանիկը խորամուխ եղավ նաև ցարական կառավարության քաղաքականության մեջ։

Կովկասյան բանակի հրամանատարության առաջին խնդիրը եղավ կամավորական բանակը բաժանել խմբերի և միայն մեկի՝ առաջինի ղեկավարությունը հանձնել Անդրանիկին։ Նպատակը պարզ էր՝ որքան հնարավոր է արգելակել հայերի միասնականությանը, համախմբմանը։

Ռուս-Թուրքական պատերազմն սկսվեց ռուսների հաղթանակներով բոլոր ճակատներում։ Բայց այդ հաղթանակները անմիջապես ի հայտ բերեցին ցարական քաղաքականության հակահայկական բնույթը։ Նախ՝ գրաված բնակավայրերում նահանջող թուրքերը ամենավայրենի ձևերով վրեժը լուծում էին խաղաղ բնակչությունից և դրանով հիմք դնում հայ ժողովրդի նոր ողբերգության՝ գաղթականությանը, որի դեմ ռուսական հրամանատարությունը փակում էր աչքերը։ Իսկ

---

14 «Անդրանիկի հուշերը», «Հայրենիք», Բոստոն, 1931, № 11, էջ 133։

կամավոր հայ զինվորների անձնուրաց կռիվը դարավոր թշնամու դեմ՝ ստիպեց ցարական զորավարներին բացասական դիրք գրավել հայ մարտիկների, Ազգային բյուրոյի խնդրանքների և միջնորդությունների նկատմամբ։

Ցարական զորավարները գիտեին, որ հայերը կռվում են իրենց ազատության համար, և սկսեցին կասկածել, թե կամավորական խմբերից և զորակոչված հայերից կարող է ստեղծվել ազգային բանակ և հնարավորություն՝ Հայաստանի ինքնավարության պահանջի համար։

Կասկածանքը շուտով վերածվեց միանգամայն վերաբերմունքի։ Սկսվեց կեղծ լուրերի, բամբասանքների շարան հայ կամավորական խմբերի մասին, թե չեն կռվում, վատ են վարվում թուրք և քուրդ խաղաղ բնակչության հետ, թալանում են նրանց, չեն ենթարկվում հրամանատարությանը և այլն։ Այդ պայմաններում անհրաժեշտ էր հասկացրել հայկական կամավորական խմբերը, քանի որ ցարական պաշտոնյաները, ի դեմս Կովկասի փոխարքայի, չկատարեցին իրենց խոստումը 800000 կռվող տրամադրելու մասին, պատճառաբանելով, թե բոլոր ուժերը ուղարկվել են գերմանա-ավստրիական ճակատ։

1914 թ. նոյեմբերի 11-ին Էջմիածնի դիվանապետ Բագրատ եպիսկոպոսի՝ Ազգային բյուրոյի նախագահ Սամսոն Հարությունյանին գրած պաշտոնական նամակից պարզվում է, որ նույն օրը Էջմիածնում ստացվել է հասցեատիրոջ անթվակիր նամակը (անհայտ)։ Այն ծանր տպավորություն է թողել կաթողիկոսի վրա։ «Զզվելի պրովոկացիան շատ պարզ է»,— գրում է Բագրատ եպիսկոպոսը։ Հայտնվում է նաև, որ նկատի ունենալով չարամտաբար ստեղծված ծանր մթնոլորտը, համաձայն Ազգային բյուրոյի նախագահի նամակի, կաթողիկոսը կարգադրել է Մեսրոպ և Խորեն եպիսկոպոսներին «շուտով գնալ կովկասյան բանակ՝ պատերազմի դաշտը՝ հայ զինվորներին օրհնելու և ոգեվորելու»։ Նամակի հետ ուղարկվել է նաև կաթողիկոսի՝ փոխարքային տրված հեռագրի պատճենը և խոստացել ավելի մանրամասն տեղեկություն ուղարկել։

Նույն նամակում խոսվում է Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանի հետ (այդ միջոցին՝ Արարատյան թեմի առաջնորդ, հետագայում՝ կաթողիկոս ամենայն հայոց) Երևան մեկնող երկու ներկայացուցիչների և Մեսրոպ եպիսկոպոսին ուղեկցողների մասին, որոնց անունները չեն նշվում[15]։

15 ԳԿԳԱ, ֆ 288, ց 1, գ 7, թ 31։

Նամակում հիշատակվում է նաև Ազգային բյուրոյի փոխնախագահ Հ. Ամիրխանյանի միջոցով ուղարկված նոյեմբերի 8-ի «թուղթը», որով Եպիսկոպոսը հարցնում է. հարմա՞ր է արդյոք այդ «թուղթը» ուղարկել փոխարքային, թե՞ սպասել մինչև որ ծանր մթնոլորտն ու տպավորությունն անցնի։ Ձևքի տակ չունենալով այդ վավերագիրը, կարելի է չկասկածել, որ այն վերաբերում է կամավորական խմբերին։ Բագրատ եպիսկոպոսը հայտնում է նաև, որ «Գեներալ Զեռնազուբովից վնհափառը հեռագիր է ստացել նոյեմբերի 7-ի կռվում Անդրանիկի խմբի քաջագործությունների մասին»։

Ինչպես տեսնում ենք, նամակը հետաքրքիր փաստաթուղթ է և՛ իր բովանդակությամբ, և՛ թվագրությամբ. կամավորական խմբերը ռուսական զորքին միացել էին նոյեմբերի սկզբին և մի շարաթ անց մի կողմից՝ հայտնի էր կռվում աչքի ընկած Անդրանիկի անունը, մյուս կողմից՝ տարածվել էին «պրովոկացիոն» բնույթ կրող լուրեր կամավորական սինմոռնեռի մասին։

Մինչև Էջմիածնում ստացված այդ «պրովոկացիոն» լուրերը, նոյեմբերի 3-ին Բաքվի «Արև» օրաթերթը տպագրում է «Հովհ. Թումանյանի այցը հայոց դպրոց» վերնագրով թղթակցությունը, դրանով հայտնի դարձնում Թումանյանի՝ Բաքվում գտնվելու անակնկալը։ Հայտնվում է, որ բանաստեղծին դպրոցում դիմավորել են հոգաբարձության ներկայացուցիչները, բազմաթիվ աշակերտուհիներ իրենց ուսուցիչների հետ, դպրոցական երգեցիկ խումբը Անտոն Մայիլյանի ղեկավարությամբ, ողջույնի խոսք է ասել դպրոցի տեսուչը, արտասանվել են Թումանյանի ստեղծագործությունները և այլն։

Վերջում խոսել է Թումանյանը, ասելով հետևյալը. «Հայ գրողին, հայ բանաստեղծին այսօր ոգևորողը հայ դպրոցը պիտի լինի։ Ասված է՝ տղա կրթել նշանակում է մարդ կրթել և աղջիկ կրթել, նշանակում է մայր կրթել, ընտանիք կրթել։ Նա շեշտեց,— շարունակում է թղթակիցը,— որ դարերի ավերակների վրա նոր-նոր շենքեր պիտի կառուցել և մայրենի խոսքը պիտի կենդանի պահել միշտ։ Ձեր ուսուցիչները ձեզ առաջնորդում են ոչ թե երկրներ, հողեր գրավելու, այլ հոգեկան նվաճումներ անելու և լուսավորության դռները բանալու ձեր առաջ։ Հայ գրողը, հայ բանաստեղծը միշտ կոգևորվի, տեսնելով այն կառուցվածքը, որի վրա աշխատելու է սերունդը»։ Հասկանալի է, աշա-

կերտությունը դղրդալից կեցցներով է ընդունել «սրտակից բարեկամի խոսքերը»[16]։

Թումանյանի՝ Բաքվում գտնվելու լուրը Թիֆլիսում հրապարակվեց միայն նոյեմբերի 7-ին։ Նշվում էր հատկապես այն հանդիսավոր ընդունելությունը, որին արժանացել է բանաստեղծը[17]։

Բայց Բաքվում գտնվելը Թումանյանի համար նշանավորվում է նաև այլ կերպ. այստեղ է հրապարակվում «Վերջին տագնապը» բանաստեղծությունը նոյեմբերի 3-ի թվագրությամբ՝ գրված Բաքվում[18]։

Այդ ստեղծագործության՝ Բաքվում գրելու և հրապարակելու փաստը հուշում է Թումանյանի այս այցելության նպատակը։ Կարելի է ենթադրել, օրինակ, որ Թումանյանը եկել էր Բաքու հատկապես ռազմի դաշտ մեկնող կամավորական խմբերին ոգևորելու իր վարակիչ խոսքով, անձամբ նրանց լսելի դարձնելու այն բոլորը, ինչ գրում էր ու հրապարակում երեք ամիս շարունակ։ Այս բանաստեղծության մեջ ազդարարելով հնգօրյա վիշապի նոր թափով ասպարեզ գալը, ալևոր լեռների վրա և ամենուրեք ահավոր ոճիրներ ու մահ տարածելը, Թումանյանը ի հայտ է բերում մեր ժողովրդի դարավոր տառապանքը բարբարոս պետության տիրապետության տակ։

Բանաստեղծության գործող անձինք կիսամեռ տանջվողներ են, որ մարտի են ելել անձնվեր քաջ խմբերով, կռվում են «անընկճելի ու արի», ծառս են լինում մինչև լեռների ճերմակ գագաթները։ Բանաստեղծի նպատակն է ոչ միայն պատկերել տանջվողների հաղթելու և ապրելու ձգտումը, այլև հավատացնել նրանց, որ կռվում են վերջին անգամ, իսկ դրա համար անհրաժեշտ է հավաքվել՝ «Հորձանք տալով ամեն կողմից հայությանն», որովհետև նրանց դարավոր կանչերի արձագանքները տեղ են հասել, անցնելով լեռների սպիտակ գագաթներից, հասել հեռու-հեռուներ...

Ու ամպերում, բարձր ուսից Մասիսի
Սլանում է մեծ արծիվը հյուսիսի,
Շիտակ դեպի բարձունքները հայկական,
Իր հետևից հայի բախտն ու ապագան։

---

16 «Արև», Բաքու, 1914, № 173։

17 «Հորիզոն», 1914, № 248։

18 «Արև», 1914, № 175, նոյեմբ. 5 և ապա՝ նաև «Հորիզոն», 1914, № 250՝ արտատպված «Արևից» նոյեմբ. 9-ին։

Բանաստեղծի լավատեսության աղբյուրը իր ժողովրդի անկոտրում կամքն էր և ռուսական բանակի՝ այդ օրերին արդեն իրական թվացող օգնությունը։ Բանաստեղծությունը գրված է աշխարհի հեռավոր ծայրերից Կովկաս հավաքված կամավոր զինվորների՝ ռուսական բանակին միանալու նախօրյակին և այդ իմաստով այն կոչ էր, հրավեր բոլոր հայերին՝ ոչինչ չխնայել հանուն ազատության, հանուն գոյատևման (ՈՒՀ 2, 245)։

Որ իսկապես Թումանյանի Բաքու ժամանելը կապվում է կամավորական շարժման և հանդանակության գործին, ապացույց է նոյեմբերի 5-ին Բաքվից մի մեծ խմբի ուղևորվելը դեպի ռազմի դաշտ[19]։

Նույն ժամանակ՝ 1914 թ. նոյեմբերին, Թիֆլիսի «Հորիզոնի» խմբագրությունը սկիզբ է դնում թերթի գրական-գեղարվեստական հավելվածի հրատարակությանը, տպագրելով հատկապես պատերազմական թեմայով նյութեր։ Հավելվածը լույս էր տեսնում շաբաթը մեկ անգամ՝ կիրակի օրերը։ Նոյեմբերի 23-ի համարում (№ 2) հրապարակվում է Թումանյանի «Հին խոսքը» պատմական ակնարկը։

Այստեղ հեղինակը կրկին անդրադառնում է ճնշոյա վիշապին, միայն թե այս անգամ նոր սպասումները նրան տանում են դարերի խորքը։ Նա օգտագործում է բյուզանդական մի հին ավանդություն՝ համոզված, որ ավանդությունը «...ավելի լուրջ ու հաստատ բան է, քան ամեն պատմություն»։ Վերապատմելով ժողովրդական հին խոսքը, հեղինակը վերստին շարադրում է իր հայացքը պատերազմի վախճանի մասին։ Եթե այդ ըմբռնումները ժամանակի ընթերցողների համար նորություն չէին, ապա նոր էր արտահայտչական ձևը՝ բյուզանդական ավանդության օգտագործումը, որն այլ հնչեղություն էր տալիս արևմտահայ ժողովրդի ազատագրության գործում Ռուսաստանի դերի Թումանյանական հավատամքին։ Երիտթուրքերը, տխրահռչակ էնվերները ու թալեաթները, որոնք յաթաղան էին բարձրացրել ոչնչացնելու հայ ժողովրդին, ընթերցողին ներկայանում են որպես նույն անաշխատ գիշատիչները, որոնք XIII դարում փախչելով Մոնղոլիայից, Խորասանի վրայով մտել են Հայաստան ու սկսել իրենց վայրենի ասպատակությունները։ Սերնդից սերունդ ավելի կատարելագործելով

---

19 «Հորիզոն», 1914, № 252։

իրենց բարբարոսությունները 1453 թվականին նրանք գրավում են Կոստանդնուպոլիսը՝ կոչելով այն Ստամբուլ, այստեղ էլ հիմնում իրենց «բարձր դուռը» («արևելքում դուռն ու դարպասը որքան բարձր էր, ինքան էլ բարձր էր տիրոջ պատիվը»,— գրում է հեղինակը), որը դարեր շարունակ եղել է կեղեքումներ, շահագործում, թալան ու ավերում սադրողների որջ։

Այսպիսով, Բյուզանդիան իր դարավոր մշակույթով, որը սնունդ էր առել հունա-հռոմեական Հելլադայից կուլ է գնում բարբարոսներին, և Մուհամմեդ II-ը շուտով Այա-Սոֆիայի քրիստոնեական տաճարում նամազ է անում։

Բայց բյուզանդական հույները վստահ են, որ կգա մի օր, երբ այդ տաճարում նորից կսկսվի քրիստոնեական արարողությունը, և այդ կարվի Ռուսաստանի միջոցով[20]։

Հետաքրքրական է, որ նույն կարծիքին է և գերմանացի գիտնական Հ. Գելցերը իր «Համառոտություն բյուզանդական կայսրերի պատմության» աշխատության մեջ։ Ամենայն հավանականությամբ՝ Թումանյանը օգտվել է այս գրքի՝ Կ. Պոլսի ազատագրությանը վերաբերող հատվածներից։ Գելցերը այն կարծիքին է, որ եթե երբևէ Սուրբ Սոֆիան վերականգնվի որպես քրիստոնեական տաճար, այդ կարող է անել միայն ռուսական ցարը. «...Կոստանդնուպոլսի կայսրը կարող է միայն Օրթոդոքս եկեղեցու հովանավորողը՝ ռուսաց ցարը լինել, եթե նա դիտակ մնա այն լուրջ պարտավորություններին, որ կապված են այդ մեծ խնդրի հետ»[21]։

Գերմանացի պրոֆեսորը չի շարունակում իր միտքը, չի թափանցում «լուրջ պարտավորությունների» խորքը, բայց աշխատությունը գրելու ժամանակ նա պատկերացրե՞լ է, թե քաղաքակիրթ իր երկրի ղեկավարները XX դարում դաշնակցած հետամնաց Թուրքիայի հետ, կրկնելու են այն բարբարոսությունները, որոնք արվում էին XV դարում։

---

20 Մանրամասնությունները տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի» (Հասարակական գիտություններ), 1986, № 3, էջ 87—90։ Այստեղ վրիպում է թույլ տրված. ակնարկը տպագրվել է ոչ թե նոյեմբ. 16-ին այլ՝ 23-ին (№ 2), ինչպես ասվեց վերևում։

21 Հ. Գելցեր, Համառոտություն բյուզանդական կայսրերի պատմության, 1901, Վաղարշապատ (թարգմանություն Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանի), էջ 475։ Գրքի մեկ օրինակը պահպանվում է Թումանյանի անձնական գրադարանում։

Արձագանքելով Գելցերին, Թումանյանը խտացրել, միաժամանակ արդիականացրել է նրա մտքերը Կ. Պոլիսը ազատագրելու մասին, կապելով այն արևմտահայության, իր օրերի այն տրամադրությունների հետ, որով սպասվում էր Կ. Պոլսի գրավումը դաշնակիցների կողմից։ Սուրբ Սոֆիայի տաճարի ավանդությունը ռուսական բանակի առաջին հաղթանակների օրերին պետք է հնչեր որպես այդ սպասումների իրականացման սյուժեանական պատկերում։

* * *

Ազգային բյուրոյին ուղարկված Բազրատ եպիսկոպոսի նամակին անդրադառնալիս տեսանք, որ Մեսրոպ և Խորեն եպիսկոպոսների հետ ռազմաճակատ մեկնող մյուս անձնավորությունների անունները չեն հիշատակվում։ Սակայն ուրիշ աղբյուրներից պարզվում է, որ Մեսրոպ եպիսկոպոսին Թիֆլիսում միանալու էին Թումանյանը, Շիրվանզադեն, Ներսիսյան դպրոցի տեսուչ Հովսեփ Խունունցը, Թիֆլիսի Վերայի գերեզմանատան քահանա Նիկողայոս Բաշոյանը (հոգևոր երգերի լավագույն կատարմամբ հայտնի տեր Նիկոլը), իսկ Էջմիածնում Արարատյան թեմի առաջնորդ Խորեն եպիսկոպոսին ընկերակցելու էր իրավաբան Սմբատ Խաչատրյանը (1915 թվականից՝ Երևանի քաղաքագլուխ)։

Մեսրոպ եպիսկոպոսի հետ մեկնողները Թիֆլիսից դուրս են գալիս 1914-ի նոյեմբերի 15-ին։ Տեղական գրեթե բոլոր թերթերը ազդարարեցին Թումանյանի և Շիրվանզադեի ճամփորդության լուրը Էջմիածին-Իգդիր-Կարս ուղղությամբ[22]։ Բնականաբար, ռազմաճակատ մեկնելու իսկական նպատակը այդ օրերին հայտնի էր միայն պաշտոնական անձանց, ուստի մամուլը չէր կարող հրապարակել ճշմարտությունը։ «Հորիզոնը» բավարարվեց գրելով, որ խումբը մեկնել է «պատերազմի դաշտ... մեկնողներին բարի երթ մաղթեց մեծ թվով ժողովուրդ»[23]։ Բաքվի «Արևը» հայտնեց, թե խումբը Կովկասի պատերազմական թատերաբեմ է ուղևորվել «Վեհափառ կաթողիկոսի կարգադրությամբ՝ հայ զինվորներին հոգևոր մխիթարելու համար», իսկ «Մշակը», որ Թումանյանին վերաբերող հարցերում միշտ ուներ նույն դիրքը, հաղորդեց միայն կաթողիկոսի հրամանով Երևանի

22 «Հորիզոն», 1914, № 256։

23 «Արև», 1914, № 187։

և Թիֆլիսի հոգևոր առաջնորդների՝ Մեսրոպ և Խորեն սրբազանների մեկնումը ռուս-թուրքական ճակատ՝ «հայ զինվորներին այցելելու և մխիթարելու»։ Ինչպես տեսնում ենք, աշխարհիկ ուղևորների անուններ չկան. դրանք բոլորը տուժել են Թումանյանի անվան պատճառով, այլ կերպ գոնե Շիրվանզադեի և Հ. Խունունցի անունները կհայտնվեին[24]։

Արձագանքեց նաև «Տարազը»՝ քիչ ուշացած հրապարակելով Թումանյանի, Շիրվանզադեի և Նիկողայոս քահ. Բավոյանի լուսանկարը «Դրական մեր ասողները» խորագրով և այնուհետև հաղորդեց. «Ս. Էջմիածնում նոյեմբ. 17-ին առնելով օրհնություն, Իգդիրի վրայով նույն օրն էլ ճանապարհվեցին ռուս-տաճկական պատերազմ»[25]։

«Кавказское слово» թերթը նույնպես հրապարակեց երկու լուր, թե ինչպես «Էջմիածնի և Կարսի ուղղությամբ» թուրքական ռազմաճակատ են մեկնել Մեսրոպ և Խորեն եպիսկոպոսները կաթողիկոսի հանձնարարությամբ, և նրանց ուղեկցում են Հովհ. Թումանյանը, Ալ. Շիրվանզադեն և Հ. Խունունցը[26]։

Մասնախմբի ճամփորդության մասին կա երկու աղբյուր։ Մեկը՝ Թումանյանի ծոցատետրերն են, որտեղ կատարված են նշումներ, գրառումներ նոյեմբերի 17-ի գիշերվանից մինչև վերադառնալու օրը՝ 1914 թ. դեկտեմբերի 12-ը։ Մյուսը Շիրվանզադեի «Պատերազմի վայրերում» ակնարկն է։ Թումանյանի մոտ միայն նշումներ են, գրառումներ տեսածի ու լսածի մասին՝ հետագայում ճամփորդական ընդարձակ նկարագրություններ շարադրելու համար, որը, սակայն, չի արվել։ Իսկ Շիրվանզադեն իր ակնարկը գրելով 1915-ի մարտին, տպագրել է նույն թվականի աշնանը պատերազմից վնասվածներին օգնելու նպատակով Թիֆլիսում հրապարակված «Զիթենի» գրական ժողովածուի մեջ։ Նախքան ակնարկի հրապարակումը մի քանի հատվածներ տպագրվել են «Кавказское слово» թերթում իբրև ճամփորդող սեփական թղթակցի նոթեր, որոնցում քաղաքական հարցեր չեն շոշափ-

---

24 «Մշակ», 1914, № 258։ Ուշագրավ է, որ նույն թվականի դեկտ. 5-ի համարում «Հայ գրողների» քրիստոմատիայի 2-րդ հատորի լույս տեսնելու մասին հայտարարության մեջ նույնպես Թումանյանի անունը չկա. գրված է՝ կազմեցին Ղ. Աղայան, Ավ. Ահարոնյան, Վ. Փափազյան։

25 «Տարազ», 1914, № 8 (դեկտեմբեր) էջ 137։ Լուսանկարել էր «Արարատիս» խմբագիր Բարկեն վարդապետ Վարդազարյանը։

26 «Кавказское слово», 1914, № 53, 54։

վում։ Այդ նոթերը «Պատերազմի վայրերում» ակնարկի սկզբնական մասի տարբերակներն են։ Թումանյանի ծոցատետրի գրառումներից մեկը վերաբերում է հիշյալ ռուսական թերթին ուղարկվող Շիրվանզադեի նոթերին. «Հայկական հարցի մասին ինչ որ գրում է, «Кавказское сл<ово>»-ն կրճատում է կարևոր կետերը և հանում[27]։ Խմբագիրը հեռագրում է,— շարունակում է Թումանյանը,— «Все нам интересно, кроме дружинников և խմբերի մասին չի ուզում տպագրել։ Իսկ Շիրվանի հետ Դոլուխանովը ապաստում է, թե խմբերի մասին մի գրեր, որովհետև վնաս կբերի հայկական հարցին, գրգռում է ռուսներին»[28]։

Թումանյանի այս գրառումը պարզում է, թե ինչու ռուսական թերթում Շիրվանզադեի հրապարակած նոթերի մեջ քաղաքական հարցեր չեն շոշափվում։ Հեղինակը սկզբում չի գրում, թե ուր են գնում, ում հետ և ինչ նպատակով, թեպետ հետագա հատվածներում տրվում են նաև մյուս ճամփորդների անունները[29]։ Պետք է նկատել, որ «Ջիթենիում» տպագրված ակնարկում հեղինակն անհամեմատ ազատ է, քան օրաթերթում լույս տեսած թղթակցություններում, թեպետ գրաքննչական մարմիններից խուսափելու ձգտումը և որոշ քաղաքական հարցեր անտեսելը բավական բացահայտ է[30]։

Թումանյանի գրառումների մեջ տիրապետում է ազատ, անկաշկանդ, օբյեկտիվ ոճը՝ անկախ նրանից, թե ինչի մասին է խոսվում։

Թումանյանի գրառումների և Շիրվանզադեի ակնարկի թվական տվյալների մեջ տարբերությունը քիչ է։ Դուրս գալով Թիֆլիսից նոյեմբերի 15-ին գնացքով, խումբը 16-ին հասնում է Էջմիածին կայարանը, ապա մինչև Էջմիածին բնակավայրը գնում են կառքով։ Այն կառքը, ուր նստած էր Թումանյանը Մեսրոպ սրբազանի հետ, մխրճվելով ճանապարհի ցեխի մեջ, մեծ դժվարություն է ստեղծել նրանց համար, և ճանապարհի մի մասը գնացել են ոտքով։

Մեկ օրվա ընթացքում նրանք պաշտոնական հանդիպում են ունեցել կաթողիկոսի հետ, խոսել Անդրկովկասի ճանապարհը բռնած փախստականների, նրանց օգնելու, հանգանակություններ կազմակերպելու մասին։ Ծանոթացել են նոր կառուցված գրադարանին (ուր իջևանում

27 ԳԱԹ, Թֆ, № 258, թ 9—10։

28 Նույն տեղում։

29 «Кавказское слово», 1914, № 60, 62, 75, 79:

30 Նույն տեղում, № 60։

վանել էին), Վեհարանի նոր շինությանը, եղել են Թանգարանում և այլն։ Իմանալով, որ Գևորգյան ճեմարանի ուսանողներից 27 հոգի լուրջ ցանկություն ունեն կամավոր ռազմաճակատ մեկնելու, մեծ դասամիջոցին հավաքվել են դահլիճ։ Այստեղ նախ ելույթ է ունեցել Մեսրոպ եպիսկոպոսը, համոզելով նրանց, թե առայժմ ճեմարանը թողնելու գնով զինվոր դառնալու անհրաժեշտություն չկա։ Այնուհետև, ինչպես հայտնում է Բաքվի «Արև» օրաթերթի թղթակիցը, ելույթ է ունեցել Թումանյանը[31], որի խոսքը մեզ անհայտ է։ Շիրվանզադեն այդ ելույթի մասին չի գրել, բայց բանաստեղծի գրադարանում պահպանվող «Զիթենի» օրինակի այն հատվածում, որտեղ խոսվում է Գևորգյան ճեմարանի սաների հետ ունեցած հանդիպման մասին («...հաջողվեց ոգևորված պատանիներին համոզել առժամանակ թողնելու իրենց հայրենասեր որոշումը և շարունակել ուսումը») լուսանցքում անծանոթ ձեռագրով նշված է «Թումանյանի ճառը»[32]։ Հաջորդ էջերում նույն ձեռագրով արված են այլ [illegible] շակի է, որ այդ միջամտությունները արված են դիտակ մարդու ձեռքով, որովհետև մի տեղ լրացված է գնդապետ Լևանդովսկու անունը, որը Շիրվանզադեի մոտ գրված է սկզբնատառով և վերջին վանկով՝ Լ...կին ձևով (այդ օրերին մամուլում զինվորական պաշտոնյաների անունները նշվում են կամ սկզբնատառով կամ, պարզապես, տրվում է պաշտոնը. նույնիսկ Անդրանիկի մասին գրվում էր «Հայ կամավորական խմբի զինավար Ս.»)։

Ստանալով համապատասխան հրահանգներ կաթողիկոսից, խումբը Էջմիածնից կառքերով մեկնում է Իգդիր, որից հետո Կարսի վրայով պետք է անցներ Բայազետի շրջանը, Ալաշկերտի հովիտը, ապա Բասեն—Դելիբաբա—Խորասան—Զիվին[33]։ Թումանյանի գրառումներից իմանում ենք, որ Էջմիածնից մեկնել են գիշերը, գիշերով էլ հասել Իգդիր (ըստ Շիրվանզադեի՝ ճանապարհը տևել է 7 ժամ)։ Առաջին իսկ տողերից չենք կարող ենթադրություններ անել Թումանյանի բոլոր գրառումների ենթարնագրերը մեկնելու համար։ Ինչպես երևում է, Էջմիածնի կայարանում խումբը պատահել է բժիշկների, որոնց մասին Թումանյանը լրացումներ պետք է աներ։ Հաջորդ տողում քրդերի մա-

---

31 «Кавказское слово», 1914, № 60, «Արև», 1914, № 194:

32 Տե՛ս «Զիթենի», էջ 8 (Թումանյանի անձնական գրադարանի օրինակը)։ Այստեղ չի տրվում նաև Մեսրոպ եպիսկոպոսի անունը։

33 Նույն տեղում, էջ 4։

սին գրում է. «...մերը մաքուր ու հարուստ, նրանցը աղքատ ու նիհար»։ Ըստ երևույթին, խումբը հանգստացել է «միանգամայն մերկ և դատարկ տներում»[34]։ Պարզ է, որ բնակիչները ցրվել են այս ու այնտեղ պատերազմական գործողությունների պատճառով։

Բդդիրում հանձնախումբը մնացել է երկու գիշեր, իջևանել մի վաճառականի տանը։ Այստեղ նրանց այցելել են տեղական մտավորականները, հաղորդելով հետաքրքրական նորություններ ռուսական բանակի հաղթանակների և սահմանամերձ հայերի ծանր կացության մասին։ Նոյեմբերի 19-ին խումբը տեղեկանում է, որ երկարատև ճակատամարտից հետո Անդրանիկը գրավել է Ղոթուրը։

Շարունակելով ճանապարհը, նույն օրը երեկոյան հասնում են ռուսական վերջին կայարանը՝ Օրդով։

Այդ մասին Թումանյանը գրում է. «Օրդովի պատմությունն ու քննությունը»։ Ըստ երևույթին, այստեղ ինչ-որ լուրջ խոսակցություն է եղել կամավորների մասին, բայց Թումանյանը չի շարունակել։ Շիրվանզադեն նույնպես այդ մասին ոչինչ չի գրում։ Նոյեմբերի 20-ին, երբ խումբը հասել էր Արծափ, Թումանյանը գրում է իր առաջին երկտողը ընտանիքին. «Երեկ դուրս եկանք Բդդիրից, ընկանք մեծ ճահիճների մեջ (Մասիսի թաքթաքուտները), էսօր կեսօրին Ջինգիլի նշանավոր լեռնանցքը անցանք, և մեր առջև բացվեց հին Բայազետի հովիտն ու քաղաքը և Մասիսը Տաճկաստանի կողմից»[35]։

Թումանյանի գրառումներից կարելի է կռահել, որ խառն է դրությունը քուրդ և հայ բնակչության միջև, որ Ռուսաստանի պաշտոնական անձինք հակված են ավելի շատ դեպի քրդերը, քան՝ հայերը. «Քրդերի ցույցմունքով են շարժվել»,— գրում է հեղինակը, թեպետ «նույն քրդերը միացել են ու ջարդել են ռուսներին», «Աբացևը,— շարունակում է նա,— շատ քրդերի записка-ներ է տվել, որ առաջնորդելու են իրենց», այդ записка-ները քրդերի գրպաններից հանել են կազակները։ Գրելով այդ մասին, Թումանյանը եզրակացնում է. «Աբացևը հայատյաց է»[36]։ Նշումների սկզբում գրված մեկ տողը՝ «ինչո՞ւ է Օսը գլխավոր զորքի մեջ», վերաբերում է Աբացևին, որը ծագումով մահմեդական էր։

---

34 ԳԱԹ, Թֆ, № 258, թ 1։

35 Երկտողը տպագրվել է՝ «Գրական թերթ», 1979, № 7։

36 ԳԱԹ, Թֆ, № 258, թ 4—5։

Դեռ Իգդիրում խումբը երկու անգամ հանդիպել է գեներալ Օգանովսկուն և զրուցել նրա հետ՝ զորաբանակի շտաբի գլխավոր գեներալ Լյախովի ներկայությամբ (այս ազգանունը լրացվում է Թումանյանի ծոցատետրի միջոցով)։ Հանձնախմբի նպատակն էր՝ պարզել ճշմարտությունը կամավոր ռազմի դաշտ մեկնած հայ մարտիկների մասին, ուստի բնական է, որ զինվորական այդ պաշտոնյաների հետ զրույցը ընթանար այդ ուղղությամբ։ Օգանովսկին, առաջնությունը տալով ռուս զինվորներին, կամավորների մասին արտահայտվել է բավական զուսպ, միաժամանակ գնահատելով նրանց որոշ առավելություններ. «Նրանք ևս ունեն իրենց դերը... այդ դերն է գլխավորապես երկրի հետազոտությունը և թշնամու դիրքերի որոշումը... նրանք ճանաչում են թշնամի երկրի բոլոր անկյունները։ Գիտեն լեզուն, ծանոթ են տեղական պայմաններին»։ Ինչպես տեսնում ենք, խոսք չկա նրանց անձնուրաց կռվի, ռուսական բանակի նկատմամբ ունեցած նվիրվածության մասին։

Օգանովսկին հատկապես գնահատել է Անդրանիկի դերը, կանխավ նրա հետ կապելով Վանի ապագա գրավումը։ Գեներալ Լյախովը, որն, ինչպես ասացինք, ներկա էր խոսակցությանը, դժկամությամբ է ընդունել Օգանովսկու դրական գնահատականները, որոշակի ցույց տալով իր տարակուսանքը պաշտոնական խոստովանությունների միջոցին[37]։ Թումանյանը ավելացնում է, որ Լյախովը Թեհրանից է, հայատյաց։

Հայ կամավորների նկատմամբ ցարական զորավարների ունեցած վատ վերաբերմունքի մասին Թումանյանը անում է այլևայլ նշումներ։ Օրինակ, Արմենն Գարոյի խմբի մասին գրում է, որ նրանք ժամանակին հագուստ չստանալով, մոտ 50 հոգի հիվանդացել են, թողել ռազմաճակատը և գնացել իրենց գյուղերը[38]։ Ինչ վերաբերում է Թալանին, որի մասին խոսել է Լյախովը Օրդուվում, հետո պարզվել է հետևյալը. Դրոյի և Խեչոյի կամավորական խմբերը քրդական Շամշադինով գյուղում ցուրտ, անձրևոտ մի գիշեր այլ ելք չտեսնելով, փորձել են գիշերել քրդերի տանը, բայց տանտերերը չեն ընդունել նրանց։ Այնուամենայնիվ, հայերին հաջողվել է գիշերել։ Առավոտյան քրդերը կերակրել, հարգանքով ճանապարհել են իրենց հայ հյուրերին, իհարկե, նախօրոք ստանալով դրամական հատուցում, «բայց հետո,— գրում է Թուման-

---

37 «Զիթենի», էջ 10։

38 ԳԱԹ, ԹՖ, Ա։ 258, թ 3։

յանը,— դիմում են բողոքով պրիստավին, արձանագրություն են կազմել տալիս ու գործ սկսում, թե հայ դրուժինան եկավ՝ ջարդեցին, թալանեցին, տարան»։ Այդ մասին էլ հեռագրել են Թիֆլիս՝ փոխարքային։ Թեպետ, ինչպես վկայում է Թումանյանը, նշանակվել է քննություն, բայց այն կատարվել է միակողմանի, վկայություն տվել են միայն քրդերը և տեղի ստրաժնիկը, որը կաշառված է եղել[39]։ Թումանյանի տված այս տեղեկությունները արդեն պարզում են Թիֆլիսում և Էջմիածնում ստացված «Պրովոկացիայի» աղբյուրը։ Հետաքրքիր է նրա մի դրառումը թալանի մասին.«Քրդերը հայերին թալանել են նախքան ռուսների գալը։ Անցել է մի ամիս, այժմ, երբ հայը գնում է իր ապրանքը վերադարձնում, գալիս են գանգատվում, թե հայերը մեզ թալանեցին։ Իսկ հայերը սրան առանձին նշանակություն չեն տալիս, մինչդեռ սրանով տրամադրություն է ստեղծվում»[40]։

Երկրորդ հանդիպումը, որ եղել է գեներալ Օղանովսկու փոխայցելությամբ, ավելի մտերմական էր։ Գեներալը նույնիսկ չի թաքցրել, թե անվեղծորեն համակրում է հայերին. «...Կփափագեի,— ասել է նա,— որ այս անգամ ձեր թրքահայ եղբայրների խնդիրը վերջապես լուծվեր», իսկ այնուհետև՝ «Գիտե՞ք, իմ արյան մեջ էլ մի քիչ «Կարապետ» կա»[41]։ Ահա դաղտնիքը համեմատաբար դրական վերաբերմունքի։

Դեռ Արծափ չհասած նոյեմբերի 20-ի ցերեկը (ժամանակները մեծ մասամբ տրվում են մոտավորապես, Թումանյանի նշումները և Շիրվանզադեի ակնարկի թվական տվյալները համեմատելով) ստացվում է շտապ հեռագիր, որով Մեսրոպ եպիսկոպոսին կարգադրվում էր ետ վերադառնալ՝ Նիկոլայ կայսեր Թիֆլիս ժամանելու կապակցությամբ (նման կարևոր իրադարձությունների ժամանակ Մեսրոպ եպիսկոպոսը, լինելով կրթված, լեզուների, հատկապես ռուսերենի քաջ գիտակ, միշտ փնտրված անձնավորություն էր, թարգմանիչը կաթողիկոսների հանդիպումների, պաշտոնական ընդունելությունների ժամանակ)։ Չնայած դրան, սրբազանը խմբին ուղեկցում է մինչև Բայազետ, ապա ինչպես գրում է Թումանյանը, նոյեմբերի 23-ին վերադառնում Թիֆլիս։ Օգտվելով առիթից, Շիրվանզադեն սրբազանի հետ ուղարկում է վերևում հիշված իր ճամփորդական նոթերը «Кавказское слово» թերթում տպագրելու համար։

---

39 Նույն տեղում, թ 10, 11։

40 Նույն տեղում, թ 22։

41 «Զիթենի», էջ 10։

Ըստ Շիրվանզադեի, նոյեմբերի 21-ին Բայազետում հանձնախումբը արժանանում է գեներալ-նահանգապետի ընդունելությանը, որին ներկա էր նախկին հյուպատոս Ա.-ն, գեներալի քաղաքացիական գծով օգնականը։ Նահանգապետը թեպետ ակնարկում է, որ հայերը նեղում են քրդերին, այնուամենայնիվ, ի վերջո ասում է. «Համենայն դեպս կարող եք հավատալ, որ ես Ձեր տառապյալ հայրենակիցներին անպաշտպան չեմ թողնիլ», ավելացնելով նաև, որ թուրքի կամ քրդի ձեռքը միայն իր դիակի վրայով կարող է բարձրանալ նրանց վրա։ «Սխալներ իմ կողմից հնարավոր են,— ասում է նա,— բայց վատ վերաբերմունք՝ երբեք»։

Գեներալ Դ-ն գժգոհել է, որ տեղական լեզուները չհասկանալու պատճառով իրենք հաճախ չեն տարբերում մեղավորին արդարից։ Խմբի այն պնդմանը, թե «...մինչև այժմ հալածվողը հայն է եղել», գեներալը պատասխանել է.

«—Մինչև այժմ այո՛, բայց այժմ հայերն են սկսել նեղել քրդերին ... Այո, զոնե ինձ այդպես են զեկուցանում, մի խոսքով կենդրոնի ձեղ, սրբազան հայրեր և դուք պարոններ, որ ձեր հայրենակիցներին հասկացնեք, թե այսուհետև այս երկրում գործելու է օրենքը և ո՛չ բռնությունը»[42]։

Ընդ սմին ավելացնենք, որ Թումանյանը նշում է նահանգապետի անունը լրիվ՝ գեներալ Բայազին, և ավելացնում, որ ծնվել է Երևանում և միշտ ծառայել է հայերի մեջ, ու մի քանի խոսքով պատմում Մեսրոպ եպիսկոպոսի հետ ունեցած նրա զրույցը, դրանով լրացնում Շիրվանզադեի խոսքը. «Մեսրոպ եպիսկոպոսը շատ բաց ու լավ տարավ խոսակցությունը—բացատրեց ավտոնոմիայի խնդիրը, խոսեց էն մասին, որ էդ ամենը վերևից է, ներքև շատերը չեն իմանում»։ Այնուհետև եպիսկոպոսը բարձրացրել է դրավված բնակավայրերում հայերին զինաթափելու հարցը և խոսել դրա վատ հետևանքների մասին, իսկ նահանգապետը պատասխանել է, որ այդ որոշումը վերաբերում է միայն քրդերին, որոնք գարնանը ռուսների համար սպառնալիք են։ Ինչ վերաբերում է հայերին, նա բացատրել է նաև հայերի տները խուզարկելու պատճառը. թուրքերը և քրդերը նահանջելիս, իբրև թե, իրենց զենքերը պահ են տվել հայերին, վերադառնալիս ետ վերցնելու նպատակով, այդ մասին գաղտնի հայտնել են հայերը՝ իրենք և առիթ տվել

---

42 «Զիթենի», էջ 37։

Անդրանիկ Օզանյան

ԼՍԳԿ.ՔԱՌ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐՍԳՔՐԱՏՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

խուզարկություն։ Նահանգապետը հայտնել է դժվարությունների նույն պատճառը, որ շատ թյուրիմացություններ առաջանում են լեզուն և սովորությունները չիմանալուց։ Այդ կապակցությամբ ասենք, որ Թումանյանը որոշակի առաջարկներ ունի, որով պետք է դիմեր պաշտոնական անձանց էջմիածնում կամ Ազգային բյուրոյին. օրինակ. «Ուսանողներին և ինտելիգենտ մարդիկ տեղավորել տիրած տեղերում, որ և հարաբերություն պահեն, և .... (անավարտ է—Լ. Կ.)։ Կամ՝ «Որոշ տեղեր փոքրիկ գյուղեր և գաղութներ հիմնել», «Ինտելիգենտ, ազնիվ մարդիկ պետք է ուղարկել շտաբների և հրամանատարության մոտ մնան և միշտ... առաջն առնեն թյուրիմացությունների»[43]։

Բայազետի ավերված եկեղեցում Մեսրոպ եպիսկոպոսի նախաձեռնությամբ կազմակերպվում է հանդիսավոր ժամերգություն։ Ռուսական զորքերի մուտքից հետո դա առաջին պաշտոնական արարողությունն էր, որ եկեղեցի էր հավաքել բավական հասարակություն։ Եպիսկոպոսի քարոզը համոզում էր համբերող լինել, տանել ամեն դժվարություն, որ բերում է պատերազմը։ Ներկաները, ծնկաչոք ու արտասուքով էին լսում ժամերգությունը, պատրաստակամություն հայտնում դիմանալ, համբերությամբ տանել ամեն զոհողություն, միայն թե ռուսները չթողնեն իրենց[44]։

Բայազետի այս եկեղեցական արարողությունը մի քիչ այլ կերպ է նկարագրված Շիրվանզադեի ակնարկի՝ «Ջիթենիի» տարբերակում։ Այստեղ մաղթանքի խոսք է ասում Խորեն եպիսկոպոսը, այնուհետև հեղինակը չի հիշում՝ Սմբատ Խաչատրյա՞ն է խոսել, թե՞ Թումանյանը կամ գուցե երկուսն էլ։ Գրչակից ընկերոջ խոսքի նկատմամբ այս տարօրինակ անփութությանը հետևում է Շիրվանզադեի մտորումը, ըստ որի՝ նույնիսկ ավելորդ էր խոսելը Բայազետի եկեղեցում. «Եվ ի՞նչ պետք է ասել հոգեսպառ և արյունաքամ ժողովրդին, որին մի բան կարող է օգնել—ուժը, որ չունենք»։ Կամ՝ «Վերջապես այն, ինչ որ կարելի է ասել, ասում է հոգևորականը...»։ Իհարկե, Շիրվանզադեն իրավացի չէր. ժողովուրդը մեծ սպասելիքներ ուներ և հոգևոր գործիչներից, և Արևելյան Հայաստանից եկող ամեն մեկից։ Էլ չենք ասում, որ Թումանյանի խոսքը, որ երբեք ավելորդ չի եղել, այդտեղ՝ Բայազետում պետք է ունենար մի հատուկ հնչեղություն։ Մնում է ցավել, որ

---

43 ԳԱԹ, Թֆ, № 258, թ 24։

44 «Кавказское слово», 1914, № 75:



Թումանյանը էջմիածնի որբերի և բուժ անձնակազմի հետ (1915, օգոստոս)։

Շիրվանզադեն անուշադրության է մատնել այն, իսկ Թումանյանն այդ մասին ոչ մի խոսք չի թողել։

Այդ ժամերգության միջոցին մեծ տպավորություն է թողել տեր Նիկողայոսի երգը, որի մասին Շիրվանզադեն խոսում է մեծագույն հիացմունքով. «Լավ կլիներ, եթե նույնիսկ ոչ ոք չխոսեր և թույլ տվեր այդ խեղճ ժողովրդին ավելի երկար ժամանակ լսելու տեր-Նիկոլի հուզիչ երգեցողությունը։ Ահ, նրա մաքուր տենորի յուրաքանչյուր հնչյունը թափանցում էր այդ ողորմելի տառապյալների հոգին և արտասուք կորզում նրանց ցամաքած աչքերից։ Եվ ինչպես հիացած են օտարազգի զինվորներն ու զինվորականները, որպիսի՞ երկյուղածությամբ են լսում արևելյան եկեղեցու հնադարյան մեղեդին, որ այնքան սազում է այդ մռայլ, արյունաշաղախ պատերին»[45]։

Հետևելով Բայազետի մասին Թումանյանի գրառումներին և, ընդհանրապես, ամբողջ ծոցատետրին, տեսնում ենք, որ նա մտահոգված է եղել ժողովրդի (և՛ հայերի, և՛ քրդերի) ապրելակերպի, կենցաղի, գենքերի, կենդանի մնացած կամ ոչնչացած մարդկանց, պատմական անցյալի մասին վիճակագրական տեղեկություններ հավաքելով։ Հետաքրքրքրական է հետևյալ ավանդությունը. «Բայազետի բերդը շինել է Ավետիս անունով վարպետը։ Շինելուց հետո աջ կուռը կտրում են, որ էլ նրա նմանը չշինի։ Եվ հիրավի, սքանչելի շինություն է. մի արևելյան գեղեցկուհի, որի հետ կապված են էնքան աղետալի պատմություններ, որի ամեն կողմից էնքան գնդակների, ռումբերի հետքերը մնում են ընդմիշտ»։ Այս խոսքերին հաջորդում է հետևյալ նշումը. «Խենթի վտակն ու աղբյուրը». ըստ երևույթին, այս տողի տակ թաքնված է ինչ-որ հետաքրքիր ավանդություն Բաֆֆու «Խենթ» վեպի հերոսի մասին[46]։

Անդրադառնալով Բայազետից վերև գտնվող ավերակներին, Թումանյանը գրում է, որ դա ուրարտական շրջանի շենք է և ավտոսանքով ավելացնում, թե մի դարի ընթացքում ոմի անգամ ավերվել է. Զաչան օղլի, Թամուր փաշա, Վանա Թամուր աղեն, Մակվա Նադիր շահը, Բեհբութովը, 1877-ին Տեր-Ղուկասովը, 1914-ին էլ և այլն[47]։

Ճանապարհին ամենուրեք տեսել են ավերակ գյուղեր, որտեղից հայերը գաղթել են 1829, 1878, 1895 թթ.։ Հայկական հին գյուղերից

45 «Զիթենի», էջ 38—39։

46 ԳԱԹ, Թֆ, № 258, թ 28։

47 Նույն տեղում, թ 34։

շատերը բնակեցված են քրդերով, միայն կողքներին գտնվող գերեզմանները ապացույց են, որ այդտեղ երբեք ապրել են հայեր։

Ահա մի ավանդություն ևս։ Գյուլիսոր (Մաղկոց) գյուղի կողքին հին կամուրջի մնացորդներ կան. այդտեղ Եփրատ (Մուրադ) գետը ընթացքը փոխել է, իսկ կամուրջը մնացել է անօգտագործելի։ Ավանդությունը պատմում է. «Էս կամուրջը հայերն են շինել։ Եվ էն օրվանից, որ հայերը հեռացան Մաղկոցից, Եփրատն էլ իր ընթացքը փոխեց, կամուրջը թողել հեռվից է անցնում»[48]։

Ջիրո հայկական գյուղում հանդիպում են հայ ու քուրդ բնակիչներ. ընդամենը 12 տուն հայեր են, 60 տուն քրդեր։ Մոտիկ հայկական գյուղերում մնացած հայերը գալիս են հանձնախումբը իրենց մոտ հրավիրելու և անմիջապես սկսում են շարական երգել («Թագավոր փառաց»)։ Հանձնախումբը գնում է մտնում երեք անգամ թալանված մի եկեղեցի, որտեղ մնացել էր միայն Աստվածածինը՝ Հիսուսը գրկին։ Ամեն ինչ կորցրած թշվառ այդ գյուղացու հետ զրուցել են Թումանյանը, Խորեն եպիսկոպոսը, Սմբատ Խաչատրյանը. «Ավետիս տվինք, որ արդեն անցել են հին նեղությունները, հուսադրեցինք, որ նորերն էլ՝ պատերազմի ժամանակ է, անցավոր նեղություններ են, շուտով կանցնի»։ Ողորմելի է ժողովուրդը, պատրաստ ամեն նեղության դիմանալու, բայց պատմել են, որ եկեղեցու արծաթ սկիհը, որ պահել էին մի տան մեջ, «էն էլ ռուս կազակ<ներն> էին հանել, տարել չորս հացով ծախել»։ Զարմանալի հուզիչ է եղել այս գյուղի հետ հանդիպումը։ Թումանյանի շարադրանքից նկատելի է, որ այդ միջոցին իրենք էլ հույս չեն ունեցել լավ օրերի. «Եվ չորս հոգով,— գրում է Թումանյանը,— Խորեն եպիսկոպոսը՝ եկեղեցու ներկ<այացուցիչ>, Խունունցը՝ դպրոցի ներկ<այացուցիչ>, Սմբատը՝ հին գործ<իչ>, դաշնակցության ներկայացուցիչ և ես՝ գրականության—նրանց առջև կանգնած հույս էինք տալիս, որ նեղ օրերին լեն օրեր կգան, էրած գրքերի հետ նորերը կունենան, կիսավեր թալանված եկեղ<եցու> տեղ հոյակապն ու նորը կկանգնի, նրա կողքին էլ դպրոց կունենան»[49]։

Թումանյանը ելույթ է ունենում նաև Յոնջալու, Ղազի գյուղերում ու վերստին հուսադրում նրանց։ Շարունակելով խոսքը այդ հանդիպման մասին (Շիրվանզադեն չի մասնակցել՝ հոգնածությունը պատճառաբանելով), Թումանյանը գրում է. «Սաստիկ հուզիչ էր էս գյուղում ու էս

48 Նույն տեղում, թ 49։

49 Նույն տեղում, թ 52—53։

եկեղեցում, և չոքեցինք կիսավեր եկեղեցում, կիսամերկ ժողովրդի հետ, թալանված սեղանի առջև ու թալանված քահանաները սկսեցին երգել— «Ապավինեցաք ի խաչ քո Քրիստոս...»։

Ամենքիս էլ թվաց, թե առաջին անգամ եղանք թուրքահայ գյուղում և խորապես զգացինք էն ամենը, որ զգացել էինք մինչև էդ ժամանակները»[50]։

Մեջբերումից երևում է, որ անջնջելի տպավորություն են թողել այդ տեսարանները բանաստեղծի վրա, հատկապես, բնակչության ըստացած վնասները։ Թումանյանը նշում է միայն փաստերը, մեկնաբանությունները թողնելով հետագային։

Այդ աղքատ, կիսամերկ հայ գյուղացիներին հանդիպելիս Թումանյանի ուշադրությունը գրավել են կանայք. «Կանայք վշտոտ դեմք ունեն, բայց գեղեցիկները շատ են. նոր է պարզվում ինձ համար, թե ինչու նուրբ մորթ ունի էստեղից դաղթած Ախալցխայի կինը»[51]։ Ծոցատեսրի դեկտեմբերի 12-ի գրառումներից մեկը դարձյալ վերաբերում է հայ կանանց. «Ռուսական Բասենում հայ կանայք սուգ են պահում պատերազմի առիթով, բոլոր զարդերը թողած, սև հագած, ուրախության վերջ»[52]։ Ավերված երկիրը, տղամարդկանց կորուստը, բռնաբարությունները ու վայրենությունները, չէին կարող այլ կերպ արտահայտել հայ կանայք։

Նոյեմբերի 25-ին (Շիրվանզադեն գրում է՝ 28-ին) խումբը հասնում է Ղարաքիլիսա, որտեղ նրանց այցի է գալիս մահմեդական ծագում ունեցող զեներալ Աբացևը և գանգատվում հայ բնակչությունից։ Շիրվանզադեն գրում է, որ դա առաջին բացահայտ գանգատն էր։ Սկեղեցում հավաքված հայ բնակչության առջև դարձյալ ելույթ են ունենում խորեն եպիսկոպոսը, Թումանյանը և Սմբատ Խաչատրյանը։ Աբացևը խոսում է նաև կամավորների թալանի մասին և ամեն առիթով արդարացնում քրդերին ու թուրքերին, միաժամանակ փորձում է հավատացնել հանձնախմբին, իբրև թե, իրենք հատուկ հրաման ունեն, «որ հայերին առանձնապես հովանավորենք և զենք տանք»։ Գեներալ Աբացևը հանձնախմբին ամեն կերպ հավատացնում էր, թե կամավորական խումբը «առաջին դիրքերում չի, մինչդեռ Արմեն Գարոն հանձ-

---

50 Նույն տեղում, թ 53—54։

51 Նույն տեղում, թ 56։

52 Նույն տեղում, թ 135։

նախմբին ուղղած իր նամակում գրել էր, որ «Աբացեր կողմնապահ վերաբերմունք ունի և հարած է քրդական քաղաքականության»։ Իսկ Խաչելու գյուղի ներկայացուցիչները պատմել են, թե նույն Աբացեր գրավոր թույլատրել է քրդերին՝ «հայերին կոտորեն ու գյուղերը քանդեն»[53]։

Հայերի տանջանքը կրկնակի էր. նրանց հարստահարում էին ոչ միայն տեղացի քրդերը, նահանջող թուրքերը, այլև կազակները։

Թումանյանն իր դրառումներում հատկապես նշում է կանանց նկատմամբ եղած վայրենի վերաբերմունքը՝ բռնաբարում են ոչ միայն թուրքերը նահանջելուց առաջ, այլև կազակները։

Ըստ Շիրվանզադեի, Ղարաքիլիսայում խումբը արդեն որոշակի պահանջում է հնարավորություն ստեղծել Դուգախ գնալու՝ հայ կռվողներին հանդիպելու համար։ Աբացեր մերժում է, պատճառաբանելով, թե հետևերը հոգևորականներ կան, որոնք կարող են գերի ընկնել, իսկ դա «խայտառակություն» կլինի իրենց՝ զինվորականների համար։ «Մենք հասկացանք գեներալի հետին միտքը։ Նա չէր ուզում, որ մենք հանդիպենք կամավորներին»,— գրում է Շիրվանզադեն։ Այնուհետև նրանք առաջարկում են գնալ Դայար՝ նույն նպատակով, բայց գեներալը այստեղ էլ տալիս է երկդիմի պատասխան. «թույլատրելով» հանդերձ, հրաժարվում է երաշխավորել նրանց կյանքի ապահովությունը։

Նոյեմբերի 28-ին խումբը գնում է Ալաշկերտ (Շիրվանզադեն գրում է՝ 30-ին, բայց ճիշտը Թումանյանինն է, որովհետև Ալաշկերտում արված նշումները սկսվում են 29-ից)։ Այստեղ հանդիպում են մի կազակ պարեսի, որը դրական վերաբերմունք ուներ հայ կամավորների նկատմամբ, ընդգծում էր նրանց առավելությունները «մանավանդ երկրին ծանոթ լինելու, լեզվի, սովորությունների և գյուղերի ու տների տեղադրությունն» իմանալու իմաստով։ Մինչդեռ Աբացեր հանձնախմբին աշխատում էր հավատացնել, թե կամավորական խումբը գնում է [illegible]ական զորքի հետևից։

Շիրվանզադեի մոտ բացահայտ գանգատներ կան, որ ժողովուրդը թալանվում է ոչ միայն քրդից ու թուրքից, այլև կազակներից, թեպետ գանգատվելուց հետո էլ դժգոհությունը քողարկել են։

«—Ջանում, կազակ ինչ կուզե թող ընե մեզի, միայն թե մեր երկրին չերթա։ Մենք զոհ կըլլանք գարու հացով ալ»[54]։

---

53 Նույն տեղում, թ 89։

54 «Ձիթենի», էջ 41—42։ Գանգատը, ինչպես տեսանք, մի քիչ այլ կերպ է համփորդական նոթերում («Кавказское слово», 1914, № 75)։

Թումանյանի ծոցատետրերում տողեր կան, որտեղ բացարձակորեն խոսվում է բանակի կողմից հայերի կրած հալածանքների մասին։ Վերևում բերված օրինակներին ավելացնենք հետևյալը. Ղազի գյուղում բնակչությունը գժգոհում է ռուսական զորքից. «Մենք ճամփի վրա ենք, ոտի տակ ենք։ Ինչ որ թալանեցին, ինչ որ ուղեցին տվինք, էլ ոչինչ չունենք, ուզում են, լեզու էլ չգիտենք, որ հասկացնենք, մեղի կզարկեն»[55]։

Եթե ռուսները թուրքերի մզկիթները դարձնում էին դոմեր, ապա դրա փոխարեն թուրքերը «ոչ միայն ձիանքը ներս էին քաշել եկեղեցի, այլև կողոպտել ու էրել, Քրիստոսի աչքերին հրացանով նշան բռնել»[56]։

«Ոմանք իրենց երեխանց սովորեցրել են՝ Ей богу, нет», բայց այդ չի խանգարել, որ կազակները մտնեն հայերի տները, խուզարկեն, եղած զենքերը, ոսկի ու արծաթե զարդերը վերցնեն։ Արղահանի գեներալ-նահանգապետը պատմել է, որ կազակները թալանում են նաև այդ կողմերում ապրող մալականներին[57]։ Բազմաթիվ նման օրինակներ ապացուցում են, որ ռուսական բանակը ապահովված չի եղել սնունդամթերքով ու ռազմական պաշարներով։ Թումանյանը պատմում է նաև, թե ինչպես կազակները եկեղեցուց երկու սկիհ էին տարել և վաճառել էժան դներով. հանձնախումբը գնել է մի քանի անգամ ավել վճարելով ու վերադարձրել կաթոլիկ եկեղեցուն[58]։

Ինչպես Շիրվանզադեի ակնարկից, այնպես էլ Թումանյանի գրառումներից երևում է, որ Ռուսաստանի օգնությանը երկար ժամանակ սպասող հայերը արդեն հուսախաբված էին, բայց միաժամանակ իրենց միակ հույսը կապում էին ռուսական բանակի հետ իբրև շարյաց փոքրագույն։

Վերևում տեսանք, թե ինչպես թալանված, աղքատության մեջ տառապող գյուղացիների և հանձնախմբի ներկայությամբ քահանաները երդում էին «Ապավինեցանք ի խաչ քո»։ Բայց խաչին ապավինելուց բացի, կային նաև լավատես մարդիկ, որոնք աղոթում էին, որ «ռուսը չերթա մեզնե... որ նա գրավի մեր երկիրը ու նստի»[59]։

---

55 ԳԱԹ, Թֆ, № 258, թ 56։

56 Նույն տեղում, թ 119։

57 Նույն տեղում, թ 133։

58 Նույն տեղում, թ 101, 115, 130։

59 «Զիթենի», էջ 29։

Նոյեմբերի 29-ին անցնում են նաև Խաստուր (Խազմիր) գյուղով, որտեղ այցելում են լուսավորչական և կաթոլիկ եկեղեցիներ։ Այստեղ Թումանյանը նկատել է. «էս ամբողջ գյուղը գրագետ է առանց բացառության»։ Նույն օրը Զեյդեքանում (Զեյտական կամ Զեյտիքան) նույնպես բանաստեղծի ուշադրությունը գրավում է բնակիչների «...ուսահայերից ավելի ինտելիգենտ» լինելը։ Հանդիպում է պատանիների, երիտասարդների, որոնք դիտեին, ծանոթ էին իր ստեղծագործություններին, «Մի քանի տեղ խնդրեցին, որ իրենց հիշատակ թողնեմ»,— գրում է նա։ Եղել են այնպիսիները, որ ցույց են տվել իրենց ունեցած Թումանյանի հրատարակությունները։ Շփվելով հանձնախմբին, գրուցելով հետները, լսելով նրանց խոսքը, «կանայք ուրախությունից լաց էին լինում. մեր անցնելու ժամանակ,— «Ախ, ձեր ոտին մեռնեմ», ասել է մեկը[60]։

Այդ ավերածությունների ու թշվառության մեջ Թումանյանը ժամանակ ու հնարավորություն է գտել Զեյդեքանում պատմել տալ ու գրի առնել «Հազարան բլբուլի» մի տարբերակը գյուղացի Սերոբ Մարգարյանից։ Այնուհետև Ավետիս Կարապետյանը պատմել է Սինամ թագավորի հեքիաթը. ժամանակ չունենալու պատճառով տեղ-տեղ պարզապես նշումներ է արել[61] (երկու պատմողներն էլ հեքիաթը լսել են Կարսում)։

Դեկտեմբերի 1-ին տեղեկություն են ստանում, որ չեն կարող ճանապարհը շարունակել, որովհետև Դահարում, Խաչբլուում շատ քրդեր կան, խումբը դեպի Բաշքյոյ գնալու հնարավորություն չունի։ Ուստի անմիջապես վերադառնում են Ղարաքիլիսա։ Այստեղ ևս Աբացևը ցույց է տալիս իր միտումնավոր վերաբերմունքը՝ արգելել հանձնախմբի և զորքի հանդիպումը։ Աբացևը և մյուս գեներալները նույնիսկ կամեցել են խումբը բաժանել երկու մասի և առաջարկել ձմեռելու մոտիկ գյուղերում, մինչդեռ հանձնախումբը որոշել է «վերադառնալ Այաշկերտի դաշտը՝ կազմակերպել և ТЫЛ-ը մաքրել»[62]։

Ղարաքիլիսայում Արմեն Գարոյի և Արտաշես Մելքոնյանի հետ ունեցած զրույցից պարզվել է, որ ուսանողները հրաժարվում են մնալ գյուղերում, աշխատել որպես թարգմանիչ և միջնորդ դառնալ ժողովրդի և իշխանության միջև, որովհետև նրանց նպատակը ռազմի դաշտ

---

60 ԳԱԹ, ԹՖ, № 258, թ 90—91։

61 Նույն տեղում, թ 94—100, 102—113։

62 Նույն տեղում, թ 117։

մեկնելն է։ Արևմտյան Հայաստանում տեսած ավերածությունները չէին կարող ուսանողների մեջ այդպիսի ձգտում չառաջացնել։

Դեկտեմբերի 2-ին հասնում են Թաղլիչայ, 3-ին Մուսուն, ապա Օրդով։

Դեկտեմբերի 4-ին խումբն արդեն Իգդիրում էր, առանց հանդիպելու կամավորական խմբերի։

Կարևոր է Իգդիրում կատարված հետևյալ դրառումը. «Մի քուրդ եկել է հայտնել՝ թե էդ թալանված իրերը, որ ասում են, թե հայ կամավորներն են տարել, գտնվում է էսինչ քրդի տանը, մյուս մասն էլ՝ էնինչ, գնում են գտնում»[63]։ Այստեղ հանդիպելով Օգանովսկուն հանձնախումբը իմացել է, որ նրան կարգադրություն է արվել օրյակտիվ տեղեկագիր ներկայացնել թալանի մասին։ Գրված է եղել, թե բնակիչները թալանված ապրանք են գտել. բայց զրույցի ժամանակ պարզվել է, որ այդ արել են ոչ թե հայերը այլ ռուսական զորքը, ուստի և Շիրվանզադեն ու Սմբատ խաչատրյանը պահանջել են հայերին վերադրված զրպարտությունը հանել տեղեկագրից։

Իգդիրում իմացել են նաև, որ Կովկասի ընդհանուր հրամանատարից «կարգադրություն կա չհավատալ ոչ մի քրդի, գլխավորներին բռնել, պահանջել բոլորի զենքն ու ձին։ 500 հրացան է տրված՝ բերդան՝ Ալաշկերտի ֆրոնտի հայերին ինքնապաշտպանության համար»։

Հանձնախումբը գեներալ Օգանովսկու հետ զրուցելիս պարզել է, որ «նախքան ռուս զորքի դալը, համիդիեից կեղեքված հայ աղգաբնակչությունը գնացել է իր թալանը ետ բերելու. նրանից հետո զորքը եկել է, թալանել է և ծախել ժողովրդի հետ <՞> և կամ ծախել է նրան»[64]։ Խոսակցություն է բացվել ճանապարհի վրա գտնվող հայ գյուղերի բնակչության մասին, որոնց ոչ միայն թալանել է զորքը, այլև գինաթափ արել։ Հանձնախումբը Օգանովսկու հետ բանակցություններ է վարել հայ կամավորների ձմեռելու տեղը ապահովելու մասին։ Գրանցումներից արդեն երևում է, թե այդ քաոսային դրության մեջ իրենք էլ չեն իմանում, թե ով է սպանողը, թալանողը։ Որոշակի է, որ այստեղ հայերի նկատմամբ վերաբերմունքը համեմատաբար այլ է։ Գեներալը խոստովանել է, որ զենք չունեն, առաջարկել է հայկական բանակը դարձնել 10 000 և զենք գնել Ճապոնիայից, ռուսական բանակի համար

63 Նույն տեղում, թ 124։

64 Նույն տեղում, թ 127։

պահանջել են ուժեր, ուսանողներ, «հեղափոխականներ՝ օֆիցերներ պատրաստելու համար»։ Ուշադրություն է գրավում նաև Իգդիրում կատարած հետևյալ դրառումը. «Ոչ մի տեղ զորք ու սպա չտեսանք, որ պատերազմով տարված լիներին։ Ամենքը համարում են հայկական գործ»[65]։ Այդ էլ, թերևս, նպաստել է այն հանգամանքին, որ հայերից են զորք ու զենք պահանջել։

Այսպես հուսախաբված, 15 օրվա հոգեկան ու բարոյական ցնցումներից հետո, դեկտեմբերի 5-ին խումբը վերադառնում է Էջմիածին, ապա Երևան՝ Սարդարապատ մեկնելու ծրագրով[66]։

Երևանում Թումանյանն ու Շիրվանզադեն իջևանում են առաջնորդարանում, որտեղից բանաստեղծը գրում է իր երկրորդ նամակը։ Այդ նամակում կան երեք օրվա նշումներ՝ դեկտեմբերի 6-ի, 8-ի և 9-ի՝ արված Երևանում, Ալեքսանդրապոլում և Ղալթաղչի կայարանում։

Իմանալով, որ Գևորգ V կաթողիկոսը Թիֆլիսում Նիկոլայ կայսեր հետ հանդիպելուց հետո վերադառնում է (կայսրը Կովկաս ժամանել էր զինվորական հիվանդանոցներին ծանոթանալու նպատակով և Թիֆլիսում եղել էր նոյեմբերների 26-ից 29-ը), որոշում են գնալ նրան ընդառաջ՝ տեղեկություններ ստանալու հանդիպման արդյունքների մասին։ Բանաստեղծի՝ դեկտեմբերի 10-ի նամակից իմանում ենք, որ մեկ օր առաջ նրանք հանդիպել են կաթողիկոսին Ղալթաղչի կայարանում և մի քանի կայարան գնացքում միասին եղել. «...Լավ տրամադրության տակ էր ու կայսրից հուսադրված»,—կարծես իմիջիայլոց գրում է Թումանյանը այդ հանդիպման թարմ տպավորությամբ (V, 405)։ «Նա սքանչացած էր կայսեր վերին աստիճանի ազնիվ և սիրալիր ընդունելությունից»,— նշել է ավելի ուշ Շիրվանզադեն[67]։

Բայց ինչպե՞ս կամ ինչո՞վ էր հուսադրել ցարը կաթողիկոսին։

Լեոյի վկայությամբ, կաթողիկոսը հատկապես խոսել է պատերազմում Թուրքիային հաղթելուց հետո Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալու մասին, իսկ կայսրը, հուսադրելով նրան, ասել է. «...թե հայերի վիճակը կտնօրինվի լավագույն կերպով»[68]։

---

65 Նույն տեղում, թ 131։

66 Ժամանակը որոշվում է ըստ Թումանյանի՝ ընտանիքին գրած նամակի. տպագրվել է՝ «Գրական թերթ», 1979, № 7։

67 «Զիթենի», էջ 91։

68 Լեո, Անցյալից, էջ 313։

Կայսեր հուսադրությունից 10—12 օր անց արդեն որոշակի էին խոստացած անհետանկար «լավագույնի» նախանշանները...

Խումբը այնքան էր մոտեցել ռազմաճակատին, որ «ճանապարհներին դեպք եղավ և ինքնաթաձգությունը լսելու,— գրում է Թումանյանը վերոհիշյալ նամակում,— երբ ռուսները քանդում էին բրդական գյուղերը, և քրդերի ու հայերի հրացանաձգությունը, տեսնել գերիների խմբեր, ընկած դիակներ, ավերած գյուղեր. միմիայն շներն ու կատուներն էին մնացել, որ սոսկալի ոռնում ու մլավում են գիշերները սոված ու անտեր» (V, 405)։

Նույն նամակում հուսահատ ու անտրամադիր բանաստեղծը, գուշակելով գալիք էլ առավել աղետալի դեպքեր, գրում է. «Անկարելի է նամակով պատմել տեսածներս ու լսածներս, դրա համար էլ ավելորդ համարեցի գրել մինչև այժմ և այժմ էլ գրեթե նույնն եմ անում— թեև նամակ եմ գրում։ Ընդհանրապես շատ տխուր են տպավորություններս և շատ հեշտ կարող ենք աղետալի դեպքերի հանդիպել, էնքան խախուտ է մեր վիճակը» (V, 404)։

Այս տողերը գրված են Բայազետի ու Ալաշկերտի ամբողջ տարածությունը անցնելուց հետո, Ղարաղուրանի ու Բասենի շրջանում։ Թումանյանն արդեն կարող էր հեռանկար չտեսնել իրենց նպատակի իրագործման համար։ Նրանք տեղյակ էին, որ դեկտեմբերի սկզբներին ռուսական զորքերը սկսել են նահանջել՝ հակահարձակման անցած թուրքական զորքերի ճնշման տակ։ Եվ չնայած դրան, կաթողիկոսի հետ հանդիպելուց հետո ճանապարհը շարունակում են մինչև Սարիղամիշ ուր, ըստ Թումանյանի նշումների, հասնում են դեկտեմբերի 12-ին և անմիջապես ցանկություն հայտնում հանդիպելու գեներալ Մ-ին։ Այստեղ էլ նույն վերաբերմունքը։ Գեներալը ձգձգում է ընդունելությունը։ Հանձնախումբը ստիպված դիշերում է Սարիղամիշում, իսկ առավոտյան լուրեր են հասնում թուրքերի՝ Սարիղամիշին մոտենալու մասին։ Ժողովրդի մեջ սկսվում է խուճապ։ Գեներալը առանց հանդիպելու Թումանյանին և Շիրվանզադեին, շտապ վագոն է հատկացնում, որպեսզի նրանք վերադառնան Թիֆլիս։ Ուշագրավ է դեկտեմբերի 13-ի գրառումը. «...նեղս բերին... Քեռու խմբից մի կամավորի, որ պատմեց...»[69], և ինքնագիրն այստեղ ընդհատվում է։ Առաջին կամավորն է, որին հանդիպում են Սարիղամիշում, բայց, չար զուգադի-

69 ԳԱԹ, ԹՖ, № 258, թ 138։

պություն, անկարելի է իմանալ կամավորը հասցրե՞լ է խոսել, գուցե և այո՛, բայց Թումանյանը չի կարողացել գրանցել, իսկ հետո այլևս դրան չի անդրադարձել։

Բայց ո՞ւր մնացին հայ կամավորների մասին տարածված բամբասանքները։ Դրանք ստեղծվել էին այն օրերին, երբ ռուսական բանակը հայ կամավորների հետ հերոսաբար առաջ էր գնում, տեր դառնալով Հայաստանի բնակավայրերին։ Բայց այժմ կռիվը ցարական բանակի համար ժամանակավոր տեղատվություն էր ստեղծել, պետք էր օգտվել հայ զինվորի անձնազոհ կռվից, ուստի պատահական չէր, որ այդ միջոցին բամբասանքները կորցրել էին իրենց ուժը և Սարիղամիշի գեներալը խուսափել էր հեղինակավոր առաքյալներին հանդիպելուց։ Շիրվանզադեն վկայում է. «Բանսարկուները անզոր էին եղել հայ զինվորի հավատարմության ու քաջության հուշակը նսեմացնելու և շատ բանսարկուներ իրենք էին խոստովանել իրանց սխալը»[70]։ Այդ կապակցությամբ Թումանյանը նշել է. «Սիմուլյանտների մասին էլ չեն խոսում, անցել է»[71]։

Այսպես ավարտվեց երկու ականավոր հայ գրողների այցելությունը ռուս-թուրքական ռազմաճակատ։

Ինչպես տեսանք, հանձնախումբը չհասավ իր նպատակին, բայց այն, ինչ տեսավ մխիթարական չէր։ Նրանք պետք է համոզվեին, որ մեր ժողովուրդը հենարան չունի, որ ցարական Ռուսաստանի համար ընդհանուր առմամբ Հայաստանը լոկ աշխարհագրական հասկացողություն է, ճանապարհ դեպի Պարսկաստան, Թուրքիա և ավելի հեռուները՝ իր նվաճողական քաղաքականությունը իրականություն դարձնելու համար։ Այդ իմաստով՝ լավագույն փաստաթուղթ է Թումանյանի 1914-ի դեկտ. 10-ի նամակը, որին անդրադարձանք վերևում։ Բանաստեղծը արդեն նախապատրաստված էր «աղետալի դեպքերի հանդիպելու» (V, 404)։

Թումանյանի ծոցատետրի վերջին գրառումներից մեկը սպա Ջանփոլադովից լսածն է. վերջինս փորձում է բացատրել հայ կամավորների մասին ռուսների դժգոհության օբյեկտիվ պատճառը. «Մեր խմբերը չառաջնորդվելով հմուտ ռազմագետներով և օֆիցերներով, սխալներ էին անում, արածները կորչում են և չեն ունենում թե՛ բարոյական և

---

70 «Զիթենի» էջ 29։

71 ԳԱԹ, Թֆ, № 258, թ 133։

թե՛ ուժի տեսակետից էն նշանակությունը, որ պետք է ունենան...»։ Հայ սպան առաջարկում է «...միացնել, կազմել մի մեծ մարմին կանոնավոր հայ սպաներով»։ Ըստ նրա, այդ հնարավորություն կտա ազատվել ասեկոսեներից[72]։ Եթե Թումանյանը շարունակեր մեկնաբանել հայ սպայի միամիտ պահանջը, ապա պետք է այդ բացատրեր ոչ միայն հայ խմբապետների՝ մեծ բանակների դեմ կռվելու փորձ չունենալով, այլև նրանով, որ ռուսական քաղաքականությունը շահագրգռված չէր հայկական կանոնավոր «մեծ մարմին» ստեղծելու, քանի որ այն կարող էր հիմք դառնալ մեծ բանակի և ինքնավարության պահանջի։ Մենք տեսանք, որ հայ զինվորներին հաճախ անվանել են «ավտոնոմիստներ», կարո՞ղ էին այդ ժամանակ հայերը պահանջ դնել մեծ բանակի։

Դեռևս կամավորական խմբերի սկզբնավորման օրերին ռազմական բարձր պաշտոնությունը խմբերը բաժանեց մասերի, արգելեց միասնական բանակ ունենալը՝ անսկզբունքային պահանջների հեռանկարներ չթողնելու համար։

* * *

Ե՞րբ վերադարձան Թիֆլիս Թումանյանը և Շիրվանզադեն։ Ըստ բանաստեղծի դեկտ. 10-ի նամակի, նրանք պետք է վերադառնային «մի տասն օրից»։ Բազմական նոր իրադրությունը, ինչպես տեսանք, այլ կերպ տնօրինեց նրանց վերադարձը։ Թումանյանի ծոցատետրում նշված է, որ դեկտեմբերի 12-ին եղել են Սարիղամիշում, և քանի որ ձգձգվել է ընդունելությունը, նրանք գիշերել են այնտեղ, 13-ին ուղևորվել դեպի Ալեքսանդրապոլ և Թիֆլիս հասել 14-ին կամ 15-ին (վերադարձի լուրը հրապարակվել է դեկտեմբերի 16-ին)[73]։

Նվարդ Թումանյանը գրում է, թե հայրը ռազմաճակատից վերադարձավ «ծանր տրամադրությամբ, զարհուրելի տպավորություններով»

---

72 Նույն տեղում, թ 132—133։

73 «Մշակը», որ չէր հայտնել Թումանյանի և Շիրվանզադեի ռազմադաշտ մեկնելու մասին, շտապեց տպագրել նրանց ժամանելու լուրը. «Թիֆլիս վերադարձան Սարիղամիշից Հ. Խունտունցը, որ գնացել էր քաղաքների ինքնավարության կողմից սենդական կետեր հաստատելու, և Շիրվանզադեն ու Հ. Թումանյանը, որոնք գնացել էին Հայկական բյուրոյի (Ազգային բյուրոյի—Լ. Կ.) կողմից։ Վերադարձել է նաև Խորեն եպիսկոպոսը» («Մշակ», 1914, № 284)։ Դատելով այս հայտարարությունից, խմբի անդամները ունեցել են տարբեր հանձնարարություններ և կենտրոնական ու հիմնական խնդիրները, որոնք վերաբերում էին կամավորներին, ըստ երևույթին, հանձնարարված էին Թումանյանին ու Շիրվանզադեին։

դեկտեմբերի 25-ին[74]. որոշակի թյուրիմացություն է, վկա՝ «Մշակի» հաղորդումը։

Այդ օրերին Սարիղամիշի մոտակայքում ուժեղ ճակատամարտեր էին մղվում, հայ կամավորները մարտնչում էին մեծ եռանդով, հաղթելու հաստատ հավատով։ Դեկտեմբերի 22-ին ռուսական բանակը կրկին գրավում է Սարիղամիշը, թեպետ կռիվները նույն ուղղությամբ շարունակվում են մոտ մեկ ամիս ևս և ավարտվում հաջորդ տարվա հունվարի 18-ին[75]։

* * *

Արևմտյան ռազմաճակատից վերադառնալուց հետո Թումանյանը չհրապարակեց իր տպավորությունները կամ որևէ հոդված։ Եթե հետևվելու լինենք նրա ստեղծագործությունների տարեգրությանը՝ առաջին հայացքից կթվա, որ 1914-ի վերջերին և 1915-ի սկզբներին բանաստեղծը անարձագանք է թողել իր այդ ճամփորդությունը։ Այնինչ՝ 1915-ի հունվարին ռուսերենից թարգմանել է սերբիական ժողովրդական վիպերգը՝ «Թև ինչ ուղարկեց Թուրքի սուլթանը՝ Մոսկվայի ցարի ընծաների փոխարեն» վերնագրով[76]։ Սերբ ժողովրդի բանահյուսության այդ հետաքրքիր նմուշի շտապ կատարված թարգմանությամբ Թումանյանը ցույց է տվել Թուրքական բռնակալության՝ Ռուսաստանից պարտվելու մոտալուտ հնարավորությունը։ Անտարակույս, Ռուսաստանի հաջողությունները Սարիղամիշում նոր հույսեր էին ներշնչել բանաստեղծին։

Այդ նույն օրերին Թումանյանը գրում է «Հայրենիքիս հետ» բանաստեղծությունը, որը նախ տպագրվում է «Հորիզոն» օրաթերթի փետրվարի 8-ի (№ 30) գրական-գեղարվեստական պատկերազարդ հավելվածի № 12-ում (երկու օր հետո գրական-երաժշտական մի երեկույթում, որտեղ ղեկուցում է կարդացվել Հայկական հարցի մասին,

---

74 Ն. Թումանյան, էջ 117։ Նույն տեղում տողատակի ծանոթության մեջ հայտնվում է, թե բանաստեղծը պատերազմի վայրերում «...եղել է 1914 թ. նոյեմբեր-դեկտեմբեր և 1915 թ. հունիս-հուլիս ամիսների ընթացքում»։ Պետք է ասել, որ 1915-ին Թումանյանը Վանից վերադարձել է հունիսի վերջերին, հուլիսին նա Թիֆլիսում էր, ապա Տաբախմելա ամառանոցավայրում, երբ լսեց Վանի գաղթի լուրը։

75 «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 6, Եր., 1981, էջ 548։

76 «Հորիզոն», 1915, № 19 (հունվարի 25)։

Արմենուհի Տիգրանյանը արտասանել է այդ բանաստեղծությունը) և ապա, ամիսներ անց, «Նոր հոսանք» ամսագրի № 1-ում (օգոստոս)։

«Հորիզոնի» հավելվածի փետրվարի 8-ի համարում լույս տեսնելուց մեկ շաբաթ առաջ օրաթերթում հայտարարություն կա, որ առաջիկա կիրակի լույս է տեսնելու Թումանյանի «Հայրենիքիս հետ» բանաստեղծությունը, դրանից կարելի է եզրակացնել, որ այն գրվել է 1915-ի հունվարի վերջերին։

Բանաստեղծության դաղափարական բովանդակությունն առնչվում է երկու էական խնդրի հետ։ Դրանցից առաջինը կապվում է Թումանյանի՝ Արևմտյան Հայաստան կատարած ճամփորդության հետ, որի ընթացքում նա տեսել էր ավերված երկիրը, թալանված, հետին աղքատության հասած անօգնական ժողովրդին։ Այդ տպավորություններով են գրված առաջին և երկրորդ տների եզրափակիչ տողերը. «Զարկված հայրենիք, զրկված հայրենիք»,— «Ողբի հայրենիք, որբի հայրենիք»։

Ծոցատետրի կարճ, անփույթ գրած տողերն ունեն շատ խոր ենթատեքստեր։ Հեղինակը տեսավ, որ անդունդի եզրին կանգնած, իր գոյատևման համար պայքարող ժողովուրդը ամուր հենարան չունի, որի պատճառով բանաստեղծության առաջին երկու վերնյակները դարձել են մի նոր «ողբ հայրենասիրի»։

Բայց բանաստեղծն ունի կայուն սկզբունք, որով առաջնորդվել է իր ողջ հասարակական ու ստեղծագործական կյանքում. նա հավատ ունի հայ ժողովրդի ապագայի նկատմամբ, ուստի բանաստեղծության կեսից նրա խոսքը նոր թափ է ստանում, բոլորովին նոր բովանդակություն, և ողբերգությունը տեղի է տալիս լավատեսության։ Թումանյանը ճամփորդության ծանր տպավորությունը մի կողմ թողնելով՝ «...հանուր կյանքի արշալույս» է ավետում, հայ ժողովրդին խոստանալով նոր, «Հզոր հայրենիք»։

Ն. Թումանյանի վկայությամբ հայրը մտադրություն է ունեցել ճամփորդական գրառումների հիման վրա գրել ու հրապարակել ուղեգրությունները[77], բայց չի գրել այն պարզ պատճառով, որ ճիշտը, անկեղծը չէր տպվի, իսկ այլ կերպ նա գրել չէր կարող։

Ավելց, որ Շիրվանզադեի ճամփորդական նոթերից առանձին հատվածներ տպագրվեցին «Кавказское слово» օրաթերթում, իսկ ամբող-

---

77 Ն. Թումանյան, էջ 119։

ջությամբ՝ «Ջիթենի» հանդիսում։ Թումանյանը ոժգոհ է մնացել իր ճանապարհի ընկերոջ և գրչակցի ակնարկից, չի հավանել նրա զավեշտական տոնը, մանրուքների նկարագրությունը։

«Էս տնաշենը էն տոնով է գրում, կարծես թե հարսանիք է գնացել ու էնտեղից է վերադառնում... Ավերված երկիրը, ժողովրդի դաղթն ու կոտորածը տեսնողը մի՞թե էդ ձևով պիտի գրի։ Աչքի առաջ մի ամբողջ ժողովուրդ է կոտորվում, կործանվում, իսկ նա ինչ-որ մանր, ծիծաղաշարժ դեպքեր է հիշում ու նկարագրում...»[78]։

Ինչքան էլ խիստ համարենք բանաստեղծի այս գնահատականը, այնուամենայնիվ քննադատությունն ուներ իր որոշակի հիմքերը։ Չի կարելի մտածել, թե Շիրվանզադեն ավելի պակաս է զգացել տեսածը ու այն խորությամբ չի ապրել ողբերգությունը, ինչ՝ Թումանյանը։ Այստեղ քննադատելին ակնարկի արտահայտչական ձևն է, բանաստեղծի զոհությունն էլ ձևին է վերաբերում, ոչ հավուր պատշաճի կատակներին, զավեշտին կամ հումորին՝ նույնիսկ ամենածանր տեսարաններից հետո։ Բայի դրանից, ուշադրություն է դրավում Թումանյանին երկրորդական դեր հատկացնելը։ Առանց Թումանյանի դատումների չէր իմացվի նրա շփումը տեղական բնակչության հետ, ժողովրդի առջև, եկեղեցիներում նրա ելույթները։ Այդ ամենի մասին շատ կարճ նշումներ է թողել Թումանյանը, իսկ Շիրվանզադեն լռում է, բայց դրա փոխարեն հիշում է գրչակցին անեկդոտ պատմելիս, էջմիածնի խճուղու ցեխի կամ շատ վտանգավոր մի տեղ՝ Ջինգիլի ճահիճների մեջ, ձի փնտրելիս, կողքին կախված մաուզերին (որը ծաղրելով անվանում է արկղ) տեղի-անտեղի ձեռք տալիս և այլն։

Այս ամենով հանդերձ Շիրվանզադեի ակնարկը ունի պատմաճանաչողական որոշակի արժեք և կարող է տեղեկություններ տալ ռուս-թուրքական պատերազմի ժամանակ հայ ժողովրդի վիճակի և ցարական Ռուսաստանի քաղաքականության մասին։ Թեև կովկասյան ռազմաճակատում հեղեղը և աշխարհիկ հեղինակավոր գործիչների հանձնախմբի հիմնական նպատակը՝ կամավորական խմբերին հանդիպելը, անհաջողության մատնվեց, բայց Թումանյանն ու նրա ուղեկիցները տեսան բնաշխարհը, տեսան ավերված երկիրն ու համոզվեցին, որ հույսները պետք է դնել ավելի շատ սեփական ուժերի վրա։

---

78 Նույն տեղում։

VI

ԵՐԿՐՈՐԴ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՌԱԶՄԱՃԱԿԱՏ (1915 թ.)։ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ՎԱՆՈՒՄ ԵՎ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

1915 թվականի փետրվարի 20—22-ին կայացավ ազգային համագումար, որն ընտրեց Ազգային բյուրոյի կենտրոնական կոմիտեի նոր կազմ՝ բաղկացած 15 անդամներից և 5 փոխանդամներից։ Պատվավոր նախագահը դարձյալ Մեսրոպ եպիսկոպոսն էր, փոխնախագահները՝ Ալեքսանդր Խատիսյանը և Հովսեփ Ամիրխանյանը, անդամներն էին Թումանյանը, Լեոն, Գևորգ Խատիսյանը, Ստեփան Լիսիցյանը և ուրիշներ[1]։ Նիկոլ Աղբալյանը այս անգամ անդամների մեջ չէր՝ Արևմտյան Հայաստանում հաճախ շրջագայելու պատճառով։ Ազգային բյուրոյի գործունեությանը մասնակցում էին կամավորական խմբերի «կարգադրիչ մարմինների» անդամները և խմբապետները, անշուշտ նաև Անդրանիկը՝ Թիֆլիսում գտնվելիս։ Բայց այդ վերակազմության օրերին նրա խումբը մարտեր էր մղում պարսկա-տաճկական սահմանագլխում և կարևոր հաղթանակներ տանում, ապահովելով ռուսական բանակի առաջխաղացումը։ 1915 թ. հունվարին Անդրանիկը արդեն արժանացել էր Գևորգևյան քաջության թրին և Գևորգևյան քաջության խաչին։

1915-ի գարնանը շարունակվում էր կովկասյան բանակի առաջխաղացումը Օլթիի և Արդվինի ուղղությամբ։

Ապրիլի 17-ին Մակուից Ներսես եպիսկոպոսը հեռագրել էր Թիֆլիս, դուժելով, թե Արաղայի դաշտից Ս. Թադեոսի վանքն են եկել 160 փախստականներ, որոնք լուր են բերել նոր կոտորածների, քրդերի ու Թուրքերի դեմ Վանի հայերի մղած օրհասական կռիվների մասին, խնդրելով շուտափույթ օգնություն[2]։ Իրար հետևից լուրեր էին գալիս

---

1 «Համառոտ տեղեկագիր ազգային բյուրոյի գործունեության 1915—1917 թվերի ընթացքում», էջ 3։

2 «Հորիզոն», 1915, № 84։

նաև Պոլսի հոգևոր գործիչների և 400 հայ մտավորականների բանտարկության վերաբերյալ։ Սկսվում է աննախադեպ եղեռն, որի զոհն էր հայ ժողովրդի մի ստվար մասը Էրզրումից մինչև Միջագետք։

Նույն օրերին տեղի է ունենում Դիլմանի հայտնի ճակատամարտը, որտեղ քաջագործություններով աչքի են ընկնում հայ կամավորները՝ իրենց առաջնորդ ունենալով Անդրանիկին։

Այդ սգի, տագնապների, հաղթանակի և ոգևորումներով լի օրերին՝ մայիսի 2-ին «Հորիզոնում» հրապարակվեց Թումանյանի «Վերջին օրը» բանաստեղծությունը, որն այդ միջոցին հնչեց որպես ռազմի կոչ՝ ուղղված կռվող հայ մարտիկներին և սփոփանք՝ խուճապի ենթարկված, իր կորուստները սգացող հայ ժողովրդի համար։

Բանաստեղծությունը լի էր հավատով ու լավատեսությամբ. այն իր ժողովրդին կոչ էր անում միաբանվելու, բոլոր կողմերից օգնության հասնելու կործանման եզրին հասած արևմտահայ ժողովրդին։

Բանաստեղծությունն ունի երկու հերոս. մեկը հայդուկն է՝ հավաքական կերպարը այդ օրերին կռվող հայ զինվորների, մյուսը խմբապետն է՝ փորձված ու հեռատես առաջնորդը, որը մարտի է մղում, հուսադրում, հավատ ներշնչում մարտնչողներին։

Եվ կռվում են անձնուրաց հայդուկները Եփրատի ափին։ Նրանց դիմաց ոխերիմ թշնամին է, իսկ հեռվում «Մինչև բարձրաբերձ ժայռերը Մոկաց», մինչև Մուշ ու Սասուն, մինչև Վան, Աբաղա, Զեյթուն կրակ է ու բոց. թվում է՝ մոտ է ժամը կորստյան, բայց հայդուկը «ինչպես ափի մեջ» տեսնում է, որ Սև ծովից մինչև ծովը Վրկանա, Սյունաց մութ-մութ սարերից, Դուգարքից ու Շիրակից մինչև Այրարատ՝

Գալիս են հեռո՞ւ, հեռու կողմերից ...
Գալիս են ցրված տղերքը նորից,
Գալիս են՝ պարզած զբոշն հայրենի ...

Ազատություն երազող ու օգնության ձեռք փնտրող հայ զինվորը հեռվից տեսնում է, որ

Շարժվում է, ահա, Հյուսիսն ընդհանուր
Հորձանք է տալիս ծովը ռուսական։

Խմբապետը նոր ուժ է ստանում ու համոզված, որ օգնության է գալիս Ռուսաստանը ու մեջքին ամուր թիկունք ունի, մի նոր եռանդով ոգևորում է հայդուկին.

Հեյ ընկե՛ր, կանչեց, դե՛ ցած եկ արագ,
Առ հրացանդ, դաշտն իջիր շուտով,

Իջիր սրբազան ափը Եփրատի,
Հին պատերազմի վերջին զարկն է սա
Հին ոճրագործի հոգեվարքն է սա...

Դաշտ իջնելու և կռվելու պատրաստ է հայդուկը, բայց նրան խանգարում են «հայոց երկնահաս լեռների վրա» լսվող խորհրդավոր ձայները, խոշտանգված նախնիների, հին ու նոր հանգուցյալների «արյան մրրիկով երկինք վերացած» հոգիների բողոքը։ Բայց հայդուկը իր խմբապետի կանչով պիտի իջնի ափը Եփրատի ու կռվի մինչև իր արյան վերջին կաթիլը, չէ՞ որ

Մեծ տառապանքի վերջին օրն է սա...

Պատերազմի առաջին օրերից բանաստեղծը համակված էր մի հաստատ հավատով, որ իր ժողովուրդը պայքարում է վերջին անգամ։

Հատկապես 1915-ի գարնան հաղթանակները լավատես Թումանյանին նոր հույսեր ներշնչեցին բանաստեղծական խոսքի վերածելու իր այն մտահղացումները, որոնց սկիզբը կարելի է տեսնել վերևում հիշված «Երրորդ զարկը» հոդվածում՝ գրված կովկասյան բանակի առաջին հաղթանակներից հետո։ Ինչպես տեսանք, այս պատերազմում Թումանյանը «ավանդական խորհրդավոր երրորդ զարկի» համար վճռական տեղ էր տալիս ժողովրդական հերոս Անդրանիկին ու նրա ընկերներին և ազատության գաղափարի համազգային բնույթին։ Այդ էր, ըստ հեղինակի, ապահովում հայ ժողովրդի ապագան ու առաջնորդում նրան դեպի ազատ աղբերի եղբայրությունը։

Անդրանիկի մասին սա Թումանյանի առաջին հրապարակային ելույթն է և, թվում է, այստեղ պետք է փնտրել «Վերջին օրը» բանաստեղծության մտահղացման ակունքը։ Իսկ դա իրավունք չի՞ տալիս մտածելու, որ այս բանաստեղծության երկրորդ հերոսի՝ խմբապետի նախատիպը Անդրանիկն է։ Վերջինիս հերոսական անցյալը, և այդ օրերի անձնուրաց պայքարը ռուսական բանակի օգնությամբ, կարող էր ներշնչել բանաստեղծին գրելու նոր քերթված և աղդարարելու, թե եկել է հայ ժողովրդի ազատության համար մղվող պայքարի վերջին օրը։

Անշուշտ, կարելի է մտածել նաև, որ ինչպես բանաստեղծության առաջին հերոսը՝ հայդուկն է հավաքական, այնպես էլ խմբապետը կարող է սիմվոլիկ զեկավարի հավաքական կերպար լինել։ Բայց այնպես, ինչպես Անդրանիկն էր հետևողականորեն հավատում ռուսական օգնությանը, այդքան մեծ ժողովրդականությամբ ու համբերով, երկրորդը

չկա, որ կարողանար համախմբել, միաբանել և մարտի մղել։ Եվ, վերջապես, հնարավո՞ր է, որ Անդրանիկի անձով ու գործով այնքան հրմայված բանաստեղծը զոնե մեկ անգամ ազգային հերոսի գործունեությունը չդարձներ իր բանաստեղծական ներշնչանքի ակունքը։

Բանաստեղծության հրապարակմանը զուգադիպից կովկասյան զորքերի առաջխաղացումը, և մայիսի 6-ին հայ կամավորական խմբերը մտան պաշարված Վան։

Վանի ժողովուրդը ցնծության մեջ էր։ Ուշագրավ է, որ ազատագրությունից քիչ անց ի պատիվ հայ կամավորների կազմակերպած գրական-երաժշտական երեկույթին՝ Խաչատրյանի, Սիամանթոյի ստեղծագործությունների հետ հնչեց նաև մի քանի օր առաջ Թիֆլիսում լույս տեսած «Վերջին օրը» բանաստեղծությունը։

Ավելորդ է ասել, թե ինչպիսի խանդավառությամբ ընդունեց Վանի հաղթանակի լուրը Թումանյանը։ Դա երևում է հատկապես «Վան և Երևան» հոդվածում, որտեղ, հիշելով 1827 թ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ հայ կամավորական խմբերի սխրագործությունները, ինչպես և «անպատմելի աղետներն ու կոտորածները», հեղինակն ընդգծում էր, որ Երևանի գրավումը Ռուսաստանից «...միանգամայն ապահովեց հայոց ազգային գործի ապագան»։ Այդ հաղթանակից հետո մոտ հարյուր տարի հայ ժողովուրդը երազել է Վանի գրավումը, որ դարձել էր այս անգամ արդեն արևմտահայերի ազատագրության խորհրդանիշը, ուստի և, բնական է, այդ ազատագրությունը երազողները ձգտել են դեպի Վան ու «Վանի ճանապարհին են դրել իրենց երիտասարդ երազուն գլուխները» (ՈՒՀ 2, 359)։

Զուգահեռ անցկացնելով Երևանի և Վանի գրավման միջև, Թումանյանը տեսնում էր հայ ժողովրդի դարավոր երազի շոշափելի իրականացումը. «Ռուսաց հաղթական զորքի հետ ուս-ուսի Վան են մտնում մեր կամավոր խմբերը..., փողփողում է մեր ազգային դրոշակը... հնչում է մեր ժողովրդական ազգային երգը.

Մեր հայրենիք, թշվառ, անտեր,
Մեր թշնամուց ոտնակոխ...»։

Հիշելով այդ երգը, Թումանյանը միաժամանակ հավատացնում է, որ հայն այն երգում է վերջին անգամ. «էլ հայ ժողովուրդն էս տեսակ լալկան երգ չի երգելու»,—հայտարարում է բանաստեղծը համոզված։

Նա արդեն որոշակի տեսնում էր միացյալ հայությունը, մի՛ Հայաստան, որտեղ այլևս չկա «կյանքի, գույքի ու պատվի անպատվաբեր

ու թշվառ խնդիրը»։ Տեսնում էր նաև Հայաստանի հոգևոր կյանքի փոփոխությունը՝ նո՛ր գրականություն, նո՛ր գրողներ, որոնք հայրենի ժողովրդի հետ պետք է խոսեն նոր, ազատ կյանքի մասին միայն, իրենց թիկունքում տեսնելով «...մի ազատ, առողջ ու ամբողջ ժողովուրդ» (ՈՒՀ 2, 360—361)։

Այսպիսի լավատեսական տրամադրություններով էր համակված Թումանյանը, լցված վերջնական հաղթանակի հավատով։ Սակայն շուտով իրադարձություններն այնպիսի կերպարանք ստացան, որ խորտակեցին նրա հույսերն ու կորցրին հավատը։

Վանի ազատագրումից մեկ ամիս անց Թումանյանը Թիֆլիսից մեկնեց Իգդիր՝ Վան գնալու մտադրությամբ։ Ընթերցողներին հայտնի չեն բանաստեղծի Վան մեկնելու մանրամասները, ուստի փորձենք ի մի բերել այդ ճամփորդության նյութերը, ցույց տալ Թումանյանի նպատակը, ստացած տպավորությունները։

Բանաստեղծը չէր մեկնում Վան լոկ հետաքրքրության համար կամ կլսելու ազատագրված ժողովրդի ցնծությունը։ Նրա նպատակը բոլորովին այլ էր։ Բայց, նախ որոշենք մեկնելու օրը, քանի որ Թիֆլիսից նրա հեռանալու մասին որևէ լուր կամ տեղեկություն մամուլը չի հրապարակել, պետք է ենթադրել, որ այդ ժամանակավոր դադարներ էր։ Իսկ մեկնելու օրը ճշտելուն օգնում է պահպանվող մի փաստաթուղթ՝ «Փոխադարձ վարկային ընկերության» («Общество взаимного кредита») անդորրագիրը. պարզվում է, որ Վան մեկնելուց առաջ Թումանյանը, անդամագրվել է այդ ընկերությանը 1915-ի հունիսի 6-ին[3]։ Հնարավոր է, որ այդ նույն օրն էլ նա գնացքով մեկնել է Էջմիածին և հունիսի 7-ին կառքով հասել Իգդիր։

Դեպի Վան կատարած ճամփորդության լրիվ պատկերը դարձյալ ստեղծվում է Թումանյանի ծոցատետրով, որտեղ եղած նույնիսկ կարճ, հապճեպ արված նշումներից, տողերի ենթաբնագրերից ամբողջ պատմություններ են բացվում։ Այդ պատկերը լրացնում են Վանում հրապարակվող «Աշխատանք» շաբաթաթերթը և մամուլից քաղված այլ նյութեր։

Առաջին նշումը ծոցատետրի մեջ կատարված է Իգդիրում՝ հունիսի 8-ի թվագրությամբ (ապացույց, որ նա իսկապես Թիֆլիսից դուրս է եղել հունիսի 6-ին)։ Այստեղ արված գրառումները պարզում են, որ

3 ԹԹ, Նոր նյութեր, թղթ. № 33։

Թումանյանի Վան մեկնելը այս անգամ էլ պաշտոնական բնույթ է կրել՝ հանձնարարություն Աղգային բյուրոյից, Գևորգ V կաթողիկոսից։ Սահակ անունով մի մարդ (որի ազգանունը չպարզվեց) Թումանյանին տեղեկացրել է, որ «վերաբերմունքը դեպի մեզ շատ է վատ։ Կարգադրություն է եղած կանգնեցնել հայ կամավորների գործը»,— գրում է Թումանյանը և փակագծում ավելացնում՝—(մեզ հասած հեռագիրը) (ՈՒՀ 2, 362)։ Ուրեմն, այդ հեռագիրը ուղարկվել է՝ մտացածին բամբասանքներով կրկին վարկաբեկելու հայ կամավորներին, ցույց տալու, որ նրանք վատ են կռվում, զբաղվում են թալանով։ Եվ ապա՝ մի ավելի ծանր մեղադրանք՝ հայերը ռուս զինվորների վրա կրակել են։

Կարելի է պատկերացնել Թումանյանի հոգեվիճակը. մի կողմից՝ հուսախաբություն Վանի ազատագրությանը հետևող նոր հաղթանակների նկատմամբ, մյուս կողմից՝ հայրենասեր գրողի խոր վիրավորանք իր ամբաստանված հայրենակիցների համար։

Առաջին պաշտոնական անձը, որին Թումանյանը Իգդիրում հանդիպեց, զորավար Օգանովսկին էր (ծագումով հայ. նրանք հանդիպել էին նաև 1914 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին, առաջին ճամփորդության միջոցին)։ Զրույցից պարզվում է, որ զորավարը ինքն էլ զարմացած է հայերի, հատկապես, կամավոր զինվորների նկատմամբ եղած վերաբերմունքի փոփոխությունից։ Զորավարը գժգոհ է նոր իրադրությունից, և այդ պատճառով նրա դեմ «թշնամություն կա»՝ պաշտոնակիցների մեջ։ Հայերին վատ է վերաբերվում մահմեդական ծագում ունեցող Արացևը՝ այն ռուսական զինվորական պաշտոնյաներից մեկը, որ 1914-ին կովկասյան ռազմաճակատում արգելեց Թումանյանին և Շիրվանզադեին հանդիպելու կամավորական ջոկատներին, իսկ այս անգամ բացարձակ մերժում է հայերի օգնությունը, նույնիսկ նը-պաստում հայերի կոտորածներին։ Ցարական այդ պաշտոնյայի լրկտիությունը հասնում է այն աստիճանի, որ կարգադրություն է անում՝ «հայերի գյուղերը իրար հետ հարաբերություն չունենան, մի տեղից ցորեն չտանեն մյուս տեղը» և այլն (նույն տեղում, 363)։

Ուրեմն, Թումանյանը դեպի Վան մեկնել է՝ հանձնարարություն ունենալով ճշտել տարածված լուրերը, ծանոթանալ ամբողջ իրադրության հետ և իմանալ, թե ի՞նչ հիմքեր ունեն ցարական պաշտոնյաները՝ Թիֆլիս ուղարկելու այնպիսի հեռագրեր, որոնք կարող են «կանգնեցնել հայ կամավորական կազմակերպությունը»։ Ինչպես պարզվում է բանաստեղծի ստացած տեղեկություններից, հայերի՝ կազակների վրա

կրակելու մասին հեռագիրն ուղարկվել է զորավար Նիկոլաևից և ունի գրգռիչ՝ պրովոկացիոն բնույթ։ Բայց Նիկոլաևի այդ հեռագրից առաջ Պետերբուրգից կարգադրություն է ստացվել կամավորական նոր յոյժ գունդ կազմելու և հայերին զինելու մասին (նույն տեղում, 364)։ Ուրեմն, «վերևում» տեղյակ չե՞ն այն անվստահությանը, որ կա հայերի նկատմամբ կովկասյան ճակատում և չգիտեն նաև «ներքևո՞ւմ». չէ՞ որ Թիֆլիս ուղարկված հեռագրից անտեղյակ էր նաև զորավար Օգանովսկին։ Ոմանք դալիս են այն եզրակացության, ինչպես երևում է Թումանյանի նշումներից, որ կամավորների դրոշը դադարեցնելու հրամանը «վերևից է և, հատկապես, ներսից» (ընդգծումը մերն է— Լ. Կ. նույն տեղում, 362)։ «Ներսինին» վերանցով-Դարպասն է՝ փոխարքան, որն, ահա շուրջ տասը տարի հայասիրություն էր խաղում, խարում Կովկասի միամիտ հայությանը, իսկ այժմ դավեր է նյութում հայ զինվորների դեմ։

Թումանյանի համար, անշուշտ, պարզ էր հայ կամավորների նկատմամբ Նիկոլաևի և փոխարքայի միտումնավոր վերաբերմունքի պատճառը։ Ամիսներ առաջ Բայազետում և Ալաշկերտում ձեռք բերած փորձը չէր կարող նրան անմիջապես մատնացույց չանել ցարական զինվորական պաշտոնյաների անհանդուրժողականությունը։ Վերջիններիս այս անգամ հանդիստ չէր տալիս Վանը, վանեցիների հերոսական ինքնապաշտպանությունը ազատագրության ու հաղթանակի համար և այդ օրերի խանդավառությունն ու պատրաստակամությունը՝ շարունակելու մարտերը մինչև վերջնական հաղթանակ։ Նրանք դարձյալ կասկածում էին, որ դա կարող էր հիմք դառնալ հայոց ազգային բանակի ստեղծման համար և նպաստել դարերով ազատություն երազող ժողովրդի ինքնավարության գործին։

Թումանյանի կատարած նշումների ենթաբնագրերում հաճախ բացվում են դաժան վերաբերմունքի արտահայտություններ։

Զորավար Նիկոլաևի հեռագրի համար առիթ է եղել, ինչպես ասվեց, հայերի՝ թյուրիմացաբար կազակների վրա կրակելը։ Մթության մեջ հայերը ռուսներին թշնամիների տեղ են դրել և, խմանալով իսկությունը, անմիջապես դադարեցրել են կրակը, բայց մինչև այդ սպանվել են երեք ռուս զինվոր։ Օգանովսկին վախվխելով բացատրել է հանդամանքները, պատահած թյուրիմացությունը համարելով «...պատերազմի ժամանակ անխուսափելի առանձնակի դեպքեր» (նույն տեղում, 365), այնուամենայնիվ, պահանջվում էր դատ ու դատաստան, ավելին՝

դա պատրվակ էր ավելի լուրջ պատժի՝ ցրել կամավորական խմբերը։ Չնայած, ինչպես հետագայում գրել է Լեոն, զորավար Նիկոլաևը ժըխտել է, թե ինքը վարկաբեկող հեռագիր է ուղարկել կամավորների մասին, բայց դրանից որևէ բան չի փոխվել[4]։

Հունիսի 9-ի առավոտյան, կրկին հանդիպելով Օգանովսկուն, Թումանյանը ճանապարհվում է Վան, սեփական աչքերով տեսնելու և իմանալու այն, «...ինչ որ չի կարելի հասկանալ երկար ու բարակ պատմություններից» (VI, 211)։

Ինչպես ճանապարհից գրած միակ նամակում, այնպես էլ անավարտ, սևագիր «Ավերակների ու դիակների աշխարհում» ակնարկի մեջ (նույն տեղում, 211—214) որևէ տեղեկություն չկա ոչ իր ունեցած հանձնարարականի կամ ճամփորդության նպատակի, ոչ էլ ընկերակիցների մասին։ Հարկավոր էր փնտրել արխիվային նյութերում և մամուլում։ Ի վերջո, օգնություն է դալիս Վանում այդ օրերին հրատարակվող «Աշխատանք» շաբաթաթերթը։

Պարզվում է, որ Թումանյանը Վան ժամանել է, ինչպես և 1914-ի նոյեմբերի ճամփորդության ժամանակ, Ներսիսյան դպրոցի տեսուչ Հովսեփ Խունունցի հետ. այս անգամ նրան ընկերակցել է նաև փիլիսոփայության դոկտոր Երվանդ Ֆրանգյանը[5]։ Բայց, ինչպես ցույց են տալիս փաստերը, Վան մեկնելով միասին, նրանք ունեցել են տարբեր նպատակներ։ Խունունցը Փախստականներին օգնող հայկական կենտրոնական կոմիտեի անդամ էր և վերադարձից հետո հունիսի 29-ին Թիֆլիսում տեղի ունեցած հիշյալ կոմիտեի նիստում զեկուցել է Վանի ու շրջակայքի ժողովրդի ծանր կացության մասին[6]։ Մինչդեռ հունիսի 29-ին Թումանյանը դեռևս Իգդիրում էր (ՈՒՀ 2, 368)։ Ինչ վերաբերում է նրա երկրորդ ընկերակցին՝ Ե. Ֆրանգյանին, ապա նրա հետ բանաստեղծը հանդիպել էր Իգդիրում։ Լինելով Բաքվի «Արև» օրաթերթի գլխավորական սեփական թղթակիցը և շրջագայելով պատերազմական վայրերում, Ֆրանգյանը պարբերաբար թղթակցություններ էր ուղարկում «Նամակներ սահմանագլխից» վերնագրով։ Հունիսի 7-ին Իգդիրից նրա ուղարկած մի թղթակցության մեջ, օրինակ, հայտնվում է, որ երեք օր առաջ (ուրեմն, նախքան Թումանյանի՝ Թիֆլիսից

---

4 Մանրամասնությունները տե՛ս Լեո, Անցյալից, էջ 325—326։

5 «Աշխատանք», Վան, 1915, № 24։

6 «Արև», Բաքու, 1915, № 83։

7 Նույն տեղում, № 90, 91։

մեկնելը) Անդրանիկը հասել է Վան, խալիլ բեյի դեմ տարած մի քանի հաղթանակներից հետո։ Անդրանիկի թիկնապահ զինվորի (Ներ. Փափազյանի) օրագրությունից իմանում ենք, որ նա հունիսի 3-ին դուրս գալով Վարագա վանքից, գնացել է դեպի Կուրաբաշ գյուղը, Վանի հասարակությունը ցնծությամբ է դիմավորել նրան, բայց այստեղից նա ճանապարհը շարունակել է դեպի Շատախ ու Մոկսի շրջանը, ընդհանուր ուժերով շարժվել դեպի Բիթլիս[8]։

Ֆրանգյանի թղթակցությունները շարունակվում են նաև Թումանյանի վերադարձից հետո, երբ նա պարբերաբար գրում էր Վանի բնության, թուրքերի թողած ավերակների մասին, տալիս էր վիճակագրական տեղեկություններ և այլն[9]։

Այսպիսով, «հոյակի» հանդիպումը Բերիա պատահականություն էր. նրանք միայն ճանապարհային ընկերներ էին, ուստի և Վանում նրանց միասին լինելու կամ վերադառնալու կապակցությամբ որևէ տեղեկություն չկա, եթե հաշվի չառնենք Փանոս Թերլեմեզյանի հիշատակությունն այն մասին, որ Վանի ուրարտական բերդն այցելելիս, Թումանյանի հետ էր նաև Խունունցը (ԹԺՀ, 567)։

«Արև» օրաթերթում տպագրվել են Ե. Ֆրանգյանի «Իգդիրից—Վան» վերնագրով ճամփորդական տպավորությունները՝ գրված հունիսի 15-ին, Վանում։ Հեղինակը ոչ մի տեղ չի տալիս Թումանյանի կամ Խունունցի անունը. ևս մի լրացուցիչ ապացույց, որ բանաստեղծի Վան գնալը Կովկասում մի որոշ ժամանակ գաղտնիք էր[10]։

Զինվորական թղթակցի նամակները, որ տպագրվել են հունիսի 27-ին (№ 83), հուլիսի 9-ին (№ 92), 11-ին (№ 93) և 12-ին (№ 95), կարևոր են Թումանյանի ճամփորդության ամբողջական պատկերն ունենալու համար, մանավանդ որ գրված են անմիջապես Վան հասնելուց հետո, թարմ տպավորություններով։ Այդ նամակները լրացնում են բանաստեղծի «Ավերակների ու դիակների աշխարհում» ակնարկը, ծոցատետրում թողած կարճ տողերը, հապճեպ տեղեկությունները, տալիս են այս կամ այն բնակավայրը հասնելու ժամանակը (այդ իսաստով թղթակցի նամակները կարևոր աղբյուր են Թումանյանի կյանքի տարեգրության համար)։

---

8 Նույն տեղում, № 70, նաև՝ «Զորավար Անդրանիկի կովկասյան ճակատի պատմական օրագրությունը», էջ 28։

9 Նույն տեղում, № 90, 91։

10 Նույն տեղում, № 83։

Բանաստեղծի ծոցատետրերի նշումներից կարելի է որոշել, որ հունիսի 9-ին առավոտյան ժամը 9-ին, խումբը դուրս է եկել Իդդիրից (ՈՒՀ 2, 364)։ Սահմանամերձ Օրդով կայանից երկու սայլով, դժվարությամբ և դանդաղ սկսել են բարձրանալ Զինգիլի լեռնանցքով։ Ասպա սկսվում է վայրէջքը, իսկ այնուհետև երևում է Արարատը Բայազետի կողմից, որ բանաստեղծը տեսնում էր երկրորդ անգամ։ Լեռան ստորոտում ավերված Կարե (Ղարա) գյուղն է։ Այդ վիճակի մեջ էլ ճամփորդների համար պարզվում է, թե ինչ նոզկալի կենցաղ են ունեցել, Թումանյանի արտահայտությամբ, «որջերի» ու «մկնաբների» բնակիչները. նույնիսկ դժվար էր տարբերել հարուստի և աղքատի կենցաղը, քանի որ բոլորը ապրել են թալանելով ու սպանելով (VI, 212)։

Ճամփորդները ականատես էին, որ ռուսների հաղթանակից հետո Բայազետը սկսել էր աշխուժանալ, փախստականները քիչ-քիչ վերադառնում էին իրենց տները, վերականգնում տնտեսությունները՝ ապավեն ունենալով նաև բնության հարուստ պարգևները, ջրառատ, ծաղկաբույր, կանաչավետ դաշտերը[11]։

Նույն օրը (հունիսի 9) գիշերը Թումանյանը և ընկերակիցները հասել են Կիզիլ-դիզա, ուր և գիշերել են, ուղևկցող զինվորներից լսելով քստմնելի պատմություններ քրդերի սոսկալի գործունեությունների մասին (VI, 213)։ Զինվորական թղթակցի տեղեկությունները Կիզիլ-դիզայի վերաբերյալ ավելի փաստացի են. այստեղ մոտ է Ղարաքյանդը՝ եղեռնագործ Ալի բեկի գյուղը։ Նրա հրամանին են սպասել շրջապատի բոլոր 27 գյուղերի հրոսակախմբերը։ Ռուսական զորքին հանձնվելուց առաջ, Ալի բեկը դաժան հաշվեհարդար է տեսել հայերի, հատկապես, իր մոտ նախօրոք թաքցրած կանանց հետ։ Ինչպես վկայում է Ֆրանդյանը, գյուղը գրավելուց հետո, ռուս զինվորներին հաջողվել է Ալի բեկին գերի վերցնել և ձերբակալելով՝ տեղափոխել Բաքու[12]։

Հունիսի 10-ի առավոտյան խումբն անցել է տխրահռչակ Ալի բեկի գյուղով և ինչ որ լսել էր գիշերը, տեսել սեփական աչքերով։

Այնուհետև սկսել են բարձրանալ հայտնի Թափարիզի լեռնանցքով, որ 4—5 ժամվա ճանապարհ է, անցնում է պարսկա-տաճկական սահմանագլխով։ Շուտով սկսվում է վայրէջքը Թափարիզից, ապա ճամփորդներին երևում է Աբաղայի դաշտը։ Հունիսի 10-ի կեսօրին հաս-

---

11 Նույն տեղում, № 83։

12 Նույն տեղում, № 92։

նում են Բայազետ աղա գյուղը (Աբաղայի կենտրոնը), ուր և գիշերում են։ Հաջորդ օրը՝ հունիսի 11-ին, Թումանյանը ընտանիքին գրում է իր առաջին և միակ նամակը այդ ճամփորդությունից։

«...Աբաղայի դաշտումն ենք, Բայազետ-աղա գյուղում, ավելի ճիշտը՝ կողքին, որովհետև գյուղն ավերած է։ Վաղը կհասնենք Վան։ Իհարկե, շատ հետաքրքրական են թե երկիրը, թե ամեն բան, ինչ որ կատարվում է։ Ոչ մի կենդանի գյուղ չկա, իրար կոտորում են ու կոտորել են քուրդ ու հայ»։ Այս ողբերգական խոսքերին հաջորդում են բանաստեղծի հիացական տողերը Աբաղայի դաշտի գեղեցկության մասին, որին անպայման հաղորդակից է ուզում դարձնել նաև երևխաներին։ «Բուսական ճոխության մասին մի գաղափար տալու համար ուղարկում եմ կակաչի թերթերից ծրարիս մեջ։ Իսկ թե տեսնեք՝ ինչ մեծության հիրիկներ ու հակինթներ կան՝ կղարմանաք, վայրենի, իհարկե» (V, 409)։

Բանաստեղծի ստացած տպավորությունը կրկնվում է նաև զինվորական թղթակցի ճամփորդական նոթերում։ Հեղինակը հիացած է Աբաղայի դաշտի բնության հարստությամբ, սառնորակ աղբյուրներով, հանքային ջրերի առատությամբ[13]։

Աբաղայից հետո խումբը անցել է Բերկրի-կալայի դաշտի միջով։ Ճանապարհը անվերջ վայրէջք լինելով՝ հեշտությամբ են իջել։ Ծանրը այն դաժան իրականությունն էր, որին ականատես ու ականջալուր են եղել ճամփորդները։

Ասվեց, որ Իդդիրում Թումանյանի հոգսը և հանդիպումների ժամանակ խոսակցության գլխավոր նյութը կաղակների վրա թյուրիմացաբար կրակող հայերն էին։ Բերկրի-կալայով անցնելիս՝ ճամփորդների համար պարզվում է, որ այդ մեղադրանքով դատվածները հունիսի 9-ին ստացել են պատժի առավելագույնը։ Այդ մասին Թումանյանը իմացել է հունիսի 11-ին[14]։

Ծանր տպավորությամբ բանաստեղծը գիշերում է Ջանիկ գյուղում (Վանից 45 վերստ է, որտեղ սարսափելի կոտորած էր եղել ապրիլի 5-ին և 6-ին)։

Առավոտյան ամբողջ ճանապարհը Թումանյանն անցնում է սրբազան լճի գեղատեսիլ ափերով...

---

13 Նույն տեղում, № 93։

14 Նույն տեղում, № 95։

Բանաստեղծի և զինվորական թղթակցի հաղորդած թվական տվյալների միջև որևէ տարակարծություն չկա։ Հունիսի 12-ին նրանք հասնում են Վան։

Թումանյանի Վան ժամանելու լուրը տեղացիներին հաղորդվում է հունիսի 13-ին[15]։ Բայց Կովկասի ընթերցող լայն շրջաններում այդ մասին իմացվում է միայն հունիսի 23-ին, Թումանյանի՝ Վանից նույն ամսի 17-ին ուղարկած հեռագրի միջոցով։ Հայտնվում էր Վանի և շրջակայքի դրության մասին. «...Ամբողջովին կոտորված է Ալջևազի, Արճեշի, Բերկրիի, Աղբակի, Նորդուզի բնակչությունը։ Վանը և շրջակայքը լիքն են փախստականներով։ Ծայրահեղ կարիք կա ամեն բանի»։ Հեռագրի տակ ստորագրված էր՝ Ռոստոմ, Թումանյան[16] (Ռոստոմ Զորյանը Վան էր հասել նույն օրը՝ Թումանյանից անկախ)։

Թեպետ այդ օրվանից այլևս դաղտնիք չէր Թումանյանի Վանում գտնվելը, բայց, այնուամենայնիվ, նրա վերադարձից հետո էլ որևէ լուր կամ թղթակցություն չտպագրվեց նույնիսկ «Հորիզոնում», որի մշտական աշխատակիցն էր նա։

Այդ օրերին Անդրանիկը շարունակում էր իր ճակատամարտերը թուրքերի դեմ և ամենուրեք նոր ու նոր հաղթանակներ տանում, որի համար ստանում է երկրորդ Գեորգիյան խաչը։ Բայց հունիսի 17-ին ռուսական զորավարներից ստացած հեռագրով Անդրանիկին կարգադրում են նահանջել, որից խստագույնս հրաժարվելով, կռվում է սեփական ուժերով և իր անօրինակ քաջության և հաղթանակի համար ստանում երկրորդ աստիճանի Գեորգիյան ոսկի խաչ[17]։

Բայց դառնանք բանաստեղծի՝ Վանում անցկացրած օրերին։

Բավական էր, որ Վանում տարածվեր Թումանյանի ժամանելու լուրը, ամբողջ քաղաքում կյանքը նոր բովանդակություն է ստանում։ Սողոմի Ջրբաշյանի վկայությամբ՝ հատկապես երիտասարդության հետ տեղի է ունենում «չտեսնված բերկրալի ու խանդավառ հանդիպում»։ Ճանապարհին փնջերով ծաղիկներ էին սփռում, փոքր երեխաներից սկսած մինչև ծերերը, մեկ մարդու նման, շտապում էին տեսնել, լսել նրան։ Կովկասցի բանաստեղծի մուտքը այդ հնօրյա հայ մշակութային կենտրոն՝ դիտվեց որպես ազատագրության մի նոր անհրաժեշտ

---

15 «Աշխատանք», 1915, № 24։

16 «Հորիզոն», 1915, № 138։

17 «Զորավար Անդրանիկի կովկասյան ճակատի պատմական օրագրությունը», էջ 30—31։

վավերացում[18] (ԹԺՀ, 678)։ «Դարերու երազ էր մեր ժողովրդի համար տեսնել սահմանը ճեղքված հայ կամավորին սուրով, պատնեշները քանդված մեր առջև, Կովկասը մեզ հետ շրթունքը շրթունքի և հայը այլևս ոչ թե թուրքահայ կամ ռուսահայ—այլ հայ...»[19]։ Այսպես գնահատեց բանաստեղծի ժամանումը Վանի մտավորականը, նրան անվանելով «երիտասարդության դատիարակ ու մարգարե», իրենց «պայքարի առաքյալ ու ազատության գուշակ», որ Վան է եկել ժողովրդին թիկունք դառնալու։

«Բանաստեղծը մեզ հետ» հոդվածում Հովհ. Մխիթարյանը նկարագրում է այն խոր տպավորությունը, որ նա ստացել է պատանեկության տարիներին Թումանյանի «Սասունցի Դավիթը» լսելիս։ Կիսամութ սենյակում, գաղտնի բարձրաձայն ընթերցանությունից հետո, նրան թվացել է, թե Դավիթը ապրում է, շրջում Սասունի վեհ, հպարտ լեռների վրա, և այդ օրերին էլ հնարավոր է շարունակել Դավթի գոտեմարտը. «Երկիրը կողրդա, կսոսկա կուվի որոտեն, ու Դավիթը իր ամեհի գուռղով կգետնահարե վերջապես Մսրա Մելիքը»[20]։

Բոլորովին պատահական չէ այս խոր տպավորությունը, որ թողել է պատանիների վրա «Սասունցի Դավիթը». 1904 թվականին էր, երբ Սասունի լեռներում անհավասար գոտեմարտ էր. Դավթի բազմաչարչար թոռները, Անդրանիկի գլխավորությամբ, իրենց «գուրզերով» կռվում էին թշնամու դեմ, որ Սասուն էր եկել տանելու.

Հազար-հազար կին ...

Հեղինակը այնուհետև հիշում է իր ուսուցչին՝ բանաստեղծ տանջամահ եղած Արտաշես Սոլախյանին, որը դպրոցական ավարտական հանդեսին աշակերտներին հրաժեշտ է տվել բանաստեղծի օրհնանքով.

Ապրե՛ք, երեխե՛ք, բայց մե՛զ պես չապրե՛ք ...

Ու թեպետ նրանց սերնդին էլ վիճակված էր նախնիների ճակատագիրը՝ ապրել են տառապանքով, բայց սիրով կարդացել են «Անուշը», երգել «Աղջի բախտավոր, էրնեկ քո սերին...» աշակերտներին սովորեցրել «Շունն ու կատուն», «Պողոս-Պետրոսը», «Գիքորը»[21]։

18 «Աշխատանք», 1915, № 28։

19 Նույն տեղում։

20 Նույն տեղում։

21 Նույն տեղում։

Թումանյանի ստեղծագործությունը նրանց հետ էր և ապրիլյան հերոսամարտի օրերին. «...ցուրտ խրամի մը մեջ կեցած մեր ընկերները կմրմնջային.

Հայի գիշե՞ր- անհո՞ւն գիշեր
Լի ահավոր խորհուրդով...

(Ճշտվում է ըստ VI, 50)։

Բայց երբ հուսահատությունը նրանց հայացքը ուղղում էր հայոց լեռներին, դարձյալ հիշում էին բանաստեղծի խոսքերը.

Ու մեր աչքերը նայում են կարոտ՝
Հեռու աստղերին,
Երկընքի ծերին,
Թե ե՞րբ կբացվի պայծառ առավոտ՝
Հայոց լեռներում,
Կանաչ լեռներում։

Ահա այսպիսի զգացումներով, խոր սիրով ու երախտագիտությամբ ընդունվեց մեծ բանաստեղծը, որի ստեղծագործության գաղափարները, ինչպես տեսնում ենք, հեղինակից շատ առաջ էին մուտք գործել վան, հոգևոր սնունդ տվել ընթերցողներին, բարձրացրել երիտասարդության ազգային ինքնագիտակցության ոգին ու մղել սխրանքների։

Վանում Թումանյանը մնում է մոտ 15—16 օր։ Այդ ընթացքում նա ծանոթանում է բնակչությանը, այցելում Կենտրոնական, Երամյան, Սանդբիտյան դպրոցները, հանդիպումներ ունենում երիտասարդության և մտավորականության հետ։ Բանաստեղծը հիացած էր վանեցիների հայրենասիրությամբ, ազգային ինքնագիտակցության բարձր դրսևորումներով, նրանց հերոսական, անընկճելի ոգով, ապագայի նկատմամբ ունեցած լավատեսությամբ (ԹԺՀ, 678—679)։

Նա հետաքրքրվել է Վանի պաշարման, հերոսամարտերի մանրամասներով, ծանոթացել կռիվներում աչքի ընկած զինվորների, մարտիկներին հագուստով ու սնունդով ապահովող կանանց հետ, ոգևորել նրանց իր գովեստի և շնորհակալության խոսքերով։ Բանաստեղծը առանձնապես հետաքրքրվել է Վարագի դիշերօթիկ դպրոցի սաներին թուրքերից փախցնելու պատմությամբ, որ կազմակերպել էին ուսուցիչներ Հակոբ Ջրբաշյանը և Արփիար Սաֆրատյանը, վտանգելով իրենց կյանքը։ Իհարկե, վանքի ու նրա վանականների հետ թուրքերը հետո

դաժան հաշվեհարդար են տեսել, բայց այդ սիրագործությունը ապահովել էր 300 երեխայի կյանք (նույն տեղում, էջ 681)։

Թումանյանը նկարիչ Փանոս Թերլեմեզյանի հետ եղել է Վանի բոլոր տեսարժան վայրերում, Այգեստանի լայն ու ընդարձակ այգիներում, հիացել Արտամետով, շրջապատի լեռների գեղեցկությամբ ու բացականչել. «Ա՜յ տղա, էս ոնց էր, որ մինչև հիմա էս աննման երկիրը չէինք տեսել»։ Գնացել է տեսնելու Մհերի դուռը, բարձրացել է Վանի ուրարտական անառիկ բերդը... Իսկ երբ նկատել է թուրքերի թողած թնդանոթը,— պատմում է Փ. Թերլեմեզյանը,— «պատանու պես թնդանոթի վրա բարձրացավ ու ապշած մնաց»։ Բանաստեղծը պարզապես անէացել էր իրեն շրջապատող սքանչելի բնապատկերից... (նույն տեղում, էջ 566—567)։

Վան հասնելուց երկու օր հետո՝ հունիսի 14-ին, առաջին խմբագրությունների ազդեցության տակ, բանաստեղծը, մոռացության տալով Իգդիրում լսած զրպարտությունները հայ կամավորների հասցեին, ճանապարհին տեսած «ավերակների ու դիակների աշխարհը», գրում է «Շուռ է գալիս ծանր քարը...» սկզբնատողով բանաստեղծությունը և կարդում հունիսի 18-ին երիտասարդության կազմակերպած պատմա թեյասեղանին։

Ներկաները այդ ստեղծագործությունն ընդունեցին որպես երիտասարդությանն ուղղված կոչ։ Գրող և հասարակական գործիչ Հովհ. Ավագյանը բանաստեղծությունը գնահատեց որպես «...իմաստով կուռ, լեզվով ճոխ ու բովանդակությամբ հյութեղ ուղերձ մը՝ որ ամեն բանե առաջ, իրավ որ հայ կրուրե ծայրեծայր...»։

Բանաստեղծության երկրորդ քառատողը՝

Հե՜յ ջա՜ն տղերք, ուս տվեք, ո՜ւս,
Միահամուռ, միաբան,
Հե՜յ ջա՜ն տղերք, ուժ տվեք ո՜ւժ,
Քարը մոտ է գլորման,—

կրկնվում է ևս երկու անգամ, շեշտելով հեղինակի հիմնական նպատակը՝ երիտասարդությանը մղել նոր մարտերի, ջանք չխնայել միահամուռ, միաբան վերջնականապես գլորելու ծանր քարը, որը դարեր շարունակ նստած լինելով հայ ժողովրդի վրա, չի կարողացել շնչահեղձ անել նրան։ Այսօր ժողովուրդը, «թեև լացոտ աչքերով», հավատում է իր ապագային և աղնվական իր հոգով պատրաստ է քայլել ընտիր ազգերի ու ցեղերի հետ։

Արդիական շնչով լեցուն այս բանաստեղծությունը չէր կարող այլ ազդեցություն ունենալ նոր հաղթանակած Վանի իսկապես հերոսական ժողովրդի վրա։ Բանաստեղծը արժանին էր մատուցում նրան։

Պահպանվել է այդ օրերից մնացած մի մասունք ևս՝ «Աղթամարի կղզում» բանաստեղծությունը՝ գրված հունիսի 16-ին[22]։

Հայտնի է, որ լճի, կղզու անվանման և Թամարի դժբախտ սիրո պատմությանը Թումանյանը անդրադարձել էր տակավին 1891 թ.։ Ախթամարի ավանդությանը կրկին անդրադառնալը ապացույց է, որ սեփական աչքերով կղզին տեսնելը, բնության այդ պարգևի հրապույրը վայելելը այն ժամանակ, երբ ամենուրեք արյուն էր ու կոտորած, բնարական նոր զեղումներ են առաջացրել բանաստեղծի հոգում։ Թամարի երբեմնի սիրո սրտահույզ պատմությունը՝ այդ օրերի համատարած ողբերգության ազդեցությամբ, շատ լայն բովանդակություն է ձեռք բերում։ Հեղինակը սգում է կորուստը այդ հազարավոր սերերի, որ զոհ գնացին «կոպիտ աշխարհին».

Սերը որ կորավ,
Սիրտը որ մնավ,
Արցունքն է մնում ...

Երբ հետևում ենք Թումանյանի ծոցատետրի այն նշումներին, որոնք արված են Վանում, պարզ պատկերացում ենք կազմում, թե ինչքան հոգսեր է ունեցել բանաստեղծը, ինչքան նոր տեղեկություններ է ստացել բնակչության հետ ունեցած շփումներից՝ մեկը մյուսից հուզիչ ու հուսահատեցնող, որոնց մասին լռելը նույնքան դիվանագիտություն էր պահանջում նրանից, որքան խոսելը...

Իգդիրի, Վանի պաշտոնական շրջաններում ամեն կերպ ընդգծվում էր հայերի՝ «խաղաղ քրդերի» վրա հարձակվելու, նրանց «կողոպտելու» միտքը։ Այնինչ, Թումանյանը լսում է, որ ցարական զինվորական պաշտոնական անձինք իրենք են զբաղվել կողոպտելով ու հափշտակությամբ։ «Գունիրի գնդի կոմենդանտը իբր անտեր անասուններ հավաքում էր ու մեծ քանակությամբ ծախում էր օգտին։ Երբ մի անգամ բռնվում է՝ բացատրում է, թե հավաքում եմ հանձնեմ ինտենդանտությունին և հայերին համարում է իրեն կոնկուրենտ»[23]։

---

22 Նույն տեղում։

23 ԳԱԲ, ԲՖ, № 257, էջ 15։

Դեռ Իգդիրում Թումանյանը գրել է այսպիսի տողեր. «Զորքերը դարձյալ առաջվա նման զբաղված են կողոպուտով զարհուրելի չափով։ Օֆիցերներ կան, որ ասում են՝ ուղղակի ամաչում ենք։ Տեղական ամբողջ ազգաբնակչությունը կարոտով է հիշում 1877—78 թթ. պատերազմի զորքն ու զինվորներին։ Մի անգամ մի կազակ մի քուրդ թե թուրք կնոջից բան էր խլել, Տեր-Ղուկասովը կախաղան հանեց»[24]։ Այս տողերից հետո Թումանյանն իր ընդարձակ հաշվետվությանը, անտարակույս, ավելացնելու էր, թե թալանը թույլատրում կամ դրա համար պայմաններ են ստեղծում իրենք՝ ցարական ատաճանավորները և ռուս մյուս պաշտոնյաները, բայց դիտավորյալ տպավորություն են ստեղծում, թե թալանում են հայ կամավորները։

Աղթամար կղզում բանաստեղծը գրի է առել ականատեսի պատմած մի ողբերգական պատմություն, թե ինչպես մի երեխա ընկել է ջուրը, ուր որ է խեղդվելու է. «...հերը նստած է և ներս չի մտնում հանելու, իսկ մերը չի կարողանում տեղից շարժվի, էնքան ուժասպառ է եղած»[25]։ Երեխային ջրից հանելուց հետո, հայրը պարտավոր էր նրան կերակրել, խնամել. ինչպե՞ս աներ այդ, ինչո՞վ հագեցներ խեղդվելուց փրկված երեխայի քաղցը...

Դարերով իր աշխատանքի քրտինքով ապրող հայը, եթե պատերազմի այդ դժնդակ օրերին նույնիսկ դիմել է կողոպուտի, ապա դա կամ քաղցած մարդու բնական անզսպություն էր, կամ երկարատև զրկված զայրույթի և վրեժխնդրության բնական պոռթկում։

Վանի ճանապարհին և տեղում տեսածի տպավորությունների տակ է գրված նրա «Ավերակների ու դիակների աշխարհում» խոսուն վերնագրով ակնարկը, որը կարդալուց հետո անհնար է չտեսնել օբյեկտիվ այն պատճառները, որոնք կարող էին մարդուն հասցնել ամենաանսպասելի արարքների, էլ ուր մնաց իրենցից հափշտակածը հետ վերցնելու փորձերը, որ չէին հանդուրժում իսկական թալանով զբաղվող ցարական զինվորականները։

Նկարագրելով, թե ինչ դատաստան են տեսել քրդերն ու թուրքերը, ռուսական զորքերի Հայաստան մտնելու նախօրյակին անդեն խաղաղ բնակչության հետ, հեղինակը գրում է. «Երեխաների ճակատներին մեխ են զարկել, խաչել են, կենդանի մարդկանց զանազան մասերը կըտ-

---

24 Նույն տեղում, էջ 5—6։

25 Նույն տեղում, էջ 22։

բատել են... մինչև կեսը դրել են պղինձն ու կեսից ներքև եփել, որ մյուս մասը կենդանի տեսնի ու զգա, շիկացրած երկաթներով կտրել են մարմնի զանազան տեղերը և կրակի վրա խորովել...» (VI, 212—213)։

Ողբերգական այդ օրերին հայ մարդը ոչ մի հենարան չէր տեսնում։

Ծուցատեղերում փաստեր կան ռուս կոմենդանտների զենք վաճառելու, զանազան սպառնալիքներով հայերին զինաթափ անելու մասին։ Անդրանիկը, Վանի դեպքերից հետո, էջմիածնում Թումանյանին պատմել է, որ ինքը ռուս զինվորների՝ հայերից խլած զենքերը «զոռով է» հետ վերցրել[26]։

Հայերի (թե՛ ժողովրդի, թե՛ կամավոր զինվորների) նկատմամբ ցարական զինվորականների և այլ պաշտոնյաների միտումնավոր վերաբերմունքի մասին օրինակներ շատ կարելի է բերել Թումանյանի ծուցատեղերից, բայց եղածն էլ բավական է, որ ուսումնասիրողը և ընթերցողը համոզվի, թե Իգդիրից կամ Վանից ուղարկված պաշտոնական հեռագրերը, ռուս զորավարների տարածած բամբասանքները հետևանք էին հայ ժողովրդի նկատմամբ նրանց բացարձակ անհանդուրժողականության։

Այսպիսին են բանաստեղծ Թումանյանի տպավորությունները աղատագրված Վանից։ Նա ականատես եղավ ժողովրդի՝ նոր որակ ստացած ազգային ինքնագիտակցությանը, նաև՝ տարբեր տեսակի ծանր ողբերգությունների, կոտորածների ու թալանի քստմնելի հետևանքների և հունիսի մոտավորապես 25-ին կամ 26-ին վերադարձավ Իգդիր, ապա՝ Թիֆլիս։

Թումանյանը մի անգամ ևս համոզվեց, որ ցարական գործիչներին զայրացնում է հայ ժողովրդի ազատագրության ձգտումը։ Նրանք տեսնում էին, որ հայ կամավորները պայքարում են իրենց դարավոր թշնամու դեմ վերջնական ազատագրության համար։ Այստեղից էլ ծնվեց Վորոնցով-Դաշկովի որոշումը՝ ցրել հայ կամավորական ջոկատները։

* * *

Չնայած ցարական զորավարների նյութած դավերին, Անդրանիկը շարունակում էր իր հաղթանակները և նոր պարգևներ ստանում։ 1915-ի

---

26 Նույն տեղում, էջ 37, 50։

Հուլիսի 11-ին միանալով Դրաստամատ (Դրո) Գանայանի խմբին և 600 կազակների, նա հասնում է Ջրհոր և Շամիրամ գյուղերը, իսկ այնուհետև շարժվում դեպի Մուշ, Սասուն։ Բայց շուտով դրան հետևում է Վանի և շրջակայքի հուլիսյան նահանջը, որի հետ ոչ մի կերպ չէր ուզում հաշտվել փորձված ռազմիկը։ Վեճի բռնվելով ռուս զորավարի հետ, նա նահանջը համարում է կեղծիք, դավաճանություն հայ ժողովրդի նկատմամբ։ Ռուս զորավարը սպառնում է զինվորական դատարանով, իսկ Անդրանիկը հանդուգն պատասխանով ավարտում է վեճը և բնավեր հայ գաղթականության հետ բռնում է Աբաղայի դաշտի, Իգդիրի, էջմիածնի ճանապարհը...[27]։

Թումանյանը Վանից վերադարձել էր, ինչպես ասվեց, հունիսի 25-ին կամ 26-ին։ Դստեր՝ Նվարդի, վկայությամբ, հայրը բավական ժամանակ իր ճամփորդության ծանր տպավորության տակ էր. «...և չէր կարողանում հանգստանալ։ Հիասթափված էր, վրդովված, հոգնած, հիվանդ։ Օր-օրի ավելի ընկճվեց, առողջական դրությունը վատանում էր և ծերանում։ Այլևս առաջվա ժպտադեմ, զվարթ, ուշադիր մարդը չէր»[28]։ Բանաստեղծին ծանր նյարդային վիճակից հանելու համար բժիշկները խորհուրդ էին տալիս մեկնել Կիսլովոդսկ, բայց ունեցած նյութական հնարավորությունը նրան հազիվ հասցնում է Տաբախմելա (Թիֆլիսի մոտակա ամառանոցը)։ Այստեղ նա օրերն անց էր կացնում Աշոտ Աթանասյանի, Ռոմանոս Մելիքյանի և հյուրերի հետ զրուցելով։

Դժվար է ասել, թե քանի օր է այդպես հանգստանում բանաստեղծը, երբ լուր է ստանում գաղթականության նոր հոսքի մասին դեպի Իգդիր և էջմիածին։

Փախստականների Իգդիր հասնելու լուրը մամուլում տպագրվել է հուլիսի 23-ին[29] Թումանյանը այդ մասին կարող էր իմանալ նույն օրը։ Պահպանվել է հուլիսի 25-ին էջմիածին՝ Գարեգին վարդապետ Հովսեփյանին ուղղած Թումանյանի հեռագիրը, որով նա խնդրում էր վկայական ուղարկել որդու՝ Համլիկի Գևորգյան ճեմարանի սան լինելու մասին[30]։ Ուրեմն՝ հուլիսի 25-ին նա արդեն Թիֆլիսում էր, իսկ

---

27 «Զորավար Անդրանիկի կովկասյան ճակատի պատմական օրագրությունը», էջ 33, 35։

28 Ն. Թումանյան, էջ 122։

29 «Հորիզոն», 1915, № 163։

30 ՊԿՊԱ, ֆ 312, դ 21, թղթ. 24։

Հուլիսի 26-ին տպագրվում է Թումանյանի «Հանգիստ ու լիքը հավատով» հոդվածը, որը առաջինն էր Վանից վերադառնալուց հետո (IV, 316)։

Այս հոդվածով Թումանյանը մի անգամ էլ փորձեց հուսալքված ժողովրդին հավատացնել այն՝ ինչ բանաստեղծական խոսքով կամ արձակ տողերով շարունակ գրում էր 1914-ի աշնանից՝ թե հայ ժողովուրդն ապրում է իր վերջին տագնապը։

Բայց ե՞րբ էր լինելու այդ փայփայված ու սպասված վերջինը... Հաղթվ էր ժողովուրդը մխիթարվել Վանի հաղթանակով, որին նախորդել էին ռուսական բանակի հետ հայ կամավորների բաղմաթիվ սխրագործությունները, և ահա լսում է, որ Կովկասյան զինվորական հրամանատարությունը «տակտիկական նպատակներով» կարգադրել է ռուսական բանակին՝ դատարկել Վանը բնակչությունից ու նահանջել։

Թումանյանը լավ գիտեր, թե ինչքան խիստ էր Վանում բնակչությունն այդ օրերին, թե փախստականների ինչ հսկայական բազմություն էր հավաքվել այնտեղ ու մնացել անապատան, քաղցած, կիսամերկ ու հիմա այդ դժբախտները ենթակա էին նոր, ավելի ծանր տեղահանության։

«Հանգիստ ու լիքը հավատով» հոդվածը նպատակ ուներ հավատացնելու, թե սպանություններն ու ավերածությունները, հալածանքներն ու գաղթը, որոնք կազմակերպվում են «հայվիտյան նզովված ձեռքերով», վերջինն է լինելու։ Բայց հավատո՞ւմ էր ինքը՝ Թումանյանը իր մեծ հոգով, լայն սրտով ու պայծառ լավատեսությամբ. դժվար է ասել։ Նրա երկու այցելությունները դեպի «ավերակների ու դիակների երկիրը», թողած գրառումները ապացուցում են, որ նա պատճառներ շատ է ունեցել հիասթափվելու ցարական կառավարության հովանավորությունից, համոզվելու, որ այս պատերազմում էլ, ինչպես միշտ, իմպերիալիստական ռազմամոլները առաջնորդվում են միայն իրենց նվաճողական ծրագրերով։ Մի փոքր առաջ անցնելով ասենք, որ 1917 թ. փետրվարյան հեղափոխության հաղթանակից հետո, մի առիթով Թումանյանը գրում է. «Թերևս չեմ սխալվիլ, եթե ասեմ՝ տաճկահայկական հարցը գրեթե ամբողջովին կլանել էր մեր մտավորական երիտասարդության ուժն ու եռանդը։ Մեծ պատերազմը եկավ, էդ հարցի ասպարեզը արյան ծով կապեց ու պատեց անորոշ հույսերի մշուշով» (ընդգծումը մերն է—Լ. Կ. (ՈՒՀ 2, 388)։ Այդ «անորոշ հույսերի մշուշը» պատել էր Թումանյանին հատկապես դեպի Վան կատարած այցելու-

թյունից հետո, իսկ դրան հաջորդող գաղթը, ռուսների անբացատրելի կարճատև նահանջը, ալեկոծել էր բանաստեղծի հոգին վերջնականապես։

Ասվում է հատկապես, որովհետև առաջին ճանապարհորդությունից հետո տեղի ունեցած քաղաքական իրադարձությունները 1915 թ. հունվար-մայիս ամիսներին, այնպիսի բարենպաստ ընթացք ստացան հայ ժողովրդի համար, որ լավատես Թումանյանը չկարողացավ երկար ժամանակ մնալ Բայազետում, Ալաշկերտում և շրջակայքում տեսածի ծանր տպավորության տակ, ակամա տեսի իր տվայտանքների մեջ։ Սարիղամիշից մինչև Դիլման և ապա Վան, ինչպես և ռազմաբեմերում ձեռք բերված հաջողությունները ընդհանրապես, ավելի հաստատեցին Կոստանդնուպոլսի գրավման հնարավորությունը։

Որքան ծանր էր հիասթափությունը, թերևս, նույնքան ծանր պետք է լիներ Թումանյանի համար ծածկել, թաքցնել, իր զգացածը ընթերցողներից, որոնք վաղուց սովոր էին լսելու նրա իմաստուն խոսքը։ Նա պարտավոր էր ցրել «անորոշ հույսերի մշուշը», բարձրացնել ժողովրդի ոգին, հավատացնել նրան, թե նա դարերով ավելի ծանր օրեր է տեսել, սակայն կարողացել է հաղթահարել ու դոյատևել։ Այն, ինչ կատարվում էր այդ միջոցին, ուներ իր մխիթարական կողմը. ժողովուրդը մարտնչում է թշնամիների դեմ, դաղթականը տնավեր է, բայց ապագան ունի Արևելյան Հայաստանում, դարձյալ հուսադրում էր ժողովրդին ու հավատացնում Թումանյանը, «...էսօր մեզ հետ է ռուսական մեծ բանակն ու բովանդակ Ռուսաստանը...» (IV, 316)։

Թումանյանը Թիֆլիսում երկար չի մնում. էջմիածինը, այնտեղ հավաքված փախստական ժողովուրդը աննկարագրելի ուժով ձգում էր նրան և հուլիսի 29-ի դիշերը նա արդեն էջմիածնում էր։ Ճանապարհին նա տեսել էր դաղթականների հոծ խմբեր՝ մի մասը քնած, մյուսները կրակի շուրջը բոլորած, մի մասը տնքացող, մյուսը՝ լաց լինող։ Բոլորին հետաքրքրում էր մի բան՝ «Ո՞րն է էջմիածնի ճամփեն».

Հարցի պատասխանը տալիս էին եկեղեցիների զանգերը, որոնք ծովացած այդ ժխորի մեջ ղողանջում էին լայնածավալ հաաաչանքի նման։

«Ես երբեք էսքան տխուր չեմ լսել էջմիածնի զանգերի ձենը»,— գրել է բանաստեղծը այդ օրերին իր ծոցատետրում (ՈՒՀ 2, 372)։

Տեղ հասնելու հաջորդ օրը՝ հուլիսի 30-ին, արդեն ծանոթ ամբողջ իրադրությանը, Թումանյանը Թիֆլիս է ուղարկում մի հեռագիր, որով

նկարագրում է էջմիածնում և շրջակայքում իրենց ապավենը փնտրող հալածական հայության 500 որբ երեխաների ծայրահեղ ողբերգական վիճակը։

Ստորև բերվում է հեռագիրը ամբողջությամբ (այս և էջմիածնից տրված հաջորդ հեռագրերը Թումանյանի հատորներում տեղ չեն գտել)։

«Հարյուր հազարավոր փախստականներ են դալիս Թուրքիայից Իգդիրի վրայով էջմիածին։ Առայժմ վերջը չի տեսնվում շարան-շարան եկող այդ մասսայի, որը շարժվում է բարձրացած փոշու մեջ։ Մեծամասնությունը կանայք և երեխաներ են, ուժից ընկած, հոգնած, սոված, բոբիկ։ Նրանց պատմածները քրդերի և թուրքերի դաղանությունների մասին լի են աննկարագրելի սոսկումով։

(Այստեղ երեքուկես տող օրաթերթում կրճատված է, պարզապես, դրված են կետեր)։

Փախուստին առիթ տվող պանիկան,—հայտնվում է շարունակությյան մեջ,— ընկել է անսպասելի կերպով. այս պատճառով ծնողները կորցնում էին իրենց երեխաներին, երեխաները՝ ծնողներին։ Ծնողներին կորցրած շատ երեխաներ սոված ությունից և հոգնածությունից ուժ չունենալով, ճանապարհին հետ էին մնում և մեռնում, թթե չէին վերցնում նրանց ուրիշները։ Իգդիրում և էջմիածնում առայժմ հավաքված են այդպիսի 500 երեխա՝ մոտավորապես։ Էջմիածնի կոմիտեն (խոսքը փախստականներին ուղղող կենտրոնական կոմիտեի՝ էջմիածնի մասնաճյուղին է վերաբերում,—Լ. Կ.) նրանց տեղավորել է ճեմարանի շենքում։ Առայժմ նրանք բնակարան, կերակուր ունեն, սակայն չկա կանայի հոգատար մի ձեռք, որ սրտագին ջերմությամբ կարիքավոր լինի դեպի այդ փոքրահասակ դժբախտ զոհերը։

Թող այս երեխաների մանկական աղերսը լսեն մեր սրտացավ տիկնայք, օրիորդները և հայ կանանց հասարակական կազմակերպությունները. ցանկալի է, որ նրանք անհապաղ և ամեն տեղ կազմակերպեն մի առանձին կոմիտե և ուղարկեն էջմիածին՝ վարելու համար այստեղ մանկական ապաստարանը, մինչև որ վերջնականապես որոշվի այս երեխանց հետագա վիճակը»։ Հեռագրի տակ ստորագրել են Սամսոն Հարությունյանը և Հովհ. Թումանյանը[31]։

---

31 «Հորիզոն», 1915, № 173։

Այս հեռագիրը նման է ուրիշ առիթներով, հայ ժողովրդի գոյատևման համար վճռորոշ այլ պահերի Թումանյանի գրած հրավերկոչերին։ Պետք է ենթադրել, որ այն նախապես ուղղված է եղել Հայոց ազգային բյուրոյին, որ Էջմիածնից հետո պետականություն չունեցող մեր ժողովրդի միակ պաշտոնական մարմինն էր՝ այդ օրերին կոչված ապահովելու հայության փրկությունը զանգվածային ոչնչացումից։

Շուտով հեռագրում նշված որբ երեխաների թիվը քառապատկվում է՝ հինգ հարյուրից հասնելով երկու հազարի։ Էջմիածնից ընտանիքին ուղարկած Թումանյանի միակ նամակը (անթվակիր է, բայց քանի որ Օլգա Թումանյանի օգոստոսի 7-ի նամակի պատասխանն է, գրված պետք է լինի այդ օրից անմիջապես հետո) ավելի է մանրամասնում ու ճշտում տեղեկությունները։ Տասն երեխա ունեցող զորավագուի հորը հանգիստ չէր տալիս հատկապես որբ երեխաների անօգնական վիճակը։ «Անկարելի է նկարագրել, թե ինչ զարհուրելի աղետ է, որին ականատես եմ ես»,— գրում է Թումանյանը, ապա պատմում, թե բոլոր ճանապարհները, բոլոր շինությունները, ամենուրեք լիքն են մերկ, քաղցած, հիվանդ, լաց լինող ու մեռնող մարդկանցով։ «Երեխանե՜ր, երեխանե՜ր, երեխանե՜ր.. անտեր, սոված, հիվանդ...»։—Ավելացնում է նա այդ նամակում, հայտնելով, որ իրեն «..վիճակվել է էդ երեխաների խնամատարության գործը», միաժամանակ անհանգստանում, թե ինչո՞ւ են ուշանում Էջմիածին եկող կանանց խմբերը (ՈՒՀ 1, 384)։

Ամուսնուն և դստերը՝ Նվարդին Թիֆլիս ճանապարհելով, Օլգա Թումանյանը երեխաների հետ մնացել էր Տարախմելայում, բայց անհանգստացած որդու՝ Համլիկի զինվորագրության գործից, երկու օրով եկել էր Թիֆլիս, որտեղից և գրում է վերը հիշված նամակը ամուսնուն։ Այդ նամակից պարզվում է, որ հուլիսի 25-ի Թումանյանի հեռագիրը նպատակին չի ծառայել, Գարեգին վարդապետ Հովսեփյանի՝ Էջմիածնում չլինելու պատճառով[32]։ Թումանյանի հեռագիրը նպատակ ուներ ճշտելու, որդին համարվո՞ւմ է ճեմարանի սան, թե ոչ։ Պատասխանն անհրաժեշտ էր՝ Թիֆլիսի զինվորական ատյանին ներկայացնե-

---

32 Էջմիածնի սինոդի գործերում պահպանվում է Համլիկ Թումանյանի դիմումը Գևորգյան ճեմարանի տեսչին՝ Գարեգին Հովսեփյանին, որտեղ նա խնդրում է իրեն կրկին ճեմարանի աշակերտ համարել՝ 1896 թ. ծնվածների զորակոչից ազատվելու համար։ Փաստաթղթի վրա մակագրված է, որ բաց նամակով հայտնել են տեսչի Էջմիածնում չգտնվելու մասին (ՊԿՊԱ ֆ 312, թղթ. 24, գ 61, թ 14)։

լու համար։ Եթե սան չհամարվեր՝ նա ենթակա էր զինվորագրության որպես հասարակ զինվոր և պետք է ուղարկվեր հեռավոր վայրեր։ Որդու ճակատագրով մտահոգված մայրը ամուսնուն գրած նամակում գժգոհում է. «Քո երեխաներին թողել ես անտեր, ուրիշի երեխաներին ես պահպանում. դրանք 4—5 տարեկան են, իսկ քոնը 18—19 տարեկան։ Ով որ իմանում է ծանոթներից, ծիծաղում են մեզ վրա, թե ինչպես մինչև հիմա թողել եք և այդպես դատարկ բանի համար կորցնում եք ձեր որդուն»[33]։

Խնդիրն այն է, որ ինչպես պարզվում է Թումանյանի պատասխան նամակից և սինոդում եղած Համլիկի գործից, բանաստեղծն էջմիածին հասնելու դիշերը՝ հուլիսի 29-ին, կաթողիկոսին ներկայանալիս նրա հետ խոսել էր նաև որդու՝ ճեմարանի սան լինելու իրավունքները վերականգնելու և Թիֆլիսի զինվորական ատյանին գրական պատասխան ուղարկելու մասին, և կաթողիկոսը տվել էր իր համաձայնությունը։ Բայց այդ օրը ստացվել էր նաև զինվորական ատյանի նախագահ Քանանյանի հեռագիրը նույն հարցումով։ Կաթողիկոսը պահանջելով Համլիկի գործերը և կրկին անդրադառնալով չվճարված ուսման վարձին՝ Թիֆլիս ուղարկել էր բացասական հեռագիր։

Շուտով իր պաշտոնատեղին է գալիս Գ. Հովսեփյանը, և Թումանյանը կնոջ նամակում արտահայտված գժգոհության և իր՝ դեպի ճեմարանի տեսուչն ունեցած փոխադարձ հարգանքի ազդեցության տակ՝ գրում է օգոստոսի 10-ի հետևյալ խնդիրը (անտիպ է).

Սուրբ Էջմիածնի Գևորգյան ճեմարանի
Բարձրապատիվ տեսչին՝
Գարեգին Վարդապետին
Հովհաննես Թումանյանից

Ս Ն Դ Ի Ր

Իմ որդի Համլիկը ուսումնական տարվույս կեսից դադարել է հաճախել ճեմարան՝ թոշակն իր ժամանակին չվճարելու պատճառով, որ առաջացել է իմ՝ ամիսներով տանիցս բացակայելուց։ Այժմ խոնարհաբար խնդրում եմ չվճարված թոշակի խնդիրը ներկայացնել նորին վեհափառության տնօրինության, թույլ տալով շարունակել նրան իր ուսումը, որ ընդհատված է վերև հիշված պատճառով։

10 օգոստոսի, 1915 Ս. Էջմիածին[34]

---

33 ԹԹ, ՓԲ, № 2745։

34 ՊԿՊԱ, ֆ 312, ցուց. 24, գ 61, թ 21։

Ստանալով այս խնդրագիրը, տեսուչը անմիջապես գրավոր պաշտոնական հայտարարություն է ներկայացնում Գեորգ 5-րդ կաթողիկոսին՝ Համլիկ Թումանյանի ճեմարանի սան լինելու իրավունքը վերականգնելու մասին, «Ի հարգանս պ. Թումանյանի գրական և հասարակական գործունեության»։ Տեսչի պաշտոնական այդ գրության ծրարի վրա, ըստ երևույթին քարտուղարի ձեռքով, մակագրված է. «Նորին սրբությունը չէ բարեհաճել ընդունել»[35]։

Այսպես էր գնահատում ամենայն հայոց հայրապետը իր իսկ գիտությամբ՝ 1914-ի ցրտաշունչ օրերին Թումանյանի ճամփորդությունը ռազմաճակատ և նրա գործունեությունը էջմիածնում։

Օգոստոսի 8-ի կամ 9-ի նամակում Թումանյանը, ինչպես ասվեց, անհանգստացած էր նաև «կանանց խմբերի», հատկապես, Նվարդի ուշանալու պատճառով։

Հուլիսի 30-ի հեռագիր—կոչը Թիֆլիս ուղարկելուց տասն օր հետո՝ օգոստոսի 9-ին «Հերիզոնը» հայտնում է, թե կենտրոնական կոմիտեն արդեն էջմիածին էր ուղարկել «...Օր. Օր. Ն. Թումանյանին, Ա. Դանիելյանին, Հ. Զարյանին և Կ. Լիանոզյանին, որոնք սիրահոժար և ինքնակամ հանձն են առել առանց վարձատրության գործել փախստականների կարիքները հոգալու համար»։ Դրանից հետո՝ նույն ամսի 14-ին, Փախստականներին օգնող կենտրոնական կոմիտեն նորից հայտարարում է, թե կազմակերպված են խմբեր և «առաջին խումբը, որ գործելու է Իզմիրում, բաղկացած է վեց հոգուց կազմված հայ օրիորդների կոմիտեի ներկայացուցիչներից՝ ղեկավարությամբ օր. Ն. Թումանյանի»[36]։ Օլգա Թումանյանի՝ օգոստոսի 7-ի նամակից այն տպավորությունն է ստացվում, որ Նվարդը արդեն էջմիածնում է[37], բայց, ինչպես նշվեց, Թումանյանի նամակից այդպես չի երևում։ Պետք է ենթադրել, որ Նվարդը և խումբը իսկապես Թիֆլիսից մեկնել էին, բայց

---

35 Նույն տեղում։ Ի վերջո մեկ տարով հետաձգվում է Համլիկի զինվորագրությունը, բայց մի քանի ամիս հետո որպես զինվոր մեկնում է Ալեքսանդրապոլ (տե՛ս Թումանյանի նամակը՝ Վահանին գրած 1915-ի հոկտեմբերի 10-ի, Համլիկի՝ Արտավազդին գրած 1916-ի հունվարի 30-ի նամակները (ԹԹ ՓՌ, № 2836)։

36 Նույն տեղում, № 182։

37 ԹԹ, ՓՌ, № 2745։

նախ գնացել էին Իգդիր, ապա՝ Էջմիածին։ Այդ մասին Նվարդ Թումանյանը իր հուշագրության մեջ տեղեկություն չի թողել, նա գրում է միայն, որ Էջմիածնում ընկերուհիների հետ պետք է աշխատեր որպես գթության քույր[38]։

Մինչ այս, մինչ այն Թումանյանի առաջին հեռագիր—կոչի ազդեցությունը դառնում է շոշափելի։ Օգոստոսի 14-ին ուղարկած երկրորդ հեռագրից պարզվում է, որ այդ օրը Էջմիածնում էին Թիֆլիսից և Ալեքսանդրապոլից եկած խմբերը, դրանց մեջ էին նաև Նվարդը և իր ընկերուհիները, որոնք պետք է աշխատեին որպես գթության քույրեր[39]։

Բանաստեղծը դստեր հետ ապրում էր Էջմիածնի Մատենադարանի առաջին հարկում։ Նրանք օր ու գիշեր հանգիստ չունեին։ Հազվագյուտ ազատ ժամանակ հայր ու աղջիկ այցելել են Գալուստ Տեր-Մկրտչյանին, Վահան Ամատունուն, որոնց հատուկ հարգանքով էր վերաբերվում Թումանյանը։

Ամենուրեք հանդիպում էին ծանր դեպքերի՝ մայրեր՝ ծնկներին մեռած զավակները, մի մարդու, որը ծեծում էր կնոջը՝ երեխաներին կորցնելու համար, մեկ ուրիշին, որը պատմել էր, թե ինչպես են գազանաբար սպանել ծնողներին (ՈՒՀ 2, 372)։

Այս մղձավանջի մեջ էլ առանձին պահեր իրեն զգացնել է տալիս բանաստեղծի՝ բնության զգացողությունը, բայց միայն առանձին պահեր. ծոցատետրում նա նշել է. «Ես աշխատում էի չնայել Արաքսին ու Մասիսին ... բայց, այնուամենայնիվ, նայեցի մի անհասկանալի երկյուղով—

Մասիսի գլուխը ծածկված էր ամպերի տակ—
Արաքսը ձեն չէր հանում, չէր որոտում—
Ծանր ու խոր խշշում էր...» (ՈՒՀ 2, 373)։

Գաղթականությանը թուրքերի ու քրդերի հալածանքներից փրկել, մինչև Իգդիր ու Էջմիածին էին ուղեկցել հայ կամավորական խմբերը՝ համոզված, որ արևելահայ եղբայրները ապաստան կապահովեն բնավեր թշվառների համար, կծածկեն կիսամերկ մարմինները, կփրկեն կորստից։

Հուլիսի 26-ին Իգդիր և օգոստոսի 8-ին Էջմիածին է հասնում նաև

---

38 Ն. Թումանյան, էջ 123։

39 «Հորիզոն», 1915, № 184։

Անդրանիկը։ Նրա մասին Թումանյանը թողել է այսպիսի ծրագրային նշում. «Անդրանիկը—դուրսը իր խմբի մնացորդը—ինքը ներսը՝ խորտակված և հուսահատված» (ՈՒՀ 2, 373)։ Այս կարճ խոսքերի ենթաբնագիրը քաջ հայտնի հուսախարությունն էր։ Ով գիտի, Թումանյանը ինչպիսի խորությամբ պիտք է նկարագրեր այդ, եթե երբեք հնարավորություն ունենար անդրադառնալու իր և «Մշո արծվի» հանդիպմանը էջմիածնի այդ դժնդակ օրերին, այն ժամանակ, երբ երկուսի համար նույնքան սիրելի ժողովրդի ներկան ողբերգական էր, հայրենի երկրի ապագան՝ անհուսալի, անհեռանկար։

Այդ հանդիպման մասին, թեպետ ոչ այնքան մանրամասն, գրել է Անդրանիկը՝ Թումանյանի մահվան կապակցությամբ հրապարակված հուշ-հոդվածում, որտեղ ոչ միայն գնահատել է վերջինիս գործունեությունը էջմիածնում, այլև ցույց է տվել իր վերաբերմունքը ցարական զինվորական բարձր պաշտոնյաների դիվանագիտության նկատմամբ. «...երբ 1915-ին Մեծ զաղթը եղավ ռուսներու կեղծ նահանջով, բանաստեղծը իր տունը, իր ընտանիքի վայելքները թողուցած եկավ... էջմիածնի, Իգդիրի և Երևանի փողոցներուն և վանքի պատերուն տակ խռնված զաղթականներուն օգնելու»։ Անդրանիկի համար Թումանյանը մի մարդ էր, որը արհամարհեց հանդիսությունը «իր ցեղին բեկորներու համար ու տքնեցավ անոնց հետ, անոնց ցավն ու վիշտը բաժանելով։ Իր արինակիցներուն դառն վիճակը և չարչարանքները խլեցին իր խնդում ճակատին ու աչքերեն ժպիտն ու ծիծաղը, անթեղելով իր սրտի մեջ իր ցեղին ցավը» (ԹԺՀ, 551—552)։

Անդրանիկի նման ռազմիկը չէր կարող մնալ էջմիածնում հոգեպես ընկճված։ Մեծ հոգիների և սովորական մահկանացուների տարբերությունը նաև այն է, որ նրանք շուտ են գտնում ծանր վիճակից դուրս գալու ելքը։ Շուտով նա մեկնում է Երևան, ապա Քանաքեռում հանդիպում ունենում տեղի կամավորական 6-րդ և 7-րդ խմբերի հետ։ Զորքը, մոռացած զաղթը, նահանջը, իրենց ողբերգությունը, փառավոր ընդունելություն է ցույց տալիս Անդրանիկին, իսկ նա ջերմորեն ողջունում է ռաջարի մարտիկներին։ Օգոստոսի 11-ին նա մեկնում է Թիֆլիս, երկու օր հետո ժողովարանում հանդիպում է ունենում հասարակության հետ, որը նրան ընդունում է ծաղիկներով, օվացիայով։ Ժողովարանի ավագների խորհուրդը Անդրանիկին մատուցում է 500 ռ. հօգուտ հայ կամավորների[40]։

---

40 «Հորիզոն», 1915, № 183։

Բայց անցնենք Թումանյանին։

Ինչպես ասվեց, Թումանյանի երկրորդ հեռագիրն ուղարկվում է օգոստոսի 14-ին։ Երկու օր հետո Թիֆլիսի և հայաշատ այլ վայրերի ընթերցողները այդ հեռագրից տեղեկացան, որ «Ընդհանուր աղետի մեջ առանձնապես սոսկալի է ձգված ու որբացած երեխաների վիճակը։ Ռեմարանի ամբողջ շենքը բռնել է որբանոցը։ Ընդունվածների թիվը անցել է 3000-ից, և նոր որբանոց է բացվում բաց օդում...»[41]։

Անհանգիստ ու ծանր էր դրությունը մի այլ տեսակետից։ Որոշված էր որբանոցներում ընդունել հայր, մայր չունեցող երեխաներին, բայց Թումանյանը առանց երկար-բարակ քննության՝ ընդունում էր նաև ծնողներ ունեցողներին։ Այդ չի վրիպել «Եղբայրական օգնություն» ընկերության էջմիածնի ներկայացուցիչ Բաբկեն վարդապետի և այլ գործիչների ուշադրությունից և դժգոհության տեղիք է տվել (ՈՒՀ 2, 374)։ Այդ կապակցությամբ Թումանյանն այսպես է արդարանում. «Մայրերը, հիրավի, բերում են հավատացնում են, որ որբ են, գտել են, հայր, մայր չունեն, և աղաչում են ներս ընդունել կիսանվազ երեխաներին. երեխան հաճախ կպչում է կնոջը—նանի կամ մարե ճչալով ու մատնելով մոր խաբեբայությունը» (նույն տեղում)։ Բայց հայ մայրը արդարանալու պետք չուներ. այդ այսպես կոչված «խաբեբայությունը» երեխային սովից փրկելու համար էր, և ինչպե՞ս կարող էր նրանց վիճակի մեջ չմտնել, չընդառաջել բանաստեղծի հոգին։ «Ոմանք դնում են մանկանոցի դռանն ու իրենք հեռանում կորչում»,— գրել է Թումանյանը։ Բայց լինում էին նաև մորը կառչած փոքրիկներ, որոնք «մարե՞» բղավելով փախչում էին (նույն տեղում)։

Այդ քաոսի, սովի ու համաճարակի մեջ, միևնույն ողբերգական հանգամանքներում ի հայտ են եկել տարբեր բնավորություններ, որոնք չէին կարող վրիպել Թումանյանի խորաթափանց աչքերից. շատերն էին դիմում Թումանյանին, նրա օգնականներին, երեխաներին հանձնում էին լողացնելու, մաքրելու, հագցնելու, ապա տանում էին թաքցնում՝ հայտնելով, թե կորցրել են։ Գոյության կռվում ավելի լավ են ջոկվում աղնիվ ու անաղնիվ արարքները։

Անչափ բազմազան են Թումանյանի ծոցատետրի նշումները, մեկը մյուսից ավելի հուզիչ. «Երեխաներից ոմանք այնպես են սովորել,— գրում է նա, որ ճաշից հետո էլ փեշերս բռնում են—(թեև հագնված

---

41 Նույն տեղում, № 184։

են, պատսպարված և կերակրված)— Հայրի՜կ, ես որբ եմ, խեղճ եմ, նա հեր ունեմ, նա մեր...»։ Նման երեխաների մեջ արդեն առաջացել էր կուշտ լինելու, ապրելու բնազդը։ Բայց երեխան մնում է երեխա, ինչպիսի պայմաններում էլ լինի. իմանալով, որ իրենց խնամատարը նոր շորեր պետք է կարել տա, «այստեղից, այնտեղից, գլուխ էին բարձրացնում—Հայրի՜կ, ինձ համար կարմիր հալավ կարեցեք...»։

Թումանյանի դիտողականությունից չի վրիպել նաև տարբեր որբ երեխաների մի այլ առանձնահատկություն. «Մինը հանկարծ լաց է լինում, մի մասն էլ սկսում են նրան հետևել, այնինչ մի քանիսը հանդարտ նայում են նրանց, իրենց շորս կողմը ու շարունակում ուտել—ոմանք էլ փիլիսոփայորեն մտածում են լուռ»։

Մի հատուկ ողբերգություն են ապրել քիչ թե շատ հասունացած աղջիկները, որոնց գլուխը մաքրելու համար պետք է խուզվեին մազերը. «Ես կերթամ, հալավս ալ կթողնիմ, ծամերս ի չեմ տար...» աղմկել են նրանք։ Մի այլ երեխա, որը նույնպես չէր թողնում մազերը կտրեն, և մայրն էլ նույնն էր պնդում՝ ի վերջո փախել էին, բայց շուտով երկուսին էլ գտել էին մեռած (նույն տեղում, 375—376)։

Սրանք բոլորը պատմվածքների կերպարներ են, անփոխարինելի նյութեր ապագա ստեղծագործությունների համար, որոնց Թումանյանը երբեք չկարողացավ անդրադառնալ՝ մինչև կյանքի վերջը չգրված այդ երկերի նախատիպերի ճակատագրով մտահոգված...

Ուշադրավ է հետևյալ զուգադիպությունը։ «Հորիզոնի» օգոստոսի 4-ի այն համարում, որտեղ լույս էր տեսել Թումանյանի՝ Էջմիածնից ուղարկած առաջին հեռագիրը, հրապարակվել է նաև «Ծա՞ղր, թե լուրջ կատակ» վերնագրով խմբագրական հոդվածը, որը գրված է ի պատասխան «Кавказское слово» օրաթերթի «К моменту» թղթակցության[42]։ Հենվելով Լոնդոնի թղթակցի՝ անգլիական սուֆրաժիստների մասին գրած հոդվածի վրա[43], Թիֆլիսում տպագրվող և հայկական

42 Տե՛ս «Кавказское слово», 1915, օգոստոսի 2։

43 Սուֆրաժիստները անգլիական կանանց շարժման մասնակիցներն էին, որոնք պայքարում էին կանանց ընտրական իրավունքների պաշտպանության համար։ Սուֆրաժիզմը առաջացել է XIX դարի երկրորդ կեսին Անգլիայում, ապա տարածվել է նաև ԱՄՆ-ում, Գերմանիայում և այլ երկրներում։ XX դարի սկզբներին նրանց գործունեությունը ավելի լայն ընդգրկում է ստանում. նրանք իրենց պահանջների իրականացման համար դիմում էին նույնիսկ ցույցերի։ Համաշխարհային պատերազմից հետո, հեղափոխական շարժումների ազդեցությամբ, մի քանի կապիտալիստական երկրներում կանայք ստացան ընտրական իրավունք, նպաստելով սուֆրաժիզմի անկմանը։

իրադրությանը լավ ծանոթ ռուսերեն թերթի թղթակիցը հայ մտավորական գործիչներին տարօրինակ խորհուրդ է տալիս՝ օգտվել սուֆրաժիստների հետևյալ փորձից։ Տեսնելով անգլիական ժողովրդի պակասելը, սուֆրաժիստները «վճռել են միջոցներ չխնայել մահացությունից ազատելու համար այն երեխաներին, որոնք մեռնում են գլխավորապես մայրերի անապահով ու անօգնական վիճակից»։

Պատասխանելով «Кавказское слово» թերթի թղթակցին, «Հորիզոնի» հոդվածի հեղինակը հայտնում է, որ անգլիացի սուֆրաժիստների օրինակը չի կարող հիմք ծառայել հայ մտավորականի համար։ Եթե Անգլիայում մեռնում են միայն երեխաները, Հայաստանում երեխաները մեռնում են իրենց ծնողների հետ։ Հոդվածագիրը այն կարծիքին է, որ «Кавказское слово» թերթը անգլիացիների օրինակը բերելու փոխարեն «ռուս հասարակության ու կառավարության ուշադրությունը պետք է հրավիրի հարյուր հազարավոր հայ գաղթականների անելանելի կացության վրա և պետական օգնություն պահանջի, որպիսի օգնություն ծրագրվում է արևելյան ռազմաբեմի գաղթականների համար»[44]։

Միանգամայն ճիշտ է գրում «Հորիզոնի» հեղինակը, և շատ էլ դիպուկ է վերնագիրը։ Այն օրերին երբ հազարավոր բազմանդամ ընտանիքներ սրի էին քաշվում թուրքերից ու քրդերից, մնում իրենց տան փլված առաստաղի տակ, մեռնում քաղցից, հիվանդություններից կամ ոչնչանում օտարության մեջ, իսկապես ծիծաղելի էր բերել անգլիական անապահով և անօգնական կանանց օրինակը։ Ճիշտ է նաև հայ հեղինակի մյուս որոտացավ դիտողությունը, ըստ որի անօգնական է ողջ արևմտահայ ժողովուրդը. նա օգնություն ստանում էր միայն իր ազգակիցներից, զանազան ընկերությունների, հանձնաժողովների ջանքերով կազմակերպված հանգանակություններից, որին մասնակցում էր ողջ հայ ժողովուրդը, ինչպես Կովկասում, այնպես էլ տարագրության մեջ։

Անցնենք առաջ։

Էջմիածնում հազիվ էին ինչ-որ չափով գործը հունի մեջ դրել, մաքրել, լողացրել, հագցրել որբերի մի մասին (թեպետ անվերջ ավելանում էին նորերը), երբ «19-ի գիշերը օգոստոսի մթնեց, սկսեց փայլատակել ու որոտալ և կաթկթել անձրևը։ ...Դնացինք Բագրատի, Խո-

---

44 «Հորիզոն», 1915, № 173։

բենի մոտ, Արսենն էլ էնտեղ էր»[45]։ Թումանյանը նրանցից պահանջում է, «որ բոլոր շինությունների դռները բացեն՝ գաղթականներին ներս թողնելու։ Մայր տաճարը դժվարացան—Գայանեն ու նոր Վեհարանը թողին»։ Այնուհետև շարունակում է գրառումները այսպես. «Ժողովրդին ձեն տվի—տարա—ուսանողները։ Սոսկալի խռնում, երեխաները, ունեցած-չունեցած շալակած, մինչև անգամ մեռելները» (ՈՒՀ 2, 376)։

Ինչպես ծոցատետրի բոլոր էջերում, այստեղ էլ նշումները կատարված են խիստ հակիրճ, հապճեպ, որոնք այդպես էլ չընդարձակվեցին, ու այսօրվա, վաղվա ընթերցողի համար շատ բան մնաց անհասկանալի։ Այլ աղբյուրներից հայտնի է միայն, որ այդ օրը վերակառուցվող Վեհարանը բաց անելու, որբերին տեղավորելու համար ուժեղ ընդհարում է առաջացել Թումանյանի և կաթողիկոսի միջև։ Վեհարանը բացվել էր հակառակ կաթողիկոսի ցանկության, ուստի վերջինս զայրացած բացատրություն էր պահանջել, հիշեցնելով, թե ինքը ամենայն հայոց կաթողիկոսն է, և առանց իր կարգադրության ոչ ոք իրավունք չուներ բացելու Վեհարանը։ Թումանյանը չի արդարացել. առանց այլևայլության ու մեկնաբանությունների պատասխանել է, որ ինքը Ամենայն հայոց բանաստեղծն է և գործում է այդ իրավունքով[46]։

---

45 Բարկեն վարդապետը էջմիածնի դիվանապետն էր, այդ օրերին փախստականներին օգնող կենտրոնական կոմիտեի՝ տեղի ներկայացուցիչը, Խորենը (Մուրադբեկյան) եպիսկոպոս էր, հետագայում՝ հայոց կաթողիկոս, Արսեն Ղլտրճյանը Թումանյանի պատանեկության շրջանի մտերիմ ընկերներից էր, որ ընդունել էր հոգևոր կոչում։

46 Ն. Թումանյան, էջ 127։ Այդ մասին գրել է նաև Վարդգես Անհարոնյանը, որը վկա լինելով անցուդարձին, դեպքը նկարագրում է այսպես։ Երբ Թումանյանը նկատել է էջմիածնի մոայլվող երկինքը, կանչել է մի երիտասարդի և պատվիրել.

«—Վազիր Վեհարան և ասա կաթողիկոսին, որ ես խնդրում եմ անմիջապես բանալ տալ բոլոր եկեղեցիների, վանքերի և ազատ շենքերի դռները և գաղթականությանը այս գիշեր պատսպարել անձրևից»։

Վերադառնալով, երիտասարդը հայտնել է, որ կաթողիկոսը «հրամանդել է բաց անել Գայանեի, Շողակաթի և Հռիփսիմեի վանքերը, բայց Վեհարանի նոր շենքին պատվիրել է ձեռք չտալ և փակ պահել ... Ինչ,— ցասումից դողացող ձայնով բացականչեց Հովհ. Թումանյանը.— Անմիջապես վերադարձիր Վեհարան և ասա Ամենայն հայոց կաթողիկոսին, որ Ամենայն հայոց բանաստեղծը պահանջում է բաց անել նաև նոր Վեհարանի դռները և պատսպարել գաղթականությունը։

Երբե՞ք, ոչ դրանից առաջ, ոչ դրանից հետո Հովհ. Թումանյանին այդպես զայրացած չէի տեսել։

Մի քանի րոպի հետո լուր եկավ, որ նոր Վեհարանի շենքը ևս տրամադրված է գաղթականությանը։

Անձրևը արդեն սկսել էր կաթկթել» (Վարդգես Անհարոնյան, Հովհաննես Թումանյան. Մարդը և բանաստեղծը, էջ 133—135)։

Օգոստոսի 19-ի ազնիվ համառոտ նկարագրությունը մասամբ լրացնում է Ն. Թումանյանը։ Ծոցատեսարից կատարված վերևի մեջբերման մեջ ուշադրություն է գրավում Թումանյանի «ժողովրդին ձեն տվի, տարա—ուսանողները» տողը, որի մասին Ն. Թումանյանը պատմում է հետևյալը. «Ուսանողները՝ Լևոն Լիսիցյանը, Լյալյա Աճեմյանը, Ալեքսանդր Բարխուդարյանը, ջահերով (երկար փայտե ձողերի ծայրին աթար էին ամրացրել, վրան նավթ էին ածել ու վառել) գնում էին հայրիկի երկու կողմից և լուսավորում էին նրա ճանապարհը։

Հայրիկը թիկնոցի մեջ փաթաթված, տեղատարափ անձրևի տակ առաջ էր գնում, նրան հետևում էր հազարավոր զաղթականությունը...

Այդ միջոցին հայրիկը հիշեցնում էր «Աղավնու վանքի» հայր Օհանին...»[47]։

Գաղթականները թրջվելու, մրսելու վտանգից ազատված էին, ինչոր ձևով տեղավորված, կիսամերկ մարմինները՝ մասամբ ծածկված։ Բայց էջմիածնի ամեն օրը լի էր նոր անակնկալներով, մեկը մյուսից ավելի վտանգավոր ու մահադույժ։ Սկսվում է հիվանդությունների համաճարակը։ Տիֆը, դիզենտերիան, տրախոման և մի քանի այլ հիվանդություններ Վանում սկսվել էին նախքան գաղթը (ՈՒՀ 2, 377)։ Ավելին, դեռևս մարտին, երբ այդ ասոիճան մեծ չէր փախստականների թիվը, հիվանդությունների համաճարակը սկսել էր այնպիսի կիրպարանք ստանալ, որ էջմիածնում կարգադրություն էր արվել հիվանդությունների տարածված վայրերի դպրոցներում դասերը ավարտել մեկ ամիս շուտ՝ մայիսի 1-ին[48]։

Համաճարակի առաջին օրերից այնքան շատ էին մեռնում, որ նույնիսկ չէին հասցնում թաղել. «(օգոստոսի) 23-ից էջմիածին 70 մեռել մնաց անթաղ, առաջին օրից էլ մի քանի տասնյակ կային։ 24-ին ավելի շատ մնացին։ Գետինը պինդ է, և բանվորներ չեն գտնում։ Երեք օր առաջվա դիակները արևի տակ ուռան-պատռեցին և դարշահոտություն տարածեցին»,— գրում է Թումանյանը։

Անտիպ պատուիկներից մեկում հանդիպում ենք այսպիսի գրառման «Թաղելու խնդիրը. միայն մի արշին են փորում, իսոր պիտի լինի։ Մի գյուղում 15 դիակ մոռացվել են կամ թողնվել։ 140 բանվոր ունեն՝ քիչ է։ Носилка—ընդամենը 11 հատ, թե հիվանդ և թե հաճախ մեռել տանելու և թե հիվանդներին բաղնիք տանելու...»։

---

47 Ն. Թումանյան, էջ 126։

48 «Հորիզոն», 1915, № 66։

Թումանյանի ծանր վիճակը, հոգսերի տեսակները պատկերացնելու և ընդհանուր իրավիճակին տեղեկանալու համար հետաքրքիր է նաև հետևյալ անտիպ պատառիկը. «Ամեն ժողովի խնդիր է լինում, թե ջրերը վարակված են, եռացրած ջուր պիտի տալ, և կուբեր չկան ու չկան։ Հացը խմոր է, նպաստում է դիզենտերիային և մնում է միշտ խմոր։

Հապա Իգդիրի ջո՞ւրը։

Խնդիրները քննվում են ժողովներում, երբ արդեն գաղթականները ցրվել են և մասամբ վերադարձել»[49]։

Օգոստոսի 31-ին Թումանյանը դատեր հետ մեկնում է Երևան՝ որբանոցի 125 երեխա տեղափոխելու, անխնամ մնացած 43 կրծքի երեխաների համար հոգատար ձեռքեր ապահովելու[50]։ Գործը ավարտելուց հետո հաջորդ օրը՝ սեպտեմբերի 1-ին, կրկին վերադառնում են Էջմիածին, որտեղ արդեն կարգադրություն կար, համաճարակին ավելի լայն տարածում չտալու համար. գաղթականությանն արգելել Էջմիածնից դուրս գալու։ Ճեմարանը վեր էր ածվել հիվանդանոցի, ուսումնական տարին հետաձգված էր։

Բայց պաշտոնական կարգադրությամբ անհնարին էր զսպել համաճարակից սարսափահար տառապյալների հոսքը դեպի այլուր։ Երևանից Էջմիածին ժամանելով՝ սեպտեմբերի 1-ին Թումանյանը Թիֆլիս է ուղարկում իր երրորդ հեռագիրը, տեղեկացնելով հետևյալը. «Մոտ երկու հազար փախստականք ծնողներ ետ առան իրենց զավակները։ Այսօր երեկոյան ժամը 7-ին Թիֆլիս ուղարկվեց 600 հոգի։ Իգդիրի շրջանում, Էջմիածնում և Երևանում մեռնում են օրական մոտ 700 հոգի»։ Հեռագրի վերջին նախադասությունը դուժում էր նոր աղետ. «Սպասվում է Վանից վերադարձող փախստականների մի հոսք՝ բաղկացած մոտ 25000 հոգուց»[51]։

Օգոստոսի վերջերին կարճ ժամանակով Էջմիածին են գալիս Մարտիրոս Սարյանը, Նիկողայոս Ադոնցը, Աշոտ Աթանասյանը և այլ մտավորականներ, բայց Թումանյանը միշտ մնում էր ծանրաբեռնված, հոգնած, սպասում էր Թիֆլիս մեկնելուն, սակայն գործը կիսատ թողնել չէր կարող։

---

49 ԹԹ, Նոր նյութեր, թղթ. № 32։

50 Նույն տեղում, ՓՐ, № 3776։

51 «Հորիզոն», 1915, № 198։

Հիվանդություններից խուսափելու միակ քիչ թե շատ հնարավոր միջոցը կոնյակ, գինի, սուրճ օգտագործելն էր, որով Թումանյանը ապահովում էր իր և դստեր համաճարակից խուսափելը։

Թումանյանի համար մի առանձին դժվարություն էր ներկայացնում օգնողների, գործողների տարբեր բնավորության, մասնագիտության մարդկանց պահանջների, զանազան ընկերությունների ներկայացուցիչների հետ աշխատելը։ Դժդոհ էր հատկապես հողևորականության անճարակությունից, անհոգությունից։ Պատահում էր, որ դժվարությամբ ձեռք բերված անհրաժեշտ իրերը, մթերքը օրերով մնում էին պահեստներում, չհասնելով ըստ պատկանելույն։ Նույնիսկ նման գործեր՝ հավաքված իրերի (գդալներ, ամանեղեն, սպիտակեղեն) դաղթականներին բաժանելը տնօրինում էր Թումանյանը, նրանից միշտ անբաժան էր Նվարդը, որ պահապան հրեշտակի նման չէր հեռանում բանաստեղծ հորից։

Այդ օրերին Թումանյանի ստացած պաշտոնական գրություններն ու անձնական խնդրանքները լրացնում են էջմիածնի ծոցատետրի տեղեկությունները, ավելի իրական, շոշափելի դարձնում այն ծանր բեռը, որ տարել է բանաստեղծն իր ոչ այնքան առողջ, տկար ուսերին։

«Սիրելի Հովհ. Թումանյան,— գրում է մի ոմն Սահակ վարդապետ— Այն երեխան, որի համար խնդրեցի ընդունել որբերի կարգում՝ գրաբերս է. խնդրեմ չմերժել խնդիրս։ Մոտ մի շաբաթ է, որ դռանս նստած լաց են լինում յուր փոքրիկ քրոջ հետ հացի համար»։

Սեպտեմբերի 5-ին ստացած գրություններից.

«Մեծապատիվ պ. Հովհ. Թումանյան,— գրում է Բարդուղիմեոս եպիսկոպոսը,— Վանեցի Մարկոս անուն գրաբերիս կինը մեռավ երեկ, երկու փոքրիկները մնացին անխնամ։ Ինքը աղքատ է՝ բառի իսկական նշանակությամբ։ Խնդրում եմ սորա փոքրիկները ընդունեք Ձեր կառավարած որբանոցը։ Ինքը ծառայում է ինձ մոտ»[52]։

Որքան էլ տարօրինակ թվա, Թումանյանը ստացել է նաև այսպիսի գրություն. «Հարգելի պ. Թումանյան, խնդրում եմ, որքան կարելի է շուտ, կոճեր բերել տաք, կարերը տանում են, կոճ չկա, սպիտակ, 50 համարի։

Հարգանոք՝ Քրիստինե»։

Իսկ որքան դժվար էր աշխատող ձեռքերը էջմիածնում պահել-պահպանելը. չէ՞ որ անհրաժեշտ էր հոգալ նաև նրանց ապրուստը, ապա-

52 ԹԹ, Նոր նյութեր, թղթ. № 32։

հովել նրանց պահանջները, զգուշանալ նրանց վարակվելուց, սովորեցնել՝ շհուսահատվել, տակա։

«Հարգելի պ. Հ. Թումանյան,— օգոստոսի 30-ին գրում են շատախցի ուսուցիչներ Սահակ Մարտիրոսյանը և Մարգար Մովսիսյանը։— Այստեղ հիվանդությունները մեծ ծավալ են ստացել. այնպես որ, այս միջավայրի մեջ գործելը կասկածելի է և միանգամայն վնասակար, որովհետև մեր առողջությունն էլ կարող ենք վրա տալ։

Մենք վաղվանից իսկ Երևան մեկնելու միտք ունենք։ Ուստի սույն երկտողով խնդրում ենք Ձեզանից, որ բարեհաճեք հանձնարարական մը շնորհել մեզ, որպեսզի Երևանում մեզ գործ տային»։

Կարծում ենք, մեկնաբանությունները ավելորդ են. ամեն մեկից չէր կարելի պահանջել անձնազոհության նույն կամքի ուժը, մանավանդ, դրանք էլ տուն-տեղ կորցրած, ողբերգական ներկայով և անորոշ ապագայով ապրող մարդիկ էին, գլուխները կորցրած՝ այդ, Թումանյանի արտահայտությամբ, մահաստանում։

Իսկ թե որքան ուշադիր էր Թումանյանը Էջմիածնում ինքնակամ գործող գրության քույրերի նկատմամբ, պատմում է Նվարդ Եղիբյան-Բաղդասարյանը և ամփոփելով խոսքը, գրում. «Ես երջանիկ եմ զգում ինձ, որ առիթ եմ ունեցել աշխատելու նրա ձեռքի տակ» (ԹԺՀ, 685—686)։ Այս բոլորից հետո, պատահական չէր, որ օգոստոսի 30-ին Բաքվի հայոց մարդասիրական ընկերության դահլիճում տեղի ունեցած բազմամարդ ժողովում, որին նախագահել է տեղի հայոց թեմի առաջնորդ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը, Էջմիածնի փախըստականներին օգնելու գործի կազմակերպման ընթացքի շուրջը զեկուցելիս՝ Ռուբեն Օհանջանյանը պատմել է բանաստեղծ Թումանյանի և նրա օգնականների գերմարդկային ճիգերի գնով՝ որբ երեխաների վիճակը նշանակալի չափով բարվոքելու մասին։

Սեպտեմբերի 8-ին Էջմիածնի Մատենադարանում տեղի է ունենում նիստ 18 բժիշկների և Թումանյանի մասնակցությամբ։ Ելույթ ունենալով, նա առաջարկում է. «...շուտափույթ ժողովել բաց երկնքի տակ գտնվող գաղթականներին, որովհետև շուտով կսկսվեն ցրտերը, և եթե կան գաղթականության մեջ փոքր ի շատն առողջներ՝ դրանք էլ կհիվանդանան»[53]։ Թումանյանի առաջարկին միանում է բժիշկ Լ. Մյասնիկովը, իսկ «Եղբայրական օգնության» կոմիտեի ներկայացու-

---

53 «Հորիզոն», 1915, № 215։

ցիչ Բաբկեն վարդապետը կրկին առաջարկում է գաղթականներին պատսպարել Վեհարանի նոր շենքում։

Թումանյանի արխիվում պահպանվում է 1915 թ. սեպտ. 2 թվագրությամբ մի նամակ (ստորագրված է Հակոբ, որն ամենայն հավանականությամբ Հակոբ Քոչարյանն է՝ Հայոց ազգային բյուրոյի քարտուղարը), այն տեղեկացնում է Թեհրանի բժիշկ Տեր-Ստեփանյանի՝ էջմիածին գալու, Ազգային բյուրոյի հանձնարարությամբ՝ կամավորների և գաղթականության օգտին հանգանակություն կազմակերպելու նպատակով նրան դեպի Հնդկաստան ճանապարհելու մասին։ Հայտնելով, որ բժիշկը լավ հանձնարարականներ ունի անգլիական և ռուսական դեսպանատներից, միաժամանակ խնդրում են Թումանյանին միջնորդել, որ կաթողիկոսը օրհնի նրա առաքելությունը հատուկ կոնդակով և բժշկին ընկերակից դարձնի մի կարող, ազդեցիկ հոգևորականի, որպեսզի հանգանակության արդյունքը լավ լինի[54]։

Այս փաստաթուղթը ապացույց է, որ էջմիածնում եղած միջոցին, այդքան զբաղված որբերի ու գաղթականության գործով՝ Թումանյանը մասնակցել է նաև հանգանակությունների կազմակերպմանը և եղել է տեղի ամենաազդեցիկ գործիչը՝ կաթողիկոսին դիմելու համար, նաև միջնորդ Ազգային բյուրոյի կողմից։

Էջմիածնում գործը դրված էր բավարար հիմքերի վրա, բայց ոչ պատերազմի վերջն էր երևում, ոչ փոքրանում էր գաղթականության, որբերի հոգը։ Թումանյանի ուժերը սպառված էին։

Ե՞րբ Թումանյանը վերադարձավ Թիֆլիս։

Քրոջը՝ Աշխենին, Նվարդ Թումանյանի ուղղած 1915 թ. սեպտեմբերի 2-ի նամակում հայտնվում է, որ հայր ու աղջիկ Թիֆլիս կգնան «երևի մինչև սեպտեմբերի 15-ը... գուցե ավելի շուտ»[55]։ Վերևում տեսանք, որ սեպտ. 8-ին Թումանյանը էջմիածնում էր։ Նվարդի հուշագրություններից հայտնի է, որ Թիֆլիս հասել են սեպտեմբերի 15-ին, իսկ 17-ին, լսելով եղբոր՝ Ռոստոմի սպանության լուրը, հայրը մեկնել է Դսեղ[56]։ Այլ է Արտավազդ Թումանյանի՝ հոկտեմբերի 1-ի վկայությունը Պ. Մակինցյանին ուղղված նամակում. «Պոետի հալը հալ չի. Նվարդի հետ վերադարձավ էջմիածնից շատ տկար և չանցած հինգ օր՝ Ռոստոմի սպանության դեպքը պատահեց»[57]։ Այսպիսով, ճշգրիտ

54 ԳԱԹ, Թֆ, ց 2, № 482։

55 ԹԹ, ՓԲ, № 3776։

56 Ն. Թումանյան, էջ 129—130։

57 ԹԹ, ՓԲ, № 3788։

օրը հայտնի չէ։ Հենվելով դստեր՝ Աշխենի և որդու՝ Արտավազդի, 1915 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին գրած նամակների վրա, կարելի է մոտավորապես կռահել, որ Թումանյանը Թիֆլիս վերադարձել է սեպտ. մոտ 10—11-ին։ Նույն ամսի 16-ին, երբ Դսեղում տեղի է ունեցել եղբոր՝ Ռոստոմի ողբերգական մահը, բանաստեղծը մեկնել է հայրենի գյուղ և ապա, թաղման արարողություններից հետո, վերադարձել Թիֆլիս։

Էջմիածնում տեսած հազարավոր մահերը չէին կոփել բանաստեղծի դիմադրողականությունը, ընդհակառակը՝ դարձրել էին ավելի զգայուն։ «Հայրիկի վրա շատ ծանր տպավորություն է թողել Ռոստոմի սպանությունը և երկար ժամանակ նա չի պարապի,— գրում է Արտավազդը վերոհիշյալ նամակում և ապա ավելացնում. «Իվան Ֆադեյիչի ծանր օրերն են»[58]։ Նույնն է հիշում Նվարդը. «Վերադարձավ բոլորովին փոխված, մոտ երկու ամիս մնաց հիվանդ պառկած։ Տխուր էր, ոչ ոքի չէր ընդունում, ոչինչ նրան չէր հանգստացնում»[59]։

Ինչպես ասվեց, բանաստեղծի որդին այն կարծիքին էր, թե հայրը «երկար ժամանակ չի պարապի», բայց, ի վերջո, գրելը Թումանյանի համար այդ օրերին նաև սփոփանք էր։ Հոկտեմբերի 4-ին լույս է տեսնում «Թանկ մարդու հիշատակին» հոդվածը՝ գրված Էջմիածնի համաճարակին զոհ դարձած գթության քույրերից մեկի՝ ուսուցչուհի Սաթենիկ Օհանջանյանի հիշատակին (VI, 207)։

Այնուհետև նա երկու հոդվածով («Մի երկու վկայություն», «Աղետ է, ոչ թե քաղաքականություն») սուր վիճաբանության մեջ է մտնում «Закавказская речь» օրաթերթի խմբագիր Կ. Տումանովի (Տումանիշվիլի) հետ, որը «Грузин» ստորագրությամբ իր երկու նամակներով (№ 205, 213) «հայ ժողովրդի էս անպատում աղետի հանդեպ, վեր է կացել ու ազգային քաղաքական զայմաղալ է սարքել» (VI 214)։ «Грузин»-ի կարծիքով, Կովկասում բնիկներ են միայն վրացիներն ու թուրքերը, իսկ հայերը եկել են ռուսների՝ Անդրկովկաս գալուց հետո։ Թումանյանը պատմական աղբյուրներով ապացուցում է ճշմարտու-

---

58 Նույն տեղում։

59 Ն. Թումանյան, էջ 130։ Թումանյանի հիվանդության մասին գրում է նաև «Հորիզոնը» (1915, № 268, նոյեմբ. 28), հայտնելով, թե նա շուտով մեկնելու է Հանքային ջրեր բուժվելու։ Այդ ձգձգվում է մինչև 1916-ի ամառը, երբ բանաստեղծը մեկնում է Բորժոմ։ Բուժման ձգձգումը կապ ուներ ոչ միայն դրամական հնարավորությունների հետ, այլև ազգային գործերի, որոնք ամեն ինչից բարձր էր դասում նա։

թյունը և ցույց տալիս հեղինակի տգիտությունը։ Վերջինս ոչ միայն պատմություն չգիտի, այլև անտեղյակ է այդ օրերի այն քաղաքական իրադրությանը, որի պատճառով հայ գաղթականությունը թողել էր իր տուն ու տեղը և հասել Կովկաս։ Քննարկվում էր շատ ցավոտ հարց, որին Թումանյանը պատասխանում է հրապարակախոսական կրքով, թեպետ «Грузин»-ի նամակները շարունակվում են, մեծ աղմուկ առաջացնելով ժամանակի հայկական, ռուսական, վրացական մամուլում (VI, 214—223)։

Նոյեմբերի 15-ին տպագրվեց Թումանյանի «Հոգեհանգիստ» բանաստեղծությունը, որով նա կարծես փորձել է ազատվել իր ներքին ողբերգությունից՝ հայոց համազգային ողբերգությունից։ Բանաստեղծը, թվում է, դատարկել է իր լիքը սիրտը, որպեսզի բեռնաթափվի էջմիածնի ծանր մղձավանջից, եղբոր սպանության թողած խոր ազդեցությունից։

Հայ ժողովրդի բանաստեղծը հոգեհանգիստ է կարդում իր «ազգի անբախտ զոհերի» հիշատակին. իսկապես հոգեհանգիստ, որին պակասում է միայն կոմիտասյան բազմաձայն պատարագը։

...Որ շեն ու քաղաք, որ սար ու հովիտ, ծովից մինչև ծով
Մարած են մնռած, փրոված ու ցրված հազար հազարով...

Այս բանաստեղծության մեջ չկա մեկ տարվա ընթացքում հրապարակված հայրենասիրական չափածո գործերի և հոդվածների թումանյանական լավատեսությունը, որի մղումով նա բազմիցս հավատացնում էր, թե իր ժողովուրդը պայքարում է վերջին անգամ, ապրում է վերջին տագնապը և խոստանում էր «հանուր կյանքի արշալույս»։

Բանաստեղծը ծանր հոգեվիճակի մեջ է, այդ ակնհայտ է հատկապես երկու անգամ կրկնվող այս տողերում.

—Հանգե՞ք, իմ որբեր... իզո՞ւր են հուզմունք, իզո՞ւր և անշահ...
Մարդակեր գազան՝ մարդը՝ դեռ երկար էսպես կրմնա... (I, 185—186)։

* * *

Ինչպես 1914-ի նոյեմբեր—դեկտեմբեր ամիսների այցելությունը ռազմաճակատ, այնպես էր Վանում ունեցած հանդիպումները, լսածն ու տեսածը ցարական զորավարներից, հուլիսյան անսպասելի նահանջն ու գաղթը իր ծայրահեղ ողբերգական հետևանքներով, որոնց ականատես եղավ Իգդիրում և էջմիածնում, պետք է որ համոզեին

Թումանյանին, թե իզուր է ամեն ջանք ու հնար կամավորական խմբերը պահելու։ Բայց նա այժմ արդեն բարձր էր գնահատում նրանց դերը կենդանի մնացած, դեպի Կովկաս գաղթած ժողովրդի կյանքի ապահովման գործում։ Պետականությունը կորցնելուց հետո, առաջին անգամ հայ ժողովուրդը թեկուզ քանակով քիչ, բայց զորք ու զինվոր ուներ, որը մեծ նվիրվածությամբ, հսկայական զրկանքներով կռվել էր իր ազատության համար, հասել որոշակի հաջողությունների։ Ահա թե ինչու Թումանյանը չէր ուզում տեսնել նոր դարձի ճանապարհ։ Նրան առաջնորդում էր լավատեսությունը, որի մղումով դեռևս 1913-ին գրել էր.

Մենք միշտ անսասան առաջ պիտ գնանք,
Ինչքան մեր համբան լինի ահարկու (I, 171)։

VII

ԱԶԳԱՅԻՆ ՃԱԿԱՏԱԳՐԻ ԱՐՀԱՎԻՐՔՆԵՐԻ ՄԵՋ
(1916—1919 թթ.)

Չնայած հուլիսյան նահանջի ողբերգության, որին ականատես և մասնակից էին կամավորական խմբերը, այնուամենայնիվ, նրանք դեռ բարձր էին պահում իրենց ազգային արժանապատվությունը և տակավին հեռու էին հուսահատությունից։

Կովկասյան բանակի բարձր հրամանատարության արգելքներին չենթարկվելով, 1915-ի աշնանը փորձ է արվում վերակազմել հայկական գնդերը առանձին-առանձին[1]։ Ազգային բյուրոյի կոչով Եվրոպայից ու Ամերիկայից մեծ խմբերով կրկին Կովկաս են գալիս հայ կամավորները իրենց ծախսերով, հետևերը բերում ընտիր զենքեր, դաշտային հեռախոսներ, հեռադիտակներ, որոնք բոլորը բռնագրավվում են Թիֆլիսի մաքսատանը՝ նոր փոխարքա Նիկոլայ Նիկոլաևիչի և զորավար Յանուշկևիչի կարգադրությամբ։

Ցարական այս նոր խարդավանքները պատճառ են դառնում հայ զինվորների հուսալքման, հուսահատության։

1915 թ. դեկտ. 27-ին, երբ արդեն գրեթե անտարակույս էր կամավորական խմբերի ցրումը, Ազգային բյուրոյի նիստում ելույթ ունենալով, Թումանյանը հիշել է Արևմտյան ռազմաճակատում երկու անուամ հանդիպած, ծագումով հայ գեներալ Օգանովսկու և դիվանագետ, Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սազոնովի խոսքերը՝ թե կամավորական խմբերը «հայկական ոսկեգույն զորքերի կորիզն են»[2]։

Եթե ցարական պաշտոնյաները այդ ելակետով հալածում էին կամավորական խմբերին, նախապատրաստում նրանց ցրումը, ապա բանաստեղծը նույն ելակետով պնդում էր՝ ամեն գնով պայքարել հանուն այդ խմբերի պահպանման, քանի որ նրանք ոչ միայն պայքարում են,

---

1 «Համառոտ տեղեկագիր Ազգային բյուրոյի գործունեության, 1915—1917 թվերի ընթացքում», էջ 5։

2 ՊԿՊԱ, ֆ 222, ց 1, գ 111, թ 13։

կռվում Թուրքերի դեմ, այլև միավորում են, համախմբում հայ ժողովրդին. «Ամերիկայից մինչև Ասիա,— ասել է Թումանյանը,— հայ ժողովուրդը իր զավակներով և փողով մասնակցում է այդ խմբերին։ Էսպիսի ուրիշ դրուժինա չկա և դրա համար իր հատուկ կազմակերպությունը պիտի ունենա։ Եթե մեր ուզածը չանցնի, մենք պիտի ասենք՝ ժամանակ տվեք, որ աշխատենք»[3]։

1916 թ. հունվ. 7-ի Ազգային բյուրոյի նիստում վերստին ելույթ ունենալով՝ Թումանյանը կրկին պնդում է նույնը[4]։

Կամավորական խմբերի ռազմական գործողությունների մեջ Թումանյանը գնահատում էր միայն այն սրբազան ազատագրական պայքարի իրականացումը, որ հայ ժողովրդի դարավոր երազն էր և ոչ մի կապ չուներ Թուրքիայի նկատմամբ Ռուսաստանի նվաճողական քաղաքականության հետ։ Այս իմաստով հետաքրքրական է Թումանյանի մի այլ ելույթը Ազգային բյուրոյի նիստում 1915 թ. դեկտ. 19-ին։ Նիստի արձանագրությունից, որը հաղիվ է կարդացվում, մոտավորապես պարզվում է, որ փոխարքան կարգադրել է՝ հայ կամավորական խմբերը տեղափոխել պարսկական ճակատ՝ կռվելու Պարսկաստանի դեմ։ Ահա մի նոր հնարանք. եթե ցրվելու էին կամավորական խմբերը, ինչո՞ւ էին նրանց նոր ռազմաճակատ տանում։ Պարզ է, որ այս հրամանը ևս նախապատրաստում էր կամավորական խմբերի ցրումը, կամենում էին ջլատել ուժերը և դրանով հեշտացնել խմբերի քայքայումը։

Փոխարքայի այդ կարգադրությանը դեմ է գուրս գալիս Թումանյանը, պատճառաբանելով, թե Պարսկաստանը Թուրքիա չէ, որի դեմ կռվի հայ զինվորը։ Չմտնելով մանրամասների մեջ՝ ասենք, որ բյուրոն ուշացել էր այդ հարցը քննարկել. փոխարքայի որոշումը արդեն կար կամավորներին պարսկական ճակատ ուղարկելու մասին։ Չնայած դրան, ընտրվում է հանձնաժողով Թումանյանի, Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանի մասնակցությամբ, որը պետք է բանակցեր փոխարքայի հետ՝ արգելելու կամավորների մուտքը պարսկական ճակատ[5]։

Բյուրոյի հաջորդ նիստերի արձանագրություններում այդ մասին որևէ հիշատակություն չկա, ուստի չենք կարող ասել, թե ինչ արդյունքի է հասել Թումանյանի այս նոր առաքելությունը։

---

3 Նույն տեղում։

4 Նույն տեղում, թ 21։

5 Նույն տեղում, թ 6։

Չնայած ռուսական զորավարների տարածած չարամիտ լուրերին, կամավորական խմբերը շարունակում էին կռվել անօրինակ նվիրվածությամբ, հաղթանակի, ազատության հաստատ հեռանկարով։ Բայց 1915-ի դեկտեմբերին Կովկասի փոխարքա Նիկոլայ Նիկոլաևիչը ստանում է կայսեր հրամանը կամավորական խմբերի «վերակազմության» մասին, որով խմբերը լուծարքի են ենթարկվում, իսկ զինվորներից կազմվում են նոր հայկական հրացանաձիգ գումարտակներ[6]։

Կամավորական խմբերը ցրելու հրամանի իրագործումը հայ մարտիկների մեջ առաջացրեց բարոյալքում։ Հատկապես արևմտահայերն ու ամերիկահայերը թողեցին ռազմադաշտը, իսկ նոր կազմած գումարտակների մեջ «...մնացին միայն ռուսահպատակ կամավորները, այն էլ նրանք, որոնք ենթակա էին զինվորակոչության»[7]։

Կամավորական խմբերի ցրելուց հետո Ազգային բյուրոյի առջև նոր խնդիրներ են ծառանում։ Անհրաժեշտ էր ապահովել Կովկաս եկած և ոչ իրենց կամքով ռազմաճակատից հեռացած կամավոր զինվորների դրամական ծախսերը։ Դանր էր մանավանդ հաշմանդամների վարձատրության գործը, զոհված զինվորների ընտանիքներին ապահովելը։

Բյուրոյի 1916 թ. մարտի 12-ի նիստում Թումանյանը հարց է բարձրացնում լիկվիդացիայի գումարների դանձման մասին[8]։ Թերևս դրա արձագանքն էր, որ թագավորական հրամանով գումարներ են ուղարկվում Կովկաս՝ հայերի նկատմամբ գործած մեղքերի հետևանքների թողած վատ տպավորությունը մեղմելու համար։ Բյուրոն տարբեր քաղաքներում ուներ իր ճյուղերը, ուստի դրամ հայթայթելու նպատակով դիմել էին բոլոր գլխավոր ճյուղերին՝ Բաքվի, Ն. Նախիջևանի, Մոսկվայի, Պետրոգրադի կոմիտեներին, կաթողիկոսին, բայց հավաքված գումարը, այնուամենայնիվ, բավարար չէր բոլոր ծախսերը հոգալու համար։

Դեռ 1915 թ. հուլիսյան գաղթից հետո, երբ հսկայական թվով գաղթականություն էր հավաքվել Անդրկովկասում, Ազգային բյուրոն օգնություն էր ստացել ամերիկահայերից, որը շարունակվում էր նաև կամավորական խմբերի ցրելուց հետո, բայց այդ բոլորը չէին բավարարում ամբողջովին հոգալու եղած մեծ չափերի հասնող կարիքները,

---

6 «Համառոտ տեղեկագիր Ազգային բյուրոյի գործունեության, 1915—1917 թթ. ընթացքում», էջ 7։

7 Նույն տեղում, էջ 8։

8 ՊԿՊԱ, ֆ 222, ց 1, գ 111, թ 42։

չէին մեղմում հայ զինվորների նկատմամբ ցարական կառավարության անարդար վերաբերմունքի Ռոդզյանկոյի ազդեցությունը՝ հավատի կորուստը։

Այսպես թե այնպես՝ փաստը կատարված էր. կամավորական խմբերը ցրված էին, զինվորները, որոնք այնքա՜ն մեծ հայրենասիրությամբ, աղատագրության այնպիսի՜ հույսերով էին հավաքվել՝ վերադառնալու կորցրած հայրենիքը, մի մասը մեկնում է օտարության իր բնակավայրը, մյուսը, մնալով Կովկասում, կտրվում ընտանիքից։

Ազգային բյուրոյի առջև նոր խնդիր է առաջանում՝ մոռացության փոշիների մեջ չթաղել հայ զինվորի անձնազոհությունը, դալիք սերունդներին տեղյակ պահել կամավորական խմբերի, նրանց քաջարի ղեկավարների պայքարը հայ ժողովրդի գոյատևման համար։

1916 թ. մարտի 5-ի բյուրոյի նիստում հարց է բարձրացվել մի հատուկ ժողովածու հրատարակել կամավոր զինվորների սխրագործությունների մասին։ Որպես գրողների ընկերության նախագահ, Թումանյանը այդ ժողովածուի հրատարակության գործը իր վրա է վերցնում։ Որոշվում է հատուկ մարդկանց հանձնարարել նյութեր, հետաքրքրքական փաստեր հավաքել պատմության սեփականություն դարձնելու հայ զինվորի պայքարը իր ազատության համար։ Թումանյանի շատ ցանկությունների ու ծրագրերի նման ժողովածուի հրատարակությունը խափանվում է[9]։

Սակայն Թումանյանի այդ նախաձեռնությունը իրականացնում է Մ. Շաթիրյանը, որն Ազգային բյուրոյի հավանությամբ, 1916 թ. Թիֆլիսում, հրատարակում է «Հայ կամավորներ» վերնագրով նկարազարդ ալբոմ՝ հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն առաջաբաններով։ Այն արագորեն դպրոցվում է և ապա որոշ լրացումներով լույս տեսնում երկրորդ անգամ։ Ալբոմը ընդգրկում է անձնուրաց հայորդիների, նրանց քաջարի առաջնորդների նկարները, իսկ եկամուտը հատկացվում է կամավորների ընտանիքներին օգնելու գործին։

1916-ի ամռանը Ազգային բյուրոյին նման մի առաջարկ է արել Գր. Զալխուշյանը, այս անգամ հրատարակելու այսպես կոչված «Կարմիր գիրք», «որը պիտի ամփոփեր իր մեջ տաճկահայ ժողովրդի վերջին մարտիրոսության նկարագիրը»։ Առաջարկությունն ընդունվել է, որոշել են հրատարակել ռուսերեն, ֆրանսերեն, անգլերեն լեզուներով։ Զալխուշյանը հանգանակությամբ հավաքել է բավական գումար

9 Նույն տեղում։

և հրատարակել «Красная книга» վերնագրով (Ռոստով, 1919), իրականացրել նաև ֆրանսերեն հրատարակությունը (Փարիզ, 1919)։ Հետագայում արդեն Կովկասում որևէ փորձ չարվեց այդ ուղղությամբ. ժամանակները փոխվել էին, կամավորական խմբերի մասին խոսելը մեզ մոտ համարվում էր ազգայնամոլություն և դեռ ավելին... Բայց ոչինչ չի մոռացվել. արտասահմանում հրատարակվել են բազմաթիվ գրքեր, գրական հուշամատյաններ, ալբոմներ, որոնք նշանակալից դեր են խաղում հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմության այդ գրվագը հետագա սերունդներին հասցնելու համար։

* * *

Կամավորական խմբերի քայքայվելուց հետո գրավված բնակավայրերի հայ բնակչության համար ստեղծվում է մի նոր տաժանք։ Մնալով բոլորովին անօգնական, չիմանալով ռուսերեն, անեղյակ լինելով ռուսական օրենքներին, նրանք չէին կարողանում հարաբերության մեջ մտնել ռուս պաշտոնյաների հետ, մինչդեռ առանց այն էլ քայքայված ժողովուրդը անվերջ ենթակա էր քուրդ, թուրք ավազակների ամենավայրագ հարձակումներին։ Նոր կերպարանք ստացած թուրքական բարբարոսություններից մեզ հասել է ականատեսի վկայություն, որը կապվում է Թումանյանի մի բանաստեղծության ստեղծագործական պատմությանը և արժանի է առանձնակի ուշադրության։

1916 թ. ձմռանը[10] Սասունի մարտիկների կողմից Թիֆլիս ուղարկված Մարտիրոս վարժապետը Ազգային բյուրոյի նիստում ռազմաճակատի և հատկապես Սասունի մասին զեկուցելիս նկարագրում է Արևմտյան Հայաստանում մնացած հայության ծայրահեղ ողբերգական վիճակը քսանմեկի պատմությունների. «Ամենքս ցնցված էինք,— գրում է Արշակ Ջամալյանը,— իսկ Թումանյանի դեմքը սպիտակ ծեփի գույն էր առել. երբ Մարտիրոս վարժապետը սկսեց պատմել, թե ինչպես մեկ հայ կնոջ ստիպել էին խմել սեփական զավակի արյունը՝ սուլթանի կենացը՝ Թումանյանը ելավ տեղից և դողդոջ քայլերով մեկնեց նիստից։ Մի ամբողջ շաբաթ նա հիվանդ էր։ Այս դեպքերի ազդեցության տակ է գրված նրա մի ոտանավորը, որից հիշողությանս մեջ մնացել են միայն վերջին երկու տողերը.

---

10 Հեղինակը գրում է 1915-ի ամառ, որ անշուշտ վրիպում է, վկա՝ բանաստեղծության տպագրության ժամանակը՝ «Հորիզոն», 1916, փետրվարի 28 (№ 46)։

Եվ մարդն ամաչի շնից ու գելից,
Որ մարդ է ծնած իրեն նմանից...»։

Այս տողերը գրված լինելով հիշողությամբ՝ փոքր-ինչ աղավաղված են. պետք է լինի՝

Եվ մարդ ամաչի գելից ու շանից,
Որ մարդ է ծընվել՝ մարդու նըմանից[11]։

Բայց էականն այդ չէ. խոսքը վերաբերում է Թումանյանի «Դժոխքի հանդեպ» բանաստեղծությանը, որի ստեղծագործական շարժառիթը հաստատում է «Հորիզոն» օրաթերթը բանաստեղծության տպագրությունից հետո, իր հաջորդ համարում. այստեղ օրաթերթի խմբագրությունը հայտնում է, թե անցյալ համարում Հ. Թումանյանի «...բանաստեղծության մեջ ակնարկված երեխայի արյունը մորը խմեցնելու դեպքը վերջին օրերի իրականությունից է առած»[12]։

Մարդասիրական մեծ տառապանքով և թշնամու նկատմամբ անսահման նողկանքով տոգորված Թումանյանի բանաստեղծական խոսքը դարերին է հասցնում այն սոսկալի բարբարոսությունը, որ կատարվում էր հայ մարդու նկատմամբ և ստիպում նրան թողնելու իր բնօրրանը։

Հայության նոր արտագաղթին խոչընդոտ հանդիսանալու համար Ազգային բյուրոն դիմում է Կովկասի բարձրագույն իշխանությանը, խնդրելով թույլ տալ որոշ տեղերում դինել անպաշտպան ժողովրդին, ապահովել նրանց անվտանգությունը սեփական հողի վրա, դարավոր հայրենիքում։ Այդ խնդրանքին պատասխանել են, թե չեն կարող «...հայերին զինելով՝ գրգռել հարևան ժողովուրդներին»[13]։

Այնուհետև բյուրոյի նախաձեռնությամբ բնաշխարհ են ուղարկվում հայ մտավորականներից կազմված խմբեր, որոնք միջնորդ պետք է հանդիսանային ռուս պաշտոնյաների և հայ բնակչության միջև։ Շուտով արգելվում է այդ ևս. պաշտոնապես առարկում են, թե զինվորական տեսակետից «անթույլատրելի է այդպիսի քաղաքացիական

---

11 «Վեմ» Ա, Փարիզ, 1933, էջ 21։ Երկտողը ճշված է ըստ՝ Հովհաննես Թումանյան, Երկերի ժողովածու տաս հատորով, հատ. I, 1988, էջ 284։ Նախորդ գիտական հրատարակության մեջ այդ երկու տողը հանված է (I, 184)։

12 «Հորիզոն», 1916, № 47 (մարտի 1)։

13 ՊԿՊԱ, ֆ 228, ց 1, գ 7, թ 2։

խմբերի գործունեությունը ռազմաբեմի շրջանում, որից հետո մտավորականներից կազմված խումբը ետ կանչվեց»[14]։

Ինչպես տեսնում ենք, կամավորական խմբերի ցրելուց հետո Ազգային բյուրոն իր դերը կորցնում է։

Նախ, Վորոնցով-Դաշկովի պաշտոնից հեռանալուց հետո Գևորգ V կաթողիկոսը անձնական վրեժխնդրությամբ բյուրոյի նախագահ Մեսրոպ եպիսկոպոսին տեղափոխում է Աստրախան[15]՝ որպես տեղի հայոց թեմի առաջնորդ, նրան փոխարինող բերելով Աստրախանի նախորդ առաջնորդին՝ Մխիթար եպիսկոպոսին, որը մի խեղճ անձնավորություն էր, անկարող թեկուզ շնչին նախաձեռնության։

Թե ինչ էր տիրում բյուրոյի ներսում, տեղեկանում ենք Թումանյանի՝ 1916-ի նոյեմբերի 6-ի՝ Մեսրոպ եպիսկոպոսին հասցեագրված անտիպ նամակից։ Պարզվում է, որ բոլորովին խարխլվել է բյուրոյի զոյությունը, նիստեր տեղի չեն ունենում, ծայր են առել լուրջ դժգոհություններ, անվայել խոսակցություններ բյուրոյի առանձին անդամների վերաբերյալ։ «Պատմություններ են պտտվում՝ դրամական բովանդակություն ունեցող պատմություններ»,— գրում է Թումանյանը։ Ինչպես պարզվում է նույն նամակից, բյուրոյից դժգոհ էր հատկապես Անդրանիկը, որն անվերջ պահանջում էր իր միջոցով հանգանակված գումարի հաշիվը և չստանալով, նամակ էր գրել՝ մամուլում այդ մասին հանդես գալու, բայց Թումանյանը կանխել էր։ Դժգոհություններ են եղել մանավանդ գաղթականության մեջ՝ Փախստականներին օգնող կենտրոնական կոմիտեից։ Այդ դժգոհությունները պարզաբանելու համար Մխիթար եպիսկոպոսը քանիցս դիմել է Թումանյանի օգնությանը. «Տասն օր է մոտս ժողովներ են լինում»,— գրում է բանաստեղծը նույն նամակում[16]։ Ուրեմն բյուրոյին վերաբերող կնճռոտ հարցերը արդեն կենտրոնանում էին Թումանյանի բնակարանում, այն էլ պատվավոր նախագահի և հոգևոր առաջնորդի միջնորդությամբ։ Այդպես էր Թումանյանի ճակատագիրը, ազգային և մշակութային շատ հարցեր պտտվելով՝ ի վերջո հանգրվանում էին Ամենայն հայոց բանաստեղծի ուսերին։

Փետրվարյան հեղափոխությունից հետո Ազգային բյուրոն փորձում է աշխուժացնել իր գործունեությունը։

---

14 Նույն տեղում, թ 3։

15 Լեո, Անցյալից, էջ 360։

16 ԳԱԹ, Թֆ, № 413։

1917 թ. մարտի 7-ին հրավիրվում է առաջին նիստը քաղաքական նոր պայմաններում։ Իր ելույթում «Մշակի» խմբագիր Համբ. Առաքելյանը հայտարարում է, որ այդ ժողովը նվիրված է հեղափոխությունից հետո հայ ժողովրդի՝ ազգային հարցերի առաջադրման և բյուրոյի գործունեության նոր դիրքորոշմանը։ Բայց ժողովի արձանագրությունից երևում է, որ բյուրոն դոփում է նույն տեղում[17] ու բոլորովին պատահական չեն Լեոյի խոսքերը, թե «Ազգային բյուրոյի համար հեղափոխությունը բերում էր բնական մահ»[18]։

Չնայած ընտրվում է բյուրոյի նոր կազմ, նույնիսկ որոշվում է կենտրոնական կոմիտեն դարձնել 20 հոգի, բայց հաջորդ՝ մարտի 20-ի նիստում Թումանյանը բավարար է համարում 15-ը և դեմ արտահայտվում Գր. Զալխուշյանի համագումար հրավիրելու առաջարկին՝ համոզված, որ բյուրոն այլևս անընդունակ է, անկարող նոր գործ անելու։ Արվում էին անհեթեթ, արկածախնդրական առաջարկներ, բարկացվում էին սուր վիճաբանություններ, որոնցից ոչ մի օգուտ չուներ այնքան կարիքներ ունեցող արևմտահայությունը։ Նույն թվականի ապրիլի 4-ի նիստում Թումանյանը դեմ է արտահայտվում ելույթ ունեցողներից մեկի՝ Ամերիկայից օգնություն հայցելու առաջարկին, դրա մեջ որևէ հեռանկար չտեսնելով[19]։

Ինչպես տեսանք, Ազգային բյուրոյի նիստերի՝ Թումանյանի ելույթների մեր բերած օրինակներից, նա բազմիցս հակադրության մեջ է եղել Ազգային բյուրոյի անդամների, «վերևներից» եկած որոշումների հետ, առաջադրված հարցերի կապակցությամբ տվել է սկզբունքային, պատճառաբանված պատասխաններ։ Այդ իմաստով բոլորովին պատահական չեն Անդրանիկի խոսքերը, թե «Թումանյան մնաց Ազգային բյուրոյի մեջ և պայքարեցավ մութ ու տգետ ուժերուն դեմ...» (ԹԺՀ, 551)։

Այլևս հույսեր չկապելով Ազգային բյուրոյի աշխուժացման հետ, 1917 թ. մայիսին Թումանյանը մի նոր թափով նվիրվեց գրողների ընկերության գործունեությանը և Հայկազյան ընկերության կազմակերպման աշխատանքներին։ Մայիսի 27-ին տեղի ունեցած գրողների

---

17 ՊԿՊԱ, ֆ 222, ց 1, գ 8, թ 1—2։

18 Վեր, Անցյալից, էջ 360։

19 ՊԿՊԱ, ֆ 222, ց 1, գ 111, թ 113։

ընկերության նիստում հաստատվում է նոր կանոնադրություն, ընտրվում է նոր վարչություն դարձյալ Թումանյանի գլխավորությամբ։ Հաջորդ օրը Ազգային բյուրոյի վերջին նիստն էր, որին Թումանյանը արդեն չի մասնակցել։

Փոթորկոտ է եղել այդ վերջին նիստը, վեր է ածվել մի տեսակ հաշվեհարդարի, փնտրել են բյուրոյի գործունեության անհաջողության մեղավորներին։ Նիստին մասնակցում էր Անդրանիկը և, չնայած իր հետևողական ռուսական կողմնակցության, մեղադրում էր ցարական կառավարությանը, որը բացարձակորեն խաբեց իրենց. «Կախվելու արժանի են Մեսրոպ եպիսկոպոսը և ինքը, որ հավատացել են կառավարության խոստումներին»,— կարդում ենք Անդրանիկի խոսքերը այդ ժողովի արձանագրության մեջ։ Բյուրոն մեղադրվում էր հատկապես կամավորական շարժման համար, այն անվանվում էր արկածախնդրություն։ Խիստ ելույթ է ունեցել Համբ. Առաքելյանը։ Արամայիս Երզնկյանը սոցիալ-դեմոկրատական դիրքերից խստագույնս դատապարտում էր դաշնակցությանը և՛ կամավորական շարժման, և ինքնավարության ակնկալիքների համար, համոզված, որ հայերը պետք է չեզոք մնային, չմասնակցեին պատերազմին, քանի որ այն վարում էին իմպերիալիստական երկրները։

Նիստի մասնակից Լևոն մեղադրում էր բյուրոյին՝ կուրորեն փոխարքային հավատալու համար, իսկ ինքը, հայտարարել է նա, միշտ համոզված է եղել, որ Ռուսաստանը երբեք հայերին ինքնավարություն չի տա[20]։

Հետաքրքրական է, որ այդ հարցերին հետագայում անդրադառնալիս, Լևոն հիշել է մի ժողով «Հորիզոնի» հրատարակիչ Համբ. Մելիքյանի տանը, որտեղ մասնակիցները, ոգևորված կամավորական խմբերի առաջին հաջողություններով, առաջարկում էին հրապարակ հանել իրենց պահանջները ու պայքարել հանուն ինքնավարության. «Երկու հոգի էինք, որ հակառակ ուղղությամբ արտահայտվեցինք՝ Հովհ. Թումանյանը և ես»,— գրել է Լևոն[21]։ Նա իրավացի էր։

1914 թ. դեկտեմբերին, երբ Թումանյանը դեռ չէր վերադարձել ռազմաճակատից, «Հորիզոն» և «Մշակ» օրաթերթերում մի նոր բանակռիվ է սկսվում հայ ժողովրդի պահանջների շուրջ։ Քննության առարկան Արևմտյան Հայաստանի ինքնավարության խնդիրն էր, որի

20 ՊԿՊԱ, ֆ 222, ց 1, գ 4, թ 37—40։

21 Լևոն, Անցյալից, էջ 307։

առիթով քննադատել էին նաև Թումանյանին, հակառակ դիրքի կանգնած լինելու պատճառով[22]։

Հայկական հարցի մասին գրած իր հոդվածներում («Երեկվան պատմությունը և այսօրվան իրականությունը», «Ահա թե ինչու», «Հայկական հարցն ու իր լուծումը», IV, 203—206, 209—215, 225—236) Ազգային բյուրոյի ստեղծման օրերին (1912), դրանից առաջ և հետագայում, Թումանյանը քաղաքական ազատության կամ ինքնավարության հարց չի դրել՝ դրա համար հեռանկար չտեսնելով։ Նրա պահանջը սահմանափակվում էր հայ մարդու կյանքի, դույքի, պատվի և կուլտուրական զարգացման ապահովման մեջ, որը պիտի իրականանար Ռուսաստանի հովանավորությամբ։

Հայտնի է Թումանյանի մի անթվակիր գրառումը (կամ ծրագրային նշում՝ հետագայում ընդարձակ հոդված գրելու համար) Հայաստանի անկախության մասին։ Հրատարակիչները այն թվագրել են՝ 1918, որը հավանական է։ Իսկ եթե ուզենանք ավելի որոշակի դարձնել գրության ժամանակը, ապա պետք է ենթադրել, որ գրված է այն օրերին կամ քիչ անց, երբ ստեղծվեց Հայաստանի անկախ հանրապետությունը (1918, մայիսի 28), երբ Ղարաքիլիսայի պարտությանը հաջորդեց Հունիսյան անարդար դաշնագիրը Թուրքիայի հետ և երբ Արևելյան Հայաստանի լավագույն մասը, ըստ այդ պայմանագրի, անցավ Թուրքերին։ Անդրանիկը՝ այդ մեծ հայրենասերը, ոչ մի կերպ չընդունեց իր հայրենիքի նոր կորուստը, կտրեց հարաբերությունը Հայաստանի կառավարության ղեկավարների հետ և երբեք չներեց նրանց։ Բերվում է Թումանյանի գրառումը ամբողջությամբ.

«Այո՛, անկախությունը լավ բան է։ Դրա մասին չխոսենք։ Բայց եթե ինքը՝ հայ ժող<ովուրդը> ֆիզիկապես, ֆինանս<ապես>, բարոյապես անկարող է իր անկախությունը պաշտպանելու, ոչ մի պետություն էլ հանձն չի առնում նրան հովանավորելու և պաշտպանելու,— ի՞նչ պետք է անենք։ Չենք ուզում։

Եթե անկախությունը թոկ է դառնալու հայությունը խեղդելու համար—չենք ուզում։

Եթե անկախ Հայաստանը դառնալու է մի փոքրիկ վանդակ ամեն կողմից դռները փակած և միակ դուռն էլ, որ բաց է—բաց է տաճիկ ասկյարի համար, չենք ուզում» (VI, 248—249)։

---

22 «Հորիզոն», 1914, № 272, «Մշակ», 1914, № 274։

Ավելի ուշ, երբ դարերով սպասված ու հաղիվ ստեղծված Հայաստանի անկախ հանրապետությունը կանգնած էր անդունդի եզրին, երբ «դարավոր հարևանները» և նվաճողական ձգտումներով կովկասում գործող «դաշնակիցները» ցանկանում էին ծվեն-ծվեն անել խոշտանգված Հայաստանի մի կտոր մնացած արյունոտ հողը, երբ ժողովուրդը սովից, աղքատությունից, հիվանդություններից համաճարակից սպառված շարունակում էր դիմադրավել Թուրքերի հարձակումներին՝ հաստատվում էին Թումանյանի՝ տարբեր իրադրություններում գրած և հրապարակած իմաստուն մտքերը Հայաստանի ինքնավարության կամ անկախության մասին։

1917 թ. մի առիթով Անդրանիկի հետ զրուցելիս նա այն կարծիքն է հայտնել, որ ի վերջո Արևմտյան Հայաստանը պիտի միանա Արևելյան Հայաստանին և նրա հետ բաժանի ռուս ժողովրդի բախտը[23–24]։

Համաշխարհային պատերազմի օրերին Թուրքական լծից արևմտահայ ժողովրդի ազատությունը ցարական Ռուսաստանի հետ կապելը, իհարկե, սին երազ էր։ Պատերազմն սկսվել էր իմպերիալիստական պետությունների նվաճողական ձգտումների իրականացման համար։ Հասկանալի է, հայ ժողովրդի ազատագրական իղձերն այդ պատերազմում իրագործվել չէին կարող։

Բայց ինչպե՞ս էր, որ Թումանյանն ու Անդրանիկը, համաշխարհային պատերազմի ժամանակ հայ ժողովրդի նկատմամբ ցարիզմի վարած դավաճանական քաղաքականությունը տեսնելուց հետո էլ մնացին ռուսական դիրքորոշման կողմնակիցներ։ Դրա հիմքը այն համոզմունքն էր, որ Ռուսաստանն է միակ իրական հակաթուրքական ուժը։ Նրանք հույս ունեին, որ Ռուսաստանում կհաղթեն դեմոկրատական ուժերը։

Ինչպես տեսանք, համաշխարհային պատերազմի տարիներին Թումանյանի գործակցությունը Ազգային բյուրոյի հետ կարևոր տեղ է գրավում նրա հասարակական գործունեության մեջ։ Մեր նյութի սահմաններից դուրս էր մանրամասնորեն խոսել բյուրոյի գործունեության բոլոր կողմերի մասին։ Մեզ հետաքրքրողը Թումանյանի մասնակցությունն էր, որով նա դրսևորեց իր անկեղծ հայրենասիրությունը և նվիրումը հարազատ ժողովրդի խաղաղ կյանքի իրականացման գաղափարին։ Բյուրոյի աշխատանքի ամենամեծ թերությունը տարբեր կու-

---

23–24 Ա. Թերզիբաշյան, Անդրանիկ, Փարիզ, 1942, էջ 293։

սակցությունների անմիաբանությունն էր, կենտրոնական կոմիտեի կազմում: Միայն «Մշակի» և «Հորիզոնի» բանակռիվները բավական էին տարբեր հայացքների սուր բախումների համար:

Տակավին 1915 թ. մայիսի 21-ին «Հորիզոնում» հրապարակած Թումանյանի «Զգաստություն» հոդվածը, որը տպագրվել է բավական կրճատված (այդ երևում է Թերթի սպիտակ հատվածից), շատ որոշակի ցույց է տալիս, որ Ազգային բյուրոյում իշխող է անմիաբանությունը, և Թումանյանի հոդվածը, զգուշացնելով այդ խիստ վտանգավոր երևույթից, պահանջում էր զգաստություն: Որպես բյուրոյի հիմնադիրներից մեկը, քաջատեղյակ, հատկապես, պատերազմի սկզբի նրա գործունեությանը՝ կապված կամավորական շարժման կազմակերպման հետ, հոդվածի հեղինակը առանձնացնում է բյուրոյի դերը հայ ժողովրդի մեջ «համերաշխություն ու միություն» բերելու գործում: «Եթե մենք մի ժողովուրդ ենք, որ արժանի ենք ավելի լավ օրերի ու ապագայի,— գրում է Թումանյանը,— պետք է սնունդ ու ծավալ չտանենք անմիաբանության վատ ջանքերը մեր մեջ՝ մեր սրբազան ձգտումի վայրկյանին»: Նա կոչ էր անում բոլոր ուժերը ծառայեցնել միայն հաղթանակի համար, որը «..պահանջում է կուռ միություն» մեծ պատերազմի հանդեպ՝ մեծ ապագա ստեղծելու համար[25]:

Հոդվածը գրված է Վանի փառապանծ ինքնապաշտպանության, հաղթանակից հետո, երբ ընդհանուր ոգևորություն էր տիրում, և այդ ոգևորության մթնոլորտում ավելի վտանգավոր էր անմիաբանության ոգին:

Ազգային բյուրոյի գործունեության ամենակարևոր ձեռնարկումը, այնուամենայնիվ, կամավորական շարժումն էր, որը միավորեց հայ ժողովրդի ցրված ուժերը, բարձրացրեց նրա ազգային ինքնագիտակցության ոգին ու մղեց սխրանքների: Դա կատարվեց հակառակ ցարական սատրապների, որոնք ամեն կերպ խանգարում էին հայերի ազատագրական ձգտումները, նպատակ ունենալով գրավել Հայաստանն առանց հայերի, մի ցանկություն, որ դալիս էր տակավին անցյալ դարի 90-ական թվականներից...

Ազգային բյուրոյի վերջին նիստում հնչած քննադատությունը, նրա գործունեության մեջ արկածախնդրություն տեսնելը շատով դուրս եկավ սոցիալ-դեմոկրատական մամուլ և, տարածվելով ու լայն շրջանակներ ընդգրկելով, հասավ մինչև 30-ական թվականները, երբ ցարական բա-

25 «Հորիզոն», 1915, № 110։

նակում սպայի աստիճան ստացած ու կամավոր զինվոր եղած ամեն մի հայ, Ստալինի ու Բերիայի սադրանքներով, դառնում էր ժողովրդի թշնամի ու դնդակահարվում կամ աքսորավայրերի հեռավոր ճամբարներում կնքում մահկանացուն:

Անցել են այդ օրերը: Հայ ժողովուրդը երբեք չպետք է մոռանա այն իսկական հայրենասերներին, որոնք իրենց կյանքի գնով պայքարի մեջ մտան, տարան բազմաթիվ հաղթանակներ, բայց ի վերջո պարտվեցին. դա էլ մի նոր Ավարայր էր հանուն դոյատևման: Զմոռանանք, որ հատկապես կամավորական խմբերով տարած իր հաղթանակների համար փառաբանվեց զորավար Անդրանիկը: Հիշենք, որ կամավորական ջոկատներից մեկի զեկավարն էր Գայը՝ Հայկ Բժշկյանը: Որպես կամավոր է զինվորագրվել նաև պատանի Չարենցը և իր ժողովրդի ազատության համար պայքարելու տենչով հասել է Վան ու տեսել միայն դիակներ...

Ես կարծում էի—այնտեղ,
Ռումբերի ահեղ որոտում
Կգտնեմ քո դեմքը լուսե,
Բայց զուտ ... դիակներ փայտե...

* * *

Տակավին 1915-ի նոյեմբերին, երբ տարակույս չկար, որ ցրվելու են կամավորական խմբերը, Անդրանիկը շարունակում էր համալրել իր ջոկատները: Նա նոր հաղթանակներ էր տանում Արճավաղի, Ախլաթի, Դատվանի ուղղությամբ և, չնայած ռուսական բանակի գեներալ Աբացևի նյութած դավերին, 1916 թ. փետրվարի 19-ին գրավում է Բիթլիսը:

Գարնանը բանակը հանձնելով զինակիցներին, Անդրանիկը ռազմադաշտից գալիս է Թիֆլիս արձակուրդ[26], իսկ այնուհետև ապրում ու գործում էր Կովկասում, ամբողջովին նվիրված արևմտահայ գաղթականության ճակատագրին:

Թիֆլիսում գտնված միջոցին մի նոր ջերմությամբ է նորոգվում Թումանյանի և Անդրանիկի բարեկամությունը: Բանաստեղծն ու ռազմիկը հաճախ հանդիպում էին, սիրով զրուցում, իսկ գաղափարների, հայացքների նույնությունը նրանց ավելի էր մտերմացնում: Երկուսի էլ հոգսերի հոգսը հայ ժողովրդի ծանր կացությունն էր, անորոշ ապագան:

26 «Զորավար Անդրանիկի Կովկասյան ճակատի պատմական օրագրությունը», էջ 45:

«Նրանք իրար շատ էին սիրում-բարքերի ըմբռնումների խիստ նըմանություն կար երկուսի միջև։ Անդրանիկը ևս անզուգական պատմող էր։ Նրան լսելիս՝ պատմության, անձնավորությունների, տեղի, ժամանակի, ընդհանուր մթնոլորտի ամենաիրական, կենդանի պատկերացումն էինք ստանում»։ Այսպես է գրել Վ. Թոթովենցը, որ Թիֆլիսում հաճախ է հանդիպել Անդրանիկին Թումանյանի տանը, ականատես եղել նրանց ջերմ փոխհարաբերությանը և ականջալուր նրանց զրույցներին, հետաքրքրական պատմություններին (ԹԺՀ, 141—142), իսկ թե որքան շատ բան ունեին իրար պատմելու նրանք՝ ապացույց է երկուսի կյանքի հարուստ պատմությունը, որ անխզելիորեն միաձուլված է հայ ժողովրդի ողբերգություններին ու փորձություններին ...

1916 թ. հուլիսին Անդրանիկը Պյատիգորսկում բուժում էր հոդացավերը։ Բուժումը որքան էլ անհրաժեշտ էր հիվանդի համար, շուտով դառնում է երկրորդական։ Նա մեծ գործունեություն է ծավալում գաղթականության օգնելու, նրանց համար աշխատանք, ապաստան ապահովելու։

Տեղի բարեգործական ընկերության ներկայացուցիչները կազմակերպում են բազմամարդ ճաշկերույթ ի պատիվ հայոց ականավոր զինվորի։ Լսելով իր մասին ասված ոգեշնչված ճառերը, Անդրանիկը, որպես «հայր անպաշտպան որբերուն», կոչ է անում օգնել որբերին, անօգնական փախստականներին։

Շնորհիվ Անդրանիկի հուզիչ, սրտառուչ խոսքի, հանքային ջրերի բոլոր առողջարաններում հօգուտ արևմտահայ գաղթականության հանգանակվում է մոտ տասը հազար ռուբլի[27]։

Նույն ժամանակ Թումանյանը Բորժոմում էր գտնվում, որտեղից և գրում է առաջին նամակը Անդրանիկին։ Նամակը մեզ չի հասել, բայց պահպանվում է հասցեատիրոջ 1916-ի հուլիսի 19-ի պատասխանը, որից պարզվում է, թե բանաստեղծն իր նամակում դժգոհել է հայ ժողովրդի համար այդ ծանր ժամանակներում շրջահայաց, խելամիտ մարդկանց, ժողովրդի շահերով մտահոգված իսկական գործիչների պակասից։

«...Գրեթե մխիթարական ոչինչ չէիր գրած,— պատասխանել է Անդրանիկը։— Գրած ես, որ ճառ խոսելու համար խելոք մարդիկ չունենք։ Սխալվում ես,— չի համաձայնել Թումանյանի հետ Անդրանիկը և հեգնանքով ավելացրել,— մինակ դուն հրավիրե, տես որչափ հա-

27 «Բանբեր Հայաստանի արխիվների», Եր., 1965, № 1, էջ 21։

վաքվեն դլխիդ սովորական սոխակներ... եթե հայոց ազգից կը պակսին խելոք մարդիկ՝ ճապոնացի վերցնենք»[28]։

Ինչո՞ւ է Անդրանիկը անպայման ճապոնացուն հիշում։ Առաջին հայացքից թվում է, թե նա ծաղրում է այն ազգային գործիչներին, որոնք հայության աղատագրության համար ասպարեզ էին մտնում՝ անտեղյակ այդ ժողովրդի կյանքին, նրա պայքարի առանձնահատկություններին ու պահանջներին, այնքան, որքան մի հեռավոր՝ հայությանը բոլորովին անծանոթ ճապոնացի։

Բայց այդպես չէ։ Անդրանիկը Թումանյանի նման միշտ հակասությունների մեջ է եղել Ազգային բյուրոյի անդամների անհեռանկար ձեռնարկումների հետ։ Այս նամակում էլ նա ծաղրում է բյուրոյի անդամ (նախկին նախագահ) Սամսոն Հարությունյանի՝ ճապոնիայից օգնության ակնկալություն ունենալը։ Վերջինս իր այդ կարծիքը քննության առարկա է դարձրել նույնիսկ հետագայում՝ Հայոց ազգային խորհրդի 1917 թ. նոյեմբերի նիստերից մեկում, ուր որոշակի հայտարարել է. «...Մեր ուժերը բավական չեն, կազակներն ու ճապոնիան կարող են օգնել մեզ»[29]։

Անդրանիկը Ազգային բյուրոյի անդամների այս և նման արկածախնդրական կարծիքները նկատի ուներ նաև հետագայում հրապարակած իր հուշերի այն տողերում, որտեղ ընդգծում էր Թումանյանի և բյուրոյի «մութ ուժերի» հակասությունները (ԹԺՀ, 551)։

Դեռ նախքան Թումանյանի և Անդրանիկի Թիֆլիսից մեկնելը, 1916 թ. հունիսի սկզբներին հայ և վրացական մամուլում հրապարակվում են թղթակցություններ, սպառնալով խախտել հայ-վրացական խաղաղ հարաբերությունները, և, որքան էլ ցավալի է, հանիրավի վարկաբեկվում էր Անդրանիկի անունը։ Քաղաքում տարածվել էր, իբր թե Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը՝ Թիֆլիսի և Իմերեթի հայոց թեմի առաջնորդը և Հայոց ազգային բյուրոյի պատվավոր նախագահը, զենք է ստանում, բաժանում հայերին՝ Անդրանիկի առաջնորդությամբ վրացիների դեմ կռվելու համար։

Տվյալ դեպքում մեզ հետաքրքրողը անհեթեթ ու սուտ լուրերը չեն, այլ այդ առիթով Թումանյանի և Անդրանիկի համատեղ հրապարա-

---

28 ԳԱԹ, Թֆ, № 499։

29 Ջ. Կիրակոսյան, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Եր., 1965, էջ 450։

կային ելույթը՝ բանաստեղծի «Ի՞նչ են ասում» հոդվածում: Այն հրապարակվեց 1916 թ. հունիսի 8-ին: Հեղինակի սուր գրչով մատնացածին այդ լուրերը ստացան իրենց իմաստուն ու ջախջախիչ հերքումը:

Այստեղ ամենից ուշագրավը երկու դաղափարակից գործիչների՝ բանաստեղծի ու ռազմիկի, սրտաբուղ հանդիպումն էր, նրանց մարդկային բարձր հատկանիշների, հայացքների ու սկզբունքների նույնությունը, արյուն թափելու մի նոր օջախ կանխելու, դարավոր հարևանի հետ գժավիլուց խուսափելու ձգտումը: Տեղեկանալով իր մասին տարածված բամբասանքներին, Թումանյանի հետ զրուցելիս ժողովրդական հերոսը վրացիների հասցեին ասել է. «Խե՜ղճ մարդիկ. Անդրանիկը եթե խումբ կազմելու լինի, ոչ թե ձեր դեմը գալու համար կկազմի, այլ ձեզի օգնելու, եթե երբևիցե դուք էլ նեղության մեջ լինեք մի էնվերի ձեռքից, ինչպես մեր ժողովուրդն է... Էսպես դրե՛ նրանց...» (VI, 224):

Իր հոդվածում, նպատակ ունենալով բոլորովին հերքել տարածված լուրը, միևնույն ժամանակ օգտվելով առիթից, Թումանյանը Անդրանիկին բնորոշում է իբրև մի մեծ մարդասերի, որի համար հաշտ ու խաղաղ քուրդը նույնն է, ինչ իր ազգակից հայը և ի հաստատումն այդ գնահատականի՝ բերում է Անդրանիկի խոսքերը, որոնք վաղուց դարձել էին նրա կյանքի և գործի հավատո հանգանակը. «Երբ իրիկունը գլխներդ բարձին կդնեք, որ քնանաք, մի քիչ մտածեցեք ձեր ազգի մասին: Այնուհետև մտածեցեք ձեր հարևանի մասին, հայ լինի նա, թուրք լինի, ռուս լինի, վրացի լինի, ով կուզե լինի, և բարի մտածեցեք...» (VI, 225):

«Ի՞նչ են ասում» հոդվածում Թումանյանը մերկացրում էր ոչ միայն այդ սուտ, անհիմն լուրերի հեղինակին, այլև վրաց այն մտավորականին, որը թույլ էր տվել գրավոր հրապարակել այդպիսի «վտանգավոր խոսքեր» «անպատիժ ու անպատասխան»:

Հեղինակը համոզված էր, որ նման երևույթները խարխլում են երկու հարևան ժողովուրդների խաղաղ կյանքի հիմքերը, սպանում մարդկանց մեջ «ամենաազնիվն ու ամենագեղեցիկը՝ սերն ու հավատը դեպի իր նմանը, իր ընկերն ու հարևանը», իսկ դա, ըստ բանաստեղծի, ավելի մեծ չարիք էր, քան եթե Անդրանիկը իսկապես խումբ կազմեր ու հարձակվեր վրացիների վրա:

Վերջում, դիմելով վրաց գրողներին ու հրապարակախոսներին, Թումանյանը նրանցից պատասխան էր սպասում։

Քննարկվող հոդվածը երկրորդ անգամ տպագրվել է բանաստեղծի Երկերի ժողովածուի VI հատորում, որի ծանոթագրություններում նշված չեն հոդվածի տպագրության արձագանքներն ու հետևանքները։

Պրպտումները պարզում են, որ այդ անհեթեթ, բայց և վտանգավոր խոսակցության հիմնական մեղքը ընկնում է «Սամշոբլո» («Հայրենիք») օրաթերթի վրա։ «Հորիզոնի» թղթակիցը նույնպես պահանջում էր վրաց դեմոկրատական «Սախալխո փուրցելի» («Ժողովրդական թերթ») և «Թանամեդրովև տպրի» («Ժամանակակից միտք») թերթերից՝ պատասխանատվության կանչել մեղավորին, որը անմիտ, չար և անմարդկային խաղ է խաղացել մի այնպիսի ժամանակ, երբ հայը առանց այն էլ «արդեն շնչասպառ լողում է արյան մեջ»[30]։ Օրեր անց վերջապես իր խոսքն է ասում «Սախալխո փուրցելին»։ Արտատպելով Թումանյանի հոդվածի՝ Անդրանիկի խոսքերը, վրաց դեմոկրատական թերթը հայտարարում է, թե հայ օրաթերթի հանդիմանությունը արդարացի կլիներ այն դեպքում, «երբ վրաց հասարակայնությունը համակարծիք լիներ և արդարացի համարեր այդ մեղադրանքը։ Եթե որևէ մեկը մի անհիմն մեղադրանք է հայտնում, այդ դեռ չի նշանակում, թե վրաց հասարակությունը կհավատա և որևէ նշանակություն կտա այդ բանին»[31]։

Դեմոկրատական թերթի պատասխանը որքան խաղաղասիրական էր, այնքան էլ՝ խուսափողական։ Եթե թերթը վստահ էր, թե սուտ են լուրերը Անդրանիկի՝ վրացիների վրա հարձակվելու մասին, ապա չպետք է սպասեր հայոց բանաստեղծի հրապարակային ելույթին. ի վերջո՝ ամբաստանվում էր խաղաղության ձգտող մի ժողովուրդ իր հոգևոր առաջնորդի հետ և այնպիսի մի ժողովրդական հերոս, որի համբավը վաղուց դուրս էր եկել Կովկասի սահմաններից։

Նույն օրերին բավական տգեղ մի ելույթով հանդես է գալիս «Սաքարթվելո» թերթը։ Սա էլ իրեն միամիտ կամ անտեղյակ ձևացնելով՝ հայտարարում է, թե վրացական ոչ մի թերթ հայերի հասցեին նման բան չի տպել և եղրակացնում՝ դա պարզապես «Հայ խելոք քաղաքագետներն են ասում և, դուցե, պարզում իրենց սրտի ցանկությունը»[32]։

---

30 «Հորիզոն», 1916, № 127։

31 Նույն տեղում, № 139, «Սախալխո փուրցելի», 1916, № 597։

32 Նույն տեղում, «Սաքարթվելո» 1916, № 114։

Չնայած այս բավական անհեթեթ և անորոշ պատասխաններին, Թումանյանի հոդվածը կատարում է իր դերը. մի կողմից՝ Անդրանիկի անվան վրայից ջնջվում են բամբասանքն ու սուտ լուրերը, մյուս կողմից՝ կանխվում են ազդամիջյան, մեղմ ասած՝ անախորժությունները։ Երեք ամիս անց «Սաքարթվելո փուրցելին» «հրճվանքով էր» հայտարարում, որ հայ-վրացական փոխհարաբերության հարցը արդեն խաղաղ կերպարանք է ընդունել, եթե, իհարկե, մի քանի «էլեմենտներ» նորից չպղտորեն ջուրը և լրագրական վեճում թույն ու մաղձ չմտցնեն։ Թերթն այն կարծիքին էր, որ եթե կա հակամարտություն, ապա դա հայ ժողովրդի հետ կապ չունի, այլ վերաբերում է միայն բուրժուազիային[33]։

Նույն օրը՝ սեպտեմբերի 18-ին, վտանգավոր այդ միջադեպը եզրափակում է դարձյալ Թումանյանը, հոդվածի փոխարեն հրատարակելով «Վրաստանի համար» բանաստեղծությունը[34]։

Երբ խոսում են Վրաստանի
Թշնամանքից արյունոտ,
Ձարմանք է ինձ պատում հայտնի,
Եվ խորին ցավ, և ամոթ։

Այս բանաստեղծության մեջ ակնառու է հեղինակի ջերմ ու անկեղծ սերը, վստահությունն ու հավատը դեպի իր ժողովրդի դարավոր հարևանը, որը «դեռ ոճիր չի կատարել», «աղ ու հացն է սիրել» ու եղել է «միշտ աշխարհին բարեկամ» (I, 187—188)։

* * *

1917 թ. դարնանը Անդրանիկի նախաձեռնությամբ Թիֆլիսում սկսում է հրապարակվել «Հայաստան» օրաթերթը. խմբագիրը Վահան Թոթովենցն էր։ Հրատարակիչները իրենց առաջ նպատակ էին դրել ամբողջապես նվիրվել արևմտահայ քաղաքական, հասարակական ու տնտեսական կարիքները հոգալու գործին և արձագանքել ժողովրդի օրվա պահանջներին։ Հայտարարվում էր, որ թերթը չէր պատկանում որևէ կուսակցության և հոսանքի. «Անիկա կընդունի արևմտահայ հատվածը իբրև առանձին հոսանք, դնելով ոսկեղեն հիմքը արևմտահայ հա-

33 «Հորիզոն», 1916, № 208։

34 Նույն տեղում։

սարակական-քաղաքական բոլոր կազմակերպություններու համագործակցության և համագրության»[35]։

Օրաթերթի առաջին համարը լույս տեսավ ապրիլի 16-ին։ Այդ համարի առաջնորդողների բնույթ էին կրում Թումանյանի «Հայաստանը պետք է խոսի» և Անդրանիկի «Հայրենիքի վերաշինությունը» հոդվածները, որոնք հավատարիմ նորաստեղծ պարբերականի գաղափարական սկզբունքներին՝ նրան էին բերում ժամանակին շատ կարևոր երկու անհետաձգելի գործեր։

«Հայաստանը պետք է խոսի» հոդվածից ակնհայտ է, որ Արևմտյան Հայաստանի պատերազմական վայրերում (Բայազետ, Ալաշկերտ, Վան և այլուր) Թումանյանի երկու այցելությունները, ինչպես և էջմիածնում գաղթականության մեջ անցկացրած ծանր, ճգնաժամային օրերը փոխել էին նրա քաղաքական ըմբռնումները՝ ստիպելով նրան նոր տեսանկյունից նայելու հայ ժողովրդի ազատագրության գործին։

Քանդհինդ տարվա հասարակական գործունեության ընթացքում բանաստեղծը չէր կարողացել այնպես որոշակի խորամուխ լինել Հայկական հարցի իսկական էության մեջ, ինչպես բնաշխարհի ժողովրդի հետ ի մոտո շփվելու ժամանակ և հետո։ «...Մի ահագին ցավ ծանրացավ իմ սրտին,— գրում է Թումանյանը,— թե ես ինչքան քիչ տեղեկություն եմ ունեցել էսօրվա կենդանի Հայաստանից, ես, որ համարվում եմ նրան ճանաչողներից մինը... ու վերջը՝ դարձյալ մի տխուր գիտակցություն համակեց ամբողջ էությունս, ու մի խորին վիշտ, թե մենք ինչքան ենք տկար մեզ վրա եկած աղետի հանդեպ. տկար ֆիզիկապես, նյութապես ու բարոյապես»։

Ակնհայտ է, որ այս հոդվածում Թումանյանը ժողովրդի ճակատագրով շահագրգռված գործիչներից պահանջում էր վերանայել հայ ազատագրական շարժման պատմությունը ու չառաջնորդվել հին գաղափարներով, նոր մեթոդ մշակել, պայքարի նոր ձևեր որոնել, սովորել հին սխալների վրա։

Բանաստեղծի խոսքերի մեջ աչքի է ընկնում ափսոսանքը, ցավը կորցրածի համար, բայց նրանք՝ հուսահատությունն ու հոռետեսությունը։ Նա լավատեսորեն վստահ էր, որ ի վերջո «Հայաստանը պետք է խոսի», որովհետև նա «ապրել է մարդկային լավագույն ձգտումներով և ամեն ինչ տվել է ու կտա ազատ կյանքի համար» (IV, 396)։

---

35 «Հայաստան», 1917, № 1։

Հոդվածը, ինչպես ասվեց, գրված է 1917 թ. ապրիլին՝ փետրվարյան հեղափոխության թարմ ազդեցության տակ։ Ցարական ինքնակալության տապալումից հետո ստեղծված քաղաքական նոր իրադրությունը ազատության նոր հույսեր էր ներշնչում նաև հայությանը։ Բնական է, որ իր ժողովրդի ներկայով և ապագայով մտահոգված բանաստեղծը ևս կոչ աներ նոր ճանապարհներ որոնելու՝ ավերված երկրի ապագա կյանքը տնօրինելու համար։

Բնաշխարհի ճակատագրի մի այլ կարևոր հարց էր դնում նույն օրը տպագրված Անդրանիկի առաջնորդող հոդվածը՝ «Հայրենիքի վերաշինությունը»։ Վերնագիրը բավական խոսուն է. աննկուն ռազմիկը ժողովրդից պահանջում էր բնակելի դարձնել Հայաստանի նոր, մեծ ջանքերի գնով գրավված գավառները, որոնք թալանված էին, անմարդաբնակ և հիմնահատակ ավերված։ Որքան էլ շատ էին գաղթած հայերը, այնուամենայնիվ, շատ-շատերը, իրենց կյանքը չպատկերացնելով առանց հայրենի օջախի, դանդաղ, մեծ զրկանքների գնով, մերկ ու քաղցած վերադառնում էին տնավեր հողերը առանց որևէ հեռանկարի։

Այդ միջոցին մեծ դեր ունեին կատարելու «Քաղաքների միության» ներկայացուցիչները, որոնք Թուրքերից ազատված բնակավայրերում դեռևս 1915-ից կազմակերպում էին դարձանացանն ու աշնանացանը, ձեռք էին բերում սերմացու, անասուններ, գյուղատնտեսական գործիքներ, մի խոսքով՝ ամեն ինչ սկսվում էր աշնչից։ Բայց հիմնական ծանրությունը մնում էր ժողովրդի վրա, նրանց կամքի, աշխատասիրության ու տոկունության վրա և Անդրանիկի հույսը հենց հայ աշխատավորն էր՝ և՛ արևմտահայ, և՛ արևելահայ։

Անդրանիկի հոդվածի՝ առաջին հայացքից պարզունակ տողերը իրենց մեջ բովանդակում էին Մեծ հայրենասերի խոր ապրումները, կորցրածը վերադառնելու նրա պայծառ լավատեսությունը։ Վերաշինությունը, ըստ հեղինակի, չի պահանջում առանձնահատուկ խելք ու կարողություն, որ շատերը իրենց տկար զգալով մի կողմ անցնեն. այն դիվանագիտություն չէ, որ վերապահվի հատուկ մարդկանց։ Նույնիսկ ծառ տնկելով, աղյուսը, քարը իր նախկին տեղը դնելով՝ կարելի էր մասնակցել վերաշինության անհետաձգելի գործին։

Գնահատելին այս հոդվածում հեղինակի՝ իր հայրենիքից վաղուց վտարանդի, ֆիդայական դաժան ու կոպիտ կյանքի սովոր այդ դինվորի քնքուշ վերաբերմունքն է հայրենի բնօրրանի նկատմամբ։ Նրա

համար թանկ էին ավերված հայրենիքի ցիրուցան բեկորները, նա մըտահոգված էր, որ «այսօրվա որբերը չմնան առանց դաշտերի կանաչության»[36]։

Անդրանիկի հոդվածը բանաստեղծի հոդվածի տրամաբանական շարունակությունն էր։ Եթե Թումանյանը վստահ էր, որ հայ ժողովուրդը ամեն ինչ կտա հանուն ազատ կյանքի, հնօրյա հայդուկը կոչ էր անում ջանք չխնայել այդ կյանքի հիմնաքարերը դնելու, ավերված շենները վերականգնելու համար։

* * *

1917 թ. ամռանը բանաստեղծը մեկնեց Պյատիգորսկ հանգստանալու և բուժվելու, բայց շուտով նա էլ Անդրանիկի նման վերսկսեց հասարակական բեղմնավոր գործունեություն, որի ընթացքում մեծ ջանքերի գնով աշխատեց հաստատ հիմքերի վրա դնել ոչ միայն Հայկազյան ընկերության նյութական ապահովությունը՝ հանգանակությունների ու անդամակցության միջոցով, այլև կազմակերպեց կովկասյան ճակատին գրամով և մարդկանցով օգնելու գործը (V, 430)։

Օգոստոսի 15-ին Պյատիգորսկ ժամանեց նաև Անդրանիկը, այս անգամ էլ դառնալով բանաստեղծի հյուրը։ 10—15 օր հետո, նույնպես հետամուտ ճակատին և գաղթականությանը օգնելու գործին, Անդրանիկը մեկնում է Նոր Նախիջևան, որտեղից սեպտեմբերի 4-ին՝ Պյատիգորսկ՝ Թումանյանին ուղղած նամակով հետաքրքրվում էր իր բանաստեղծ բարեկամի գործունեությամբ, հատկապես կովկասյան ճակատի համար սկսած հանգանակության հաջողությամբ։ Անդրանիկը խնդրում էր, որ Թումանյանը տեսնվի Կիսլավոդսկում գտնվող Նոր Նախիջևանի Ս. Խաչ վանքի վանահայր Հուսիկ վարդապետի հետ և նրա միջոցով ստանա վանքի տնօրինության տակ գտնվող հողային տարածությունը[37]։ Տարակույս չկա, որ վանքապատկան այդ հողերը պետք է հատկացվեին դարձյալ գաղթականությանը։ Թումանյանի պատասխան նամակը չունենալով, այդ մասին որևէ այլ տեղեկություն առայժմ չունենք։

Պյատիգորսկում գտնված միջոցին Նոր Նախիջևան մեկնելու մտադրություն ունեցել է նաև Թումանյանը երեք նպատակով. նախ պետք

36 Նույն տեղում։

37 ԴԱԹ, Թֆ, № 500։

է տեղի հայկական գաղութում հանդանակություն կազմակերպեր հոգուտ Հայկազյան ընկերության, Հայ գրողների ընկերության ճյուղ բանար և ապա Թիֆլիս տեղափոխեր Միքայել Նալբանդյանի արխիվը։ Բանաստեղծին չի հաջողվում իրագործելու իր այնքան կարևոր մտադրությունները՝ «...Թիֆլիսից էնպես տեղեկություններ ստացա, որ պետք է էնտեղ շտապեմ»,— գրել է նա 1917 հոկտեմբերի 9-ի նամակում (V, 432)։

Թերևս այդ տեղեկությունները կապ ունեին նորաստեղծ Հայոց ազգային խորհրդի (ՀԱԽ) ստեղծման հետ. նա մեկ որոշում է «շտապել» Թիֆլիս հասնելու, սակայն այդ օրերին չի մեկնում՝ թերևս նորաստեղծ Ազգային խորհրդին չմասնակցելու նպատակով։ Այդ մասին այլ տեղեկություն չունենք։ Որքան մեզ հայտնի է, Թումանյանը ընդհանրապես Նոր Նախիջևան այցելել չկարողացավ քաղաքական դրության հետագա նոր բարդությունների պատճառով։ Այդ օրերին թեև զբաղված էր անհետաձգելի գործերով՝ անհանգիստ էր բանաստեղծի հոգին. «Առաջիկա զարհուրելի պատկերները ինձ հանգիստ չեն տալիս ոչ մի օր, ոչ մի ժամ։ Հրաշք պետք է լինի, որ առանց մեծ աղետների անցկացնենք» (V, 429)։

Բանաստեղծի կանխատեսումը ճիշտ էր. իսկ հրաշքը այդ օրերին տեղի չունեցավ։

Թումանյանն ու Անդրանիկը ՀԱԽ-ի անդամ չդարձան, թեպետ կուսակցական առումով խորհուրդը բավական խայտաբղետ էր, կային նաև անկուսակցականներ և խորհրդի կազմավորման նախօրյակին Ռոստովի և Նոր Նախիջևանի հայ գաղութը իր ձայնը տվել էր Անդրանիկին։ Վերջինս մասնակցում է 1917 թ. սեպտեմբերի 29-ին բացված խորհրդաժողովին, բայց հոկտեմբերի 18-ին ստեղծված Հայոց ազգային խորհրդի կազմից հրաժարվում է։ Թեպետ ինչպես նա, այնպես էլ Թումանյանը պատրաստ էին անհրաժեշտության դեպքում՝ երբ պահանջում է հայրենիքի շահը, կատարելով Ազգային խորհրդի անհրաժեշտ որևէ հանձնարարություն, դրանով սատարել ժողովրդի ազատագրության գործին։

Շուտով սկսվում են նոր իրադարձություններ, որոնք կրկին պայքարի են կոչում ամեն տեսակ գործիչների, ինչպես մտավորական, այնպես էլ զինվորական, հասարակական։

* * *

1917 թ. դեկտեմբերյան ռուս-թուրքական զինադադարը մի նոր աղետ բերեց հայ ժողովրդին։ Ռուսական զորքերի և կամավորների համատեղ գործակցությամբ, հսկայական կորուստների գնով, Հայաստանի ազատագրված երեք նահանգները, ըստ այդ զինադադարի, մնում էին անօգնական՝ թուրք ու քուրդ բարբարոսների վրեժխնդիր զենքի առջև։

Շուտափույթ որոշվում է կազմել Հայաստանի երկրապահ զորամաս, բայց ձգձգվում է զորամասի ընդհանուր հրամանատար ընտրելու գործը։ Հայոց նորակազմ Ազգային խորհրդի անդամների որոշ մասը դեմ էր Անդրանիկին հրամանատար նշանակելուն, վախենալով, իբրև թե գրգռել թուրքերին, կասկածելով Անդրանիկի ինքնուրույն գործողությունների հաջողության վրա մեծ՝ կազմակերպված բանակների դեմ։

Չսպասելով, որ տարաձայնությունները ամփոփեն իրենց եզրակացությունը, և վերջնական որոշման հանգեն, Անդրանիկը մի օր զինված գնում է Կովկասի ռուս գլխավոր հրամանատարի մոտ և հայտարարում, որ ինքը որոշել է մեկնել ճակատ որպես հասարակ զինվոր, պատճառաբանելով, թե որպեն թանկ է, հարկավոր է շտապել։ Անդրանիկի այդ քայլը ցնցում է բոլորին, և նա նշանակվում է Հայաստանի երկրապահ զորամասի գլխավոր հրամանատար[38]։

Դեկտեմբերի 15-ին կովկասյան զորքերի գլխավոր հրամանատար Պրժևալսկու հանձնարարությամբ Անդրանիկին պարգևատրում են Վլադիմիր Ա կարգի և Ստանիսլավ Բ կարգի շքանշաններով[39], իսկ ավելի ուշ նաև տալիս գեներալ մայորի աստիճան։

Դեկտեմբերի 22-ին հրատարակվում է Անդրանիկի սրտառուչ, տագնապալի և խորապես հայրենասիրական կոչը՝ ուղղված հայ ժողովրդին ու հասարակական կազմակերպություններին։ Այն յուրօրինակ հրաման էր համախմբվելու և ազատելու մի նոր եղեռնի վտանգի առջև կանգնած ավելի քան հարյուր հազար հայերի։

«Մենք կեցած ենք, հայ տառապած ժողովուրդ, հայկական պատմության այնպիսի փոթորկոտ էջին վրա, որ մեր ժողովուրդը կապրի կամ իր վերջին օրերը, և կամ կդտնվի վաղվան ազատության նա-

---

38 Արսեն Մարմարյան. (Վ. Թոքավենց), *Զորավար Անդրանիկ և իր պատերազմները*, էջ 277։

39 «*Հայաստան*», 1917, № 179։

խօրյակին.. Վաղվան պատասխանը հայ ժողովրդին՝ պիտի ըլլա՝ այո՞ կամ ո՞չ»։

Հավատարիմ իր ինտերնացիոնալիզմին, Անդրանիկը խոսքն ուղղում էր ոչ միայն հայերին, այլ բոլոր նրանց, ովքեր դպացել են օսմանյան բռնակալության բարբարոսությունները, եզիդի լինեն, քուրդ, թե թուրք, միևնույն է, և ովքեր վկա են եղել հայ ժողովրդի դարավոր տառապանքին։ Նա դիմում էր և վրաց հարևաններին, բացատրելով, որ հայերին սպառնացող այսօրվա վտանգը վաղը կարող է վերաբերվել իրենց՝ վրացիներին։ Զորավարը մեծ հույսեր ուներ հայ կնոջ վրա, դավաճան հայտարարելով այն մորը, որը բաջալերում է «կորովազուրկ» որդուն։

Կոչը լեցուն էր տագնապով, բայց հուսահատական չէր, ընդհակառակը, մի խորին վստահություն կար, որ ժողովուրդը պիտի լսի իրեն և հետևի մարտահրավերին, հակառակ դեպքում՝ նա պահանջում էր՝ հետ առնել իրեն տված հերոսի կոչումը և իրավունք չունենալ լալու իր դիակի վրա. «Թող թաղի զիս այն կաղակը, որ երեկ իմ կողքին կուրծք կուտար մեր թշնամուն»,—հայտարարում էր նա[40]։

Անդրանիկին առաջին արձագանքողը Թումանյանն էր։

Զորավարի կոչի հրապարակման հաջորդ օրը՝ դեկտեմբերի 23-ին, «Հայաստան» օրաթերթում տպագրվում է բանաստեղծի բաց նամակը Անդրանիկին։ Այն իր տեսակի մեջ մի նոր կոչ էր ժողովրդին, որ «ահավոր մոմենտի առջև յուրաքանչյուր մարդ ընդհանուրի սեղանին բերի իր ամբողջ ունեցվածքը՝ թե՛ վերահաս վտանգը կանխելու և թե՛ բաղձալի խաղաղությանը հասնելու համար»։

Բանաստեղծի ձայնը հնչում էր բարձր, ինքնավստահ և հպարտ։ Նա ազգի տրամադրության տակ էր դրել իր ունեցած ամենաթանկագին գանձերը՝ ութ չափահաս երեխաներ, իսկ իր կողմից խոստանում էր և դրամական օգնություն հայրենիքի պաշտպանության ընդհանուր գանձարանին։ Նրա պատասխան խոսքի մեջ այս անգամ էլ ակնառու է ժողովրդական հերոսի անցյալ ու ներկա գործունեության անկեղծ ու սրտաբուխ գնահատականը, հավատը նրա նոր ձեռնարկումների, հաղթանակի նկատմամբ։

«Ես՝ անոսասան հավատարիմ քո՝ շատ փոթորիկների մեջ ձեռք բերած փորձառությանը, վառ հայրենասիրությանն ու ազատասիրությանը,

---

40 Նույն տեղում, 1917, № 182։

այլն բնական մարդասիրությանը և գինվորական բարձր տաղանդին և պատարաստ գալու, երբ որ կկոչի քո եղբայրական ձայնը՝

Համբուրում եմ հերոսական ճակատդ» (ՈՒՀ 2, 424—425)։

Օրեր անց նույն օրաթերթը հրապարակում է Անդրանիկի պատասխանը բանաստեղծին՝ գրված ջերմորեն, հրճվանքով և ոգևորությամբ. «Պետք է մոռնանք պահ մը գրիչը, փոխարինելով սուրին, ստեղծելու համար հայրենիքը, որուն խաղաղ ծոցին մեջ միայն կը ծաղկի գեղարվեստի կյանքը»։ Զորավարը հույս էր հայտնում, որ Թումանյանին պետք է հետևեն բոլոր հայ մտավորականները ու միայյալ ուժերով դարձնեն սրբազան ազատությունը[41]։

«Հայաստանի» խմբագրությունը մի ծանոթագրությամբ խնդրել էր բոլոր թերթերին արտատպել բանաստեղծի բաց նամակը Անդրանիկին։

Թիֆլիսի և Երևանի պարբերականները հրապարակելով նամակն ամբողջովին, հատվածաբար կամ որպես լուր, ընթերցողներին տեղյակ պահեցին բանաստեղծ Թումանյանի հայրենասիրական կոչ-հրավերի մասին[42]։

«Հորիզոնը» նույնպես արձագանքեց, բայց յուրովի։ Հայոց ազգային խորհրդի 1917 թ. որոշումներից մեկը հրապարակելով թերթի դեկտեմբերի 29-ի լուրերի բաժնում, հայտնում էր, որ Հայոց ազգային խորհուրդը գերագույն մարմին է ամբողջ Ռուսաստանի հայության համար, ուրեմն հայ ժողովրդին կոչեր ուղղելու իրավունքը վերապահված է միայն նրան՝ Ազգային խորհրդին. «Այդօրինակ անջատ քայլերը կանխելու համար խորհրդի այս որոշումը հայտարարել ի գիտություն հա..բության»,— գրում է թերթը[43]։

Կասկածից վեր է, որ այս որոշումը վերաբերում էր Անդրանիկի կոչին և անուղղակիորեն նաև Թումանյանի պատասխանին։ Պատճառն, անշուշտ, «Հորիզոնի» կուսակցական միտումնավոր մոտեցումն էր. խնդիրն այն է, որ դեռևս նույն թվականի հոկտեմբերի 5-ին Անդրանիկը գրավոր հայտարարությամբ վերջնականապես հեռացել էր դաշնակցության շարքերից և թեպետ խոստացել էր «ամենայն ուրախությամբ ընդառաջ երթալ» Ազգային խորհրդի կարգադրություններին[44],

41 Նույն տեղում, № 185։

42 «Республика», 1917, № 137, «Մշակ», № 271, «Աշխատանք», Եր., 1917, № 67։

43 «Հորիզոն», 1917, № 275։

44 «Հայաստան», 1917, № 126։

այնուամենայնիվ, վերաբերմունքը նրա նկատմամբ արդեն փոխված էր, մանավանդ որ նոյեմբերի սկզբներին «Հորիզոնը», իրեն պաշտոնապես հայտարարել էր դաշնակցության օրգան (թերևս այդ էր պատճառը, որ Ազգային խորհրդի կենտրոնական կոմիտեն կամ անդամների մի մասը դժվարանում էին Անդրանիկին հաստատել Հայաստանի երկրապահ զորամասերի հրամանատարի պաշտոնում)։

1917 թ. դեկտեմբերի 21-ին Հայ զրողների ընկերության նախաձեռնությամբ հավաքված մտավորականների ժողովը, քննության առնելով կովկասյան ճակատի և թիկունքի դրությունը, կոչ է անում «իրենց ուժն ու փորձառությունը դնելու Ազգային խորհրդի տրամադրության տակ։ Նկատելով կովկասյան ճակատի պահպանությունը և թիկունքի կարգապահությունը համապետական և համակովկասյան խնդիր՝ գործել ռուսական դեմոկրատիայի և կովկասյան բոլոր ազգերի ինտելիգենցիաների հետ համերաշխ՝ ընդհանուր դեմոկրատական խաղաղության հասնելու և հեղափոխության հայտարարած մեծ սկզբունքները իրականացնելու համար»։ Այսպիսին է մտավորականության բանաձևը, որի տակ ստորագրել է Հովհ. Թումանյանը[15]։

«Հորիզոնը» բավական պաղ վերաբերմունք ցուցաբերեց Թումանյանի այս նախաձեռնության նկատմամբ ևս և դեկտեմբերի 23-ի լուրերի բաժնում, հաղորդելով մտավորականության հավաքի և Թումանյանի խոսքի մասին, հրապարակեց նաև նույթ ունեցողներից մեկի եզրակացությունը, որից պարզվում է, թե մտավորականության հավաքը, Թումանյանի ջանքերը իզուր են, քանի որ «գործը դրած է, և մարմինները արդեն սկսել են իրենց աշխատանքը...»[16]։

Պետք է ենթադրել, որ Ազգային խորհրդի վերևում հիշատակված որոշումը «անջատ քայլերը արգելելու» մասին[17] վերաբերում էր ոչ միայն Անդրանիկի կոչին և Թումանյանի բաց նամակին, այլև մտավորականության հավաքի՝ բանաստեղծի ստորագրությամբ հրապարակված բանաձևին, որը Անդրանիկի «Հայաստանը» հրապարակում է, իսկ «Հորիզոնը»՝ ոչ։ Թերևս վերջինիս դուր չէր եկել բանաձևի՝ «ռուսական դեմոկրատիային», «հեղափոխության հայտարարած մեծ սկզբունքներին» հետևելու մասին արված խոստումները։

---

45 Նույն տեղում, № 184։

46 «Հորիզոն», 1917, № 270։

47 Նույն տեղում, № 275։

Բայց չնայած հրապարակած այդ դժգոհությանը «ազատ քայլերի դեմ»՝ Հայոց գերագույն մարմինը անկարող էր, առանց մտավորական գործիչների օգնության, վերջնական լուծման հասցնելու որևէ ձեռնարկություն, մանավանդ, այնպիսի խուճապի ու քաոսային պայմաններում՝ ինչպիսին տիրում էր հայության մեջ 1917-ի վերջերին, 1918-ի սկզբին։ Եվ ահա հունվարի 13-ին հրապարակվում է ՀԱԽ-ի հատուկ կոմիտեի կոչ—«հրավերը»՝ ուղղված հայ մտավորականությանը՝ ի պատասխան այն պահանջների, որ նա ստանում էր «... երկրի այլ և այլ վայրերից և մանավանդ էրզրումից, որ ինտելիգենտ ուժեր ուղարկենք իրենց», ուստի և,— շարունակվում է կոչի մեջ,— «զանազան միությունների մասնավոր նամակներով դիմելուց հետո այժմ հրապարակորեն դիմում է համայն հայ ինտելիգենցիային, որ սա շտապի օր առաջ իրեն տրամադրել մեր համազգային մեծ գործի համար։

Թող իմանա հայ ինտելիգենցիան, որ ժողովրդական լայն զանգվածները նրա վրա են հառել իրենց աչքերը»[48]։

Այս կոչը մեջ բերվեց անդրադառնալու համար մի հետաքրքրական՝ անտիպ փաստաթղթի՝ ՀԱԽ-ի հատուկ կոմիտեին ուղղած Թումանյանի պաշտոնական գրությանը, որ թվագրված չէ, բայց նշված է ամիսը և օրը՝ հունվարի 21։ Դատելով բովանդակությունից, դժվար չէ կռահել, որ գրված է նախքան էրզրումի անկումը՝ 1918 թվականին։ Փաստաթուղթը ուշագրավ է նրանով, որ չնայած Թումանյանի նկատմամբ մեկ ամիս առաջ «Հորիզոնի» ցուցաբերած վերաբերմունքին, այնուամենայնիվ ՀԱԽ-ի հատուկ կոմիտեն այդ օրերին էլ չէր կարող շրջանցել ո՛չ Հայ գրողների ընկերությանը, ո՛չ, մանավանդ, Թումանյանին։ Մյուս կողմից՝ փաստաթուղթը ապացույց է, որ բանաստեղծն ինչպես միշտ, այժմ էլ չէր կարող դառնալ Ազգային խորհրդի հատուկ կոմիտեի հլու կամակատարը՝ պատրաստ նրա հրամանին, առանց խորանալու իրերի դրության և կատարվելիքի նպատակահարմարության մեջ։

Թումանյանի այդ անտիպ պաշտոնական գրությունից իմանում ենք, որ Հայոց ազգային խորհրդի կենտրոնական կոմիտեն դիմելով նաև գրողների ընկերությանը, վարչությունից պահանջել է 50 հոգի՝ էրզրում գործուղելու համար։

Պատասխանելով, թե ընկերության անդամները այնքան են զբաղված ժամանակի անհետաձգելի գործերով, որ նույնիսկ վարչության

---

48 «Մշակ», 1918, № 8։

ժողով չեն կարողանում հրավիրել, Թումանյանն անհնարին է համարում 50 մտավորական էրզրում ուղարկելը։ Թող տարօրինակ չթվա այս մերժումը և բանաստեղծի անվստահությունը Ազգային խորհրդի նախաձեռնության նպատակահարմարության նկատմամբ։ Իր պատասխանում Թումանյանը խնդրում էր տեղեկացնել իրեն, «թե ի՞նչ գործի համար են էդ մարդիկ, որ դրա՞ով զբաղվելիք։ Այդ անվստահության պատճառը գտնում ենք փաստաթղթի հետևյալ տողերի մեջ.

«Նորերս էլ,—շարունակում է բանաստեղծը,—աշակերտական խումբ ուղարկվեց էրզրում՝ իբրև թե նույն նպատակով, բայց նրանց Թիֆլիս գրած նամակներից երևում է, որ մնացել են էնտեղ պարապ, մեծ մասը ցրվել են, իսկ մնացած 40 հոգուց գնդապետ Թորգոմը կազմել է «Անմահների գունդ»[49]։

Նախադասության վերջում գրված հեղինակի բացականչական նշանը բավական բազմանշանակ է ու խոսուն. ամպագորգոռ անվանումներով Թումանյանը չէր բավարարվում։ Գրված էր ժողովրդի լինել-չլինելու հարցը, ուստի պետք էր ողջախոհ լինել, անել շրջահայաց քայլեր, նպատակասլաց գործեր, որոնց արդյունքը նախօրոք կարելի լիներ կանխատեսել։

Հայտնի է Անդրանիկի՝ որպես Հայաստանի երկրապահ զորքերի հրամանատարի, հերոսական գործունեությունը էրզրումի պաշտպանության համար, որը, սակայն, վերջացավ պարտությամբ։

Մենք այստեղ չենք մտնում մանրամասների մեջ. հայտնի է, թե ինչպիսի պայմաններում է Անդրանիկը նահանջել։ Պարզապես Ազգային խորհրդին գրած Թումանյանի պաշտոնական գրության մեջ նրա հեռատեսությունն ապացուցող մի փաստ ենք կամենում օգտագործել։

Էրզրումի անկումից հետո «Մշակը» հրապարակել է մի թղթակցություն, «Տեսակցություն մը զեներալ Անդրանիկի անձնական քարտուղարին հետ» վերնագրով։ Խոսքը վերաբերում է Վահան Թոթովենցին, որին Անդրանիկը էրզրում էր տարել ոչ միայն որպես իր անձնական քարտուղար, նաև նպատակ ուներ «մայր երկրի մեջ» շարունակել Թիֆլիսում լույս տեսնող «Հայաստան» թերթի հրատարակությունը[50] (որից երևում է, թե ինչպիսի հույսերով էր Անդրանիկը էրզրում գնում և

---

49 Պաշտոնական այդ գրության ինքնագիրը տե՛ս ՊԿՊԱ, ֆ 222, ց 1, գ 64, (II 6), թ 194, պահպանվում է նաև նույն գրության սևագիրը՝ ԴԱԹ. ԹՖ, № 1217։

50 Արսեն Մարմարյան (Վ. Թոթովենց), Զորավար Անդրանիկ և իր պատերազմները, էջ 297։

որքան էր դնահատում պարբերաբար հրատարակվող գրավոր խոսքի դերը)։

«Մշակի» այդ թղթակցության մեջ Թոթովենցը մանրամասն նկարագրում է այն քաոսային վիճակը, անիշխանությունն ու դավաճանական վերաբերմունքը, որոնց ականատես դարձավ Անդրանիկը և. չնայած գործ դրած ամեն ջանքի ու հնարամտության՝ պարտվեց։

Այն հարցին, թե Էրզրումից ուղարկված հեռագրերով անվերջ պահանջված լրացուցիչ ուժերը «ինչ դեր կատարեցին», Թոթովենցը պատասխանում է. «Էկան և չկրցին որևէ դեր կատարել, որովհետև մնացին փողոց. կոմիսար Աղամալյանը վռնտեց զանոնք և երեսնին չնայեցավ, անտեր, անտիրական, լքված և հուսահատ փողոցները պատեցան մինչև նահանջի օրը»[51]։

Ինչպես տեսնում ենք, որքան էլ Թումանյանը պատրաստ էր օգնելու Ազգային խորհրդի կենտրոնական կոմիտեին, այնուամենայնիվ, հիմքեր ուներ չվստահելու նրանց, խորամուխ լինելու նրանց հանձնարարությունների մեջ և առաջնորդվելու սեփական սկզբունքներով։ Այդպիսի դեպքերում Թումանյանի և Անդրանիկի կարծիքները միշտ համընկնում էին։ Նրանք համակարծիք էին նաև Ազգային խորհրդի և Հայաստանի կառավարության գործունեության նկատմամբ։ Դա երևում է հատկապես 1918—1919 թթ. նրանց նամակագրությունից[52]։

Անդրանիկի այդ վերաբերմունքը ակնհայտ է մանավանդ Էրզրում գնալու նախօրեին՝ հունվարի 25-ին «Մշակում» լույս տեսած մի հարցազրույցից (ստորագրված է Խ. Պ., ըստ երևույթին, Խ. Պոյաճյան, որ օրաթերթի աշխատակիցն էր, ստորագրել էր նաև Վ. Թոթովենցի հետ ունեցած վերոհիշյալ «Տեսակցությունը»)[53], որտեղ նա շատ կարուկ հայտարարում է, թե հարաբերություն չունի Հայոց ազգային խորհրդի հետ, հիշում է նաև ժամանակին Հայոց ազգային բյուրոյի հետ ունեցած իր տարաձայնությունները[54]։

Քննարկվող հարցազրույցը արժանի է ամենայն ուշադրության, քանի որ պարզում է Անդրանիկի հայացքների շատ կարևոր կողմերը,

---

51 «Մշակ», 1918, № 56։

52 Տե՛ս Անդրանիկի նամակները՝ ԳԱԹ, Թֆ, №501, 507, ՊԿՊԱ, ֆ 370, ց 1, գ 8, թ 1—5, «Նոր հորիզոն», 1918, № 22 և Թումանյանի նամակը՝ «Գրական թերթ», 1989, № 9։

53 «Մշակ», 1918, № 56։

54 Նույն տեղում, № 17, հունվարի 25։

նրա պատկերացումը այդ միջոցի քաղաքական կացության մասին, որ նա ներկայացնում է սրտացավ անկեղծությամբ, առանց գունազարդելու իրերի դրությունը և անհիմն հույսեր ներշնչելու։ Հարցազրույցը ապացույց է, որ հայ զորավարը գնում էր պաշտպանելու իր հայրենիքը օգնության որևէ սպասելիք չունենալով, հույսը դրած սեփական փոքրաքանակ ուժերի, իր փորձի, ժողովրդի ազգային արժանապատվության, ինքնագիտակցության վրա։ «Ի՞նչ ուժերու վրա կդնեք ձեր հույսը»,— հարցրել է դրուցակիցը. «Առայժմ մեր ուժերու վրա,— պատասխանել է Անդրանիկը։— Ես չեմ սիրեր խաբել մեր ժողովուրդը, պետք է պարզել Հայաստանի դրությունը, որպեսզի ժողովուրդը գիտակցի դալիք բոլոր վտանգին»։ Այն հարցին, թե Անդրանիկը ի՞նչ հույսեր է կապում ռուսական օգնության հետ, նա պատասխանել է. «Ռուս բանակի հարյուրին 90 %-ը հեռացած է, մնացածն էլ շուտով կհեռանա»։ Չնայած այդ իրողությանը, ինչպես և նախորդ տարիներին ռազմաճակատում ցարական զորավարներից կրած վիրավորանքներին, կառավարության հակահայկական բացարձակ քաղաքականության, Անդրանիկը այն հաստատուն կարծիքն է հայտնում, որ «Կովկասյան ժողովուրդները դեպի ռուս ժողովուրդը պիտի նայեն հաշտ կերպով, նկատի ունենալով, որ ռուս ժողովուրդը պաշտպանած է զիրենք բարբարոս հարձակումներու առջև»։

Այս զրույցի ժամանակ Անդրանիկը ցավով է հիշում Գանձակի «շատ տխուր» դեպքերը, երբ մուսավաթականների հրահրմամբ ադրբեջանցիները հարձակվել էին դեպի Ռուսաստան շտապող գնացքների վրա, կողոպտել, թալանել ռազմամթերքը, սպանել ռուս զինվորներին[55]։

Երզրումի անկումից հետո Ազգային խորհրդի նիստերից մեկում, երբ առաջարկվել է Պարսկաստանից Ռուսաստան մեկնող գնացքները զինաթափել, Անդրանիկը խստագույնս ընդվզել է, մերժելով այդ որոշումը։ Նա կրկին զայրույթով հիշել է Գանձակի դեպքերը, երբ «թաթարները տուն դարձող 5000 ռուս զինվոր կոտորեցին» և հստակ պատճառաբանելով իր հակառակ կարծիքը, պնդել, որ հայերը կարիք չունեն ռուսների հրացաններին։ «...Մենք անոնց բարեկամության պետք ունենք...»,— ասել է նա[56] ու վանել այդ նոր աղետը Հայաստանի սահմաններից։

---

55 Նույն տեղում։

56 «Զորավար Անդրանիկի կովկասյան ճակատի օրագրությունը», էջ 187։

Կարևոր է Անդրանիկի մի այլ հարցազնդում. «Ռուս ժողովուրդը պետք չէ մեկ օրեն մյուսը լքել հայերու ավանդական գործը, մոռնա իր և հայերու թափած արյունը կովկասյան լեռներու վրա և բախտին հանձնելով հեռանա երկրեն, մոռնալով նույնիսկ իր ապագա շահերը»[57]։

Ինչպես տեսնում ենք, այստեղ Անդրանիկը դուրս է գալիս սովորականի սահմաններից, Կովկասի ժողովուրդներին օգնելու, «կովկասյան լեռներու» վրա թափած արյունի հիշատակությամբ առանձնացնելով ռուսական շահը։ Այդ շահի մասին էր գրում նաև Թումանյանը 1915 թվականի փետրվարին։

Մոսկվայում լույս տեսնելիք «День печати» անունով թերթի խմբագրությունը պատերազմի մասին հարցաթերթ կազմելով, դիմել է բազմաթիվ ռուս և այլազգի անվանի մտավորականների, այդ թվում և Թումանյանին՝ իմանալու նրա կարծիքը պատերազմի և, հատկապես, Ռուսաստանի համար այդ պատերազմի նշանակության մասին։ Հարցաթերթը ուշ ստանալով, նա պատասխանել է մի հակիրճ հեռագրով, որը հավասար է խորախորհուրդ մի հոդվածի։

«Սոսկալի պատերազմը կթոթափի նեղ ազգայնականությունից և միլիտարիզմից։ Ամենից առաջ ազատություն կբերի կռվող ազգերին։ Ռուս ժողովուրդը Ռուսաստանի մյուս ժողովուրդներին ազատություն տալով, կկապվի նրանց հետ բարեկամական սերտ կապերով։ Ռուսաստանը կհզորանա։ Խաղաղության գաղափարը չափազանց կուժեղանա»[58]։

Ավելորդ են մեկնաբանությունները. ինչպես զորավարը, այնպես էլ բանաստեղծը Ռուսաստանին ազատարարի դեր հատկացնելով Կովկասին տիրելու մեջ, քաջ գիտակցում էին ոչ միայն փոքր ժողովուրդների, այլև Ռուսաստանի շահը։ Այլ բան է, որ ինչպես այն օրերին այնպես էլ հետագայում Խորհրդային Միությանը հետաքրքրում էր նախ և առաջ ի՛ր շահը։

Հիշատակելի է նաև Անդրանիկի մի այլ ինքնատիպ պատասխան «Մշակի» թղթակցի հետ ունեցած հարցազրույցի ժամանակ։ Այն հարցին, թե ինչ է արվում պարտադիր զինվորագրության համար՝ զորավարը պատասխանում է. «Ինքնապաշտպանության և ազատագրության գործի համար մենք չենք կրնար «ոստիկանական» միջոցներու դիմել։

57 «Մշակ», 1918, № 17։

58 «Հորիզոն», 1915, № 30։

Այդ գործը պետք է հիմնված ըլլա գիտակցության խարիսխի վրա, ինքնապաշտպանության սրբազան բնազդի վրա... սա ազատության և ինքնապաշտպանության գործ է և ամեն մի թուրքահայ պետք է զենք վերցնե առանց այլևայլ պատճառաբանության»։ Ազատության համար պայքարելուց հրաժարվելու ամեն մի պատճառաբանության մեջ Անդրանիկը տեսնում էր ստրուկ լինելու, դերի մնալու ցանկություն[59]։

Անդրադառնալով այդ պահին կուսակցությունների դերին, նա այն կարծիքն է հայտնում, որ «Ազատության դատին պետք չէ մոտենալ կուսակցական տեսակետե»։ Փորձված զորավարը լավ գիտեր, թե ինչ դեր ունի կուսակցական անմիաբանությունը, որից զգուշացնում էր նաև Թումանյանը 1915 թ. իր «Զգաստություն» հոդվածում։ Էրզրումի պարտության պատճառներից մեկն էլ այդ անմիաբանությունն էր, որը հասավ դավաճանության։

Էրզրումի պարտությունից հետո՝ 1918-ի մարտի 21-ին, Թիֆլիսում ունեցած իր մի բանախոսության մեջ Ավետիս Ահարոնյանը, միանգամայն օբյեկտիվորեն գնահատելով իրադրությունը, այդ պարտության պատճառը համարում է ընդհանուր հուսալքությունը, բացակայությունը կանոնավոր բանակի, որին փոխարինում էին զինված մարդկանց խմբեր՝ առանց ընդհանուր կապի։ Ահարոնյանը մեղադրում է ոչ թե էրզրումում կռվողներին, այլ զորակոչին չենթարկվողներին։ Ինչ վերաբերում է Անդրանիկին, ահա թե ինչ գնահատական է տալիս նրան. «Անդրանիկը, այդ մաքուր հայրենասերը, այդ հերոսը, որ կարծես գնդակի հետ դաշն է կապել, որ իրեն չմոտենա, այդ հայոց Գարիբալդին, որ բազմաթիվ անգամ կռիվներ ու հաղթանակներ է ունեցել, Անդրանիկը, որի մեջ դլխից առաջ սիրտն է վազում առաջ, ի՞նչ պիտի աներ երկրի այդ ծանր կացության մեջ...»[60]։

Ահարոնյանի այդ խոսքերի առիթով տեղին է հիշել մի հետաքրքրքրական զրույց, որ ժամանակին պատմվել է ու հասել ներկա սերնդին, իբրև ապացույց ոչ միայն «հայոց Գարիբալդիի» բազմիցս ապացուցված հայրենասիրության, այլև ամեն հայի նկատմամբ ունեցած նրա պահանջկոտության։

«Անդրանիկը գնացքով գնում էր Էրզրումի ճակատ,— պատմում է ժամանակակիցը։— Գյումրիի կայարանում խռնվել էր բազմամարդ ամբոխ, սպասում էին զորավարի հետ հանդիպման։ Գնացքը կանգ-

59 «Մշակ», 1918, № 18։

60 «Մշակ», 1918, № 63։

նեց կայարանում։ Զորավարին խնդրեցին դուրս գալ և ողջունել ժողովրդին։— Զորավար, ժողովուրդը հավաքվել է, ուզում է քեզ տեսնել։ Անդրանիկը պատուհանից անգամ չնայեց... Ով որ ուզում է Անդրանիկին տեսնել, թող դա Էրզրումի ճակատ»,— անկաշկանդ ասել է նա[61]։

* * *

Էրզրումից հետո դրությունը Հայաստանի գավառներում դառնում է օրհասական. իրար հետևից Թուրքերին անցան Զարսը, Սարիղամիշը, Վանը։ Արևելյան Հայաստանի գավառներում կրկին գլուխ բարձրացրին ազգամիջյան թշնամությունները, որոնք շուտով վերածվեցին հայ-թուրքական կռիվների։ Մեծ վտանգ էր սպասվում հատկապես Հին Նախիջևանի և Բորչալուի թուրքերից։

Մանր կացության մեջ, չստանալով որևէ օգնություն ոչ զորքից, ոչ Երևանի ու Թիֆլիսի հայ ղեկավարությունից, Անդրանիկը հրաժարվում է Հայաստանի երկրապահ զորքերի հրամանատարի իր պաշտոնից, բայց Ալեքսանդրապոլում Հայաստանի ապահովության խորհրդի առաջարկով ապրիլի 9-ին կազմակերպում է իր ղեկավարությամբ գործող «Հայկական առանձին հարվածող զորամասը»։

Մանր դրության մեջ եղած ժամանակ Անդրանիկը մի անգամ չէ, որ կարիք է զգում իր մտքերը, վիրավորանքները պատմել բանաստեղծին, նրանից մխիթարական խոսք լսել, խորհուրդ հարցնել իբրև իր գաղափարակցի։

Էրզրումի ողբերգությունից հետո առաջին նամակը Անդրանիկը Թումանյանին գրում է Ալեքսանդրապոլից՝ 1918-ի ապրիլի առաջին տասնօրյակում[62]։ Նամակը կարճ է, բավականին պարզունակ, բայց խոսուն է ու բովանդակալից։

«Համլիկը (Թումանյանի որդին, որ նույնպես Էրզրումում էր—Լ. Կ.) եկավ և պատմած կլինի ամեն բան։ Թոթովենցը նոթ է ըրած շատ մը խնդիրներ[63]...

---

61 «Ավանդարդ», 1988, № 50 (Արուսյակ Սահակյան, Ազգի նկարագիրը նրա գոյության օրենքն է)։

62 Նամակն անթվակիր է. ժամանակը որոշվում է Հայոց ազգային խորհրդի, Սեյմի հայ անդամների՝ ապրիլի 5-ին Ալեքսանդրապոլ մեկնելու, Անդրանիկին հանդիպելու փաստերով («Հորիզոն», 1918, № 74, ԳԱԹ, Թֆ, № 507)։

63 Նկատի ունի Խ. Պոյաճյանի «Տեսակցություն մը գեն. Անդրանիկի անձնական քարտուղարին հետ» հոդվածը («Մշակ», 1918, № 56, 16-ը մարտի)։

Երեկ Ահարոնյանը և Վահան Փափազյան եկան քովս հարցնելու։ Լուր ղրկեցի, որ ուրիշներից հարցնեն։ Իմ 20 ամսվա ըսածներս սուտ էր, չի հավատացին, հիմա ի՞նչ կը հարցնեք ինձնից։

Վերջապես եկան, տեսան, նորից կոկորդիլոսի արցունքներ թափեցին և մեկնեցին Սարիղամիշ։

Ոտքս ցավում է։ Ոսկորին խրված է ըշտիկ մը, սափոքս, շորերս ծակված է, հույս ունիմ, որ քանի օրից լավանա...։

Հեռագիրս ճշտությամբ չէին տպած, որ որսատեղի դավադիրներու ոհմակի մը մեջ ընկա։

Այսպիսի բան չէի կրնալ երևակայել...։ Ահարոնյանը և Փափազյանը խնդրեցին, որ մնամ Ալեքսանդրապոլ՝ մինչև իրենց վերադառնալը»։

Նույն նամակում Անդրանիկը սիրով է հիշում, որ բանաստեղծի դուստրերը՝ Նվարդը և Անուշը, Ալեքսանդրապոլում այցելել են իրեն[64], և ապա գրում՝ Ղարաքիլիսա մեկնելու, Թումանյանին տեսնելու իր ցանկության մասին։

Ինչպես տեսնում ենք, Անդրանիկը ինչքան էլ վշտացած Ազգային խորհրդի նախագահից, որքան էլ նա չէր մոռացել Էրզրում գնալու նախօրերին Ազգային խորհրդի կենտրոնական կոմիտեի ցուցաբերած վերաբերմունքը (Հայոց ազգային խորհրդի որոշ անդամներ դեմ էին նրան Հայաստանի երկրապահ զորքերի հրամանատար նշանակելուն), այնուամենայնիվ, իր պարտքն է համարում մնալ Ալեքսանդրապոլում, մասնակցել քաղաքի պաշտպանությանը։ Իսկ Ղարաքիլիսա գնալու մտադրությունը մնում է անկատար, դեպքերն իրենք էին թելադրում, անձնական ցանկությունների ժամանակ չկար։

Ասացինք, որ գործող բանակում հայերի կրած պարտությունները սրում են նաև Արևելյան Հայաստանի ազգամիջյան հարաբերությունները։

Երևանում, Նախիջևանում, Լոռում և շատ այլ վայրերում կրկին

---

64 Թումանյանի դուստրերը Ալեքսանդրապոլ գնացել էին Պետերբուրգից վերադարձած ու նոր ամուսնացած եղբորը՝ Մուշեղին և կնոջը հանդիպելու (Մուշեղը զինվորական ծառայության մեջ էր, միաժամանակ աշխատում էր տեղի դիմնազիայում և առևտրական դպրոցում)։ Քիչ անց որդուն հանդիպելու է գնում նաև բանաստեղծը (տե՛ս Մուշեղի կնոջ՝ Մարիա Սակալսկայայի հուշերը Թումանյանի թանգարանում)։ Թեպետ որևէ փաստ հայտնի չէ Անդրանիկի և Թումանյանի հանդիպման մասին, բայց անհավանական չէ, որ նրանք տեսնվել են։

սկսվում են կողոպուտ, թալան, սպանություններ, որոնք վերածվում էին լուրջ ընդհարումների։

Ուշագրավ է, որ հայ-ադրբեջանական այս նոր ընդհարման հրահրողներից մեկը կրում էր կալվածատեր Եղիգարովների ազգանունը. այդ տոհմը 1905—1906 թթ. ազգամիջյան կռիվների միջոցին հայտնի էր իր անմարդկային արարքներով. Թումանյանը հետևողական պայքար էր մղում ինչպես նրանց, այնպես էլ նրանց հովանավորների դեմ։ Կալվածատեր և սպա Արշիլ բեկ Եղիգարովը տեղական աղալարներից ու կուլակներից ստեղծել էր իբրև թե «ժողովրդական միլիցիա», որը կազմակերպում էր թալան ու հարձակումներ գնացքների էշելոնների վրա՝ հատկապես ղենք ձեռք բերելու նպատակով։

1918 թ. մարտի 1-ին Թիֆլիսում հայրենակցական միությունների ընդհանուր ժողովում ստեղծվում է Հայոց հայրենակցական միությունների միություն Թումանյանի նախագահությամբ, քարտուղար է ընտրվում Համազասպ Համբարձումյանը։ Միության նպատակն էր ապահովել հայերի խաղաղ կյանքը հարևան ազգերի հետ, կազմակերպել վնասված փախստականների նյութական օգնության գործը։ Պահպանվող մի քանի երկտող պաշտոնական գրություններ՝ գրված Թումանյանի ձեռքով և ուղղված Համ. Համբարձումյանին, վկայում են, թե ինչպիսի հայրենանվեր գործունեություն է ծավալել Հայոց հայրենակցական միությունների միությունը։

Ուշագրավ են հետևյալ փաստերը.

«Էսօր իրար ետևից մի քանի շատ կարևոր նիստեր ունեմ»,— գրում է Թումանյանը 1918 թ. մարտի 17-ին Մուշեղ Աղայանին ուղղված անտիպ նամակում[65]։ Այդ նիստերը, անշուշտ, կապ ունեին ինչպես քիչ անց ստեղծված հայ-մուսուլմանական սոցիալիստական բլոկի գործունեության նախապատրաստման, այնպես էլ Հայոց հայրենակցական միությունների միության գործունեության ծրագրերի մշակման հետ։ Բայց Թումանյանին անհանգստացնում է նաև մի այլ մտահոգություն։

1918 թ. մարտի 17-ին՝ Մուշեղ Աղայանին գրած նամակի օրը, նախքան հայ-մուսուլմանական բլոկի ստեղծումը, Թումանյանը պաշտոնական մի այլ գրություն է ստանում Հայոց ազգային խորհրդից բժ. Խ. Բաբալյան ստորագրությամբ, որով հայտնվում է, թե «Սանահինից պատգամավորություն է եկել երկաթուղագծի վրա աշխատող

65 ԳԱԹ, Թֆ, ց 2, № 44։

հայ և վրացի ծառայողների միջև եղած թյուրիմացությունների մասին խոսելու»:

«Դրությունը այդ շրջանում շատ լուրջ է,— հայտնվում է այդ գրության մեջ,— կարող է խոշոր ընդհարումների տեղիք տալ»: Այնուհետև խնդրում են «լսել պատգամավորությանը և հարկ եղած կարգադրություններ անել: Կարծում եմ,— շարունակվում է գրության մեջ,— որ եթե մի քանի օրով կարողանայիք մեկնել այդ շրջանը՝ վերջ ված կլինեիք թյուրիմացություններին... Ձեր այդտեղ գնալը կհանգստացներ կրքերը»[66]:

Կասկածից դուրս է, որ մարտի 17-ին գրած նամակում հիշատակված ժողովներից մեկն էլ պետք է որ կապված լիներ նույն օրը ստացած այդ պաշտոնական գրության, Սանահինից եկած պատգամավորությանը հանդիպելու հետ: Այդ մասին առայժմ այլ տեղեկություն չունենք, բայց հենվելով նույն փաստի վրա, կարելի է եզրակացնել, որ մեկնելով Լոռի, Թումանյանը գործել է ոչ միայն հայ-ադրբեջանական խաղաղության համար, այլև հայ-վրացական: Ըստ երևույթին, նրա միջամտությունը տվել է դրական արդյունք, որովհետև այդ օրերին հայ-վրացական միջադեպի մասին որևէ փաստ չկա:

Վրաստանը անկախ հայտարարելուց հետո՝ 1918 թ. հունիսից, հայ մամուլը հայտնում էր վրաց մենշևիկների նվաճողական ձգտումների մասին: Նրանց նպատակը Մեծ Վրաստան ստեղծելն էր, որի մեջ պետք է մտներ նաև Լոռին, Ալեքսանդրապոլի գավառի մի մասը, Ղազախը, Բորչալուն և այլն: Թումանյանը դեռ Լոռուց Թիֆլիս չէր ժամանել, երբ հունիսի 16-ին տեղի է ունենում Լոռու, Ղազախ-Շամշադինի հայրենակցական միությունների ընդհանուր ժողովը, որը բողոքում է հայաբնակ տարածություններ բռնագրավելու վրաց մենշևիկների ձգտումների դեմ և պահանջում այդ բնակավայրերը միացնել Հայաստանին:

1918 թ. մարտի 23-ին ստեղծվեց հայ-մուսուլմանական սոցիալիստական բլոկ և ընտրվեց տասը հոգուց բաղկացած հատուկ բյուրո, որի նախագահը հայերից Գևորգ Ղարաջյանն էր, մուսուլմաններից՝ Սամեդ Աղամալի օղլին: Նախագահի տեղակալ է ընտրվում աղգամիջյան կռիվները խաղաղությամբ ավարտելու մեծ փորձ ունեցող բանաստեղծ Թումանյանը: Մուսուլմաններից գործուն մասնակցություն

66 ԹԹ, Նոր նյութեր, թղթ. № 45։

ուներ դրամատուրգ և հասարակական գործիչ Աբդուռահիմ Հախվերդովը, որի պաշտոնատեղին Բորչալուի գավառում էր (ԹԺՀ, 734—739)։

Մարտի 25-ին, հայ-մուսուլմանական բլոկի բյուրոյի և անդրկովկասյան կառավարչական մարմինների հանձնարարությամբ, ինչպես նաև Ղազախ-Բորչալուի գավառների բնակչության հրավերով, Թումանյանը մեկնում է Լոռի, իր տրամադրության տակ ունենալով նաև զորամաս[67]։

Դժվարին պայմանների մեջ էր գործում բանաստեղծը։ Ընտանիքի անդամների մի մասի հետ ապաստանելով Լոռում, անդադար բանակցությունների մեջ էր հայ և այլազգի գործիչների հետ։ Մեկ Դսեղում էր, մեկ Ղարաքիլիսայում, մեկ շտապ մեկնում էր Թիֆլիս, ապա վերադառնում կոիվների վայր։ Կազմակերպում էր խաղաղության ժողովրդական ցույցեր, ելույթներ ունենում, միանգամայն օբյեկտիվորեն պատասխանելով մեղավորներին՝ հայեր լինեին, թե ադրբեջանցիներ։ Ականատեսը վկայում է, որ «նրա բարի անկեղծ սրտից բխած խոսքերը խոր տպավորություն էին թողնում հասարակության վրա»[68]։

Ինչպես պարզվում է մի անտիպ փաստաթղթից, նախքան Լոռի մեկնելը, դեռևս փետրվարին, Թումանյանը Ազգային խորհրդի կենտրոնական կոմիտեի հանձնարարությամբ ստանձնել էր Լոռու, Փամբակի, Ղազախի, Շամշադինի և Բորչալվի ընդհանուր լիազորի պարտականությունը։

Հիշատակված փաստաթուղթը հայտարարություն է՝ ուղղված Ազգային խորհրդի կենտրոնական կոմիտեին և թեպետ ունի լոկ ֆինանսական բնույթ, մի տեսակ զեկուցագիր է հրաժարական ուած պաշտոնյայի, բայց իրականում այն իրեն ներկայացնում է հիշված շրջաններում բանաստեղծի եռամսյա գործունեության նկարագիրը, որի մեջ Թումանյանը հանդես է գալիս իրեն հատուկ բոլոր մարդկային բարձր հատկանիշներով, ամենից առաջ՝ մարդասիրությամբ։

Զեկուցագրի 14-րդ կետը վերաբերում է մոտ 600 թուրք կանանց ու երեխաներին առաջին օգնություն ցույց տալուն, 18-րդը՝ 300 դերիների խնամքի համար ծախսած գումարներին, 17-րդը՝ «Զատկի օրը՝ Ղարաքիլիսայում ամբոխված կարոտյալ գաղթականներին» տրված նպաստին և այլն։ Նրա տնօրինությամբ են ֆինանսավորվել Անդրանիկի զինվորական ծախսերը...

---

67 «Кавказское слово», 1918, № 67, 130, «Հորիզոն», 1918, № 83։

68 «Հորիզոն», 1918, № 76։

Զեկուցագիր-հայտարարությունը ունի 22 կետ, որով ներկայացված է եռամսյա գործունեության ընթացքում ծախսված դումարների հաշվետվությունը. մանրամասների մեջ առանց խորանալու էլ որոշակի է դառնում բանաստեղծ մարդու համար դժվարին մի աշխատանք, որ պահանջել է ուժերի գերլարում։

Ղարաքիլիսան թուրքերից գրավվելուց հետո 1918 թ. մայիսի 28-ին Հայաստանը անկախ հայտարարելու կապակցությամբ, Ազգային խորհուրդը իրեն կրկին կոչել էր Հայության գերագույն մարմին և հայկական գավառների գերագույն միակ իշխանություն և արդեն պատրաստ էր հուլիսի 16-ին մեկնելու Երևան։ Ահա այդ է պատճառը, որ հուլիսի 14-ին Թումանյանը շտապել է փակել իր գրամական հաշիվները մի հաստատության հետ, որի դերը արդեն փոխվում էր։

Թումանյանի անօրինության տակ գտնվող պաշտոնյաները աշխատել են մարտի 15-ից մինչև հունիսի 15-ը։

Ինչպես ասվեց, ընդհանուր լիազորի պաշտոնը նա ստանձնել է փետրվարին, ուրեմն, այդ ժամանակամիջոցում նա հավաքագրել է պաշտոնյաներ և ապա իր վրա վերցնելով նաև հայ-ադրբեջանական կռիվները խաղաղությամբ վերջ տալու առաքելությունը, մեկնել է Լոռի։

Հունիսին Թումանյանին վստահված շրջանները մեծ մասամբ գրավված էին տաճկական զորքերից, ուրեմն նա այլևս անելիք չուներ և Թիֆլիս էլ նա ընկել է «պատահմունքով» (այդ մասին ստորև), ապա միայն ավել հրաժարականը, որը դժբախտաբար առայժմ մեզ չի հանդիպել, բայց Գ. Խատիսյանին ուղղած հունիսի 28-ի նամակից իմանում ենք, որ այն գրել է մեկ օր առաջ՝ 27-ին։

Քննության առարկա փաստաթուղթը գրված է հուլիսի 14-ին, նը-պատակը Հայոց ազգային խորհրդից շտապ դումար պահանջելն էր, որպեսզի կարողանար «...հոգալու էն պարտքերը, որ ինձ հանձնված հինգ շրջանը կառավարելու համար, ճանապարհների փակ լինելու պատճառով՝ ես ստիպված եմ եղել անելու կողմնակի միջոցներից և այլ ընկերություններից»[69],— գրում է բանաստեղծը։

Այժմ փորձենք որոշել, թե ե՞րբ է Թումանյանը Լոռուց մեկնել Թիֆլիս։

Պահպանվում է դատերը՝ Նվարդին, ուղղած մի անթվակիր նամակ, գրված հապճեպ, մատիտով, բլոկնոտից պոկած թղթի վրա՝ Քոբեր

69 ԳԱԹ, Թֆ, № 1216։

կայարանից (անտիպ)։ Թամար Թումանյանի վկայությամբ՝ նամակն ուղարկված էր Այգեհատ։ Բովանդակությունից երևում է, որ գրված է 1918 թ. ամռանը՝ Ղարաքիլիսան թուրքերի կողմից գրավվելուց հետո, բայց պետք է ճշտել ամիսը, օրը։ Ըստ այդ նամակի, Թումանյանը եղել է գերմանացիների «մեծի» մոտ (թուրքերի՝ Լոռին և Ալեքսանդրապոլը գրավելուց հետո երկաթուղին տնօրինում էին գերմանացիները)։ Վերջինս նրան ընդունել է սիրով, մանավանդ, երբ իմացել է նրա բանաստեղծ լինելը՝ հավատալ է, թե «էս երկու օրը ամեն բան կվերջանա» (այսինքն՝ ճանապարհները կբացվեն—Լ. Կ.), բայց խորհուրդ է տվել, որ նա մեկ օրով գնա Թիֆլիս և վերադառնա։ Ըստ երևույթին, «գերմանացիների մեծը» ինչ-որ հանձնարարություն է արել և շահագրգռված է եղել Թումանյանի Թիֆլիս մեկնելով, որովհետև նամակում հայտնում է. «իրենք (գերմանացիները—Լ. Կ.) առավոտը վաղ էստեղից՝ Քոբերից, ժամը 6-ին ինձ կուղարկեն Սանահին, որ 7-ին գնամ Թիֆլիս»[70]։

Արդ, ո՞րն է նամակի մոտավոր թվագրությունը, և ե՞րբ է Թումանյանը ժամանել Թիֆլիս։

Ըստ «Մշակի» մի հայտարարության՝ 1918 թ. հունիսի 25-ին տեղի էր ունենալու Հայոց հայրենակցական միությունների վարչությունների արտակարգ ընդհանուր ժողով, ուր պետք է զեկուցեր Լոռու և Փամբակի գավառներից վերադարձած Թումանյանը[71]։ Վերջինիս՝ Թիֆլիս վերադառնալու մասին տեղեկություն են տալիս նաև «Հորիզոնը», տպագրելով մի հարցազրույց «նորերս Լոռուց եկած բանաստեղծի հետ»[72], և «Кавказское слово» օրաթերթը, որը միաժամանակ հայտնում է նրա՝ կրկին Լոռի մեկնելու մտադրությունը[73]։ Լոռուց Թիֆլիս հապճեպ մեկնելու մասին Թումանյանը գրում է նաև վերևում հիշատակված հուլիսի 14-ի պաշտոնական գրության մեջ։

Այս բոլոր փաստերի համադրությունը հնարավորություն է տալիս ենթադրելու, որ Քոբերից Թումանյանը դատերը գրել է հունիսի 20—22-ին, որից հետո 22—23-ին հասել է Թիֆլիս, իսկ գերմանացիներին տված խոստումը՝ մեկ օր հետո վերադառնալ Լոռի, հանգամանքների բերումով չի կատարել։ Լոռի վերադառնալու մտադրության մասին

---

70 Նամակի ինքնագիրը պահպանվում է ԹԹ, Մայր մատյան, № 1243։

71 «Մշակ», 1918, № 120, հունիսի 25։

72 «Հորիզոն», 1918, № 124, հունիսի 26։

73 «Кавказское слово», 1918, № 130.

Թումանյանը գրել է նաև Գևորգ Խատիսյանին ուղղած հունիսի 28-ի նամակում, բայց քիչ անց կտեսնենք, թե օբյեկտիվ ինչ հանգամանքներում է փոխվել նրա այդ մտադրությունը։

* * *

Պահպանվում է Հայոց ազգային խորհրդից ստացած Թումանյանի մի վկայականը 1918, հուլիսի 15 թվագրությամբ, որը միջնորդագիր է Թիֆլիսի քաղաքացիական և զինվորական կառավարություններին՝ օգնել բանաստեղծին Դսեղ մեկնելու, այնտեղից տեղափոխելու ձեռագրեր և իրեր։ Դսեղը տակավին Թուրքերի տիրապետության տակ էր, երկաթուղին անօրինում էին գերմանացիները, ուստի միայն հատուկ թույլտվությամբ Թումանյանը կարող էր մեկնել Հայրենի գյուղ։ Ստացե՞լ է նա այդ իրավունքը, կարողացե՞լ է տեղափոխել անհրաժեշտ իրերն ու ձեռագրերը,— այդ մասին առայժմ որևէ այլ վկայություն չկա։ Միայն կարելի է ենթադրել, որ նա շտապ մեկնել է ու վերադարձել։ Այդ է ապացուցում նրա՝ Թիֆլիսում Գյուտ Աղանյանին գրած 1918 թ. հուլիսի 19-ի երկտողը[74]։

Այժմ անդրադառնանք վերը հիշատակված այն հարցազրույցին, որը տեղի է ունեցել Թումանյանի՝ Թիֆլիս ժամանելուց հետո՝ նրա և «Հորիզոն» օրաթերթի աշխատակցի միջև։ Հարցազրույցի միջոցով Թումանյանը մանրամասն տեղեկություններ է տալիս արդեն Թուրքերին ենթակա Լոռում, հատկապես Ղարաքիլիսայում, տիրող ծանր, ողբերգական կացության շուրջը։ Բայց մեծ մասը վերաբերում է Անդրանիկին և Ղարաքիլիսայում ու շրջակայքում ապաստանած գաղթականությանը։ Ըստ Թումանյանի տեղեկությունների, տարածված է ծաղիկ հիվանդությունը. մարդիկ կիսամերկ են, քաղցած ու հոգնած։ «Անդրանիկի զորամասի եռևից,— պատմում է բանաստեղծը,— գնում է մի քանի տասնյակ հազար գաղթականություն, որը բաղկացած է գլխավորապես տաճկահայերից։ Մի քանի օր առաջ, երբ Լոռու շրջանից դեպի Դիլիջան էր գնում Անդրանիկի զորամասը և նրան հետևող գաղթականու-

74 ԳԱԹ, Թֆ, № 290. Երկտողն անթվակիր է, թվագրությունը որոշվում է ըստ վերջում նշված «Ուրբաթի» և Գալուստ Տեր-Մկրտչյանի հոգեհանգստի մասին (որի առիթով գրված է երկտողը) տպագրված հայտարարության («Հորիզոն», 1918, № 143, հուլիսի 20)։

թյունը, ճանապարհին տեղաց զարհուրելի կարկուտ, որից սպանվեցին բազմաթիվ գաղթականներ...»:

Լոռուց վերադառնալուց հետո Թումանյանի հոգսը կրկնապատկվում է: Գրավված շրջաններում տիրող հալածանքները, առևանգումներն ու կողոպուտը հանգիստ չէին տալիս բանաստեղծին: Հունիսի 15-ին հատուկ պատվիրակություն էր գնացել Կոստանդնուպոլիս՝ մասնակցելու հունիսի 25-ին նշանակված խորհրդաժողովին: Պատվիրակությունը կազմված էր Ազգային խորհրդի ներկայացուցիչներից՝ Ավ. Ահարոնյան, Միք. Պապաջանյան, Ալ. Խատիսյան և երկու քարտուղար, որոնցից մեկը Դ. Խատիսյանն էր (Թումանյանի դստեր՝ Աշխենի ամուսինը և Ալ. Խատիսյանի եղբայրը): Խորհրդաժողովին մասնակցելու էին Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Թուրքիայի, Բուլղարիայի և Անդրկովկասի ներկայացուցիչները[75]: Այստեղ իբրև թե պետք է քննվեր Հայաստանի ճակատագիրը՝ ճանապարհները բացելու, գաղթականների՝ իրենց հողերը մեկնելու, սահմանների հարցերը: Դժգոհ այդ հարցերի լուծման դանդաղությունից և նոր անկախություն ստացած Հայաստանի անօրեններից՝ Թումանյանը 1918-ի հունիսի 28-ին մի զայրալից նամակ է ուղարկում Կ. Պոլիս Դ. Խատիսյանին (անտիպ), նկարագրելով Հայաստանի ժողովրդի անտանելի կացությունը. «Մինչև ձեր խորհրդաժողովի վերջանալը էստեղ էլ շատ բան կվերջանա, և կամ դուցե հուսահատված ժողովուրդը կդիմի էն տեսակ միջոցների, որ խնդիրը միանգամից կամ էս կողմը կտրի, կամ էն»,— գուժում է բանաստեղծը:

1918 թ. հունիսի 28-ի նամակը բավական հետաքրքիր փաստաթուղթ է: Այդ նամակից ենք իմանում, որ Լոռու, Ղազախի, Շամշադինի, Փամբակի ու Բորչալուի լիազորի իր պաշտոնից Թումանյանը, ինչպես ասվեց, հրաժարվել է հունիսի 27-ին «շատ ու շատ մութ և գարշելի բաների» պատճառով, որոնց մասին նամակի մեջ գրել չի ուզում[76]: Անդրադառնալով Հայաստանի սահմանների որոշման հարցին, Թումանյանը խիստ խոսքեր է գրում կառավարության հասցեին, նրանց ապիկարությունը համարելով ոճրագործություն. «Ոչ թե իրենք իրենց ճանապարհը չբացարին,— շարունակում է բանաստեղծը,— այլ

---

75 Մանրամասնությունները տե՛ս Ալ. Խատիսյան, Հայաստանի հանրապետության ծագումն ու զարգացումը, 1968, Բեյրութ, էջ 97—114։

76 ԹԹ, Մայր մատյան, № 412։

երբ դերմանացին և վրացին էլ բաց արին, նույնիսկ էն ժամանակ էլ մի չեկան ու տեղեկություն չտվին, թե ինչ կա, ինչ չկա, որ մենք էլ մեր գիտցածը անենք ... թե էս էլ մերն է ու մեր իրավունքը»[77]։

Լոռուց Թիֆլիս գալով՝ Թումանյանը սկսում է բանակցությունների մեջ մտնել հայ-վրացական սահմանը որոշելու և այդ նպատակով, ինչպես երևում է հիշյալ հունիսի 28-ի նամակից, «շատ հարցեր» լուծելու համար։ «Մի երկու տեսակցություն է ունեցել տաճկական կառավարության ներկայացուցչի հետ» ու պատրաստվում էր նորից գնալ, հետը տանելով Ազգային խորհրդի նախագահի տեղակալ Ավետիք Սահակյանին[78]։ Այդ «շատ հարցերից» ամենագլխավորը պետք է եղած լիներ ծայրահեղ վատ կացության մեջ գտնվող հայ գաղթականությունը։ Այդ օրերին ոչ միայն նոր գաղթականներին արգելված էր Վրաստանի սահմանից ներս մտնել, այլև եղածներին էլ, մենշևիկյան կառավարության որոշմամբ, արտաքսում էին։ Մինչև սեպտեմբեր Թիֆլիսից վտարվել են 5700 հայ գաղթական. նրանք իրավունք ունեին միայն քաղաքից 300 վերստ հեռավորության վրա ապրելու[79]։

Ինչպես ասվեց, հունիսի 28-ի նամակում Թումանյանը հայտնում էր նաև, որ նորից վերադառնալու է Լոռի. նույնը գրել է նաև «Кавказское слово» թերթը իր հունիսի 27-ի համարում (№ 130)՝ Լոռուց բանաստեղծի վերադառնալու մասին հրապարակված հաղորդման մեջ։ Բայց չնայած դրան, թերևս իր համար էլ անակնկալ, նա մի պատգամավորության հետ (գեներալ Բաղրամյան, Ս. Հարությունյան, Է. Միրզոյան) հուլիսի 1-ին մեկնում է Բաթում՝ Ազգային խորհրդի՝ հունիսի 29-ի որոշմամբ[80]։ Ինչպես տեսնում ենք, այս անգամ էլ Ազգային խորհրդի համար նշանակություն չուներ Թումանյանի անկուսակցական լինելը և հրաժարականը Լոռու-Փամբակի և այլ շրջանների լիազորի իր պարտականությունից։

«Кавказское слово» թերթի թղթակցի հետ ունեցած զրույցի ժամանակ Թումանյանը պարզում է Բաթում (որն այդ միջոցին թուրքերին էր պատկանում) մեկնող պատգամավորության նպատակը, այն է՝ 1. Թուրքական զորքերի տեղափոխումը, 2. Հայաստանի սահման-

---

77 Նույն տեղում։

78 Նույն տեղում։

79 «Աշխատավոր», 1918, № 135։

80 «Кавказское слово», 1918, № 139.

ների հարցը, 3. Գաղթականության վերադարձը, 4. Առևտրական փոխհարաբերությունների վերսկսումը[81]։

Պատգամավորությունը վերադարձել է հուլիսի 5-ին։ Հրապարակելով նրանց վերադարձի լուրը, թերթերը հատկապես նշում էին այն սիրալիրությունը, որով Թուրք էսադ փաշան ընդունել է պատվիրակներին։ Բայց ի՞նչ է ստացել պատվիրակությունը՝ ոչինչ։ Բաթումի պաշտպրի համաձայն թուրքական զորքերը դեպի սահման տանելու մասին էսադ փաշան հայտնել է, որ «Թուրքաց զորքերը իրենց բռնած տեղերից դեպի իրենց սահմանները կտարվեն Հայաստանի և Վրաստանի սահմանները որոշելուց հետո»։ Ինչ վերաբերում է փախստականների վերադարձին իրենց բնակավայրերը, էսադ փաշան հայտնել է, որ դա առայժմ անկարելի է, որովհետև թուրքերի և հայերի սուր հարաբերությունները՝ Թուրքիային անցած շրջաններում կարող են «էքսցեսներ» առաջ բերել[82]։

Այսպիսով, պատվիրակությունը իր նպատակին չի հասել, եթե հաշվի չառնենք, որ էսադ փաշան, թուրքերի շահերից ելնելով, պատրաստակամություն է հայտնել վերսկսելու առևտրական փոխհարաբերությունները, խոստանալով նույնիսկ անցագրեր բաժանել ցանկացողներին[83]։

Թումանյանի՝ հունիսի 28-ի նամակում հիշատակված Հայաստանի հանրապետության խորհրդաժողովը նույնպես անհաջողության մատնվեց։ Մնալով Կ. Պոլսում չորս ամիս և անվերջ անօգուտ այցելություններով դնալով զանազան փաշաների, պատվիրակությունը սպասում էր խորհրդաժողովի, բայց մինչ այս, մինչ այն՝ տապալվում է Թալեաթի կառավարությունը (1918, հոկտեմբերի 20) և հաստատվում դինադադար[84]։ Նոյեմբերի 1-ին հայ պատվիրակները ձեռնունայն մեկնում են Բաթում, ապա՝ Թիֆլիս, իրենց հետ տանելով միայն Ալեքսանդրապոլը և Կարսը դեկտեմբերի 6-ին թողնելու մասին Իզեթ փաշայի հրամանը՝ ուղղված կովկասյան զինվորական հրամանատար Շյուքրի փաշային[85]։

---

81 Նույն տեղում։

82 Նույն տեղում, նաև՝ «Մշակ», 1918, № 131, «Աշխատավոր», 1918, № 78։

83 Նույն տեղում։

84 Ալ. Խատիսյան, Հայաստանի հանրապետության ծագումն ու զարգացումը, էջ 113։

85 Նույն տեղում, էջ 114։

* * *

1918 թ. օգոստոսին, համոզվելով, որ անհնար է Թուրքերի հետ բանակցություններ վարել և ինչ-որ փոփոխություն մացնել հայ ժողովրդի ճակատագրի մեջ, Թումանյանը դիմում է նոր քայլի՝ Հայ գրողների ընկերության և Հայոց հայրենակցական միությունների միության կենտրոնական խորհրդի անունից աշխարհի բոլոր ժողովուրդներին, նրանց պառլամենտներին, ակադեմիաներին, համալսարաններին, գիտական ընկերություններին ուղղված կոչեր է գրում, ուր նկարագրելով հայ ժողովրդի ծանր վիճակը, խնդրում է բարոյական և նյութական օգնություն կործանման ենթակա հայ ժողովրդի համար։ Կոչերի շարադրանքը բոլոր երկրների համար նույնն է եղել, բացառությունն կազմել Թուրքիան, Պարսկաստանը, Վրաստանը և Ադրբեջանը։ Այդ մասին վկայում է «Кавказское слово» օրաթերթը (1918, № 176), բայց թե ինչ տարբերություն է եղել՝ անհայտ է կոչերի բոլոր բնագրերը ձեռքի տակ չունենալու պատճառով։

Պահպանվել են ռուս և ուկրաինական ժողովուրդներին ուղղված կոչերի պատճենները (մեքենագիր). առաջինը անթվակիր է, երկրորդն ունի 1918 թ. օգոստոսի 3-ի թվագրություն. հավանաբար երկուսն էլ գրված և ուղարկված են նույն օրերին։ Պահպանվում է նաև Անգլիա ուղարկված բնագրի ռուսերեն սևագիրը[86]։

Տրվում է կոչի ռուսերեն տարբերակը, որը հնարավորություն է տալիս պատկերացում ունենալու նաև այլ լեզուներով գրված բնագրերի մասին։

НАРОДАМ И ГОСУДАРСТВАМ ВСЕГО МИРА

Вследствие сложных военных действий, имевших место на Кавказском фронте,—мирное армянское население, бросившее свои насиженные гнезда, лишенное средств существования, обреченное на гибель, гонимое голодом и холодом, стало на гибельный путь беженства и, оставленное на произвол судьбы, гибнет от эпидемий, преследований и множества иных бедствий.

Предотвратить эту гибель народа и оказать ему действитель-

---

86 ՊԿՊԱ, ֆ 244, ց 1, գ 14, թ 12, 14, նաև՝ ԹԹ, Նոր Նյութեր, թղթ. № 42։

ную помощь выше сил и средств самого многострадального армянского народа.

И потому Союз армянских землячеств, соединяющий в своем голосе волю всех армянских провинций Закавказского края, обращаясь к великим просвещенным государствам и народам, пребывает в твердой уверенности, что они не пожелают в эту трудную минуту быть безучастным зрителем кровавой трагедии и гибели его и не откажут во имя гуманности и человеколюбия прийти на помощь народу, доказавшему свою способность к культуре и прогрессу.

По сему Союз союзов настоящим обращается к великому русскому народу в лице его правительства и настоятельно просит о посильной материальной помощи гибнущему народу.

Председатель *Ов. Туманян*
Секретарь *А. Амбарцумян*

«Кавказское слово» *թերթը 1918 թ. օգոստոսի 22-ի համարում հրապարակելով կոչեր ուղարկելու մասին* «Воззвание к народам мира» *վերնագրով թղթակցությունը, միաժամանակ հայտնում է, որ օրերս Հայ զրողների ընկերության և Հայրենակցական միությունների միության նախագահ Թումանյանը այցելել է գերմանական պատգամավորության գլխավոր գեներալ Ֆոն Կրեսսին, տալով հիշյալ կոչը, խնդրել նրան՝ հանձնել գերմանական կառավարությանը։ Ականավոր զրողին Ֆոն Կրեսսը ընդունել է սիրով և 1½ ժամ հետը զրուցել։*

Թումանյանը խնդրել է գեներալից (որը Գերմանիայի ներկայացուցիչն էր փախստականների գործով) հատկապես օգնել հայ գաղթականներին վերադառնալու հայրենիք և ստանալու իրենց բնակավայրերում եղած, այժմ թուրքերին պատկանող հայի կնոջ։ Ֆոն Կրեսսը խոստացել է օգնել հնարավորության սահմաններում[87]։

Զրույցի ժամանակ անդրադառնալով մի կողմից՝ Թուրքիայի և Ադրբեջանի, մյուս կողմից՝ Հայաստանի փոխհարաբերության կայունացմանը, գեներալը այն կարծիքն է հայտնել, որ այդ հարաբերություններին խանգարում են Անդրանիկի ռազմական գործողությունները. գեներալի կարծիքով՝ անհրաժեշտ է ամեն գնով հետ պահել նրան։

Բանաստեղծը գերմանացի պաշտոնական զրուցակցին պատասխանել է իր ժողովրդի անունից, Անդրանիկի անունից՝ ասելով, թե վեր-

---

87 «Кавказское слово», 1918, № 176.

ջինս գործում է անկախ Հայաստանի կառավարությունից և ապա՝ նրա գործողություններին նպաստում են իրենք՝ թուրքերը։ Այդպիսի պայմաններում ոչ ոք չի կարող նրա վրա ազդել։

— Ինչպե՞ս,— զարմացել է գեներալ Ֆոն Կրեսսը։

— Շատ հասարակ,— պատասխանել է Թումանյանը։— Թուրքական կառավարությունը չի թույլատրում փախստականներին վերադառնալ իրենց երկիրը, մյուս կողմից՝ որտեղ հաստատվում են թուրքերը՝ այնտեղ հավաքում են հայ երիտասարդներին ու տանում անհայտ ուղղությամբ։ Այսպիսով, քաղցած, արտաքսված փախստականները և սարսափահար երիտասարդները հազարներով հավաքվում են ժողովրդական հերոսի շուրջը, նրա մոտ փնտրելով պաշտպանություն։ Եթե այս պատճառները վերանան, նրա ուժերը բնականաբար կպակասեն։

Հարցազրույցի ժամանակ գեներալ Ֆոն Կրեսսը անդրադառնում է նաև հայերի անգլոֆիլական տրամադրություններին և զարմանում. չէ՞ որ հայերը անգլիացիներից ոչինչ չեն ստացել։

— Շատ հասկանալի է և այդ,— պատասխանել է Թումանյանը։— Անգլիացիները և ֆրանսիացիները մեզ միշտ խոստումներ են տվել, և մենք, բնականաբար, սպասել ենք, որ մի օր նրանք կկատարեն իրեն տված խոսքը. Գերմանիայից երբեք որևէ խոստում չենք լսել և չենք կարծել, որ Գերմանիան երբևէ կերևա Կովկասում։ Իսկ այժմ պարզվեց, որ եկան ոչ նրանք, որոնք մեզ օգնություն էին խոստանում, այլ նրանք, ովքեր որևէ բան չեն խոստացել։ Մեզ համար մեկ են Եվրոպայի բոլոր ժողովուրդները։ Մեր պահանջները սահմանափակվում են մեր ժողովրդի կյանքի և դույքի ապահովության, կուլտուրական վերածնունդի հնարավորության մեջ, այնպես որ այնպիսի տերության համար, ինչպիսին Գերմանիան է՝ մեծ բան չէ կատարել այդ պահանջները։

Թղթակիցը այնուհետև գրում է, որ Ֆոն Կրեսսը իբրև թե «մեծ սրտացավությամբ» վերաբերվելով իրեն ներկայացված կոչին, խոստացել է անմիջապես բնագիրը հաղորդել Բեռլին՝ իր կառավարությանը[88]։

Նույն օրը Թումանյանը կոչի մեկ այլ օրինակ ներկայացնում է Ավստրիայի ներկայացուցիչ Գ. Ֆրանկելշտեյնին, որը նույնպես շատ ուշադիր գտնվելով Թումանյանի և կոչի նկատմամբ, խոստանում է այն անհապաղ հասցնել Վիեննա[89]։

88 Նույն տեղում։

89 Նույն տեղում։

Անցան ամիսներ։ Հայ ժողովուրդը ոչինչ չստացավ, և Գերմանիայից ու մյուս պետություններից օգնություն ստանալու բանաստեղծի ջանքերը ի դերև ելան, մանավանդ որ՝ Թուրքիային և Գերմանիային համաշխարհային պատերազմում պարտված ճանաչելուց հետո Անդրանիկ Ներխուժեցին Անտանտի պետությունները, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր սեփական շահերը։ Ինչ վերաբերում է նորաստեղծ Խորհրդային Ռուսաստանին, պետք է ասել, որ վերջինս այդ միջոցին չէր կարող գործուն մասնակցություն ունենալ հայ ժողովրդի ճակատագրի հարցում՝ ոչ միայն այն պատճառով, որ Կովկասը դեռևս անջատված էր Ռուսաստանից, այլև այն, որ երկիրն ուներ իր ներքին սեփական շահերը և արտաքին քաղաքական ու տնտեսական վիթխարի դժվարությունները։

* * *

1918 թ. մայիսին Անդրանիկը իր զորամասով առաջնորդում էր Ղարաքիլիսայից, Ալեքսանդրապոլից նահանջած հայ զինվորներին, փախստական բնակչությանն ու արևմտահայ գաղթականությանը։ Նրան կրնկակոխ հետևում էին թուրքական հրոսակախմբերը։ Նա այնքան է դիմադրում հակառակորդին, մինչև որ իրեն ապավինած ժողովուրդը հասնում է Բոլագերան, Դսեղ, որտեղ զորավարը հանդիպում է բանաստեղծին։ Վերջինս և Լոռու բնակչության այլ ներկայացուցիչներ խնդրում են Անդրանիկին ամրանալ Լոռում. նույնը կարգադրում է և հայոց զինվորական բարձր հրամանատարությունը։ Բայց, մինչ այս, մինչ այն, ստացվում է Ղարաքիլիսայի պարտության լուրը։

Անդրանիկը շարունակում էր պատերազմական գործողությունները թուրքերի դեմ, երբ Երևանում և Թիֆլիսում համառորեն լուրեր էին պտտվում, թե Ղարաքիլիսայի պարտության պատճառը նա է. փոխանակ ամրանալու Դսեղում, ըստ այդ բամբասանքների, Անդրանիկը պարտավոր էր հարձակվել Ղարաքիլիսայի վրա, և այդ դեպքում ճակատամարտը միանգամայն այլ ելք կունենար։

Անդրանիկին իր պաշտպանության տակ է առնում բանաստեղծը՝ մանրամասնորեն տեղյակ լինելով նրա մայիսյան ռազմական գործողություններին։ 1918 թ. օգոստոսի 10-ին հրապարակած «Անդրանիկը և Ղարաքիլիսան» թղթակցությամբ Թումանյանը ժողովրդի և պատմության համար պարզեց ճշմարտությունը այն մասին, թե զորավարը չէր

կարող հարձակվել Ղարաքիլիսայի վրա, որովհետև զինվորական բարձր հրամանատարությունը (գեներալ Թ. Նազարբեկյանը) կարգադրել էր մնալ և պաշտպանել երկաթուղին Քոլազերանից (ՈՒՀ 2, 390)։

Թվում է, թե բանաստեղծը որպես ականատես, դեպքերին տեղյակ հեղինակավոր անձնավորություն, իր հրապարակային հայտարարությամբ պարզել էր ճշմարտությունը։ Բայց, որքան էլ զարմանալի է, «Անդրանիկը և Ղարաքիլիսան» թեման տարիներ շարունակ մնաց քննության առարկա։

Ավ. Ահարոնյանը 1932 թ. հրապարակած «Ավարայրի ոգեկոչումը» հոդվածի «Ղարաքիլիսայի ճակատամարտը» գլխում Անդրանիկի գիրքը համարում է առեղծվածային, կարոտ «խղճմիտ լուսաբանության» և, նույնիսկ, հիշատակելով մանր, բամբասանքային բնույթ կրող խոսակցություններ, կասկածի տակ է դնում բացարձակ ճշմարտությունը։ «...Պատմում են,— գրում է Ահարոնյանը,— որ նա (Անդրանիկը—Լ. Կ.) չափազանց դժգոհ, որ զորավար Նազարբեկյանը ճակատի հրամանատարությունը հանձնել է զորավար Բեյ-Մամիկոնյանին, բացականչել է.

«—Ես զորավար Վարդան Մամիկոնյան կը ճանչընամ, ես Բեյ-Մամիկոնյան չեմ ճանչընար»։

Այնուհետև Ահարոնյանը, որ շատ լավ գիտեր Անդրանիկին, ծանոթ նրա ամբողջ մարտական ուղուն, բարձր էր գնահատում նրա հայրենանվեր գործունեությունը, շարունակում է. «Հնարավո՞ր է միթե, որ Անդրանիկը, սոսկ այսպիսի պատճառով, մի տեսակ, խռովկանի պես ճակատն ու հայ ժողովրդի բախտը լքեր, հեռանար։ Չափազանց ծանրակշիռ քայլ էր այս, որպեսզի Անդրանիկի պես մեկը թույլ տար իրեն կատարել։ Մութ է այս կետը, դժվար է վճռական խոսք ասել. թող այդ անի ապագայի անաչառ պատմաբանը»[90]։

Հետաքրքիր է, թե դեպքերի ժամանակակիցը (որը թեպետ այդ օրերին Ղարաքիլիսայում չէր, բայց ի պաշտոնե պարտավոր էր իմանալ ճշմարտությունը) ինչո՞ւ է «վճռական» խոսքը թողնում ապագայի պատմաբանին։ Ժամանակակիցին ճշմարտությունը խոստովանելուն, պարզապես, խանգարում էր կուսակցական միտումնավորությունը, իսկ

---

90 «Հայրենիք», Բոստոն, 1932, № 4, էջ 98։

ապազայի պատմաբանները միշտ վկայակոչում են բանաստեղծ Հովհ. Թումանյանին[91]:

Իսկ Անդրանի՞կը: Ղարաքիլիսայի պարտությունից հետո Անդրանիկը «Հայկական առանձին հարվածող զորամասի» գլուխն անցած, իրեն ապավինած զաղթականության հետ միասին հասնում է Նախիջևան, նպատակ ունենալով այնուհետև անցնել Խոյ: Հանդիպելով Թուրքական մեծաքանակ զորքի դիմադրությանը՝ նա վերստին վերադառնում է Նախիջևան և Ապրակունիս գյուղից Ստ. Շահումյանին հղում իր հայտնի այն հեռագիրը, որով զորամասը և Նախիջևանը դնում էր Խորհրդային Ռուսաստանի տնօրինության տակ: Ի դեպ՝ այդ հեռագիրը գրել է ապրակունիսցի Վահան վարժապետ Խաչիկյանը (բանաստեղծ Սուրեն Վահունու հայրը), որը հայտնի էր իր գիտելիքներով և ռուսերենի իմացությամբ: Սակայն շուտով ստեղծված ծանր կացությունը նրան ստիպում է թողնել Նախիջևանը և շարժվել դեպի Զանգեզուր ու Ղարաբաղ:

Ղարաքիլիսայի դեպքերից հետո բավական ժամանակ Թումանյանը Անդրանիկի գործողություններին տեղյակ էր միայն մամուլի տրվյալներով, որոնք հաճախ մեկը մյուսին հակասում էին: Նրանց նամակագրական կապը վերականգնվում է 1918-ի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին, այն միջոցին, երբ զորավարը թուրքերից և Ադրբեջանի մուսավաթական զորքերից պաշտպանում էր Զանգեզուրը:

Թումանյանի՝ Անդրանիկին ուղղած նամակներից առայժմ հայտնի է միայն մեկը, որ տարիներ առաջ հանձնվեց Ն. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանին: Այն թվագրված է 1918, դեկտեմբերի 14: Նամակը ուշագրավ, արժեքավոր փաստաթուղթ է ժամանակին կարևոր նշանակություն ունեցած հասարակական-քաղաքական իրադարձությունների մասին, այն դեպքերի, որոնց գործուն մասնակիցն էին և՛ բանաստեղծը, և՛ զորավարը:

Այդ իմաստով, նույնքան հետաքրքիր պետք է լիներ նաև Անդրանիկի որոշը Թումանյանին, այն, որի պատասխանը բանաստեղծի դեկտեմբերի 14-ի նամակն է:

Թումանյանն իր նամակում խոստանում է Անդրանիկի նամակից քաղվածքներ տպագրել Թիֆլիսի հայկական և ռուսական թերթերում:

---

91 Տե՛ս Մ. Աղայան, Հոկտեմբերը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը, Եր., 1982, էջ 98:

Ուստի անհրաժեշտ էր որոնումներ կատարել այդ ուղղությամբ, քանի որ թերթին տալուց հետո նամակը հասցեատիրոջը չի վերադարձվել (հակառակ դեպքում այն պետք է լիներ Անդրանիկի մյուս նամակների հետ Գրականության և արվեստի թանգարանի Թումանյանի ֆոնդում)։ Այդ միջոցին Թումանյանը մոտ հարաբերությունների մեջ էր «Кавказское слово» թերթի հետ, որի դեկտեմբերի 14—16-ի համարներում Անդրանիկի նամակը չկա, իսկ 17-ից թերթը ժամանակավորապես դադարեցված էր հայ-վրացական ընդհարումների պատճառով՝ Վրաստանի մենշևիկյան կառավարության կարգադրությամբ։ Մնում էր նամակը որոնել հայկական թերթերում։

Որոնումներից պարզվում է, որ «Նոր Հորիզոն» օրաթերթի դեկտեմբերի 18-ի համարում «Անդրանիկի կռիվները» վերնագրով տպագրվել է մի բավական ընդարձակ նամակ (բռնում է թերթի 4-րդ էջի կեսից ավելին) խմբագրության հետևյալ ծանոթագրությամբ. «Ստորև հրապարակում ենք մի քանի հատվածներով Անդրանիկի մի ընդարձակ նամակը, որը նա գրել է իր անձնական բարեկամներից մեկին (ընդգծումը մերն է—Լ. Կ.)՝ մի առ մի նկարագրելով իր զորամասի կռիվները»։

Նամակն այնպես է կրճատված, որ ընթերցողից անհայտ մնա հասցեատերը[92]. թերթի ծանոթագրության «անձնական բարեկամ» արտահայտությունը քիչ բան է ասում։ Ո՞րն էր նման վերաբերմունքի խորհուրդը. Անդրանիկի նամակին հոդվածի բնույթ տա՞լը, թե՞ հասցեատերը, ինչ-ինչ պատճառներով, չի կամեցել հրապարակել իր անունը։ Առայժմ դժվարանում ենք ասել. մեզ հայտնի փաստաթղթերում այդ մասին որևէ ակնարկ չկա, բայց Թումանյանի դեկտեմբերի 14-ի նամակի խոստումը՝ Անդրանիկի նամակը քաղվածաբար հրապարակել. ապացույց է, որ «Նոր Հորիզոնի» Անդրանիկի անհասցե նամակը ուղղված է բանաստեղծին և դրա պատասխանը վերջինիս դեկտեմբերի 14-ի նամակն է։

Նույն թվականի դեկտեմբերի 11-ին տպագրվել էր Անդրանիկի մի ուրիշ նամակ օրաթերթի խմբագրության այլ ծանոթագրությամբ. «Նամակը, որ մենք քաղվածաբար ենք տալիս պատահաբար է ընկել մեր ձեռքը»[93]։ Այս նամակը չէր կարող ուղղված լինել Թումանյանին, քա-

92 «Նոր Հորիզոն», 1918, № 22։

93 Նույն տեղում, 1918, № 18։

նի որ տպված է նախքան նրա՝ Անդրանիկին գրածը։ Անդրանիկի երկու նամակների հասցեատերերի անունները օրաթերթում թաքցնելը թերևս կապվում է Վիրահայ ազգային խորհրդի (որի օրգանն էր «Նոր հորիզոնը») և Հայաստանի կառավարության փոխհարաբերության հետ։ Բայց ամեն դեպքում այդ կարևոր չէ։ Չէ՞ որ Անդրանիկի վերաբերմունքը Հայաստանի կառավարության նկատմամբ հայտնի էր, իսկ հասցեատերերի անունները թաքցնելով՝ թերթը խուսափել է նրանց վերաբերմունքը լիովին դրսևորել։ Ավելորդ չենք համարում ասել, որ «Նոր հորիզոնի» № 22-ը, որտեղ քաղվածաբար տպագրվել է Անդրանիկի նամակը, վերջինն է։ Այնուհետև թերթը դադարեցվել է հայ-վրացական հարաբերությունների միջոցին մենշևիկյան կառավարության խրատությունների պատճառով, ուստի և նամակի որևէ արձագանքի չենք հանդիպել[94].

Բոլոր դեպքերում առավել հետաքրքիրն ու արժեքավորը Անդրանիկի այս նամակի բնագիրն է, որ հայտնաբերվեց ՀՀ պետական կենտրոնական պատմական արխիվի Անդրանիկի ֆոնդում։ Նամակը դժվար ընթեռնելի է՝ գրված Անդրանիկի քարտուղարի ձեռքով։ Համեմատությունը պարզում է, որ սևագիրն արտագրելիս նամակը կրկին խմբագրվել է։ Թերթում հրապարակելիս հանված են «Հարգո սիրելի Հովհաննես Թումանյան» խոսքերը, կրճատվել են այն տեղերը, որոնք ռազմական նշանակություն ունեն և Հայաստանի հանրապետության հասցեին ասված խիստ արտահայտություններ[95]։

Անդրանիկի այս նամակը հայրենասիրական մի անկեղծ հույզ է, մի հախուռն պոռթկում, բորբոքված հոգու ընդվզում՝ հայ ժողովրդի դարավոր ողբերգության ժամանակակից արտահայտությունների, որոնցից թշնամու՝ այս անգամ արդեն, Արևելյան Հայաստանում կատարած վայրագությունների դեմ։ Մի կողմից՝ այն Անդրանիկի հրամանատարությամբ գործող «Հայկական առանձին հարվածող զորամասի» գործողությունների իրական նկարագրությունն է, մյուս կողմից՝

---

94 Քննության առարկա նամակը օգտագործել է պատմաբան Ծ. Աղայանը որպես Անդրանիկի «մերձավորներին հղած նամակներից մեկը» և մի քանի տեղ, տարբեր առիթներով մեջբերումներ արել պատմական այդ շատ կարևոր փաստաթղթից (տե՛ս «Հոկտեմբերը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը», էջ 186. տե՛ս նաև աշխատության 4-րդ գլխի ծանոթագրությունները՝ № 12, 18, 30, 33, միայն թե աղբյուրը սխալմամբ նշված է ոչ թե «Նոր հորիզոն», այլ «Հոշիզոն», վերջինը 1918, ի նոյեմբերից վերանվանվել է «Նոր հորիզոն»)։

95 ՊԿՊԱ, ֆ. 370, ց 1, դ 8, թ 1—5, «Նոր հորիզոն», 1918, № 22։

բանաստեղծ բարեկամին ուղարկած մի յուրատեսակ «հաշվետվություն»։ Այստեղ պատմաբանը կարող է հարուստ տեղեկություններ քաղել 1918 թ. հունիս-նոյեմբեր ամիսներին Հայաստանում տիրող այն իրադարձությունների մասին, որոնց կենտրոնական դեմքը Անդրանիկն էր։

Անդրանիկի «Հայկական առանձին հարվածող զորամասը» կազմակերպվել է, ինչպես ասվեց, 1918 թ. ապրիլի 10-ին և, ինչպես ժողովրդական հերոսն ինքն է վկայում, չնայած անհաջողություններին, «Ալեքսանդրապոլեն մինչև Դիլիջանի շուրջը տեղի ունեցած պատմական ընդհարումների միջոցին կատարեց իր դերը»։ Անդրանիկը Դիլիջանում էր, երբ լսեց հունիսյան դաշնագրի բոթը։ Նրա համար «նվաստացուցիչ էր», «անհանդուրժելի» այդ պայմանագիրը. դրանով, ինչպես ինքն է գրում խորապես ազգային հոգեբանություն ունենալով, «հայությունը կհամաձայներ թաղել իր դարերու երազը»՝ ազատագրությունը։

Հիասթափված տիրող իրադրությունից և լավ պատկերացնելով, թե ինչ է սպասվում Հայկական հանրապետությանը և հայ ժողովրդին, Անդրանիկը որոշում է անցնել Պարսկաստան, ապա միանալ անգլիական բանակին, որով զորավարը հույս ուներ փրկել արևմտահայության «վերջին բեկորները»։ Նրա նպատակն էր նաև գաղթականությանը տեղավորել «համեմատաբար ապահով Նոր Բայազետի, Դարալագյազի և Ախտայի շրջաններու մեջ»։ Գաղթականությունը փրկության իր հույսն ու ապավենը այլ տեղ փնտրելու հնարավորություն չուներ, ավելի ու ավելի ստվարանալով նա հետևում էր Անդրանիկին՝ մեծ դժվարություններ ստեղծելով զորքի համար։

Նամակը հետաքրքիր և արժեքավոր է փաստերի որոշակիությամբ, թվական ճշգրիտ տվյալներով։ Պարսկաստանում ունեցած և հաջողությունները, և պարտությունները տրվում են ամենայն անկեղծությամբ, ճիշտ պատճառաբանություններով։

Պարսկաստանից Նախիջևան և ապա Սիսիան-Գորիս հանապարհը Անդրանիկը և նրա զորքը անցնում են դժոխային պայմաններում. սովը, հիվանդությունների համաճարակը չեն կոտրում զորավարի կամքը։ Այս անգամ նրա նպատակն էր հասնել Ղարաբաղ։

Սակայն Անդրանիկը ոչ մի հենարան չուներ, ամենուրեք տառապած, քայքայված ժողովուրդը այլևս անընդունակ էր կողմնորոշվելու։ Տեղական ժողովուրդը սննդի կամ զենքի որևէ օգնություն չէր ցույց

տալիս։ Այսպիսի պայմաններում հասնելով Սիսիան, Ղափան, Գորիս, մեծ դժվարություններով նա կարողանում է բարձրացնել տեղացիների դիմադրելու և ազգային ինքնագիտակցության ոգին։

«Այժմ կը գտնվիմ Գորիս,— գրում է Անդրանիկը իր նամակում,— չեմ գիտեր ուրիշներ ինչ կը խորհին, և կենթադրեմ, թե իմ ըրածի մասին լավ չեն խորհիր ու խոսիր, բայց անհամեստություն չլինի՝ եթե հայտնեմ ոչ միայն իմ, այլ ամբողջ Զանգեզուրի, Սիսիանի և Ղափանի ազգային խորհուրդներու, մանավանդ, այդ տեղերու հայ ժողովրդի համոզումն է, որ եթե մինչև այսօր թրքական ոեէ ուժ չէ մըտած Զանգեզուրի, Ղափանի կամ Սիսիանի շրջանը, այդ բանը արդյունք է միայն իմ և իմ զորամասի ներկայության այդ շրջաններուն մեջ ...»։

Այնուամենայնիվ, Անդրանիկը դժգոհ էր իր զորամասի գործունեությունից. նրան խանգարում էր նախ գաղթականությունը, նրանց քաղցից և մոտալուտ ցրտերից փրկելու իր անկարողությունը և տեղական կազմակերպությունների անգործնականությունը, թուլությունը։

«Այս բոլորի հանդեպ, պարզ է, որ անտարբեր չեմ կարող մնալ։ Արդյոք չկա՞ ոեէ կազմակերպություն, որ օգնության հասնի այս շրջանը մնացած 12—14 հազար գաղթականության, որը անպայման կը մահանա, եթե օգնություն չհասնի շուտով։

. Երևանի հանրապետությունը դուրս չելլելով Բաթումի դաշնագրեն, մինչև վերջերս չուզեց ոչ մեկ օգնություն ցույց տալ այս շրջանի գաղթականության և կապ պահել այստեղի կազմակերպություններու հետ։ Կարծեք այստեղի հայությունը խորթ լիներ... Մինչև այսօր զորամասիս համար արտաքին աշխարհեն ոչ մեկ կոպեկի օգնություն չեմ ստացած»[96]։

Նամակի վերջում Անդրանիկը գրում է, որ իր ժողովուրդը կանգնած է անդունդի եզրին. «... պատմական բոպեներ է, որ կանցընենք ... և եթե այս բոպեիս չշարժինք, ապագա սերունդները մեզ պիտի դատապարտին»։

Անդրանիկը Թումանյանին տեղյակ է պահում նաև զորամասի առաջիկա գործունեությանը և ցույց տալով նպատակին հասնելու իր հնարավորականությունը, գրում է. «Համենայն դեպս երևի շուտով կը շարժիմ Շուշի, այնտեղի գրությունը շրջելու համար, իսկ անկե վերջ ոչինչ կարելի չէ ըսել ու նախատեսել, կը սպասեմ դեպքերու. իսկ եթե չգընամ, շուտով բախտ կունենամ ձեզ տեսնելու։

---

96 «Նոր Հորիզոն», 1918, № 22։

Բայց ինձ համար մեծագույն անբախտություն է, որ աշխարհն կարված ենք. ոչ ուրիշներ մեր գործունեությունն տեղեկություն ունին, ոչ ալ մենք ուրիշներու գործունեության տեղյակ ենք»[97]:

Ահա Անդրանիկի նամակի խիստ համառոտ բովանդակությունը: Այստեղ բերվեցին նամակի այն տողերը, արծարծված այն հարցերը, որոնց արձագանքը կամ պատասխանը գտնում ենք Թումանյանի նամակի մեջ:

Ճանապարհների փակ լինելու պատճառով Գորիսից Թիֆլիս նոյեմբերի 4-ին գրած Անդրանիկի նամակին Թումանյանը պատասխանում է բավական ուշացած, ինչպես ասացինք, դեկտեմբերի 14-ին: Այդ պատասխանը կարող էր ուշացնել նաև բանաստեղծի Արտավազդ որդու սպանության լուրը, որին նա տեղեկացավ դեկտեմբերի 3-ին: Եվ չնայած այդ խոր անձնական վշտին, Թումանյանին հանգիստ չէր տալիս «հայոց վիշտը»: Այդ օրերին նա ստանձնել էր պատերազմից տուժած հայ ժողովրդի վնասների գրանցման բյուրոյի տնօրինությունը: Այդ կապակցությամբ Դավիթ Անանունին Գորիս գործուղելիս՝ բանաստեղծը նրա հետ ուղարկում է Անդրանիկին գրած նամակը, վերջինիս ընդարձակ նամակին պատասխանելով իրեն հատուկ սեղմ, բաղմանշանակ և բովանդակալից տողերով[98]:

Թումանյանի նամակը սկսվում է այսպիսի խոսքերով. «Նամակդ ստացա, շատ ուրախացա, որ դու առողջ ես, և գործերդ էլ ավելի լավ են, քան թե պատմում են զանազան մարդիկ»: Այս տողերը պատասխան են Անդրանիկի տված՝ իր զորամասի գործունեության այն դնահատականին, որը վերաբերում է ուժերի դերադույն լարումով Սիսիանի, Ղափանի, Զանգեզուրի անկախությունն ապահովելուն:

Անդրանիկի նամակի մեջ ինչպես արևմտահայ, այնպես էլ Նախիջևանի դաղթականության, իր զորամասի կրած զրկանքների և վերահաս նոր ողբերգությունների նկարագրության կապակցությամբ Թումանյանն այլ հուսադրող բան գրել չէր կարող, եթե ոչ հետևյալ տողերը.

«Մեր կառավարությունը մինչև էսօր էլ կոնդրեսին ներկայացնելիք մեմորանդումի համար հոդս չքաշեց, նյութեր չհավաքեց, թե ինչ կորուստներ ենք ունեցել մենք կամ ինչ բռնություններ են կատարվել

---

97 Նույն տեղում:

98 Նամակը տպագրվել է՝ «Գրական թերթ», 1989, № 9:

մեր ժողովրդի վրա։ Ստիպված մենք սկսեցինք՝ Հայրենակցական միությունների միության կենտրոնական խորհուրդը։ Այժմ իմ նախագահությամբ մի բյուրո է կազմված և աշխատում է հանդով։ Կառավարությունն էլ տվել է իր սանկցիան»։

Ինչպես տեսանք, Անդրանիկը իր նամակում բանաստեղծին տեղյակ էր պահել դեպի Շուշի շարժվելու մտադրության մասին։ Բավական ժամանակ էր անցել Թումանյանին գրած նամակից հետո, այնուամենայնիվ, Անդրանիկը հապաղում էր, զգուշանում իր մտադրությունը իրագործելուց։ Դրա օբյեկտիվ պատճառները նա շարադրում է իր 1919 թ. փետրվարի 3-ի նամակում, որին կանդրադառնանք ստորև։

Տակավին Անդրանիկի՝ 1918-ի նոյեմբերի 4-ի նամակի պատասխանը չգրած՝ բանաստեղծը մամուլից դիտեր, որ զորավարը իր զորքով պաշտպանում էր «Զաբուղի հայտնի անցքը և վերջնագիր է ներկայացրել Շուշում գտնվող թուրք հրամանատարությանը, հայտնելով, որ այդ շրջանի հայության կրած ամեն մի վնասի համար նա հատուցում պիտի ստանա իր շրջանում՝ իր տրամադրության տակ գտնված թրքությունից»[99]։

Անդրանիկի այս նախազգուշացմանը հաջորդում է Շուշիի Նուրի փաշայի սպառնալիքը, ըստ որի նա պահանջում էր 24 ժամվա ընթացքում անձնատուր լինել, խոստանալով «խնայել նրա կյանքը»։ Փաշայի հոխորտանքին հռչակավոր հայդուկը պատասխանում է իրեն հատուկ ինքնավստահությամբ. «...24 տարի կռվել է թուրք փաշաների դեմ, իսկ այժմ պատրաստ է չափվելու Նուրիի հետ»[100]։

Ահա տեղյակ այս բոլորին՝ Թումանյանը Անդրանիկին գրած նամակում չի թաքցնում իր մտահոգությունը վերջինիս զինվորական գործողությունների նկատմամբ, ուստի և բոլորովին պատահական չեն նամակի «հետդրության» թվում է անակնկալ և մի քիչ էլ զգուշորեն զորավարին արված հետևյալ դիտողությունը. «Ի նկատի ունեցիր, որ այժմ մեզ համար, մեր դատի համար միմիայն մեր կոռեկտությունը և հանդստությունն է հարկավոր։ Էսպես են խորհուրդ տալիս մեր բարեկամները»[101]։

---

99 «Նոր հորիզոն», 1918, № 11 (դեկտ. 1)։

100 Նույն տեղում, № 13, (դեկտ. 4)։

101 «Գրական թերթ», 1989, № 9։

Ովքե՞ր էին այդ «բարեկամները», որոնց անունից Թումանյանը զգուշացնում էր զորավար Անդրանիկին, առաջնորդվելով հայ ժողովրդի դատի իր մտահոգությամբ։ Ամենայն հավանականությամբ՝ «դաշնակիցների» ներկայացուցիչները (որոնք այնքան էլ գոհ չէին Անդրանիկի ներկայությունից և անհամբերությամբ սպասում էին, թե երբ է նա դադարեցնելու իր գործողությունները). նրանց, ավա՜ղ, ինչ որ չափով դեռևս հավատում էր նաև բանաստեղծը, թեպետ, մյուս կողմից՝ նա լավ էր թափանցել իրերի դրության մեջ և գիտեր, որ Շուշի գնալը Անդրանիկի համար այդ պայմաններում անկարելի էր։

* * *

1918 թ. դեկտեմբերին մուսավաթական արյունարբու գործիչները համոզվելով, որ անհնար է ստիպել Անդրանիկին հանձնվելու և վախենալով նրա ավելի կտրուկ միջոցներից, գտնում են վրեժխնդրության այլ ուղի՝ սուտ բամբասանքներով վարկաբեկել հայ ժողովրդի հերոս զորավարին, լուրեր տարածելով, թե նա կոտորում է Զանգեզուրի մահմեդական խաղաղ բնակչությանը։ Շուտով այդ մասին թղթակցություններ են երևում ադրբեջանական մամուլի էջերում, իսկ կառավարության նախաձեռնությամբ ստեղծվում է հատուկ հանձնաժողով՝ Զանգեզուրի իրադարձությունները տեղում ստուգելու, Անդրանիկի մասին լուրերը ճշտելու համար։ Այդ հանձնաժողովի մեջ, բացի հայ գործիչներից, մտնում են անգլիական միսիայի ներկայացուցիչներ մայոր Կիպոնը, կապիտան Սիրայտը և Շուշիի մահմեդականների Ազգային խորհրդի անդամ Աբդուլլահ բեկ Հասանովը։

Հանձնաժողովի անդամ Գ. Չիլինգարյանը, որը պետք է մեկներ Բաքու՝ զեկուցելու կատարած քննությունների արդյունքի մասին, ճանապարհին ենթարկվում է հալածանքների ադրբեջանական ոստիկաններից, նույնիսկ եռօրյա բանտարկության։ Ի վերջո, հասնելով Բաքու և զեկուցելով քննության արդյունքների մասին, բացահայտում է ճշմարտությունը, ապացուցում, որ Անդրանիկի մասին տարածված մեղադրանքները զրպարտություն են։

Իր զեկուցման մեջ Գ. Չիլինգարյանն օգտագործել է Աբդուլլահ բեկ Հասանովի ողջույնի ճառը՝ ուղղված Անդրանիկին, որ բերվում է ամբողջությամբ։

«Երբ Ադրբեջանի կառավարության ներկայացուցչի առաջարկու-

թյամբ մահմեդական Ազգային խորհուրդը դիմեց ինձ՝ միսիայի հետ միասին ուղևորվել Զանգեզուր,— ասել է Հասանովը,— շնայելով տկարությանս, ես ուրախությամբ համաձայնեցի և եկա, որպեսզի Ձեզ հետ ծանոթանամ, գեներալ։ Ձեր մասին հայերից ես շատ լավ բաներ եմ լսել, շատ առասպելներ Ձեր ուժի ու արիության մասին և Դիզից Դորիս ողջ ճանապարհին զմայլվել եմ Ձեր և Ձեր արի հեծյալների կատարածների վերաբերյալ կազմված երգերով... Սակայն չեմ թաքցնում Ձեզնից, Ձեր մասին շատ էլ վատ բաներ եմ լսել իմ հավատակիցներից։ Իսկ այժմ, երբ ես եկել և բախտ եմ ունեցել ծանոթանալու Ձեզ և Զանգեզուրում ունեցած Ձեր գործունեության հետ՝ իմ սեփական կարծիքն ունեմ Ձեր մասին, գեներալ։ Ես համոզվեցի, որ «Азербайджан» թերթում տպագրված բոլոր տեղեկությունները անհիմն են և սուտ ու շարամիտ։ Ես համոզվեցի, որ Դուք մեր՝ մահմեդականներիս մեջ ունեք թշնամիներ, որոնք իրենց անձնական շահությունն ուզում են հաղորդել ժողովրդին և, ի խորին ցավ պիտի ասեմ, որ որոշ չափով այդ հաջողվել է նրանց։

Դուք մեծ մարդ եք գեներալ։ Դրա մեջ համոզված է հայ ժողովուրդը, այսուհետև դրա մեջ համոզված եմ և ես՝ մահմեդականների ներկայացուցիչս, և այդ համոզումը իմ պարտքն եմ համարում ներշնչել իմ ժողովրդին։

Դուք մեծ մարդ եք, գեներալ, Ձեր փառքը, Ձեր դեմ թշնամիներ է ստեղծում, սակայն ես և իմ հավատակիցները համոզված ենք, որ նրանք Ձեր՝ ճնշվածների պաշտպանի մեջ չեն կարող ատելություն սնուցանել ամբողջ մահմեդականության դեմ»[102]։

Այսպիսին էր ազգեցիկ գործչի կարծիքը։ Իսկ ի՞նչ ազդեցություն ունեցավ հանձնաժողովի եզրակացությունը հայ ժողովրդի ազատության համար մարտնչող առասպելական հերոսի մասին տարածված բամբասանքները հերքելու գծով։ Մուսավաթական գործիչները, անշուշտ, գոհ կլինեին, եթե հանձնաժողովը հակառակն ապացուցեր, որպեսզի ամենուրեք տարածեին, թե կոտորում են ոչ թե իրենք՝ ազգայնամոլ մուսավաթականները, այլ հայերը՝ Անդրանիկի առաջնորդությամբ։

Բայց քաղաքական դեպքերը արագորեն փոխվում էին, նոր իրադրություններ ստեղծում, ուստի անհատական կարծիքները չէին կարող վճռական նշանակություն ունենալ։

---

102 «Հառաջ», 1919, № 10 (հունվ. 25), «Закавказское слово», 1919, № 7։

Անց՝ել է յոթ տասնամյակ, մոռացության փոշիների տակ թաքնվել է Աբդուլահ բեկ Հասանովի ողջույնի ճառը։ Թեպետ Ադրբեջանի այսօրվա գործիչները եթե կամենան, կարող են թերթել Բաքվում հրատարակված «Вперед» պարբերականը (որտեղից արտատպել են Թիֆլիսի թերթերը) և կարդալ ու իմանալ, թե ինչպիսին էր Անդրանիկը կամ լսել Մշո Քոլոսիկ գյուղի հայանի քուրդ երգիչ Ֆլիտի երգը, որը կարծես ստեղծվել է ի հաստատումն Հասանովի ելույթի։ Երգը մատցածին պատմություն չէ. այն ստեղծված է ականատեսի՞ մատպատկերներով, թե՞ լսածի ապավորության տակ՝ կարևոր չէ, քանի որ երգի խոսքերը իրապատում են ու շատ մոտ «Մշո արծվի» ներքին էությանը, նրա մարդասիրությանը լայն առումով, հետևողական սկզբունքայնությանը, այնպիսի սրբությունների առջև նրա ղլուխ խոնարհելը՝ ինչպիսին է մայրական սերը, ընտանեկան օջախը, մանավանդ, երբ այն պատկանում է տառապած մարդուն՝ աշխատավորին, ինչ ազգի էլ նա պատկանի։

Ահա այդ երգի համառոտ բովանդակությունը. Դարաբոյի ճակատամարտի թեժ պահին (խոսքը վերաբերում է ռուսական բանակի և հայ կամավորական խմբի միացյալ ջանքերով տարած հաղթանակին) մի քրդուհի մոտենալով Անդրանիկին, պատմում է, թե իր մշակ ամուսնուն սպանել են բեգերը, իսկ միակ որդուն ստիպել կռվելու ռուսների դեմ։ Կինը խնդրում է Անդրանիկին, որ եթե մարտից հետո որդին ողջ մնա, դերի ընկնի, վերադարձնի իրեն. «էդ է իմ տան ճրագը»,— ասում է նա։ Անդրանիկը կարդադրում է. «ամրոցի գրավման ժամանակ՝ ավելի քիչ գնդակ, ավելի շատ դերի»։ Վերցրած դերիների մեջ է լինում քրդուհու միակ տղան, որը և հանձնվում է մորը[103]։

Այս և նման պատմություններից հետո որքա՞ն անհեթեթ են թվում այն բամբասանքները, որ տարածվել են Անդրանիկի մասին մուսավաթական շրջաններում և իրենց ստահոդ ուժը չեն կորցրել և հետագայում և այսօրվա Ադրբեջանում, տարիներ շարունակ դառնալով որոշակի արգելք նույնիսկ Մայր Հայրենիքում արժանին մատուցելու ամբողջ գիտակցական կյանքը իր ժողովրդի ազատությանը նվիրած հերոսի անմահ հիշատակին։

---

103 «Ավանդարդ», 1988, № 50 (Արուսյակ Սահակյանի «Ազգի նկարագիրը նրա գոյության օրենքն է» հոդվածից)։

1919 թ. հունվարի մղձավանջային օրերին մուսավաթական գիշատիչներին անհանգստացնողը Անդրանիկի և նրա զորքի ներկայությունն էր Ղարաբաղին այդքան մոտիկ. նրանք շտապում էին շուտ հեռացնել զորավարին Զանգեզուրից և օգտվում էին անգլիական դիվանագիտության խորամանկ խաղերից:

Անցնենք Թումանյանի նամակի մյուս փաստերին, որոնք նույնպես հասարակական հնչեղություն ունեն:

1918 թ. դեկտեմբերի այդ օրերին օրակարգի կարևոր հարցերից էր նաև հայ-վրացական պատերազմը: Հայտնի է, թե Թումանյանը իր ղեկավարությամբ գործող Հայրենակցական միությունների միության միջոցով խաղաղությունը վերականգնելու ինչ մեծ ջանքեր է թափել: Հրապարակված շատ նյութերից երևում է, որ նա որոշակի չէր մեղադրում Հայաստանի հանրապետությանը կամ Վրաստանի մենշևիկյան կառավարությանը, կամ մեղադրում է երկուսին էլ (V, 433—436): Նրա այդ վերաբերմունքը պարզ դիվանագիտություն էր. մեղավորին կամ արդարին փնտրելու ժամանակը չէր, հարկավոր էր վերջ տալ արյունահեղությանը: Բայց ահա Անդրանիկին ուղղված նամակում շատ պարզ է, որ Թումանյանը մեղադրում է վրաց մենշևիկյան կառավարությանը. նրանց զորքերն էին հրահրել կռիվը, օգտվելով Հայաստանի անկանոն կացությունից, կամեցել մի պատառ խլել սքանչելի Լոռու հողերից:

«Լոռեցիները,— գրում է Թումանյանը,— վրացի զորքերի լրբությունից կատաղած՝ հարձակվել են նրանց վրա, և առաջ է եկել կանոնավոր պատերազմ: Վրացիք նահանջել են մինչև Բորչալու, տալով բավական սպանվածներ և գերիներ: Զբաղված ենք էդ կռիվը վերջացնելու գործով»[104]:

Հետագայում կռիվները գնում էին հօգուտ վրաց մենշևիկյան զորքերի և, ինչպես հայտնի է, մինչև դեկտեմբերի 31-ը վարած բանակցություններից հետո միայն հնարավոր է լինում արյունահեղ կռիվին վերջ տալ:

Անդրանիկին ուղղած այս նամակում Թումանյանը նրան հայտնում է նաև իր որդու կորստյան լուրը. «Ուղղակի սպանված ենք ամբողջ ընտանիքով էս վշտի ծանրության տակ»,— գրում է բանաստեղծը և այդ կապակցությամբ անդրադառնում Վանի գաղթին, որի զոհն էր նաև Արտավազդը:

---

104 «Գրական թերթ», 1989, № 9։

«Քեզ պետք է ասեմ,— գրում է Թումանյանը,— որ Գրիգոր Բուլղարացին և իր ընկերները ուղղակի հանցավոր են Վանա գաղթի բոլոր թշվառությունների մեջ։ Էսպես են պատմում և դատապարտում բոլոր եկածները»[105]։

Վանի այդ գաղթը (1918-ի մարտ) արևմտահայության հույսերի խորտակումն էր. Թումանյանի համար այն կրկնակի կորուստ էր և այդ օրերին նրա ամենախոցելի տեղը։

Հիշատակված Գր. Բուլղարացին անհայտ անձնավորություն չէր. ապրիլյան ինքնապաշտպանության հայտնի հերոսներից էր, թուրքերի մի մեծ զինանոցի ոչնչացնողը։ Նա սնփական նախաձեռնությամբ ձուլել, պատրաստել էր թնդանոթ, ռումբեր և ըստ ամենայնի նպաստել 1915 թ. պաշարված Վանի ազատագրմանը։ Այնուհետև ո՛չ 1915-ի, ո՛չ 1916-ի գաղթերի ժամանակ նա չէ՛ր թողել իր սիրելի քաղաքը. մնալով տեղում, ամեն ջանք թափում էր Վանի պահպանության համար՝ որպես զինվորական կոմիսար, ապա՝ միլիցիապետ։ Վանի վերջին՝ 1918 թ. մարտի 21-ի, գաղթի հրամանը ստորագրել է Գր. Բուլղարացին՝ «որպես զինվորական մարմնի ներկայացուցիչ»[106]։

Այս բոլորից հետո ո՞րն է Թումանյանի և «բոլոր եկածների» դժգոհության աղբյուրը։

Դեռևս 1918-ի ապրիլին գաղթի թարմ տպավորության տակ մամուլում տպագրված թղթակցությունները նույնպես մեղադրում էին Վանի կոմիսարներին գաղթի հրամանը ուշացնելու համար։

«Այդ ազդը, որ զինվորական կոմիսար պ. Գրիգորի (Բուլղարացի) ստորագրությունը կը կրեր, հայտնելով նահանջելու պատրաստ լինելը, կը հրամայեր ժողովրդին առանց սպասելու՝ անմիջապես ճամփա իյնալ, մեկ օրվա մեջ կարենալ անցնելու համար Բերկրիի հովիտը...»։ Մեկ օրը չափազանց քիչ էր ոչ միայն կանանց ու երեխաների, այլև տղամարդկանց համար՝ երկար ճանապարհը կտրելու, ուստի սկսվում է խուճապ և գաղթականները մեկ շաբաթ հետո հասնում են Իգդիր մեծ կորուստներով[107]։

---

105 Նույն տեղում։

106 «Աշխատանք», Եր., 1917, № 94, 1918, № 90, 96, «Վան Տոսպ», 1917, № 44, էջ 13։

107 «Մշակ», 1918, № 81 (արտատպված է «Վան-Տոսպից»)։

Շատ որոշակի է, որ թղթակցության հեղինակը մեղադրում է հատկապես հրամանը ուշացնողին՝ Գր. Բուլղարացուն։

Թվում է, մեր նպատակներից դուրս է քննել, որոնել ճշմարիտ մեղավորին։ Բայց մեղադրողը Թումանյանն է, որը կրկնում է ուրիշներից լսածը, իսկ մեղադրյալը, ինչպես տեսանք, սովորական մի անձնավորություն չէ, ուստի եղած տեղեկությունները պետք է հնարավորության սահմաններում ի մի բերել։ Ժամանակն այնպիսին էր, կործանումն այնքան մոտիկ, շոշափելի, որ խուճապից առաջացող ամեն մի վրիպում կարող էր ճակատագրական լինել։ Շատ հնարավոր է, որ Գր. Բուլղարացու՝ այդ երդվյալ հայրենասերի սխալը, եթե այն եղել է, հետևանք էր Վանը խորապես սիրելուն։

Ուշադրավ է հետևյալ փաստը։

Այն ժամանակ, երբ մի քանի օր էր, ինչ Գր. Բուլղարացին հասել էր Թիֆլիս (1918 թ. դեկտեմբերին), հրապարակվում է հետևյալ հայտարարությունը. «Գրիգոր Բուլղարացու զեկուցումը, որ տեղի պետք է ունենար ամսի 7-ին, «Վանի վերջին դաղթը և դրա հետ կապված դեպքերը» նյութի մասին, չկայացավ՝ զեկուցողի անակնկալ կերպով քաղաքից մեկնելու պատճառով»[108]։

Այս փաստը իրավունք տալի՞ս է և ժամանակակիցներին և այսօրվա հետազոտողին ենթադրելու, թե Գր. Բուլղարացին խուսափել է զեկուցումից և պատասխանատվությունից։ Հնարավոր է նաև, որ մեղադրողներից ոմանք դարձել են վտանգավոր հետապնդողներ, ուստի և զգուշանալով հրապարակային ելույթից, Բուլղարացին թողել է Թիֆլիսը և անցել Երևան։

Երկու ամիս հետո՝ 1919 թ. փետրվարին, Երևանում վախճանվում է Արամ Մանուկյանը՝ Հայաստանի հանրապետության ներքին գործերի նախարարը։ Պաշտոնապես նախատեսված էր, որ Գր. Բուլղարացին որպես վանեցի, Արամ Մանուկյանին Վանից ճանաչող մի անձնավորություն, նույնպես մահախոսական պետք է ասի թաղման ժամանակ։ Մինչդեռ արարողությունների մասին հրապարակված հաղորդման մեջ Բուլղարացու ելույթի հիշատակությունը չկա[109]։ Ինչպես տեսնում ենք, վերջինս այս անգամ ևս խուսափել է հրապարակային ելույթից։

---

108 «Նոր Հորիզոն», 1918, № 17։

109 «Աշխատանք», 1919, № 4։

Այսպիսով, Թումանյանի խոսքերը Անդրանիկին ուղղած նամակում ունեին հիմքեր, որքան էլ դրանք ինչ-ինչ պատճառներով հիմնված լինեին թյուրահասկացության, սխալ լուրերի վրա։

Ըստ երևույթին, այդ տարածված լուրերը կամ շուտով հերքվել են, կամ, պարզապես, չեն խաթարել իսկական հայրենասերի սխրանքներով հարուստ կենսագրությունը, քանի որ 1920 թ. նա, այնուամենայնիվ, գնահատվում էր որպես ժողովրդական հերոս, «հայ և քուրդ աշխատավոր ժողովրդի իրարամերձման ձգտողներին», «Վանի ապրիլյան դյուցազնամարտի» առաջին կազմակերպողներին»[110]։

Ինչպես տեսանք, Թումանյանի դեկտեմբերի 14-ի այս նամակը բավական նյութ է տալիս խոսելու ժամանակի այնքան ցավոտ հարցերի մասին, որոնց շուրջը նամակագիրն ու հասցեատերը տարակարծություններ չունեն։

Նախորդ էջերից երևաց, թե ինչպես էր Թումանյանը զգուշացնում զորավար Անդրանիկին՝ խուսափելու հետագա անզգույշ քայլերից։

Մի հետաքրքիր զուգադիպությամբ, նոր իրադարձությունները շուտով հաստատում են Թումանյանի նամակի այդ տողերի խորհուրդը, մյուս կողմից՝ բացատրում, թե ինչու Անդրանիկը՝ այդքան մտահոգված Շուշիի հայության ճակատագրով, այնուամենայնիվ, չգնաց դեպի Շուշի։

1919 թ. հունվարի վերջերին հրապարակվում է Անդրանիկի հրամանը ուղղված Վարանդի, Տիզակի, Խաչենի և Ջիվանշիրի զինվորական հրամանատարներին՝ բոլոր ռազմական գործողությունների դադարեցման մասին։ Որոշված էր, որ տաճկական զորքերը պետք է հեռանան Կովկասից. ռազմական գործողությունները, ըստ դաշնակիցների, պետք է դադարեին, հակառակ դեպքում կռիվները կարող էին «վատ հետևանք ունենալ հայկական հարցի վերջնական վիճակի վրա»[111]։

Անշուշտ, այդ օրերին դաշնակիցներին հուզողը հայկական հարցի «վերջնական վիճակը» չէր, այլ սեփական շահը. նրանք ձգտում էին Կովկասի գերիշխանության, ուստի օր առաջ ուզում էին Թուրքերի հեռանալուն, որին խոչընդոտում էր նաև Անդրանիկի ներկայությունը։

---

110 Հ. Բազրաևի (Հրանտ Դ. Կարինյան), Բնաշխարհն ինքն իր մեջ, Եր., 1920, էջ 43—44։ Գրիգոր Բուլղարացին (Գր. Գեղյան, Գրգեղ) վախճանվել է 1922 թ. Պոլսում («Վասպուրական։ Վան Վասպուրականի ապրիլյան հերոսամարտի տասնամյակի առթիվ», 1915—1930, Ս. Ղազար, 1930, էջ 104-ից հետո ներդիր)։

111 «Ժողովրդի ձայն», Թիֆլիս, 1919, № 19 (28-ը հունվարի)։

Այս հրամանից քիչ անց՝ փետրվարի 3-ին, Անդրանիկը Թումանյանին գրում է մի նոր նամակ՝ ի պատասխան հասցեատիրոջ առաջմեզ անհայտ հունվարի 21-ի նամակի։ Գիտենք միայն, որ այն զորավարին հասել է Ղափանի պղնձի ֆրանսիական ընկերության տնօրեն Ռոպենի միջոցով։

Անդրանիկը հայտնում է բանաստեղծին՝ իր ռազմական գործողությունները գաղարեցնելու մասին՝ ոչ միայն դաշնակից պետությունների՝ Զանգեզուրում գտնվող ներկայացուցիչների խորհրդով։ Դրա համար եղել էին նաև այլ պատճառներ։

Զորավարը դժգոհ էր Ղարաբաղի մատակարարության մի մասի դավաճանությունից. դրամի նկատմամբ թուլություն ունենալով, նրանք զիջումներ էին անում Ադրբեջանի մուսավաթական կառավարությանը։ Զորավարը չուներ որևէ հենարան, ոչ մի տեղից օգնություն չէր ստանում զաղթականության պահանջները բավարարելու համար.

«...Թվով 22000 այսօր սովի և մահվան սպառնալիքի առաջ կանգնած են, անհրաժեշտ է անոնց հասցնել շուտափույթ օգնություն, այլապես բոլորն ալ կը կոտորվին։

Նույն գրությունը կը տիրե նաև Գողթան գավառի մեջ. թուրքերը փակած են դեպի Օրդուբաթ—Մեղրի գնալու ճանապարհը, և թե դեպի Նախիջևան։ Այս կերպով Գողթնի 12 հազար ժողովուրդ հաղորդակցությունե բոլորովին կտրված և արտաքին աշխարհե մթերք ստանալու հնարավորությունե զրկված՝ սովամահ լինելու վտանգի են ենթարկված...»։

Անդրանիկի փետրվարի 3-ի այս նամակից տեղեկանում ենք, որ նա Թումանյանին ուղարկել է Գորիսում հրատարակվող «Որոտան» թերթի մի համարը, ուր տպագրված է «Հօգուտ Զանգեզուրի զաղթականության ստացված 600 000 ռուբլու գումարի հաշվետվությունը»։

Որոնումները պարզում են, որ խոսքը վերաբերում է հիշված թերթի 1918 թ. հունվարի 26-ի համարին (№ 7). այն շատ հետաքրքրական է ոչ միայն նրա համար, որ այնտեղ է հրապարակվել Բաքվի հայ բնակչությունից հօգուտ զաղթականության ստացած գումարի՝ Անդրանիկի հաշվետվությունը։ Այստեղ կան այլ նյութեր ևս, որ կարևոր են Անդրանիկի կենսագրության, նրա մարդկայնության, ազնվության և բնավորությանը ծանոթանալու առումով։

«Որոտանի» այդ համարը, կարծես, վավերացնում, հաստատում է նոյեմբերին Անդրանիկի գրած նամակի ողջ բովանդակությունը՝ ինչ-

պես գաղթականության, զորքի վիճակի, այնպես էլ իր՝ զորավարի անհանգիստ կացության մասին։

Թերթում հետաքրքրական է նաև մի «Հայտարարություն», որը նույնպես դրամական հաշվեհավություն է։ Այդ «Հայտարարությունից» պարզվում է, որ 1918 թ. օգոստոսի 18-ին զինվորական սուրհանդակի պարտականությունը կատարելիս Ալեքսանդրապոլից քիչ հեռու սպանվում է Անդրանիկի հետ Սասունի սարերում արիաբար մարտնչած բերդակցի Գասպար Պետրոսյանը (Տիգրան Թոշնիկ)։ Իմանալով այդ մասին և չկարողանալով գտնել հանցագործին, Անդրանիկը Ալեքսանդրապոլի բնակչությանը տուգանում է 20 000 ռուբլով։ Այդ 20 000 ռուբլին, որն ալեքսանդրապոլցիները ուղարկում են Անդրանիկին՝ բաշխվում է վերջինիս ղեկավարությամբ։ Գումարի 500 ռուբլին պահվում է հանձնելու զոհվածի ընտանիքին, մնացածը բաժանվում է Սիսիանի զինվորական հիվանդանոցին, գաղթականներին, Գորիսի և Ղարաքիլիսայի որբանոցներին։

«Որոտանի»՝ քննության առարկա համարի լուրերի բաժնում ուշադրավ է Անդրանիկի մարդկայնության ու բարության մի հետաքրքրական նմուշ ևս։ 1919 թ. հունվարի 21-ին գորիսեցի Նիկոլայ Տեր-Բաղդասարյանը ձերբակալվում է մի թուրքի հրացան վաճառելու մեղադրանքով։ Բնականաբար, գործը հանձնվում է զինվորական դատարանին, և զորքի ու ժողովրդի ներկայությամբ ապացուցելով հանցանքը, որոշվում պատժի առավելագույնը՝ գնդակահարություն։ Դատից հետո գործին միջամտում է զորավար Անդրանիկը և «նկատի ունենալով Տեր-Բաղդասարյանի ընտանեկան դրությունը, ներումն շնորհեց, փոխելով մահվան դատավճիռը երեք տարի բանտարկելության»[112]։

Այսպես էր Անդրանիկը՝ և՛ պատժել դիտեր, և՛ ներել։ Շատ էր տեսել զոհեր օտար բարբարոսների ձեռքով. նրա համար կրկնակի ծանր էր տեսնել հայ մարդու գնդակահարությունը, հայի օջախի ավերումը՝ հայի ձեռքով։ Կասկածից վեր է, որ դատավճիռը փոխելու որոշման տակ կատորագրեր նաև բանաստեղծ Թումանյանը։ Այդ հավատով էլ Անդրանիկը «Որոտանի» համարը, ուր այնքան շատ բան կար իր գործունեության մասին, ուղարկել էր բարեկամին. ի վերջո, այն Թումանյանին ուղարկած նամակի մի մասն էր։

Ըստ նույն՝ 1919 թ. փետրվարի 3-ի նամակի, Անդրանիկը մտա-

---

112 «Որոտան», 1919, № 7։

դրություն ուներ Գորիսից անցնել Սիսիան, ապա՝ Նոր Բայազետ, Կարաքիլիսա, որտեղ մեծ ցանկություն ուներ հանդիպելու Թումանյանին։

1919 թ. մարտի վերջերի քաղաքական դեպքերը, հատկապես անգլիական դիվանագիտության խորամանկ հաշվարկները ի վնաս հայ ժողովրդի և Անդրանիկի զորամասի գործողությունների, վերջինիս ծրագրերը փոխում են։ Փոխվում է նաև նրա երթը[113]։

Ապրիլի 2-ին Անգեղակոթի ժողովուրդը հրաժեշտ է տալիս իր ազատարարին։ Սրտառուչ էր զանգեզուրցիների և Անդրանիկի բաժանումը[114]։

Քիչ առաջ անցնելով ասենք, որ Անդրանիկի՝ Զանգեզուրը թողնելուց երկու ամիս հետո՝ հունիսի 4-ին, մուսավաթական հրոսակախմբերը կարողացան իրականացնել իրենց վաղեմի ցանկությունը, որ նրանց երբեք չէր հաջողվի հռչակավոր հերոսի Զանգեզուրում գտնված միջոցին։ Վայրենաբարո ավազակախմբերը բոլոր դիրքերից հարձակվում են Շուշիի անպաշտպան խաղաղ բնակչության վրա, սպանում ու թալանում, իսկ քիչ անց զանգվածային կոտորածներ են սկսում ամբողջ Ղարաբաղում[115]։ Այդ էր հայկական հարցի լուծման համար անգլիացիների ցուցաբերած «մտահոգության» և Ղարաբաղի բնակչության մի մասի՝ Ադրբեջանի մուսավաթական կառավարությանն արած զիջումների հետևանքը, որոնց մասին, ինչպես տեսանք, գրում էր Անդրանիկը՝ ցույց տալով իր ծանր կացության պատճառներից մեկը։

Մղձավանջային այդ օրերին վերստին գործի է անցնում հայ ժողովրդի ազգային բանաստեղծը։ Որպես Հայ գրողների ընկերության, Հայոց հայրենակցական միությունների միության, ինչպես և Համաշխարհային պատերազմում հայ ժողովրդի կրած վնասները հաշվող բյուրոյի նախագահ՝ Թումանյանը նախաձեռնում և 1919 թ. հունիսի 22-ին Թիֆլիսի վանքի մայր եկեղեցու բակում (ուր գտնվում էր հայոց առաջնորդարանը) կազմակերպում է բողոքի համահայկական ցույց՝ դրան մասնակից դարձնելով այդ միջոցին գործող բոլոր հասարակա-

---

113 Մանրամասնությունները տե՛ս Ս. Աղայան, Հոկտեմբերը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը, էջ 247—252։

114 Նույն տեղում, էջ 257—260։

115 «Աշխատավոր», 1919, № 12, (հունիսի 8), № 118, (հունիսի 15)։

կան-մշակութային ընկերություններին, կազմակերպություններին և տասնյակ հազարավոր բնակչության։

Նախագահելով ցույցին, իր բացման խոսքում Թումանյանը անարգանքի այնքին է դատում Ղարաբաղը մայր երկրից անջատելու նպատակով կատարված եղեռնագործությունների հեղինակներին՝ տաճկական գործակալներին՝ Ադրբեջանի մուսավաթական գործիչներին և կոչ է անում երկու հարևան ազգերի խաղաղ գործակցության։ Այնուհետև ելույթ են ունենում ժամանակին հայտնի հայ հասարակական-մշակութային գործիչները, որից հետո Թումանյանը կարդում է ցույցի ընդարձակ բանաձևը։ Նկարագրելով տեղի ունեցած «արյունալի գեպքերը», բանաձևում խստագույնս պահանջվում է ամենակտրուկ միջոցներ և եվրոպական ժողովուրդների միջնորդությունը՝ «անկրկնելի դարձնելու ապագայում Ղարաբաղի գյուղացիության կոտորածը տաճկա-ադրբեջանական ագենտների կողմից, որ կարող է վերածվել երկու հարևան ժողովուրդների փոխադարձ կոտորածի։ Անմիջապես ձերբակալել և դատի հանձնել տեղի ունեցած կոտորածների հեղինակներին, անպայման հեռացնել ամբողջ հայկական Ղարաբաղից Ադրբեջանի իշխանությունը, որին չի ճանաչում և երբեք չպիտի ճանաչի «Հայկական Ղարաբաղը»։ Այնուհետև բանաձևում առաջ է քաշվում ավելի որոշակի պահանջ.— «Թույլ տալ Հայկական Ղարաբաղին, համաձայն ազգաբնակության անդրդվելի կամքի՝ կցվել Հայաստանին և եթե այդ կցումը որևէ պատճառով անհնար գտնվի, առայժմ Հայկական Ղարաբաղում կազմակերպել դաշնակից պետությունների վարչություն, մինչև Փարիզի կոնֆերանսի վերջնական վճիռը»[116]։

Կոնֆերանսը սկսվել էր 1919-ի հունիսին և տևեց մինչև 1920 թ. հունվարը, որին մասնակցող յուրաքանչյուր մեծ պետություն ուներ իր սեփական շահը։

Կովկասում տիրապետող դարձած դաշնակիցները օգնության ձևաբ չմեկնեցին Ղարաբաղի անպաշտպան բնակչությանը, և Թումանյանի ու ողջ հայ ժողովրդի հույսերը այս անգամ էլ, ինչպես մեկ տարի առաջ, չարդարացան։

Բայց դառնանք Անդրանիկին։

Հիասթափված եվրոպական տերությունների դիվանագիտությունից, զարմացած Հայաստանից Փարիզ մեկնած գործիչների սին խոստումների

---

116 «Աշխատավոր», 1919, № 124։

վրա, կրելով հսկայական դժվարություններ, 1919 թ. ապրիլի 13-ին Անդրանիկը հասնում է Էջմիածին, առանց Երևան մտնելու։ Նա խուսափում էր Հայաստանի կառավարության հետ հանդիպելուց, բայց բուռն ցանկություն ուներ տեսնելու սիրելի բարեկամ-բանաստեղծին, ուստի ապրիլի 19-ի երկառղով հայտնում է նրան հանդիպելու իր մտադրությունը Էջմիածնում[117]։ Այդ տեսակցությունը տեղի չի ունենում, իսկ ապրիլի 27-ին Անդրանիկը Էջմիածնից մեկնում է Թիֆլիս և հասնելով 28-ին՝ անմիջապես գնում Թումանյանի մոտ։

Թումանյանի հյուրասեր հարկի տակ Անդրանիկը մնում է մինչև մայիսի 7-ը։ Աննկուն մարտիկը Թիֆլիսում ընդունվում է ջերմորեն, ամենուրեք մեծարվում ու փառաբանվում։ Երրորդ արական գիմնազիայի և Հովնանյան դպրոցի աշակերտները իրենց ուսուցիչների հետ և երաժշտական խմբով՝ Թումանյանի բնակարանի մոտ կազմակերպում են ողջերթի ցույց ի պատիվ ժողովրդական հերոսի ու մեծարում նրան։ Հուզված իր պատանի բարեկամների ջերմ, սրտառուչ վերաբերմունքից՝ Անդրանիկը ծաղիկներ է նետում աշակերտների վրա ի նշան շնորհակալության[118]։

Բայց երբեմնի հայդուկը սովոր չէր միայն մեծարվել։

Անդրանիկի և Թումանյանի այս հանդիպման օրերը հաշված էին, ուստի նրանք որոշում են լուծել մի շատ կարևոր, անհետաձգելի խնդիր ևս։

1919 թ. մայիսի 1-ին մամուլը հայտնում էր, որ ապրիլի 30-ին Անդրանիկը և Թումանյանը այցելել են Վրաստանի հանրապետության արտաքին գործերի մինիստր Ե. Դիգեչկորիին։ Նրանց զրույցը, ըստ թերթի, ընթացել է ժողովուրդների բարեկամության ամրապնդման շուրջը։ Դիգեչկորին ափսոսել է, որ մի այնպիսի ժամանակ, երբ երկու հարևան ժողովուրդների բարեկամությունը լավ հիմքերի վրա է դրվում՝ Անդրանիկը հեռանում է Կովկասից։ «Մենք՝ ժամանակակիցներս, չգիտենք գնահատել այնպիսի գործիչների, ինչպիսին Դուք եք։ Կանցնի որոշ ժամանակ, և ազատության Ձեզ նման մարտիկները կգնահատվեն ըստ արժանվույն՝ ժողովրդի բարեկեցության համար իրենց ունեցած պատրաստակամության, հայրենիքի նկատմամբ ունեցած սիրո համար»։ Անդրանիկը պատասխանել է. «Ես երբեք չեմ

117 ԳԱԹ, Թֆ, № 503։

118 «Աշխատավոր», 1919, № 88։

երազել անձնական երջանկություն և հաջողություն: Ես մշտապես պայքարել եմ հայրենի ժողովրդի ազատության և բարգավաճման համար: Ես չեմ փնտրում իմ արածի գնահատականը, ցանկանում եմ միայն, որ երջանիկ լինի ժողովուրդը, որին ծառայել եմ իմ ամբողջ կյանքում»[119]:

Անդրանիկը իր բանաստեղծ բարեկամի հետ վրաց մենշևիկյան կառավարության մինիստրին այցելել էր ոչ սիրալիրություններ լսելու համար: Թերթը թաքցրել է այդ հանդիպման իսկական խորհուրդը, երկու մեծ հայերը եկել էին փրկելու Հայաստանի ժողովրդին սովից: Բաթումում կալանք էր դրված դեպի Երևան մեկնող այն գնացքի վրա, որը պետք է այլուր տեղափոխեր սովատանջ ժողովրդի համար: Հանդիպման հաջորդ օրը, շնորհիվ Անդրանիկի բավական խիստ միջամտության, յոթանասուն վագոնով դեպի Հայաստան են առաքել «ուտելիք և հագնելիք» (ԹԺՀ, 552—553):

1919 թ. մայիսի 7-ին Թիֆլիսի կայարանում դեպի Բաթում, ապա Փարիզ մեկնող Անդրանիկին ճանապարհողների մեջ էր և Թումանյանը. այդ նրանց վերջին հանդիպումն էր:

Հասնելով Բաթում, Անդրանիկը երկու կարճ նամակով (մայիսի 11-ին և 14-ին) Թումանյանին տեղյակ է պահում ճամփորդության ընթացքի մասին, իսկ երրորդը գրում է Փարիզից (1919, նոյեմբերի 10): Այդ ժամանակ և հետո՝ Անդրանիկին Թումանյանի գրած որևէ նամակ հայտնի չէ. հավանաբար չի գրել, որովհետև նախ՝ զորավարը դեռ մշտական բնակավայր չուներ, իսկ Թումանյանը ծանր հիվանդացել էր:

Իր նամակներում Անդրանիկը օգտագործել է Թումանյանի հայտնի հեքիաթի խոսքերը յուրովի. «Դարտ ընողին դարտ չի պակսեր, քեֆ ընողին քեֆ չի պակսիլ, դեհ դինիները լեցուցեք, իմ կենաց խմեցեք»: Այդքան երկար տառապանքներից հետո էլ, Անդրանիկը, չկորցնելով հումորի զգացումը, մնում էր սիրելի Հայաստանի «դարտով» մտահոգ, նրա գոյատևման համար անդադար գործող սկզբունքային հայրենասեր:

Արտասահմանում Անդրանիկը ամբողջովին տոգորված էր իր ժողովրդին օգնելու մտահոգությամբ: Այս իմաստով հետաքրքրական է

---

119 «Кавказское слово», 1919, № 80.

Մարսելում հրատարակվող «Խրան» թերթի խմբագրի հետ ունեցած նրա հարցազրույցը, որի ժամանակ, նկարագրելով Հայաստանի տնտեսական կացությունը, կոչ էր անում օգնել հայ ժողովրդին. «Հայաստանի կեսը որբանոց է, և կեսը հիվանդանոց. աշխարհի չորս ծայրը բոլոր հայ հարուստները և մտավորական ուժերը եթե մեծ զոհողություններ հանձն չառնեն ու ըստ այնմ չգործեն՝ յուղի պես կը հալինք... Հաղարներով ֆրանկներ կը ծախսվին ինձ հացկերույթներ տրվելու համար,— ասել է Անդրանիկը,— գիտցեք, որ ամեն մի պատառով արյուն կը կըլլամ, աչքիս առջև բերելով Հայաստան ապրողներու ողբմելի վիճակը...»։

Խոսքն ուղղելով արտասահմանյան հայության ունևոր դասին, հասարակական կազմակերպություններին ու գործիչներին նա որոշակի հայտարարում է. «Հայաստանի ժողովուրդը հա՞ց, հա՞ց, հա՞ց աղաղակելով՝ կմեռնի, ուռուցիկ ճառերը անոնց փորը չեն կշտացներ...»։ Մոռացած՝ Հայաստանի հանրապետության նկատմամբ ունեցած զբաղվածությունը, իր մեծ սրտի մեջ անթեղած հայրենի ժողովրդի սերը, այդ հարցազրույցների ժամանակ Անդրանիկը խոստանում է ջանք չխնայել տարբեր կերպ մտածող այլևայլ կուսակցական մտայնություն և սկզբունք ունեցող «տարրերը համագործակցության մղելու»։ «Կուսակցական կրքերը և եսական տրամադրությունները հայրենիքի գերագույն շահերուն զոհվելու են, քանի որ Հայաստանը բոլոր իր զավակներուն հավաքական գործունեության պետք ունի»[120]։

Անցնում էին տարիներ, առավել բորբոքելով ու բազմապատկելով Անդրանիկի սերը վերածնվող իր ժողովրդի, աղատագրված հայրենիքի նկատմամբ։ Նա ամբողջ էությամբ ապրում էր այդ հայրենիքի կյանքով, նրա կարիքներով, մասնակցում էր Հայաստանի օգնության համար սփյուռքահայության գործունեությանը, բայց և տառապում էր հայրենիքի կարոտից։

Փարիզում ապրող հայրենակիցների ստիպմամբ ու միջնորդությամբ, 1922 թ. մայիսին Անդրանիկը ամուսնանում է։ Պսակադրության հանդեսին մասնակցում էին նրա հերոսական կենսագրությանը քաջ գիտակ հայ հասարակական գործիչներ, գրողներ, մտավորական-

---

120 Հարցազրույցը արտատպել է Թիֆլիսի «Ժողովրդի ձայն» օրաթերթը. տե՛ս 1919, № 168 (օգոստոսի 9)։

ներ։ Արշակ Չոպանյանը «Մշո արծվի» գործունեությունը ընդհանրացնելով, այսպես է գնահատում նրան. «Անդրանիկը իր հերոսությունը առած է հայ ժողովրդի հոգիեն։ Հայությունը անոր պես մարտնչած է, անցած է մահվան վտանգներուն մեջեն և սակայն միշտ ապրած հույսով»։ Ի պատասխան երախտավոր գործչի այս ինքնատիպ ու խոր գնահատականի, Անդրանիկը ասել է. «Ի՞նչ կարժե կյանքը, եթե հայրենիք մը, մեր գլուխը դնելիք քար մը չունենանք։ Առանց մեր օճախին՝ օտարության մեջ դատապարտված ենք հյուծելու։ Կին մը չի կրնար դիս կաշկանդել,— որոշակի հայտարարում է նա։— Եթե վաղը ազգը դիս պարտականության գլուխ կանչե՝ պատրաստ եմ կատարելու դինվորի պարտականությունս»[121]։

Անդրանիկի այս խոսքը յուրատեսակ մի երգում էր և միաժամանակ կոչ ի սիրտս ցրված աշխարհի հայությանը՝ խուսափելու ձուլումից, միշտ հայ ապրելու և դեպի հայրենիք ձգտելու...

* * *

Մենք տեսանք, թե Վահան Թոթովենցը ինչպես էր իրավացիորեն նկատել Թումանյանի և Անդրանիկի «բարքերի և ըմբռնումների խիստ նմանությունը» (ԹԺՀ, 141)։ Այդ շատ լավ երևում է նրանց բարեկամության պատմությունից։ Ընդամենը հինգ տարի է տևել նրանց մտերմությունը (1914—1919 թթ.)։ Եթե հանենք Անդրանիկի ճակատամարտերը, քաղաքական այն իրադարձությունները, որոնք բաժանում էին նրանց, մնում է շփումների շատ կարճ միջոց։ Բայց որքա՜ն շատ են առնչությունները, որքա՜ն խորն է բանաստեղծի և զորավարի հոգեհարազատությունը։

Նրանց կապող կամուրջը նախ և առաջ երկուսի մեծ հայրենասիրությունն էր և դաղափարական ընդհանրությունները։

Անդրադառնալով բանաստեղծի և զորավարի բարեկամությանը, Վարդգես Սհարոնյանը գրում է. «Անդրանիկի մեջ Թումանյանին գրավողը ամենից առաջ Անդրանիկի հայրենասիրությունը և հռչակված ռազմիկ լինելն էր։

---

121 «Կարմիր աստղ», 1922, № 141։

Անդրանիկը՝ իր հերթին դրավվել էր Հովհ. Թումանյանի շենշող անձնավորությունով, Թումանյանի նահապետական շենությունով... և բարեկամների առջև միշտ բաց դռներով։ Դիտեր, որ Հովհ. Թումանյանը հռչակված, սիրված բանաստեղծ է—այդչափ միայն։ Անդրանիկը, առհասարակ, գրքի հետ շատ գլուխ չուներ և հազիվ թե Թումանյանի գրածներից որևէ բան կարդացած լիներ։

Ոտքից մինչև գլուխ ռազմիկը՝ մեկ կողմից, և ամեն ինչով բանաստեղծը՝ մյուս կողմից, մտերիմ բարեկամներ էին դարձել։ «Սասունցի Դավթի» հեղինակ Հովհ. Թումանյանը Սասնո բարձունքների վրա հերոսական պայքար մղած Անդրանիկի մեջ, անկասկած, Առյուծ Մհերից և Թլոլ Դավթից մի մաս էր տեսնում»[122]։

Վ. Ահարոնյանը նույնպես լավ էր ճանաչում երկուսին էլ և, թվում է, ճիշտ էլ գնահատում է։ Բայց այդ գնահատականի մեջ պակասում է մի շատ կարևոր հանգամանք՝ բանաստեղծի և զորավարի դաղափարական ընդհանրությունը։ Նրանց համար առաջնայինը հայրենիքն էր, ժողովրդի շահը, երկուսին էլ կաշկանդել չկարողացան կուսակցական նախապաշարումը, կուսակցական նեղմտությունն ու միտումնավորությունը։

Բանաստեղծի մահվան առիթով հրապարակած հոդվածում Անդրանիկը հատկապես գնահատել էր հանդուցյալ բարեկամի «անկաշառ սիրտը», «անիարդախ հոգին», «որ վեհանձն էր ու անվախ»։ «Հանցանքը, որ ուներիր՝ կուսակցական չէիր (ընդգծումը հեղինակինն է—Լ. Կ.) ...Հանցանքը, որ ուներիր՝ սիրտդ չէր կեղծեր» (ԹԺՀ, 554)։

Ավելորդ է բերել այլ օրինակներ ևս՝ ապացուցելու բանաստեղծի և զորավարի ըմբռնումների և դաղափարների նույնությունը, քանի որ վերևում այդ մասին տարբեր առիթներով գրվեց։ Բայց չի կարելի համաձայնել Թումանյանի ստեղծագործությանը՝ Անդրանիկի ծանոթ չլինելու Վ. Ահարոնյանի կարծիքի հետ։ Բնատուր խելքով օժտված զինվորը չէր կարող անծանոթ լինել «Ամենայն հայոց բանաստեղծի» երկերին։ Ծագումով բնաշխարհից, ժողովրդի ծոցից, Անդրանիկը հրաշալի պատմող էր, դիտեր իր խոսքը համեմել ժողովրդի բառ ու բանով, առածով, ասացվածքով։ Նա էր Թումանյանին պատմել «Մոծակն ու մրջյունը» առակի սասունցիների մոտ տարածված տարբերակը, որ բանաստեղծը հրապարակեց 1917 թ. «Գործ» ամսագրում։ Այդպիսի մե-

---

122 Վ. Ահարոնյան, Անդրանիկ, Մարդը և ռազմիկը, Բոստոն, 1957, էջ 167—168։

կը չէր կարող չկարդալ և չգնահատել Թումանյանին, մանավանդ նրան ճանաչելուց, մտերմանալուց հետո։ Բայց, ավելի լավ է, մեջ բերել Անդրանիկի՝ իր իսկ խոստովանությունը. «Իր գրական տաղանդին համար իմ բառերս շատ կարճ կուգան։ Գրագետ չեմ, այդ բաժինը հայ գրագետներուն ու բանաստեղծներուն կթողում... Ես ալ շատ սիրած եմ անոր երգերը։ Երգած, զգացած և վայելած եմ անոր երգերն ու գրական արտադրությունները։ Հիացումով հետևած եմ «Անուշ» պոեմին, «Սասունցի Դավթին», «Մի կաթիլ մեղրին», «Շունն ու կատուին», «Քաջ Նազարին» և այլն» (ԹԺՀ, 553)։

Անդրանիկը ոչ միայն գնահատում և սիրում էր իր բարեկամի ստեղծագործությունը, այլև հատու էր նրա անմահությանը։ Այդ իմաստով՝ բոլորովին պատահական չեն նրա հայտնի խոսքերը. «Կանցնեն տարիներ, ոչ ես կլինեմ, ոչ էլ Թումանյանը, բայց կլինի մի նշանավոր բան՝ «Շունն ու կատուն» (ԹԺՀ, 142)։

Նա գիտեր տարբերել լավ ու վատ ստեղծագործությունը, չէր հանդուրժում անշնորհք բանաստեղծներին։

1917 թ. հունվարի 14-ին՝ Թումանյանի անվանակոչության օրը, հավաքված բազմաթիվ պատվավոր հյուրերի ներկայությամբ իրենց ստեղծագործություններից հատվածներ են կարդում սկսնակ բանաստեղծները. ամեն ինչ կարծես լավ էր անցնում, բայց ահա անտաղանդ, երկարաշունչ ոտանավորով հանդես է գալիս երիտասարդ մի բանաստեղծ։ Առաջին և միակ ընդվզողը Անդրանիկն էր, որ անհամբերությամբ բացականչում է.

— Մեզի ոտանավոր պետք չէ։ Ձեր ոտանավորի խերն անիծեմ։ Գնացեք ֆրոնտ՝ զենք գործածելու (ԹԺՀ, 674)։

Անդրանիկը բնածին խելքով, կյանքի հարուստ փորձով, մեծ հոգով, ներքին կուլտուրայով օժտված անձնավորություն էր։ Մարդկային հատկանիշներ են սրանք, որ հաճախ կապ չունեն ձեռք բերովի՝ ստացած կրթության կամ կարդացած գրքերի աղբյուրյան հետ։ Հաստատելու համար ասվածը, ավելորդ չէ հիշատակել հետևյալ ուշագրավ վկայությունը, որն ապացույց է, թե Անդրանիկն ինչքան էր տեղյակ հայոց պատմությանը, ինչպես էր գնահատում հայ մշակույթի գործիչներին։

Հայտնի է, որ կնոջը՝ Նվարդին, Անդրանիկը խնդրել էր իր դիակը տեղափոխել Հայաստան, իսկ եթե այդ հնարավոր չլինի, գոնե քրոջ մոտ՝ Վառնա։ Բայց զորավարը ունեցել է նաև մի այլ ցանկություն-

խնդրանք, որ հայտնել էր տակավին 1917 թ. Թիֆլիսում՝ «Հայաստան» օրաթերթի խմբագրատանը, դիմելով լրագրող Թյությունճյանին.

«— Լևոն,— ասել է նա,— տպարաններս կը փոխադրենք Հայաստան, Առաքելոց վանքը։ Կուզեմ հոն մեռնիլ և թաղվիլ թարգմանիչներու գերեզմաններուն ոտքը, ոչ որպես անոնց քով պառկելու արժանիքով մեկը, այլ որպես պահակ զինվոր մը այդ մեծ մարդկանց՝ դրված այն ազգին կողմեն, որ անոնց վառած ջահին շնորհիվ դարերով պահած է ինքզինքը»[123]։

Ցանկությունը հայտնված է այն օրերին, երբ թուրքերից ազատագրված հայկական գավառներում սկսել էին դանդաղորեն հավաքվել փախստական հայերը, մի կարճ ժամանակ լավատեսորեն համակելով ժողովրդի ազատության համար պայքարող գործիչներին, այդ թվում և Անդրանիկին, վերջնական ազատության հույսեր ներշնչելով նրանց։ Անդրանիկի համար արդեն հեռու չէր թվում այն օրը, երբ ինքը ոտք պետք է դներ Մշո սրբազան հողի վրա, ուր դրվել էր հայ ժողովրդի հավիտենական գոյատևման հիմնաքարը։

Մենք արդեն տեսանք, թե ինչպես էր Թումանյանը գնահատում զորավար Անդրանիկին նրա կյանքի և մարտական գործողությունների տարբեր փուլերում։ Այստեղ մի փոքր օրինակով կամենում ենք նաև ավելացնել, որ բանաստեղծին առաջնորդողը կույր, անվերապահ վերաբերմունքը չէր։

1918 թ. դեկտեմբերին Անդրանիկին գրած Թումանյանի նորահայտ նամակից իմացանք, թե վերջինս ինչպես էր նրբանկատորեն զգուշացնում իր բարեկամին ծայրահեղ, վնասաբեր քայլերից։

Երբ Անդրանիկը սեփական կամքով հեռացավ հայրենիքից, չուզելով ճանաչել Բաթումի հունիսյան դաշնագիրը, ժողովուրդը, քաոսային դրության, հուսալքումի, հիասթափության մեջ, դարձյալ շարունակում էր երկրպագել իր սիրելի հերոսին։ Ղարաքիլիսայի պարտությունից հետո, չնայած տարածված բամբասանքների, շատ զինվորներ լքում էին գեներալ Թ. Նազարբեկյանի բանակը, միանում Անդրանիկին՝ խոստանալով նրա հետ մեռնել և զենքը վայր չդնել։

Ինչո՞ւ, հարց է տալիս ժամանակակիցը։ Այդ «ինչուի» պատասխանը տվել է բանաստեղծը կարճ ամփոփելով այդ օրերի իրադրությունը. «Կամ Նազարբեկովը Անդրանիկ ըլլալու էր և կամ Անդրանիկը՝

---

123 Ա. Թերզիպաշյան, Անդրանիկ, Փարիզ, 1942, էջ 409։

Նազարբեկով. այս դժբախտությունը (Բրքական արշավանքը) հայերու գլխին չէր գար»[124]։

Մեջբերումը կատարված է հուշերից. հնարավոր է, որ Թումանյանը, եթե ոչ բառացիորեն, գոնե մոտավորապես նման մի բան ասել է։ Այստեղ կարևորն այն է, որ բանաստեղծն ընդունելով և գնահատելով Անդրանիկի ունեցած «ասավածային», բնատուր ռազմական տաղանդը, փորձը, զգացել է նաև այն պակասը, ինչ ձեռք է բերվում ռազմական իսկական կազմակերպված կրթությամբ։

Մինչև կյանքի վերջը Թումանյանը հավատարիմ իր բարեկամական անկեղծ զգացումներին, հիվանդ, անկողնում պառկած ժամանակ էլ հետաքրքրվում էր Անդրանիկի գործերով, նրա առողջական վիճակով։ Իմանալով, որ երբեմնի «լեռների արծիվը», թեպետ տկար, անուշաղիր է իր առողջության նկատմամբ, չի լսում բժիշկների խորհուրդները, պատճառաբանելով, թե՝ «Ամոթ է մահվընե այդքան վախենալ», բանաստեղծը անմիջապես ամփոփել է. «Անդրանիկը վախենալուց է միայն վախենում»[125]։

Ի հաստատումն Թումանյանի այս էքսպրոմտ իմաստության, հիշենք Անդրանիկի մեծ կյանքի մի փոքր դրվագը ևս։

Ժողովրդի մեջ տարածված էր այն կարծիքը, թե Անդրանիկի՝ կրակվում անխոցելիության պատճառը նրա «սուրբ» լինելն է, հակառակ դեպքում՝ ինչպե՞ս է, որ «կարկուտի նման» թափվող գնդակները նրան չեն դիպչում։ Վանում Անդրանիկին հանդիպելով, այդ մասին նրան պատմել է լրագրող, «Մշակի» թղթակից Աշոտ Աթանասյանը և ստացել Անդրանիկի՝ իրեն շատ բնորոշող հետևյալ պատասխանը. «Գնդակը մեծ մասամբ կպչում է նրան՝ ով նրանից վախենում է... անվախները մեծ մասամբ փրկվում են։ Սա գնդակի օրենքն է»[126]։

Մենք տեսանք, թե ինչքան ճիշտ ու որքան բարձր է գնահատել զորավար Անդրանիկը իր բանաստեղծ բարեկամին, արժանի տեղ հատկացնելով նրա համար հայոց անմահների պանթեոնում։ Իբրև ամփոփում արժե հիշել Թումանյանի մահվան առիթով Անդրանիկի հրապարակած հուշ-հոդվածը՝ գրված խոր կսկիծով, անկեղծ ներշնչմամբ և ո՜չ հավուր պատշաճի, այլ բանաստեղծի ստեղծագործության, հասարակական գործունեության ու մարդկային հատկանիշների իսկական

124 Նույն տեղում, էջ 373։

125 Նույն տեղում, էջ 402։

126 «Մշակ», 1916, № 58։

ընդունումով։ Նա Թումանյանին կարդում է այնպիսի անհատների շարքը, «որոնց ներկայությունը հանրային ու ընկերային կյանքին մեջ հմայք, ուժ, վստահություն և ոգևորություն կներշնչեն։ Այսպիսի անձերուն կյանքը անոնց մատուցած ծառայությունները ժողովուրդը ոչ միայն կդիտե և կվայելի հանդիսատեսի աչքերով, այլ կիտե հարգել, սիրել և գնահատել» (ԹԺՀ, 550)։

Միանգամայն ճիշտ ու արտաբուխ գնահատական։ Բայց մի՞թե այսօր և ընդմիշտ նույնը չենք ասում Անդրանիկի մասին։ Երկուսն էլ հայ ժողովրդի հավերժ սիրելի անզուգական անհատներ են՝ անմահացած հայրենիքին մատուցած իրենց ծառայություններով. Մեկը՝ բանաստեղծ-զինվոր, մյուսը՝ զինվոր-բանաստեղծ։

ՎԵՐՋԱԲԱՆ

Թումանյանի կյանքին անդրադառնալու յուրաքանչյուր առիթով լցվում ենք մի խոր ափսոսանքով՝ որքա՞ն կարճ եղավ այդ Մեծ Հայի կյանքը։ Բայց նրա հասարակական գործունեությանն ի մոտո ծանոթանալով, համակվում ենք մի անվերջանալի զարմանքով, թե որքա՞ն շատ բան է արել նա իր գիտակցական կյանքի ընթացքում։ Ինչքա՞ն ընկերությունների, կազմակերպությունների է մասնակցել, դառնալով ոչ երկրորդական դեմք և քանի՞ անգամ է աղետի վայրում վտանգելով իր կյանքը, փրկել ուրիշներին։ Նույնիսկ պահնորդական գործակալների համառ հետապնդումները, բանտարկությունները, ցրտաշունչ հյուսիսի վտանգը չեն կարողացել գամել բանաստեղծին իր աշխատասենյակին։

Թումանյանի հասարակական գործերով ծանրաբեռնված լինելը առիթ է տվել տարակուսանքների՝ «էլ ե՞րբ է կարդում», մտածել են մարդիկ։ «Էդքան բանը ե՞րբ է գրել, ախր տանը չէր նստում» մի առիթով ասել է տիկին Օլգա Թումանյանը՝։ Սակայն հայտնի է, որ բուռն հասարակական գործունեությունն է շատ դեպքերում բանաստեղծին մտահղացումներ տվել արարելու հայրենասիրական ստեղծագործություններ, գրելու հրապարակախոսական հոդվածներ, որոնք մտքեր են հուզել և հատկապես 10-ական թվականներին նրան դարձրել պարբերական մամուլի և հայ հասարակական կյանքի ամենահեղինակավոր դեմքը։

Թումանյանի կյանքի այս գրվագներով նրա գործունեությունը հասավ մինչև 1919 թվականը։ Դրանից հետո նա ապրեց ընդամենը չորս տարի, որից մեկը ծանր հիվանդ վիճակում։ Դարձյալ զարմանք է պատում, երբ խորամուխ ենք լինում այդ չորս տարում արածի մեջ՝ որպես Հայ գրողների ընկերության, Հայ հայրենակցական միությունն-

---

1 Ա. Ինճիկյան, էջ 433։

//

//

րի միության, Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի, Հայ որբերին ու փախստականներին օգնող կոմիտեի նախագահ, առաքելությունները Երևան՝ այնքան կարևոր նպատակներով, այցելությունը Կ. Պոլիս՝ հայ ժողովրդի գոյատևումն ապահովելու հեռանկարով։

Բանաստեղծի համար չիրականացված երազ մնաց տեղափոխվել Լոռի «սիրած բնության մեջ, ժողովրդի մեջ և՛ հանգստանալ, և՛ պարապել ... ոչ միայն ժամանակն է անցնում, այլև հենց ինքս էլ եմ անց կենում»,— կանխագուշակել է նա 1920 թ. մայիսին հիվանդության ազդեցությամբ։

Նույն ժամանակ էլ սկսվում են Թուրքերի նոր գործողությունները Օլթիի ուղղությամբ, որոնք վերջանում են հայկական զորամասերի հաղթանակով։ Այդ հաջողությունը նոր հույսեր է ներշնչել Թումանյանին՝ սպասելիքներ ունենալու անկախ Հայաստանի հանրապետությունից, ուստի և Դավիթ Անանունին գրած նամակում (1920, մայիսի 29) խորհուրդ էր տալիս ամեն հայի՝ «իր տեղը ամուր կանգնի և ավելի եռանդով անի իր անելիք գործը»[2]։

Եվ ընդհանրապես, Հայաստանի հանրապետության՝ 1919 թ. գարնան հաջողությունները (Կարսի, Սարիղամիշի, Օլթիի գրավումը), պետական համալսարան ստեղծելու որոշումը և այլ մշակութային ձեռնարկումներ, փոխում են Թումանյանի վերաբերմունքը հանրապետության կառավարության նկատմամբ։ Այդ առումով հասկանալի են այն ջերմ շնորհավորանքները անկախության տարելիցի կապակցությամբ Հայ գրողների ընկերության և Հայոց հայրենակցական միությունների միության խորհրդի անունից, որ նա իր ստորագրությամբ, 1919 թ. մայիսի 26-ին, հեռագրով հղում է Երևան, դիտելով ազատ Հայաստանի գոյությունը որպես հաղթանակող ճշմարտություն և առաջադիմություն, որպես հանդիսավոր շքերթ մշակութային բարձունքներ նվաճելու, թափառական հայ ժողովրդի և տարագիր հայ գրականության հարազատ հողում հանգրվանելու երաշխիք։ Նույնպիսի ջերմ հեռագիր նա ուղարկել է 1920 թ. մայիսին, հանրապետության ստեղծման երկրորդ տարեդարձի առթիվ, այս անգամ ցանկանալով (ինչպես Դ. Անանունին գրած նամակում), որ հայ ժողովրդի մեծ ոգին հենարան դառնա կառավարությանը՝ դարերից ժառանգած սրբազան պայքարի վերջնական հաղթա-

---

2 Պատմա-բանասիրական հանդես, 1984, № 1։

նակի համար և բանաստեղծի օրհնանք հղում նրանց՝ ովքեր նվիրված են այդ գործին իրենց ողջ էությամբ[3]։

1920 թ. սեպտեմբերին սկսվեց թուրքերի նոր հարձակումը Հայաստանի վրա։ Մարտերը սկսվել էին ամբողջ ճակատով, դարձյալ վտանգի տակ դնելով հայ ժողովրդի գոյությունը։ Ահա այդ օրերին՝ սեպտեմբերի 30-ին «քիչ էր մնում», թե Թումանյանը ճանապարհ ընկնի դեպի ռազմաճակատ։ Ամենայն հավանականությամբ նրան իր այդ մտադրությունը կատարելուց հետ է պահել հայկական զորքերի նահանջի լուրը։

Նոր աղետը ցնցել է բանաստեղծի առանց այն էլ անհանգիստ հոգին, բայց իրեն հատուկ լավատեսությամբ կրկին մարգարեացել է. «Դրանից էլ կաղատվենք, կշենանանք էլ, և երանի թե մի օր էլ իրենք ազատվեն իրենց թուրքությունից ու աշխարհներ ավերելու սովորությունից»[4]։

Նոյեմբերի վերջին կատարվում է Թումանյանի իմաստուն կանխագուշակումը. Հայաստանի խորհրդայնացումը մեծագույն կորուստների գնով ազատում է հայ ժողովրդին օտար հարձակումներից։ Բանաստեղծը գիտակցությամբ ընդունեց նոր խորհրդային կարգերը, համարելով այդ իր ռուսական կողմնակցության հաղթանակը, զրանում տեսնելով հայ ժողովրդի գոյատևման այդ ժամանակի համար միակ դրավականը։

Բայց ոչ հայ ժողովրդին, ոչ էլ նրա հոգսերով ապրող բանաստեղծին տակավին վիճակված չէին խաղաղ օրեր... Երկուսուկես ամիս էր անցել խորհրդայնացումից, երբ 1921 թ. փետրվարին տեղի ունեցավ հեղաշրջում Հայաստանի խորհրդային կառավարության սխալ քաղաքականության, Ռուսաստանում մինչ այդ սկսված ռազմական կոմունիզմի սկզբունքների անմտածված կրկնությունների, դաշնակցության անդամների, մտավորականության, ժողովրդի և հատկապես արևմտահայության դեմ դրսևորած դաժան վերաբերմունքի հետևանքով։

Քաղաքացիական կռիվ էր Հայաստանում. հայը կռվում էր հայի

---

3 «Դարուն», 1990, № 4, էջ 3, «Коммунист», 1990, № 117։ Հեռագրերը հրապարակել է Սոնա Միրզոյանը։ 1920 թ. հեռագիրը անտիպ է, պահպանվում է՝ ՊԿՊԱ, ֆ 198, ց 1, գ 71, թ 103—104։

4 Աշխեն Թումանյանին ուղղած 1920 թ. սեպտ. 30-ի նամակից (անտիպ). պահպանվում է՝ ԹԹ։

դեմ ու Ամենայն հայոց բանաստեղծը Երևան է ժամանում փրկելու Հայաստանը եղբայրասպան կռվից։

Ճանապարհին վտանգելով կյանքը և մայրաքաղաքում ծանոթանալով իրերի իսկական կացությանը ու մտնելով մտերամասների մեջ, Թումանյանը ժամանակին շհրապարակված մի անավարտ հոդվածում վերլուծում և օբյեկտիվորեն շարադրում է իր ըմբռնումները տեղի ունեցած նոր ողբերգության, դրա պատճառների մասին ու տալիս հեղաշրջման քաղաքական գնահատականը։ Այն հետաքրքիր պատմական փաստաթուղթ է ինչպես խորհրդային նոր կարգերի վարած քաղաքականության, դրա հետևանքների վերաբերյալ, այնպես էլ Թումանյանի աշխարհայացքի գնահատման առումով[5]։

Քաղաքացիական կռիվները վերջանում են ապրիլի 2-ին, խորհրդային կարգերի վերականգնմամբ։ Այնուհետև Թումանյանը մասնակցում է քաղաքի ներքին կյանքի բարելավման աշխատանքներին, բանակցությունների մեջ է մտնում կառավարության ղեկավարների հետ՝ Հայաստանից փախածների, նրանց ընտանիքների ճակատագիրը տնօրինելու համար, դիվանագիտական գործերով հանդիպումներ է ունենում Իտալիայի և Ամերիկայի ներկայացուցիչների հետ և ապրիլի 18-ին վերադառնում Թիֆլիս։

Նորաստեղծ Խորհրդային Հայաստանի տնտեսությունը ծանր վիճակում էր։ Երկիրը լիքն էր դաղթականներով, անապատաններով, սովն ու համաճարակը շարունակում էին կատարել իրենց սև գործը։ Այդ առումով ժողովրդի գոյատևումն ապահովող մի նոր մեծ նախաձեռնություն էր 1921 թ. սեպտեմբերին Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) ստեղծումը, որի հիմնադիր ժողովին մասնակցելու համար հրավիրվում է նաև Թումանյանը, միայն թե այս անգամ նախօրոք խստագույնս հրաժարվում է ՀՕԿ-ի նախագահի պարտականությունից։ Լեոյի վկայությամբ՝ Երևանի փողոցում տեսած մի ցնցոտիների մեջ սովամահ եղած մարդու դիակը այնպես է ազդում նրա վրա, որ ՀՕԿ-ի հիմնադիր ժողովի իր բացման խոսքում հայտարարում է, թե «երբ մի ժողովուրդ սովամահ է լինում փողոցներում, պետք է թողնել ամեն ինչ, մոռանալ ամեն բան և գնալ նրան փրկելու» (ԹԺՀ, 104)։ Եվ նա մեկնեց Կ. Պոլիս՝ հայության հնօրյա գաղթօջախը, որն արդեն սկսել

---

5 Հոդվածը առաջարանով և ծանոթագրություններով հրապարակել է Թումանյանագետ էդ. Ջրբաշյանը. տե՛ս Պատմա-բանասիրական հանդես, 1988, № 2։

էր աշխուժանալ. զինադադարից հետո այստեղ հավաքվում էին անհայտ ծագումներով ցրված մտավորականներ, ազգային կուսակցության ներկայացուցիչներ, ստեղծվել էր Հայաստանի օգնության միությունը (ՀՕՄ), ազգային կյանքը կամաց-կամաց վերականգնվում էր։

Պոլսահայերը մեծ խանդավառությամբ ընդունեցին սիրելի բանաստեղծին, հավաքվելով շրջապատեցին նրան՝ պատրաստ կատարելու նրա յուրաքանչյուր առաջադրանք, ինչ որ պետք է նպաստեր Հայաստանի ժողովրդի վերածնունդին։

Թումանյանին հաջողվեց կազմակերպել Հայաստանին օգնելու գործը արտասահմանում, աշխուժացրեց ՀՕՄ-ի գործունեությունը, կարողացավ միաբանության բերել մտավորականությանը և կուսակցություններին, դրեց Հայաստան-Սփյուռք կապի առաջին հիմքերը և այլն[6]։

Թումանյանի գործունեությունը Պոլսում տևեց ամիսներ, թողեց բարի համբավ, բայց դարձավ նրա թանկագին կյանքի «կարապի երգը»։

1913 թ. նոյեմբերին Սիմոն Զավարյանի մահվան առթիվ գրած հոդվածում Թումանյանը այսպես է գնահատում իր ընկերոջը և համբավավոր հասարակական գործչին. «Բարձր իմացության և աղնիվ հոգու հետ ուներ շատ քնքուշ սիրտ։ Եվ ամբողջը լիքը մի անշեջ կրակով, որ ի վերջո էրեց ու սպառեց իրեն։

Էսպես է. ով ուզում է լույս տա՝ պետք է էրվի»[7]։

Ընկերոջը տված այս գնահատականը ապացույց է, որ ամեն անգամ որևէ գործ ձեռնարկելիս, ազգային գործիչ Թումանյանը առաջնորդվել է այդ սկզբունքով, ուստի և իրավունք ուներ իր մասին ասելու. «Հուր եմ դառել, լույս տվել, Լույս տալով եմ սպառվել»...

1919 թ. փետրվարի 20-ից սկսած հայ մամուլը, քիչ անց նաև ամբողջ հայ ժողովուրդը, մոռացած իր կորուստները, տիրող սովն ու համաճարակը, մեծ շուքով նշեց Թումանյանի կյանքի 50-ամյա հոբելյանը և գործունեության 30-ամյակը։ Այն սկսվեց տարերայնորեն և տևեց ամիսներ, անվերջ ընդգրկելով նոր ու նոր շրջանակներ, դարձավ մի այնպիսի ազգային-ժողովրդական տոն, որ հայ ժողովուրդը մինչ այդ չէր տեսել։ Բազմալեզու շնորհավորանքները կարծես մրցում էին, թե

---

6 Թումանյանի Պոլիս կատարած այցելության նկարագիրը տվել է գրականագետ Աստատուր Ասատրյանը, լուսաբանելով այդ այցելության հիմնական ու կարևոր կողմերը (ՈՒՀ 1, 255—286)։

7 «Հորիզոն», 1913, № 248։

ով կարող է ավելի բարձր, գեղեցիկ, ինքնատիպ խոսքերով մեծարել հայ ժողովրդի մեծ բանաստեղծին։

Հոգսառատ Հայաստանի հանրապետությունը նույնպես անմասն չի մնում սիրելի բանաստեղծին մեծարելուց։ Մի կողմ թողնելով կուսակցական միտումնավորությունը և Թումանյանի՝ կառավարության առանձին ղեկավարներից ունեցած դժգոհությունը, Ալ. Խատիսյանը Հայաստանի կառավարության անունից հեռագրով ջերմորեն շնորհավորում է «հայ գրականության զարդին» և ցանկանում, որ բանաստեղծի աղոթքի քաղցր հնչյունները հնչեն «...հայրենի ժողովրդի մեջ և աջակից լինեն նրա սպասավորների ոգուն»։ Մարտի 9-ին Երևանում տեղի էր ունենալու մեծարման հանդես, որին հրավիրված էր հոբելյարը, բայց չկարողանալով մեկնել Երևան, Ալ. Խատիսյանի անունով նա ուղարկում է պատասխան հեռագիր, իր նկատմամբ ցուցաբերված վերաբերմունքը վերագրելով ոչ թե իր գրական գործերի արժեքին, այլ բացատրում է հայ «ազգային ոգու անպարտելի հզորությամբ, որին չեն կարող ընկճել ո՛չ սով, ո՛չ հիվանդություն, ո՛չ հալածանք, ո՛չ տառապանք»։ Հեռագիրը դարձյալ լեցուն է Թումանյանին բնորոշ լավատեսությամբ և «անսասան» հավատով «դեպի մեծ ու լուսավոր ապագան»[8]։

Նախկին սենատոր Հ. Դ. Սոկոլովը իր ուղարկած շնորհավորանքի մեջ, հիշելով Թումանյանի և Կորոլենկոյի հանդիպումը Պետերբուրգում, գրում է. «Մենք՝ ռուսներս, սովոր ենք Վ. Գ. Կորոլենկոյի վրա նայել ոչ միայն որպես գրող-գեղարվեստագետի, այլև մեզ համար նա խիստ և որոշ արտահայտություն է հասարակական խղճի։ Դեպի ձեզ այդպես է վերաբերվում հայ հասարակությունը»[9]։

Այո՛, Հովհաննես Թումանյանը հայ ժողովրդի խիղճն է։

* * *

Թումանյանի կյանքի առաջին երեք տասնամյակի պատմությունը գրել է հանգուցյալ գրականագետ Արամ Ինճիկյանը, մեծ ավանդ թողնելով թումանյանագիտության մեջ։ Վաղուց հասունացել է գրողի ամբողջական գիտական կենսագրության անհրաժեշտությունը, որը հայ գրականագիտության սրբազան պարտքն է։

Ընթերցողին ներկայացվող այս գիրքը այդ պարտքի կատարմանը նպաստելու փորձ է։

---

8 «Մշակ», 1919, № 54, «Հառաջ», Թիֆլիս, 1919, № 46։

9 «Ժողովրդի ձայն», 1919, № 50։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գրկոր խոսք 5
I Թումանյանը Թիֆլիսի պանհորդական բաժնի տնտեսաշտում . . . 7
II Թումանյանը և Էջմիածնի գործիչները 31
III Խաղաղության պատգամով 53
IV 1911 թ. կաթողիկոսական ընտրությունների նախօրյակին . . . 74
V Համաշխարհային պատերազմի սկզբին: Առաջին այցելությունը ռազմանակատ (1914 թ.) 96
VI Երկրորդ այցելությունը ռազմանակատ (1915 թ.): Թումանյանը Վանում և Էջմիածնում 136
VII Ազգային նակատագրի աբնավիրների մեջ (1916—1919 թթ.) . . 175
Վերջաբան 250

ԼՈՒՍԻԿ ՄԻՔԱՅԵԼԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
(Դրվագներ)

Հրատ. խմբագիր Ս. Ա. Անաստասյան

Տեխ. խմբագիր Ա. Պ. Շահինյան

Սրբագրիչ Գ. Է. Դերձակյան

ИБ № 1728

Հանձնված է շարվածքի 17. 10. 1991 թ.։ Ստորագրված է տպագրության 16. 06. 1992 թ.։ Չափը 60×84 1/16, թուղթ № 1։ Տառատեսակ «գրքի սովորական» բարձր տպագրություն։ Պայմ. 15,8 մամ., տպագր. 16,0+4 ներդիր մամուլ։ Ներկ. մամուլ 15,8։ Հրատ.-հաշվարկ. 14,25 մամուլ։ Տպաքանակ 500։ Հրատ. № 7986։ Պատվեր № 272։ Գինը 10 ռ.։ ՀԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24 գ.։

Издательство АН Армении, 375019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24 г.

ՀԳԱ հրատարակչության տպարան, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24։

Типография Издательства АН Армении, 375019, Ереван,

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0222774

10 п.

A II 82955